ԱՐՈՍ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱՁՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՐԵՎԱՆ - 2021

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱՋՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇՃԵԱՆ
ՄԱՏԵՆԱՇԱՐ
211

ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES
211

ԵՐԵՎԱՆ – 2021

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)
Մ 537

Հրատարակվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Մելքոնյան Աշուո
Մ 537 Պատմագիտական հետազոտություններ / Ա. Մելքոնյան.- Եր.:
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2021.- 489 էջ:

Ժողովածուում ներառված են հեղինակի վերջին տասնամյակի ընթացքում զանազան գիտական հանդեսներում հրատարակած հոդվածներ և գիտաժողովներում կարդացված զեկուցումներ: Նյութերը վերաբերում են Հայոց ցեղասպանության, պետականության, ազգային-ազատագրական շարժումների, ժողովրդագրության պատմության և այլ հիմնախնդիրների:

Գիրքը նախատեսված է մասնագետների և ընթերցող լայն շրջանակների համար:

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-9939-892-01-6

© ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2021

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Ավելի քան մեկ դար առաջ՝ Առաջին աշխարհամարտի օրերին և հետպատերազմյան տարիներին, հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցան արմատական փոփոխություններով՝ և՛ ողբերգական հետևանքներով լեցուն և՛ բախտորոշ ու դարակազմիկ նշանակության:

Օգտվելով պատերազմի ընձեռած հնարավորությունից՝ երիտթուրքական կառավարությունն իրականացրեց արևմտահայության բնաջնջման ու հայրենազրկման հրեշավոր ծրագիրը: Հարյուրհազարավոր գաղթականներ սփռվեցին աշխարհով մեկ և գոյություն ունեցող հայկական գաղթավայրերի հիմքի վրա ձևավորեցին հայկական Սփյուռքը: Արևմտյան Հայաստանն ազատագրելու և այնտեղ հայկական ինքնավարություն ստեղծելու ակնկալիքով շուրջ 10 հազար հայորդիներ զինվորագրվեցին յոթ կամավորական ջոկատներին, մասնակցեցին Բայազետի, Ալաշկերտի, Վանի, Շատախի, Մուշի, Բիթլիսի և այլ քաղաքների ազատագրման մարտերին: Հայ կամավորական շարժումը թեև սպասելի արդյունքներ չտվեց, սակայն դարձավ հայ ազատամարտի պատմության ամենավառ էջերից մեկը:

Հայոց մեծ եղեռնից ընդամենը երեք տարի անց՝ 1918 թ. մայիսի վերջին օսմանյան զորքերի դեմ Սարդարապատի, Բաշ Ապարանի, Ղարաքիլիսայի, Ջավախքի, Շիրակի հերոսական մարտերում տանելով փայլուն հաղթանակներ, հայ ժողովուրդը կարողացավ Արևելյան Հայաստանի մի փոքրիկ հատվածի վրա վերականգնել հայոց պետականությունը: Հայաստանի Հանրապետության ծնունդն ունեցավ դարակազմիկ նշանակություն: Ընդամենը երկուսուկես տարվա ընթացքում նրա տարածքը 12 հազար քառ. կիլոմետրից հասավ 70 հազար քառ. կմ: Երկրում հաստատվեցին ժողովրդավարական կարգեր՝ ընտրական համակարգ, խորհրդարան, տասնյակ երկրներում դիվանագիտական ծառայություններ, դատական կառույցներ, շուրջ քառասուն հազար զինվոր ունեցող բանակ, պետական խորհրդանիշներ և այլն: Հայաստանի Հանրապետությունը ճանաչվեց Անտանտի երկրների կողմից:

1920 թ. օգոստոսի 10-ի Սևրի դաշնագրով Արևմտյան Հայաստանի չորս նահանգներ (Էրզրում, Վան, Բիթլիս, Տրապիզոն) միանալով ՀՀ-ին, Միացյալ Հայաստանի տարածքը պատնալու էր 160 հազար քառ. կմ Տրապիզոն նավահանգստի չնորհիվ ելքով դեպի Սև ծով:

1918–1921 թթ. Հայոց պետականության յուրահատուկ դրսևորումներ եղան Արցախում և Սյունիքում ստեղծված կազմավորումները, որոնք պայքարելով Ադրբեջանի ոտնձգությունների դեմ, պահպանեցին իրենց ինքնիշխանությունը: Անգամ 1920 թ. դեկտեմբերի սկզբին Հայաստանի Հանրապետության խորհրդայնացումից հետո Սյունիքի Հայությունը Գարեգին Նժդեհի գլխավորությամբ դեկտեմբերի 25-ին երկրամասը հռչակեց «Ինքնավար Սյունիք», 1921 թ. ապրիլի 27-ին այն վերանվանեց «Լեռնահայաստան», իսկ հունիսի 1-ին՝ «Հայաստանի Հանրապետության»: Անկախության համար այդ հերոսական պայքարի չնորհիվ Սյունիքը մնաց Հայաստանի կազմում՝ դառնալով հայոց նորօրյա պետականության ողնաշարը:

Վերոհիշյալ պատմական իրադարձությունների հարյուրամյակների կապակցությամբ Հայրենիքում և Սփյուռքում հրավիրվեցին գիտաժողովներ, հրատարակվեցին գրքեր ու հոդվածներ, ընթերցվեցին հարյուրավոր դասախոսություններ, կազմակերպվեցին հեռուստահաղորդումներ: Մենք նույնպես մեր մասնակցությունն ունեցանք այդ միջոցառումներին և հանդես եկանք զանազան հրապարակումներով, որոնց մի մասը սույն ժողովածուի միջոցով ներկայացնում ենք ընթերցողների դատին:

Աշոտ Մելքոնյան
3 փետրվարի, 2021 թ.

ՀԱՅ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՊ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Բանալի բառեր՝ հայոց պատմություն, Հայկական լեռնաշխարհ, հայագիտություն, պատմական խեղաթյուրումներ, Արևելյան Անատոլիա, ցեղասպանություն:

Հայոց պատմության և հայ մշակույթի ուսումնասիրության բնագավառում հայագիտությունը հասել է վիթխարի հաջողությունների: Այդ ձեռքբերումները վերաբերում են ինչպես դասական հայագիտությանը, այնպես էլ խորհրդային ու հետխորհրդային ժամանակաշրջաններին: Սակայն զանազան պատճառներով առ այսօր բազմաթիվ հիմնահարցեր դեռ լուրջ հետազոտության, ինչպես նաև վերանայման կարիք ունեն, առավել ևս, որ դրանց մի մասը հայոց պատմության թուրք-ադրբեջանական աննախադեպ խեղաթյուրումների պայմաններում ունեն գիտաքաղաքական մեծ նշանակություն և շոշափում են ազգային անվտանգության խնդիրներ: Հրատապ հիմնահարցերի շարքում, ըստ պատմական տարբեր շրջափուլերի, առանձնացնենք կարևորագույնները:

20-րդ դարի ընթացքում՝ մասնավորապես դարասկզբին, երիտթուրքերի կողմից իրականացված ցեղասպանությունից ու հայերի հայրենազրկումից հետո ստեղծված ոչ հայանպաստ աշխարհաքաղաքական իրավիճակից օգտվելով՝ թուրքական իշխանություններն ու «գիտական» շրջանակներն ամեն ինչ արեցին Հայկական լեռնաշխարհի տեղանվանաբանությունը փոխելու, աղավաղելու և հայկականության հետքերն իսպառ վերացնելու համար: Մինչև նախորդ դարի կեսերը տարբեր երկրներում, այդ թվում ԽՍՀՄ-ում, տպագրված քարտեզներում հիշատակվող «Հայկական լեռնաշխարհ», «Հայաստան» տեղանուններին փոխարինելու եկավ «Արևելյան Անատոլիա» արտահայտությունը, որը ո՛չ գիտական և ո՛չ էլ քաղաքական առումով որևէ քննություն չի բռնում: Նման տարբերակով աղավաղվեց ամբողջ Հայկական լեռնաշխարհի տեղանվանաբանությունը, և մոտավորապես նույն տարբերակով վերջին շրջանում արդեն նոր անկախ Հայաստանը, որի տարածքը ժամանակին էլ ան-

հասկանալի ձևով մաս էր կազմել դարձյալ դիտականորեն խոցելի համարվող ռուսական «Անդրկովկասին», այժմ էլ հայտնվեց այսպես կոչված «Հարավային Կովկասում»: Ցավոք, Հայաստանի իշխանություններն ինչ-ինչ մղումներով, առանց խնդրի մեջ խորանալու, իրենց հերթին քաղաքացիություն տվեցին այդ վտանգավոր մոտեցմանը: Կարծում ենք, որ դրանում մեղքի որոշակի բաժին ունեն նաև գիտական շրջանակները, որոնք ժամանակին չարձագանքեցին խնդրին և նույնպես համերաշխվեցին Արևմուտքից մատուցված նորամուծություններին՝ առավել ևս, որ մեզ սկսեցին հավաստիացնել, որ մեր տարածաշրջանն իրականում ոչ թե Ասիայի մաս է կազմում, այլ գտնվում է քաղաքակիրթ Եվրոպայի սահմաններում: Այսպիսով, նորագույն ժամանակներում սկսված տեղանվանաբանական կեղծարարությունը շարունակվեց:

Հայ պատմագիտության առջև կանգնած կարևորագույն խնդիրների շարքում է մնում ծագումնաբանության հարցը: Այս ոլորտում վերջին տասնամյակներին զգալի առաջընթաց է գրանցվել: Կարծես թե գոնե մեզանում հայերի եկվորության խնդիրը փակվել է, թեև այն ժամանակ առ ժամանակ զանազան դրսևորումներ է ունենում: Բայց քանի որ հարցը շարունակում է մնալ օտար կեղծարարների ուշադրության կենտրոնում, իսկ մեզանում էլ, փաստորեն, դեռ պաշտոնական հայեցակարգ չկա, ուսումնասիրություններն այդ ուղղությամբ մեծ թափով պետք է շարունակվեն:

Ծագումնաբանության հիմնահարցից ածանցվում են նույնատիպ այլ խնդիրներ՝ կապված Հայաստանի պատմական ժողովրդագրության հետ: Ուրախալի է, որ վերջին տասնամյակներին զգալի աշխատանք կատարվեց հատկապես Արևմտյան Հայաստանի նահանգների ժողովրդագրական հիմնահարցերի ուսումնասիրության ուղղությամբ: Այդուհանդերձ, մեր հայրենիքի պատմական ժողովրդագրության ամբողջական պատկերը ներկայացնող համապարփակ աշխատություններ դեռ չկան:

Հաջորդ խնդիրը վերաբերում է հայոց պետականության պատմության հիմնահարցին: Ընդ որում, այս հիմնախնդիրն ունի բազմաթիվ ենթաշերտեր՝ սկսած Հայկական լեռնաշխարհում պետականության սկզբնավորման ժամանակաշրջանի, դրա բնակչության, արքայատոհմերի էթնիկ պատկանելության հարցերից մինչև միջնադարի ընթացքում պետական զանազան դրսևորումները, պետականության վերականգնման համար ծավալված ազատագրական պայ-

քարն ու նորագույն ժամանակներում (1918–2012 թթ.) երեք հանրապետությունների փոխառնչության և իրավահաջորդության հարցադրումները: Այս հարցը նույնպես ունի գիտաքաղաքական կարևորություն, քանի որ այն դարձել է թուրք-ադրբեջանական կեղծարարության դլխավոր թիրախներից մեկը: Հայոց պետականության պատմության ընդհանուր չղթայի մեջ հատուկ նշանակություն ունի Ուրարտու անունով հայտնի թագավորության խնդիրը:

Հայոց պատմության հիմնահարցերի շարքում հրատապ ուսումնասիրության կարիք ունի քրիստոնեության ընդունման գնահատականի հարցը: Դեռ չարունակում են հնչել տեսակետներ, թե քրիստոնեության ընդունումով սկսվեց մեր պետականության թուլացման ժամանակաշրջանը, իսպառ ոչնչացվեց հայ հելլենիստական մշակույթը և այլն: Նույնիսկ փորձ արվեց կասկածի տակ դնել Հայաստանյայց Առաքելական եկեղեցու դերը հայոց պատմության մեջ:

Բավարարվելով կենսական նշանակություն ունեցող հիմնահարցերից միայն մի քանիսի թվարկումով՝ ընդգծենք, որ չնայած վերջին տասնամյակներին կատարված ահռելի աշխատանքին, հայ պատմագիտական դպրոցն ունի լուրջ անելիքներ, որոնց լուծումը պահանջում է հայրենիքի և սփյուռքի մասնագետների ջանքերի գործադրում:

Հայկական լեռնաշխարհի պատմամշակութային ժառանգություն միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, 24 հունիսի 2012, էջ 38–40:

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՐԵՎԵԼՔ-ԱՐԵՎՄՈՒՏՔ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ

Հայ ժողովրդի հայրենիքը՝ ամբողջական Հայաստանը (Արևմտյան և Արևելյան Հայաստանը, ներառելով Հայկական լեռնաշխարհի ողջ տարածքը), գտնվելով Փոքր Ասիան Միջագետքի և Իրանի հետ կապող նշանավոր առևտրական ուղիների վրա, հազարամյակներ շարունակ քաղաքակրթական հարաբերությունների կենտրոններից էր:

Հայաստանով է անցել Չինաստանից Եվրոպա տանող Հնուց Հայտնի Մետաքսի ճանապարհի մի երթուղին, որը մինչև XI դարի երկրորդ կեսին տեղի ունեցած՝ սելջուկ-թուրքերի ավերիչ ներխուժումները գրեթե անխափան գործել է՝ մեծ նպաստ բերելով համաշխարհային տնտեսական կյանքում: Խորապես գիտակցելով Մետաքսի ճանապարհի բացառիկ կարևորությունը՝ Արևելքի երկրներում իրենց գերիշխանությունը հաստատած մոնղոլները, որոշ ընդմիջումից հետո, կրկին վերականգնեցին Միջերկրական ծովի առափնյա չրջաններից՝ Հայաստանի վրայով մինչև իրենց հսկայածավալ տերության արևելյան սահմանները՝ Չինաստան ու Խաղաղ օվկիանոս ընթացող միջազգային առևտրական երթուղիները: 1254 թ. մոնղոլական Մանգու մեծ խանի և Կիլիկյան Հայկական թագավոր Հեթում II-ի միջև կնքված դաշնագրով հայերին արտոնյալ պայմաններով՝ առանց մաքսավճարի իրավունք տրվեց աչխույժ առևտուր անել ողջ մոնղոլական տերության տարածքում: Սակայն մոնղոլական ծանր տիրապետության պայմաններում նախկին առևտրական հուսալի երթուղինները վերականգնելու փորձերը ցանկալի արդյունք չավեցին: Արևելքից քոչվոր ցեղերի նոր հարձակումները լիովին քայքայեցին Հայաստանի ու հպատակ մյուս երկրների տնտեսական կյանքը: Բայց տարածաշրջանի տնտեսական փլուզումը, անապահով քաղաքական վիճակն ավելի խորացավ օսմանյան թուրքերի ներխուժումների հետևանքով: XIV դարի ընթացքում կատարելով մի չարք նվաճումներ Փոքր Ասիայի արևմտյան ծովափնյա չրջաններում, Բալկաններում և 1453 թ. Կոստանդնուպոլսի գրավումով վերջ տալով Բյուզանդական կայսրությանը՝ Օսմանյան սուլթանությունն ակտիվացրեց իր գավթողական քաղաքականությունը նաև արևել-

յան ուղղությամբ, և 1473 թ. Դերջանի ճակատամարտում հաղթելով ակ-կոյունլու թուրքմենական ցեղերին, ներխուժեց Հայաստանի արևմտյան գավառներ: XVI դարի սկզբից Հայաստանի ու Անդրկովկասի համար կատաղի մրցակցություն սկսվեց Օսմանյան կայսրության և Սեֆյան Պարսկաստանի միջև: 1555 թ. Ամասիայում կնքված պարսկա-թուրքական հաշտության համաձայն Հայաստանը բաժանվեց աշխարհակալ երկու երկրների միջև: Արևելյան Հայաստանն անցավ Սեֆյան Պարսկաստանին, իսկ Արևմտյան Հայաստանը Օսմանյան կայսրությանը: Հայ ժողովրդի համար սկսվեց մի երկարատև ու մղձավանջային ժամանակաշրջան:

1578 թ. վերսկսված թուրք-պարսկական պատերազմը, որի դյուրավոր թատերաբեմ մնաց Հայաստանը, նորանոր ավերածություններ ու կոտորածներ բերեց հայ ժողովրդին: Երկրի տնտեսությունը հասավ լիակատար անկման: Սկսվեց զանգվածային արտագաղթ: Վերահսկելով Եվրոպայից Ասիա տանող ցամաքային առևտրական ճանապարհները՝ սուլթանական կառավարությունը մեծ շահույթներ էր ստանում: Սակայն Եվրոպայում չուկայական հարաբերությունների հետագա զարգացմանը զուգընթաց, Թուրքիայի հետամնաց ռազմաավատատիրական համակարգը սկսեց հետզհետե խոչընդոտ դառնալ Արևելք-Արևմուտք տնտեսական հարաբերություններին: Եվրոպացի առևտրականները նախընտրեցին շրջանցել Օսմանյան կայսրության տարածքը և Արևելքի երկրների, հատկապես Հնդկաստանի, Չինաստանի հետ առևտուրն իրականացնել ավելի հեռավոր, բայց անհամեմատ ապահով ու շահավետ ծովային ճանապարհներով:

Շարունակվում էր Օսմանյան սուլթանության հետագա թուլացումը: Կառավարման ոլորտում միապետական, բռնատիրական համակարգի, իսկ տնտեսության մեջ՝ ռազմաավատատիրական կացութաձևի առկայությունն արգելակում էին երկրի զարգացումը, օրեցօր խորացնում ընդհանուր ճգնաժամը: Մի կողմից՝ ծովային ուղիների հանդես գալով տնտեսական չահույթի նվազումը, մյուս կողմից՝ արդեն միայն պարտություններ բերող երկարատև պատերազմներն Օսմանյան կայսրությանը կանդնեցրին տարածքային կորուստների իրողության առջև:

Օսմանյան կայսրության ենթակա երկրներն ու ժողովուրդները գտնվում էին քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային զարգացման տարբեր մակարդակների վրա: Տերության զանազան

մասերը միմյանց հետ կապված չէին ամուր տնտեսական կապերով: Նվաճված ժողովուրդների վրա սուլթանական իշխանությունը պահպանվում էր բացառապես ռազմական ուժի շնորհիվ: Ճգնաժամն առավել ցայտուն որեն արտահայտվում էր ազգային չրջաններում: Թուրքահպատակ քրիստոնյա ժողովուրդները գտնվում էին ազգային հալածանքների ու արժանապատվության ոտնահարման, մարդկային տարրական իրավունքների անտեսման պայմաններում: Նրանց մշտապես սպառնում էր ֆիզիկական բնաջնջման վտանգը: Օգտվելով երկրում տիրող խառնակ իրավիճակից՝ ծայրամասային նահանգների կառավարիչները, քրդական ցեղերը՝ աչիրեթներն, հրաժարվում էին օրեցօր թուլացող կենտրոնական իշխանության ենթակայությունից և ձեռք բերում կիսանկախություն: Նրանց հպատակեցնելու կառավարության ձեռնարկումներն անցնում էին ապարդյուն: Միայն 1639 թ. Կասրե-Շիրինում կնքված թուրք-պարսկական հաշտության ընձեռված խաղաղությունից հետո, ինչպես Արևմտյան Հայաստանում, այնպես էլ՝ կայսրության թուրքահպատակ այլ երկրներում, դանդաղորեն նկատվեց տնտեսական որոշ առաջընթաց, որի մեջ իրենց ծանրակչիռ դերն ունեցան հատկապես հայերը, հույները, հրեաները, ասորիներն ու բուլղարները:

XVII դարի երկրորդ կեսին Արևմտյան Հայաստանը, որ տակավին հայաբնակ էր, զբաղեցնում էր Օսմանյան կայսրության արևելյան հատվածը և վարչականորեն բաժանվում էր էրզրումի (Կարին), Վանի, Սեբաստիայի (Սվազ), Ախալցխայի, Կարսի և Դիարբեքիրի էյալեթների՝ նահանգների: Որքան էլ տարօրինակ է թվում, Օսմանյան կայսրության կողմից ղավթված Արևմտյան Հայաստանը, նման քաղաքական ու տնտեսական անբարենպաստ պայմաններում *1639* թ. հաշտությունից հետո ինչ-որ չափով վերականգնեց Եվրոպա-Ասիա առևտրական միջնորդի երբեմնի դերակատարությունը: Տնտեսական ճգնաժամը հաղթահարելու նպատակով օսմանյան սուլթանները հարկադրված եղան պարբերաբար ձեռներից հպատակ առևտրականներին *ջժտել* որոշակի արտոնություններով, հնարավորինս հովանավորել միջազգային առևտուրը: Թեև մինչև *XIX* դարի կեսերը ձեռնարկվող միջոցառումները մասնակի արդյունք տվեցին, և կայսրությունը չարունակեց մնալ հետամնաց, ագրարային բռնատիրություն, այնուամենայնիվ, միջազգային առևտուրը, շնորհիվ հայերի, հույների ու հրեաների զգալի առաջընթաց ապրեց:

XVII դարի վերջերից Արևմտյան Հայաստանի վրայով Եվրոպա-Կենտրոնական Ասիա ու Հնդկաչին առևտրական հարաբերություններում աճեց արևմտահայ քաղաքների, մասնավորապես՝ Էրզրումի, Վանի, Արաբկիրի, Թոխաթի, Ակնի, Կարսի, Բայազետի, ավելի ուշ՝ Մուշի, Բաղեշի (Բիթլիսի) նշանակությունը: Ի տարբերություն գյուղական կյանքի, որը շարունակեց մնալ ծայրագույն հետամնացության պայմաններում, քաղաքային կյանքը նկատելիորեն աշխուժացավ: Հատկանշական է, որ օսմանյան տիրապետության սկզբնական շրջանում՝ XVI–XVII դարերում Արևմտյան Հայաստանի, և՛ քաղաքները և՛ գյուղերը գերազանցապես հայաբնակ էին:

Հատկապես կարևոր դեր ստանձնեց Արևմտյան Հայաստանի կենտրոնական քաղաք Էրզրումը, որը գտնվում էր միջազգային առևտրական ճանապարհի վրա: Զանազան ապրանքներով բեռնավորված եվրոպական նավերը ժամանում էին Տրապիզոն նավահանգիստ, ապա առևտրական ուղին շարունակվում էր ցամաքային ճանապարհով՝ բաբերդ քաղաքի վրայով հասնում Էրզրում, այնտեղից էլ՝ Պարսկաստան ու Հնդկաստան: Ցամաքային առևտուրը կատարվում էր Կոստանդնուպոլսի վրայով, անցնում Անկարա-Սեբաստիա-Էրզրում ուղիով: Միջերկրական ծովի արևելյան առափնյա շրջաններից, մասնավորապես Կիլիկիայից Մալաթիայով եկող առևտրական ուղին ևս անցնում էր Էրզրումով: Այն անհամեմատ ապահով էր, քանի որ քաղաքական անկայունությամբ աչքի ընկնող մի երկրի համար, որպիսին Օսմանյան տերությունն էր, նախընտրելի էր մշտապես ռազմական ուժեր ունեցող քաղաքներով անցնող առևտուրը, տվյալ դեպքում՝ Էրզրումը: Այդ մասին վկայում են Արևելք ժամանած եվրոպացի ուղեգիրները: Արդեն XVII դարի երկրորդ կեսի ֆրանսիացի ճանապարհորդ Տավերնիեն հավաստում էր, որ Էրզրումը Օսմանյան կայսրության տարանցիկ առևտրի խոշորագույն կետերից է[1]: Մեկ այլ ֆրանսիացի՝ 18-րդ դարի սկզբի հեղինակ Պիտտոն դե Տուրնեֆորն, ուղղակիորեն հաստատում է իր հայրենակցի միտքը. «Այս քաղաքը (Էրզրումը – Ա.Մ.) Հնդկաստանից եկող ապրանքների համար տարանցիկ առևտրի կենտրոն է և հանգստավայր...: Բոլոր ապրանքները, որոնցից գլխավորներն են Պարսկաստանի մետաքսը, բամբակը, թմրադեղերը, զանազան գույ-

[1] **Tavernier J.B.**, Les six voyages de Jean Babtiste Tavernier en Perse et aux Indes, Paris, 1679, p. 11–12.

ների մահուդը, անցնում էին միայն Հայաստանի վրայով...: Մենք զարմացել էինք՝ տեսնելով էրզրումում ներմուծված այդքան մեծ քանակությամբ ներկ, որ կոչվում էր բոյա և օգտագործվում կաշվե ու բրդյա գործվածքների ներկման համար»[2]: XVIII դարի վերջի հայ աշխարհագետ Ղուկաս Ինճիճյանի վկայությամբ՝ էրզրումի բարգավաճ վիճակի հիմնական աղբյուրը Հնդկաստանի և Եվրոպայի միջև ընթացող ցամաքային տարանցիկ առևտրական ճանապարհների վրա գտնվելու հանգամանքն էր: Նույն հեղինակի խոսքերով այս քաղաքը զանազան ապրանքներ, հատկապես՝ մորթեղեն, դեղորայքի կենդանական հումք, Ախալցխայից ստացված չորացված մրգեղեն, ապխտած միս ու Վանա տառեխ ձուկ, Թոխաթից բերված սպղնձե անոթներ, գորգեր ու կարպետներ և այլն, առաքում էր գրեթե բոլոր ուղղություններով՝ մինչև Գաղղիա (Ֆրանսիա), Հոլանդիա, Անգլիա, Գերմանիա: Քաղաքը սերտ տնտեսական կապեր ուներ նաև Մոսկվայի, Կոստանդնուպոլսի, Բալկանների, միջինասիական Բուխարա քաղաքի, Պարսկաստանի, Հնդկաստանի ու արաբական երկրների հետ[3]:

Ուշագրավ է, որ այդ հսկայածավալ առևտուրը գերազանցապես կենտրոնացած էր հայ վաճառականների ձեռքում: Այս հարցում ևս տարբեր հեղինակների կարծիքները նույնանուն են: Վկայակոչենք մի քանիսին: Կոմս Մորսիլլին գրում էր. «Թանկարժեք քարերը նույնպես զարձան առևտրի առարկա: Հայերն այդ առևտրում առաջին տեղն են գրավում. նրանք այդ քարերը ձեռք են բերում Պարսկաստանի՝ Մոնղոլիային սահմանակից տարածքներից ...բերում են Ասիայի զանազան նավահանգիստները և ամենագեղեցիկները բերնում են Եվրոպայի համար, իսկ նվազ արժեքավորները թողնում են Կոստանդնուպոլսի համար, ուր նախկինում քարերը գնահատվում էին միայն ըստ մեծության: Այժմ արդեն քրիստոնյաները սովորեցրել են թուրքերին ճաշակ՝ քարերը գնահատելու համար»[4]: Հատկանշական է, որ արևմտահայ վաճառականները ոչ միայն աշխույժ մասնակցություն էին բերում Արևմուտքի երկրների հետ տարվող առևտրի կազմակերպմանը, այլև հաճախ, բնակություն հաստատելով Եվրոպայում, իրենց ձեռքն էին վերցնում բուն եվրոպական

---

[2] **Pitton de Tournefort.** Relation c' un voyage du Levant, v. 2, Lyon, 1717, p. 262.

[3] Ինճիճեան Ղ., Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, մաս Ա, Վենետիկ, 1806, էջ 63–64:

[4] I.e comte de Marsigli. L'état militaire ottoman. Amsterdam, 1732, p. 50–51.

երկրների տնտեսության որոշ բնագավառներ և իրականացնում այնտեղ արտադրվող ապրանքների առաքումն ասիական երկրներ: «Ասիայում,- գրում է Տուրնեֆորը,- Վենետիկի, Ֆրանսիայի և Գերմանիայի զանազան ապրանքների վաճառքով հայերն են զբաղվում»[5]:

Հայերի՝ որպես ճանաչված առևտրականների մասին ավելորդ չենք համարում մեջբերել նաև Օսմանյան կայսրության պատմության հայտնի մասնագետ Մ. դը Օսոնի խոսքերը. «Հայերը փոքրասիական նավահանգիստներում շատ հաճախ են իրենց նվիրում վաճառականությանը: Այդ նրանք են, և ոչ թե մուսուլմանները, որ կազմում են այդ հարուստ քարավանները, որոնք յուրաքանչյուր տարի դնում են Ասիայի տարբեր շրջանները, որպեսզի այնտեղ տարածեն աշխարհի չորս մասերի արտադրությունը»[6]: «Են ի նմա (Էրզրումում – Ա.Մ.),- հաստատում է նույն միտքը հայ հեղինակը,- և բազմութիւն վաճառականաց, մանաւանդ յազգէս Հայոց, որոց հաճախութիւն դասէ զերկիրում ի կարգս վաճառաշահ քաղաքաց օսմանեան տերութեան»[7]:

Արևմտյան Հայաստանի տարանցիկ առևտրի մյուս նշանավոր կենտրոնը Թոխաթն էր՝ պատմական Փոքր Հայքի երբեմնի Եվդոկիա քաղաքը: Այն մեծ համարում ուներ արդեն XVII դարի երկրորդ կեսին: Տավերնիեն գրում էր. «Հատկապես նկատելին Թոխաթում այն է, որ այս քաղաքն Արևելք տանող տարանցիկ կայաններից մեկն է: Այնտեղ անվերջ քարավաններ են գալիս Պարսկաստանից, Դիարբեքիրից, Բաղդադից, Կոստանդնուպոլսից, Զմյուռնիայից, Սինոպից և այլ վայրերից»[8]: Ըստ Ղ. Ինճիճյանի՝ նույն իրավիճակն էր Թոխաթում նաև XVIII դարում. «Ի Թօգատ գտան յառաջագոյն և գտանին ևս վաճառականք, զորոց նման սակաւ ունի տէրութիւն օսմանեան ընդ ամենայն սահմանս իւր, որ յԱսիա, անդ յաճախեն երթևեկութիւն կարաւանաց յամէնայն կողմանց, նաև վաճառականք հնդկաց ընդ Մոսուլ, նոյնպէս և վաճառականք պարսից...»[9]: Հակոբ Դիվրիկեցի տարեգիրը, հաստատելով քաղաքի բարգավաճ վիճակի մասին

---

[5] **Pitton de Tournefort.** Relation d' un voyage du Levant, lettre XX.

[6] **d'Ohsson M.,** Tableau général de l'Empire ottoman, v. 4, Paris, 1820, p. 207.

[7] **Ինճիճեան Ղ.,** նշվ. աշխ., էջ 71:

[8] **Tavernier J.B.,** Les six voyages de Jean Babtiste Tavernier en Perse et aux Indes, Paris, 1679, p. 11–12.

[9] **Ինճիճեան Ղ.,** նշվ. աշխ., էջ 292:

նույն միտքը՝ 1777 թ. գրված մի ժամանակագրության մեջ այն համեմատում է բազմաթիվ վաճառատներ, աշխույժ առևտուր ունեցող վաճառաշահ Կոստանդնուպոլսի հետ[10]:

Այսպիսով՝ Արևմտյան Հայաստանը, հայտնվելով օսմանյան հետամնաց ռազմաավատատիրական համակարգի ճիրաններում, տնտեսապես հետընթաց ապրեց և դուրս մղվեց բնականոն տնտեսական զարգացման հունից, միաժամանակ, XVII դ. կեսին հաստատված համեմատական խաղաղության պայմաններում, կրկին ի հայտ բերեց քաղաքային կյանքի աշխուժացման նշաններ: Տնտեսական անկում ապրող կայսրության գանձարանը լցնելու նպատակով սուլթանները ստիպված եղան վերականգնել հպատակ ժողովուրդների, այդ թվում՝ հայերի ավանդական առևտրական գործունեությունը՝ առանձին դեպքերում նրանց չնորհելով նաև որոշակի արտոնություններ: Կայսրության մայրաքաղաքում հայերի ձեռքում հայտնվեց նաև արքունի ճարտարապետությունը (Պալյանների գերդաստան), գինագործությունը, դրամահատությունը, նավաշինությունը (Տատյաններ, Տյուզյաններ, Գավաֆյաններ և այլք): «Մ՛վ է առևտուր անում Թուրքիայում,- գրում է տնտեսագետ Ֆ. Էնգելսը,- համենայն դեպս ոչ թուրքերը...: Ծովային խոշոր նավահանգիստներում հաստատված հույները, հայերը, սլավոնները և արևմտաեվրոպացիներն իրենց ձեռքում են պահում ամբողջ առևտուրը...: Հեռացրեք Եվրոպայից բոլոր թուրքերին, առևտուրը դրանից բնավ չի տուժի»[11]:

Ասիա-Եվրոպա առևտրական ուղիների վերագործարկումը չարժեց Ռուսական կայսրության հետաքրքրությունն Արևմտյան Հայաստանի նկատմամբ: Ցարական արքունիքը, հատկապես Թագուհի Եկատերինա II-ը (1762–1796 թթ.) ևս սկսեց չահագրգռել թուրքահպատակ հայ առևտրականներին՝ ասիական երկրների հետ ռուսական առևտուրն ավելի աշխուժացնելու նպատակով:

Միջազգային տարանցիկ առևտրի առաքելությունն արևմտահայ վաճառականները ստանձնեցին հատկապես XIX դարում, երբ սրվեց Արևելքի, մասնավորապես օրեցօր թուլացող Օսմանյան կայսրության նկատմամբ իրենց հսկողությունը հաստատելու եվրոպական խոշոր տերությունների պայքարը: Տարածաշրջան, հատկապես Արևմտյան Հայաստան այցելեցին բազմաթիվ եվրոպացի ճանապար-

---

[10] Մանր ժամանակագրություններ, կազմ. Վ. Հակոբյան, հ. 2, Եր., 1956, էջ 459:

[11] Энгельс Ф., Турецкий вопрос. К. Маркс и Ф. Энгельс, сочинения, т. 9, с. 25.

հորդներ, հոգևոր քարոզիչներ ու քաղաքական գործիչներ՝ ելնելով իրենց հետաքրքրություններից և իրենց երկրների չահերից: Ղուկաս Ինճիճյանի մի հիշատակությունից հետևում է, որ XIX դարի սկզբին հայ առևտրականների գործունեության աշխարհագրությունը խիստ ընդլայնվել էր՝ ընդգրկելով Անգլիայից մինչև Ինդոնեզիա հսկայածավալ տարածքը. «Հայք կարի իմն անճնատուր են վաճառականութեան և ամէն մտադրութեամբ պարապին ի նմա որում՝ են ընդունակ, որանք են արուեստապետք ոչ միայն վաճառականութենէ արուեստից, այլ նաև ձեռնտուք մեծապէս վաճառականութենէ առաւել մեծամեծ քաղաքացն Եւրոպիոյ: Տեսանեմք զսոսա գալ ի խորոց Պարսկաստանաեայց մինչ ի Լիվօռնօ. չեն բազում ժամանակս յորմէ՛հետէ բնակութիւն կալան ի Մառսիլիա, գտանին ի Հոլանտա, յԱնգլիա, ի Վենետիկ, ճանապարհորդեն ի Մոդոլ, ի Շիամ որ է ի Հնդիկս, ի Ճեավա, ի Փիլիպպեան կղզիս և ընդ ամէն արևելս բաց ի չինաց»[12]: Ասվածից հետևում է, որ 19-րդ դարում զգալիորեն վերականգնվել էր միջազգային առևտրում թե՛ Արևմտյան Հայաստանի տեղը, և թե՛ հայ վաճառականների երբեմնի դերը: Ռուս նշանավոր հայագետ Սերգեյ Գլինկան նկատել է, որ այդ ժամանակ արդեն «Հայաստանն իր աշխարհագրական դիրքով Եվրոպան Արևելքի հետ կապող ցամաքային միակ հաղորդակցությունն է»[13]: XIX դարում Եվրոպայից Հնդկաստան տանող Թոխաթ-Կարին-Բասեն-Դարույնք և Տրապիզոն-Բաբերդ-Կարին-Դարույնք (Բայազետ) առևտրական ուղիների կողքին հետզհետե կենդանացավ հնագույն ժամանակներից հայտնի հարավային երթուղին՝ Միջերկրականի առափնյա չրջաններ (նախկին Լևանտի երկրներ), Մալաթիա, Ամիդ (Դիարբեքիր)-Մուշ-Բաղեշ-Վան, այդ տեղից էլ՝ Պարսկաստան ու Զինաստան: Կարին-Էրզրումը չարունակում էր պահպանել արևմտահայ գլխավոր վարչատնտեսական կենտրոնի դերը, որի բնակչության թիվը հասնում էր մոտ 110 հազ. մարդու[14]: 1811–1812 թթ. այստեղ ժամանած գերմանացի ուղեգիր Ֆրեյգանի վկայությամբ՝ «Էրզրումը Հայաստանի արևմտյան մայրաքաղաքն է, նմանապես պահեստը թուրքական առևտրի, որ այստեղից անցնում է Հնդկաստան»[15]:

---

[12] Ինճիճեան Ղ., նշվ. աշխ., էջ 47:

[13] Глинка С.Н., Обозрение истории армянского народа. Москва. 1832. ч. 1. с. 35.

[14] Մելքոնյան Ա., Էրզրում, Երևան, 1994, էջ 40–41:

[15] Հակոբյան Հովհ., Ուղեգրություններ, հ. 6, Երևան, 1934, էջ 410:

XIX դարասկզբին նույն բարդավաճ վիճակն է արձանագրում Նապոլեոն Բոնապարտի կողմից Արևելք ուղարկված դեներալ Գարդանը Թոխաթ քաղաքում. «Հազար կաթոլիկ հայեր կան այդտեղ: Պատրաստում են կտավեղեն, սակայն առևտրի գլխավոր նյութերն են 500000 օխա անագ և խոշոր քանակությամբ պղինձ: Այս քաղաքը մի պահեստ է Իզմիրի ապրանքների համար, որոնք հետո տարածվում են դեպի Էրզրում, Կեսարիա և Մոսուլ»[16]: Նույն հեղինակը նկատել է, որ այս տարածաշրջանը մեծապես ներքաշվել է իր հայրենիքի հետ իրականացվող առևտրի ոլորտ: Ցրանսիայից բերվում են պերճանքի զանազան առարկաներ, անագ, կապար, զենք, ժամացույցներ, որոնց դիմաց փոխադարձաբար կարելի է ակնկալել պարսկական մետաքս, ծխախոտ, բուրդ, դեղորայք, ադամանդ, մարգարիտ և այլն: «Արևելքի մեր առևտրի մի մասն է կազմում դա,- ոգևորությամբ գրում է ֆրանսիացի դիվանագետը,- որ տարեկան Ցրանսիային բերում է վաթսուն միլիոնի զուտ չահույթ: Մարսելլն այդ առևտրի գլխավոր քաղաքն է: Թող ինձ թույլ տրվի հիշատակել այդ, հայրենիքից հազար հինգհարյուր մղոն հեռավորության վրա»[17]: Մեկ այլ տեղ Գարդանն ավելացնում է, որ այդ առևտրի մեջ, հատկապես ասիական երկրներում, ամենամեծ դերակատարը հայերն են[18]:

Ինչպես նշվեց, XIX դարում որոշակիորեն աշխուժացավ Եվրոպայի միջերկրածովյան երկրների հետ Ասիա տանող ճանապարհներից Արևմտյան Հայաստանի հարավային շրջաններով անցնող առևտրական ուղին, որի վրա գտնվող նշանավոր քաղաքներից էր համանուն լճի արևելյան ափին ընկած հինավուրց Վան քաղաքը: Ուշագրավ է, որ առևտուրն ընթանում էր ոչ միայն ցամաքով, այլ նաև լճի վրայով՝ նավակներով՝ Դատվան-Վան գծով: «Վանն ունի տասնհինգից մինչև քսան հազար բնակիչ, մեծ մասամբ հայ..., կարդում ենք նշանավոր ֆրանսիացի դիվանագետ, Նապոլեոն I-ի կողմից հնդկական արշավանքի նախապատրաստման նպատակով Արևելք ժամանած Պիեր Ամեդե Ժոբերը (Pierre-Amedee Emilien-Probe Jaubert): Լճի միջով Մուշի և Բիթլիսի հետ կատարվող առևտուրը, և Բաղդադից, Մոսուլից, Կարա Չիոլանից (Qara-Tchiolan), Մարդինից

---

[16] Նույն տեղում, էջ 91, հմմտ.՝ "Journal d'un voyage dans la Turquie d'Asie et la Perse, fait en 1807 et 1808". Paris, 1809.

[17] Հակոբյան Հովի., Ուղևորություններ. էջ 125:

[18] Նույն տեղում, էջ 203:

և Դիարբեքիրից Թիֆլիս և Պարսկաստանի հյուսիսային մասը գնացող կարավանները մեծ առավելություններ են ընծայում Վանի բնակիչներին: Լճում կատարվող ձկնորսությունը տարեկան նրանց հիսունից վաթսուն հազար ղուրուշ եկամուտ է տալիս»[19]: Ուշագրավ է, որ նույն ժամանակ այդ տարանցիկ ճանապարհի վրա ընկած պարսկական քաղաքները ոչ միայն աչքի չէին ընկնում տնտեսական վերելքով, այլև քայքայման ուղի էին բռնել: Այդ հանգամանքը նկատել են տարածաշրջան այցելած չատ եվրոպացիներ: Այսպես, ըստ անգլիացի դիվանագետ Ուիլյամ Աուզլեյի (1812 թ.)՝ անհամեմատելի են քայքայվող ու կիսամայի պարսկական քաղաքները աշխույժ առևտուր ունեցող և մշտապես եռուզեռի մեջ գտնվող Էրզրումի հետ[20]:

Խոսելով Արևելք-Արևմուտք տնտեսական հարաբերությունների սերտացման և դրանում Արևմտյան Հայաստանի ու առհասարակ հայության դերի մասին՝ միաժամանակ չի կարելի մոռանալ, որ այդ զարգացումները որքան էլ նկատելի լինեին, պայմանավորված Օսմանյան կայսրության ընդհանուր ճգնաժամային իրավիճակով, կայուն բնույթ չէին կրում և ի վերջո դատապարտված էին անհաջողության: Պատահական չէ, որ 1820-ական թվականներին՝ պարսկա-թուրքական և ռուս-թուրքական պատերազմների ընթացքում կայսրության արևելյան նահանգներում տիրող առանց այն էլ անկայուն քաղաքական իրավիճակն ավելի սրվեց, առևտրատնտեսական առաջընթացը լիովին դադարեց և այստեղով անցնող միջազգային տարանցիկ ուղիներն անգործության մատնվեցին: Նման անկման պլխավոր պատճառներից մեկը եղավ 1829–1830 թթ. Արևմտյան Հայաստանի զանազան գավառներից, հատկապես Կարինից, Կարսից, Դարույնքից (Բայազետ) ու Ալաշկերտից չուրջ 74 հազար հայերի (որոնց թվում՝ հազարավոր վաճառականներ ու արհեստավորներ) արտագաղթը դեպի Ռուսական կայսրության սահմաններ[21]:

Ամբողջ XIX դարի ընթացքում կրկնվող ռուս-թուրքական պատերազմների (1828–1829, 1853–1856, 1877–1878 թթ.) ու արևմտա-

---

[19] Նույն տեղում, էջ 220, հմմտ.՝ **P. Am. Jaubert**, Voyage en Armnnie et en Perse, fait dans les annees 1805 et 1806, Paris, 1859.

[20] **Հակոբյան Հովհ.**, Ուղեգրություններ, էջ 485: Հմմտ. Travels in various Countres of the East more particulary Persia, By Sir William Ousely, knight, L. D. London.

[21] **Մելքոնյան Ա.**, Էրզրում, էջ 138–154:

Հայերի նոր արտագաղթերի, 1890-ական թվականներին սուլթան Համիդ II-ի կազմակերպած հայկական կոտորածների հետևանքով քաղաքական ու տնտեսական ճգնաժամն ավելի խորացավ: Նման պայմաններում Եվրոպայի հետ առևտուրը Հայ վաճառականները ստիպված եղան Էրզրումից ու արևմտահայ այլ քաղաքներից տեղափոխել համեմատաբար ավելի ապահով Կոստանդնուպոլիս ու Զմյուռնիա քաղաքներ:

1878 թ. Բեռլինի վեհաժողովից հետո, երբ հայկական հարցը, այն է՝ եվրոպական մեծ տերությունների հսկողությամբ սուլթանական կառավարության կողմից Արևմտյան Հայաստանում բարեփոխումներ իրականացնելու խնդիրը, դարձավ միջազգային դիվանագիտության հարց, որոշակիորեն նկատվեց առևտրի ոլորտից հայերին դուրս մղելու միտում: Նախ, սուլթան Համիդ II-ը, հաստատելով արյունալի բռնատիրական ռեժիմ, ոչ միայն փորձեց հայերին միջազգային տնտեսական կյանքից դուրս մղել, այլև իրականացնել զանգվածային կոտորածներ, որոնց արդյունքում 1894–1896 թթ. զոհվեց չուրջ 300 հազար հայ: Երկրորդ, Եվրոպական տերությունները, մասնավորապես Անգլիան, Ռուսաստանը, Ավստրո-Հունգարիան և Ֆրանսիան իրենց ազդեցությունը տարածելով Օսմանյան կայսրության վրա, իրենց հերթին լուրջ մրցակիցներ դարձան թուրքահպատակ ժողովուրդների առևտրական դասին: Բավական է նշել, որ XIX դարի վերջին թուրքական տերության տնտեսությունն այնքան էր ընկել եվրոպական կապիտալի ազդեցության տակ, որ տեղական դրամական միավորը՝ արժեզրկված թուրքական լիրան, դրեթե լիովին դուրս էր մղվել լայն շրջանառություն ապահովող ֆրանկի (նապոլեոն ոսկե դրամներ) ավստրիական դուկատի, ռուսական ռուբլու կողմից[22]:

XIX դարի վերջին և XX դարի սկզբին հայ առևտրական դասի հետ թուրք գործարարների մրցակցելու անկարողությունը դարձավ 1915–1916 թթ. Հայոց ցեղասպանության գլխավոր տնտեսական չարժառիթը: Արևմտյան Հայաստանում երիտասարդ թուրքերի կազմակերպած Հայոց ցեղասպանությունը, որի հետևանքով հայ ժողովուրդը զրկվեց իր Հայրենիքի արևմտյան մասից, անդառնալի հար-

[22] **Համբարյան Ա.**, Ազգարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում, Երևան, 1965, էջ 298–300:

ված հասցրեց նաև Արևելք-Արևմուտք տնտեսական զարգացումներին ու առհասարակ համաշխարհային քաղաքակրթությանը:

ЗАПАДНАЯ АРМЕНИЯ В СФЕРЕ ТОРГОВЫХ ОТНОШЕНИЙ ВОСТОК-ЗАПАД

Армянское нагорье (Западная и Восточная Армения) – Родина армянского народа, находясь на торговых путях, связывавших Малую Азию и Месопотамию с Иранским плоскогорьем, на протяжении тысячелетий было одним из центров цивилизационных отношений. Одна из магистралей известного издревле Шелкового пути, связывавшего Китай с Европой проходила через Армению. Эта магистраль, привнеся весомый вклад в мировую экономическую жизнь, почти без перерыва действовала до второй половины XI века, когда сельджуки-тюрки начали свои опустошительные вторжения.

В дальнейшем, в конце XIX в. и первых десятилетиях XX в. антиармянская политика Османской империи и Геноцид армян, организованный младотурками в Западной Армении, в результате которого армянский народ был лишен западной части своей родины, нанесли непоправимый урон экономическим отношениям Восток-Запад и, в целом, мировой цивилизации.

WESTERN ARMENIA IN THE SPHERE OF THE EAST-WEST TRADE RELATIONS

The Armenian Highland (Western and Eastern Armenia) – the Motherland of the Armenian people, being on the trade routs connecting Asia Minor, Mesopotamia and the Iranian plateau, during millennia was one of the centres of civilizational relations. One of the main routs of the famous ancient Silk Road, connecting China with Europe crossed Armenia. This rout, contributing greatly to the world economic life, functioned

almost without interruption until the second half of XI century, when started the Seljuk-Turks' devastating invasions.

Later, at the end of XIX and first decades of XX centuries anti-Armenian policy of the Ottoman Empire and the Armenian Genocide organized by the Young Turks in Western Armenia (as a result of which the Armenian people was deprived of the western part of its Motherland), had an irreparable impact on the economic relations between East and West, and in its whole entity on world civilization.

Հայաստանի քաղաքակրթական ավանդը Մեսրոպի ճանապարհի պատմության մեջ. Միջազգային գիտաժողովի նյութեր. 2011 թ. նոյեմբերի 21–23 / խմբ. խորհուրդ., եր.. Պատմության ինստիտուտ, 2012, 423 էջ, էջ 4–17:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՀԱՅԱԳԵՏ ՀԱԿՈՎԲՈՍ ՏԱՇՅԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Մխիթարյան միաբանության հայագիտական հարուստ ժառանգության մեջ դժվար է առանձնացնել մի բնագավառ, որը դուրս է մնացել այդ հզոր գիտական դպրոցի հետազոտության տեսադաշտից: Այդ դարբնոցում կոփված հետազոտողների ուսումնասիրությունները վերաբերում են ոչ միայն հայագիտության բոլոր հիմնական ճյուղերին՝ լեզվաբանությանը, գրականագիտությանը, պատմագիտությանը, արվեստաբանությանը, փիլիսոփայությանը, կրոնագիտությանը և այլն, այլև վերոնշյալ գիտական ուղղությունների առանձին, հաճախ՝ նեղ մասնագիտական ոլորտներին: Ընդ որում՝ կան բնագավառներ, որոնց ուսումնասիրությանն առաջինը ձեռնամուխ են եղել հենց Մխիթարյանները և դարձել դրանց հիմնադիրները:

Մխիթարյանների հայագիտական ժառանգության մեջ ծանրակշիռ տեղ ունի պատմագիտության բնագավառը, որի խոշորագույն ներկայացուցիչներից Միքայել Չամչյանը հիրավի նաև նոր ժամանակաշրջանի հայ պատմագիտական դպրոցի հիմնադիրն է: Հայագիտությանը մատուցած ծառայությունների մեջ Մխիթարյանների դերը, հատկապես մեծ է քաղաքական հույժ կարևորություն ունեցող այնպիսի ոլորտներում, որպիսին պատմական աշխարհագրությունն ու ժողովրդագրությունն են: Դրանցից ժողովրդագրության ոլորտի նշանակությունն առանձնապես ընդգծվում է ներկա փուլում, քանի որ օտար պատմաբանների, մասնավորապես թուրք-ադրբեջանական պատմագրության կողմից խեղաթյուրվող հայոց պատմության հիմնահարցերի մի զգալի մասը բաժին է ընկնում ժողովրդագրությանը, մասնավորապես հայերի ծագումնաբանության, բնիկության-եկվորության, էթնոկրոնական և այլ խնդիրներին:

Հատկանշական է, որ Մխիթարյաններն իր սկզբանե հատուկ հետազոտության նյութ են դարձրել Հայաստանի պատմական աշխարհագրության և ժողովրդագրության հիմնահարցերը և կարելի է ասել, որ այսօր էլ շարունակում են մնալ պատմագիտության այդ ոլորտի ամենախոշոր ներկայացուցիչները: Այսպես. ամբողջ միջնադարի և նոր դարաշրջանի սկզբնափուլի (XVII-րդ դ. – XVIII դ.

առաջին կես) հայ հեղինակների մոտ ժողովրդագրության հիմնահարցերը դրեթե լիովին անտեսված էին:

Թերևս, կարելի է մատնանշել միայն մի քանի հեղինակների, օրինակ՝ Հակոբ Կարնեցուն[1] (XVII-րդ դ. կես), Հայոց կաթողիկոս Սիմեոն Երևանցուն[2] (XVIII դ. երկրորդ կես) և այլոց, որոնք բազմաբնույթ հարցերի շարքում անդրադարձ են ունեցել նաև ժողովրդագրական խնդիրներին:

Միայն XVIII դ. վերջին Մխիթարյան միաբան Ղուկաս Ինճիճյանի[3] հետազոտությունների շնորհիվ պատմական ժողովրդագրությունը դարձավ հայագիտության կարևոր բնագավառներից մեկը: Ուշագրավ է, որ այդ ոլորտն այդուհետ ավանդաբար մնաց Մխիթարյանների հետազոտությունների կիզակետում: Ի դեպ, այդ ավանդույթը պահպանվեց նաև 1773 թ. Տրիեստում, ապա 1811 թ. Վիեննայում հաստատված Մխիթարյանների մոտ:

Պատմաաշխարհագրական և ժողովրդագրական ուսումնասիրություններով Վիեննայում սկսեցին զբաղվել, մասնավորապես XIX դ. վերջին և XX դ. սկզբին, երբ լույս տեսան Սարովբե Տերվիշյանի «Հնդեվրոպական նախալեզու» (1885), Հակոբ Քոսյանի «Հայք ի Զմիւռնիա և ի շրջակայս» (Հ. 1–2, 1899), «Բարձր Հայք» (Հ. ԱԲ, 1925–1926) և այլ աշխատություններ: Դրանք նվիրված էին հայերենի հնդեվրոպական ծագման, Հայկական լեռնաշխարհում հայ էթնոսի ձևավորման, Արևմտյան Հայաստանի գավառների էթնոժողովրդագրական գործընթացների և այլ բարդ հիմնախնդիրների լուսաբանմանը: XX դ. սկզբին Հակոբ Քոսյանի հետ համանման հիմնահարցերի լայն քննությամբ հանդես եկավ նաև Մխիթարյան մեկ այլ հեղինակ՝ Հակովբոս Տաշյանը (1866–1933)[4]:

---

[1] **Հակոբ Կարնեցի,** «Տեղագիր Վերին Հայոց», տե՛ս «Մանր ժամանակագրություններ. XIII–XVIII դդ.», կազմեց Վ. Հակոբյան, հ. II, Երևան, 1956, էջ 541–586:

[2] Տե՛ս **Սիմեոն Երեւանցի,** Ճամբո, գիրք, որ կոչի յիշատակարան, Վաղարշապատ, 1873:

[3] Ղ. Ինճիճյանի գիտական հարուստ ժառանգության մեջ հատկապես կարևոր տեղ ունի նրա «Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի» (Վենետիկ, 1806) բազմահատորյակի առաջին հատորը, որն ամբողջապես վերաբերում է Հայաստանի պատմական աշխարհագրությանն ու ժողովրդագրությանը:

[4] **Հ. Տաշյանից** հետո հետագայում ժողովրդագրության որոշ հարցերի հետազոտությամբ հանդես եկան Համազասպ Ոսկյանը (**Համազասպ Ոսկեան,** Բարձր Հայքի վանքերը, Վիեննա, 1950), Հ. Հուլունյանն ու Մ. Հաճյանը (**Հուլունեան Հ.** եւ **Հաճեան Մ.,** Հուշամատեան Խոտորջուրի) և ուրիշներ:

Հ. Տաշյանը, ծնված լինելով Էրզրումի նահանգի Համանուն գավառի նշանավոր հայ կաթողիկե Արծաթի գյուղում, իր գործունեության առանցքը դարձրեց գավառահայության խնդիրների լուծումը: Հոգևոր գործունեությանը զուգընթաց նա չուտով ծավալեց հետազոտական աշխատանք Արևմտյան Հայաստանի, մասնավորապես Կարնո աշխարհի, նրան հարակից գավառների պատմության, աշխարհագրության և ժողովրդագրության ուղղությամբ: Շրջագայելով Էրզրումի, Տրապիզոնի, Սեբաստիայի և այլ նահանգների բազմաթիվ գավառներում՝ նա պատմափիտական ու բանահյուսական արժեք ներկայացնող զգալի նյութ հավաքեց, դրանք եվրոպական ու Մխիթարյան միաբանության արխիվներից քաղած նյութերի և տպագիր գրականության հետ համադրելով, ստեղծեց ժողովրդագրական ու պատմաաշխարհագրական բնույթի մի շարք մնայուն ուսումնասիրություններ: Դրանց մեծ մասը վերաբերում էին Հայրենի Կարնո աշխարհին և հարևան Տայքին ու Փոքր Հայքին, այսինքն՝ առավելապես Արևմտահայաստանի հյուսիսային այն հատվածին, որը ձգվում էր Պոնտական լեռների հարավային ու հյուսիսային լանջերի երկայնքով՝ ընդգրկելով Բաֆռւմի ու Կարսի մարզերից մինչև Սեբաստիա ընկած ընդարձակ մի տարածաշրջան: Այլ կերպ կարելի է այդ երկրամասը բնութագրել՝ որպես առավելապես Ճորոխ գետի ամբողջ ավազանը և Արևմտյան Եփրատի ակունքների շրջանը ներառող մի երկրամաս:

Հայր Հ. Տաշյանի համար վերոհիշյալ տարածաշրջանի ուսումնասիրության նյութի ընտրությունը պատահական չէր: Այն պայմանավորված էր սոսկ հայրենի եզերք-ծննդավայրն ուսումնասիրելու մղումով: Բանն այն է, որ Արևմտյան Հայաստանում դարերի ընթացքում տեղի ունեցած ոչ հայանպաստ էթնոկրոնական գործընթացների առումով այդ երկրամասը ոչ միայն ամենատուժյալ տարածաշրջաններից էր, այլև որպես հետազոտական նյութ ուսումնասիրողների տեսադաշտից դուրս մնացած թեմաներից էր[5]:

---

[5] Վերոհիշյալ տարածաշրջանի էթնոկրոնական դիմախեղումների մասին տե՛ս **Մելքոնյան Ա.**, Հայ բնակչության էթնոկրոնական դիմախեղման գործընթացներն Արևմտյան Հայաստանում 16–18-րդ դարերում. Հայոց պատմության հարցեր. գիտական հոդվածների ժողովածու. թիվ 5. Երևան, 2005. էջ 47–60 և **նույնի՝** Tendencies of Demographic Policy of the Ottoman Authhorities in Western Armenia (XVI century – beginning of the XX century). The Main Issues of Western Armeniancys Claims

Վերոհիշյալ խնդրին նվիրված հետազոտությունները Հակոբոս Տաշյանն ամփոփեց մի շարք աշխատություններում՝ «Տայոց աշխարհ, Փոքր Հայք ու Խաղտիք» (անտիպ), «Հին Հայաստանի արևմտյան սահմանը. Փոքր Հայք և Կողոմենե (Սեբաստիա)» (երկուսն էլ՝ 1917–1918 թթ.) և հատկապես «Հայ բնակչությունը Սև ծովէն մինչև Կարին» (1929): Տաշյանի անտիպ աշխատությունների մի մասը հետագայում հրատարակվեց առանձին գրքով՝ «Տայք, դրացիք և Խոտորջուր» (Վիեննա, 1973) ամբողջական խորագրի ներքո[6]: Նա նաև մի քանի օտար ուղեգիրների պատմաժողովրդագրական բնույթի երկերի թարգմանիչն է ու ծանոթագրողը, որոնց մեջ առանձնանում են Արևմտյան Հայաստանի մասին Հ. Անդերսոնի և Կյումոն եղբայրների հետազոտությունները, որոնք հրատարակվել են Վիեննայում 1919 թ. «Պոնտական ուսումնասիրություն» ընդհանուր վերնագրով:

Հ. Տաշյանի կատարած հետազոտությունների շնորհիվ Հայաստանի պատմական ժողովրդագրության բնագավառում արձանագրվեց որակապես նոր մակարդակ: Հետազոտողը, հետևելով Ղ. Ինճիճյանի օրինակին, փորձեց XX դ. սկզբին Արևմտյան Հայաստանում ստեղծված աղետալի ժողովրդագրական իրավիճակը բացատրել նախորդ ժամանակաշրջաններում տեղի ունեցած հայակուլ էթնոկրոնական բարդ ու բուռն գործընթացների: Հետագարձ հետազոտություն կատարելով՝ նա իր ճամփորդած ժամանակաշրջանի՝ 1910–1911 թթ. իրավիճակը համեմատության մեջ դրեց ինչպես XIX դ. 40-ական թվականների, այնպես էլ XVII–XVIII դդ. իրավիճակների հետ: Այդ դժվարին խնդիրը լուծելու համար Տաշյանը որպես հիմք, հետատոտական հանդրվաններ ընդունեց XVII դ. 40-ական թվականները, մասնավորապես Հակոբ Կարնեցու. «Տեղագիր Վերին Հայոց» վերտառությամբ Հայոնի աշխատության տվյալները, ապա դրանք բաղդատեց XVIII դ. վերջի Ղ. Ինճիճյանի, XIX դ. 40-ական թթ. գերմանացի նշանավոր ճանապարհորդ և հետազոտող Կարլ Ռոխի հա-

---

(International research and practical conferance). Ciprus. Nicosia. April 18–19, 2009, p. 101–116.

[6] Հ. Տաշյանը բացի վերոհիշյալ աշխատություններից հեղինակ է նաև բազմաթիվ բանասիրական, գրաքննադատական, մատենախոսական հետազոտությունների (մանրամասն տե՛ս Հայրունի Մեսրոպ, Հ. Յակոբոս վրդ. Տաշեան՝ գրախօսող ու գիտաքննադատ. Յանճար. 2011):

ղորդումների[7] հետ, կարողացավ վեր հանել ոչ հայանպաստ ժողովրդագրական գործընթացների ամբողջական պատկերը. այն է՝ զանգվածային կոտորածներ ու բռնի մահմեդականացում, էթնոդավանական վերակերպումներ, դրանց արդյունքում՝ վրացացում, թուրքացում, ինքնատիպ նոր հանրույթի՝ այսպես կոչված «կեսկեսների» հանդես գալ, հայության արտագաղթ, զուգահեռաբար՝ թյուրքական ցեղերի, քրդերի ու լազերի ներթափանցում, Հայկական լեռնաշխարհի երբեմնի զտարյուն հայկական տեղանվանաբանության աղճատում և այլն:

Հետազոտական բարձր պատրաստություն պահանջող այդ լրջագույն խնդիրը լուծելու համար հայր Տաշյանը քննության նյութ դարձրեց ամբողջ տարածաշրջանը՝ ըստ նահանգների, գավառ առ գավառ, երբեմն նաև՝ գյուղ առ գյուղ: Նա ամենայն մանրակրկիտությամբ ուսումնասիրեց Համշենը, Սպերը, Բաբերդը, Կիսկիմ Բելդագրակը, Թորթումը, Նարիմանը, Խոտորջուրը, պատմական Խաղտյաց աշխարհը, մասամբ նաև Կարինը, Երզնկան, Ռեփահիեն, Կարսի մարզը և այլն: Պատմաաշխարհագրական տեղագրական հետազոտություններ կատարելիս Տաշյանը ճշգրտում է գավառների ու գյուղերի սահմանները՝ մեծապես օգտագործելով հայտնի քարտեզագիր կիպերտի քարտեզները:

Հակովբոս Տաշյանն ուսումնասիրողների ուշադրությունը հրավիրեց այնպիսի կարևոր խնդրի վրա, որպիսին ազգային ու կրոնադավանական տարբերությունների մշտական չփոթն է: Նա ծանրակշիռ փաստերի հիման վրա ցույց տվեց, որ կրոնադավանական փոփոխություններն ի վերջո դառնում են ազգային վերակերպումների լուրջ պատճառ և ժամանակի ընթացքում անդառնալիորեն այդ նոր էթնոդավանական հանրույթին կտրում են իր ազգային արմատներից: Այդպիսի գործընթացների մեջ հայագետն առանձնացնում է մի[ջ]նադարում՝ Վրաց Բագրատունիների վերելքի շրջանում, Հյուսիսային՝ Հայաստանի բազմաթիվ գավառներում ուղղափառության, տվյալ դեպքում՝ վրացադավանության ընդունումը:

Հայր Տաշյանը հատուկ հետազոտության նյութ է դարձնում Արևմտյան Հայաստանի Հյուսիսում՝ Պոնտական լեռների արևելյան դժվարանցանելի, անտառապատ հատվածում ընկած լեռնային համ-

[7] Koch K., Wanderungen im Oriente während der Yahre 1843 und 1844. Weimar, 1846.

չեն գավառը, որի հայութիւնը մահմեդականացել էր ադևն 17–18-րդ դարերում: «Ունինք դաւառներ, ինչպէս Սև գետ ու Համշէն,- դրում է նա,- ուր քրիստոնէութեան բնաջնջման հետ հայութիւնն ալ այլևս կորսուած է, որչափ ալ հայ լեզուն տակաւին առկայծնալ ըլլայ հոս ու հոն: Ուրիշ դաւառներ ալ կան, ուր թէև հայութիւնը տոկացած է, բայց զանգուածային դաղթականացմունք և ոչ նուազ զանգուածային գաղթականութիւններ հիմնովին փոխած են ազգաբնակութեան նկարագիրը»[8]: Մեկ այլ տեղ կարդում ենք. «Այս հայութիւնը ժԸ դարուն ընթացքին արիւնալից կոտորածներով բռնադատուած է իսլամական կրօնքն ընդունիլ. բայց պահած է չատ մասամբ իւր հայ նկարագիրը, գոնէ մասամբ նաև հայերէն լեզուն, առանձնապէս հայ Համշէնը»[9]: Հետազոտողը համոզված է, որ շուրջ երեք դար անց՝ ինչպես Համշենահայությունը, այնպես էլ այլ գավառների իսլամացած հայերը, պատրաստ են պատեհ առիթի դեպքում վերադառնալ իրենց հայկական-քրիստոնեական արմատներին: Սակայն Օսմանյան կայսրությունում գործող օրենքներն արգելք են հանդիսանում նման քայլերին, քանի որ «թուրքական և իսլամական օրենքով իսլամացածի մը քրիստոնէութեան վերադարձի փորձն իսկ մահապարտութեան պատիժ կը կրէ»[10]: Հատակ երևում է, որ Հակոբոս Տաշյանը խորությամբ ըմբռնել է կրկին իր հավատին վերադառնալու հայության ձգտումն օրենսդրորեն արգելելու օսմանյան իշխանությունների նպատակը՝ հասնել քրիստոնեության իսպառ վերացմանն ու հպատակ ժողովուրդների թուրքացմանը:

Մխիթարյան վարդապետն առաջին ուսումնասիրողներից էր, ով նկատել էր, որ իսլամացման ճանապարհով թուրքացման գործընթացը հատկապես մեծ չափերով ընթացել է Ախալցխայի էյալեթի տարածքում՝ պատմական Տայքի և Գուգարքի զգալի մասում: Այսինքն՝ ժամանակի ընթացքում ինչպես քաղկեդոնիկ հայերը, այնպես էլ այստեղ հաստատված վրացիները իսլամադավան դառնալով՝ ի վերջո թուրքացել են: Դրանով լուսա է սփռվում ներկայումս խիստ արդիական խնդրի վրա՝ 20-րդ դարում «մեսխեթցի թուրքեր» կոչված հանրույթը ծագումով որևէ կապ չունի թրքության հետ: «Բռնի մահմեդականացումն մշնպէս փութով և այնպէս հիմնովին յառաջ

---

[8] **Տաշեան Հ.Յ.**, Տայք, դրացիք եւ Խոտորջուր, էջ 13–14:

[9] **Հ. Հակոբոս վ. Տաշեան**, Հայ բնակչութիւնը Սև ծովէն մինչեւ Կաւիրմ, էջ 7:

[10] Նույն տեղում, էջ 35:

տարուեցաւ,- Տայք-Գուգարքի մասին գրում է Տաշյանը,- որ քիչ ժամանակէն վրական եկեղեցին դաւդրած էր գոյութիւն ունենալէ այն ամբողջ շրջանակին մէջ՝ վրացի (մեսխ և այլն) և վրացած (հայ և այլն) տարրին այլ քայլն առանց ազդեցութեան չէր կրնար մնալ նաև այն հայոց մասին, որոնք մանաւանդ հոս ի Տայս հայախօս մնացած էին, բայց կանուխէն վրական եկեղեցւոյ կը վերասերէին կամ վրածէս եղած էին ու «վրացի» կ'ըսուէին...»[11]:

Կրոնադավանական վերակերպման ենթարկված հայության զանգվածները բացի «թուրք» կամ «տաճիկ» անվանումներից, պայմանավորված տվյալ տարածաշրջանում այլակրոն կամ այլադավան ուրիշ հանրությունների առկայությամբ, հանդես էին գալիս նաև «գյուրջի (վրացի)», «քուրդ», «լազ» և այլ անուններով: Այսպես՝ Պոնտական լեռների շրջանում, ուր զգալի թիվ էին կազմում լայն արտոնություններով օժտված լազերը, իսլամացած հայության մի մասը հարկադրված էր ներկայանալ իբրև լազ: Հայաստանի հարավային մի շարք քրդաբնակ գավառներում էլ համապատասխանաբար մահմեդականացած հայերին նույնացնում էին քրդերի հետ: Հակովբոս վարդապետը ճիշտ է պատկերացնում այդ գործընթացը՝ համոզված, որ այդ ամենն ուղղորդվում է օսմանյան իշխանությունների կողմից: «Հոս լազ բէկերն այն դերը կը խաղան,- Պոնտական լեռների գավառներում տիրող էթնոդավանական իրավիճակի մասին գրում է նա,- ինչ քուրդ բէկեր ուրիշ տեղեր, գործակցութեամբ թուրք պաշտօնէութեան»[12]: *Հատկանշական է, որ ըստ Տաշյանի՝ վերակերպված այդ հայերի մի մասն էլ՝ ապահովության նկատառումով, փորձել է առհասարակ որևէ ազգության անվան տակ հանդես չգալ և ուղղակի ներկայանալ է որպես «իսլամ»: Այսինքն՝ ստեղծված դժնդակ պայմաններում վերակերպված հայերի համար ընդունելի էր ամեն մի էթնոնիմ, բայց «հայ ենք չեն կրնար ըսել. որովհետև «հայ» և «քրիստոնեայ» համազօր բառեր եղած են հոս, ինչպէս ուրիշ շատ տեղեր ալ»*[13]:

Հակովբոս Տաշյանի ժողովրդագրական դիտարկումների մեջ կարևոր է նաև 1829–1830 թթ. արևմտահայերի վերաբնակեցման խնդրի գնահատականը: Հայ պատմագրության մեջ այդ հիմնահար-

---

[11] **Տաշեան Հ.Յ.**, Տայք. դրացիք եւ Խոտորջուր, էջ 62–63, հմմտ.՝ **Brosset M.**, Histoire de la Georgie, Petersburg, II, էջ 227:

[12] **Հ. Հակովբոս վ. Տաշեան**, Հայ բնակչութիւնը Սեւ ծովէն մինչեւ Կարին, էջ 83:

[13] Նույն տեղում, էջ 82:

ցին հետազոտողների զգալի մասը, մասնավորապես խորհրդահայ հեղինակները, հիմնականում մոտեցել են Արևելյան Հայաստանի ժողովրդագրական իրավիճակի տեսանկյունից: Հաշվի առնելով, որ այդ վերաբնակեցումը նկատելիորեն վերականգնել է Ջավախքի, Շիրակի ու Սևանի ավազանի նախկին հայեցի էթնոնկարագիրը, նրանք այն համարել են զուտ դրական երևույթ: Նման մոտեցման դեպքում մոռացության են տրվել հայ բնակչության արտահոսքի աղետալի հետևանքներն Արևմտյան Հայաստանի համար: Հայր Տաշյանն այստեղ ևս առանձնանում է իր ճշգրիտ դնահատականով. այն է՝ հայրենիքի մի հատվածի «վերահայացումը» մի այլ հատվածի հաշվին ամբողջության մեջ չի կարող ունենալ միայն դրական հետևանք[14]*:*

Հ. Տաշյանն ընդգծում է, որ թեև Արևմտյան Հայաստանի ժողովրդագրական պատկերը նկատելիորեն փոխվել է ի վնաս հայության, այդուհանդերձ դա չի նշանակում, թե երկրամասը ժամանակին զուտ հայաբնակ չի եղել: Դրա օգտին են խոսում նաև երկրում պահպանված հայկական բազմաթիվ տեղանունները: Այդ հանգամանքը, ինչպես հիշեցնում է Տաշյանը, դեռ 19-րդ դ. 40-ական թթ. նկատել էր ուղեգիր-հետազոտող Կ. Քոխը[15]*: Անդրադառնալով Կարնո նահանգի Սպեր գավառի էթնիկ պատկերի փոփոխման խնդրին՝ նա գրում է. «Հակառակ այս ամէնուն՝ այլօր ալ Սպերի գաւառը հայ նկարագիրը պահած է նաև անով, որ գիւղերու, լերանց և այլն, բոլոր անուանք հայկական մնացած են»*[16]*: Մեկ այլ տեղ կարդում ենք.- «Երկիրս մէկ ծայրէն միւս ծայրը հայ նկարագիրը պահած է անով՝ որ բոլոր անուանք մնացած են հայերէն»*[17]*:*

Որպես փորձառու ժողովրդագիր, հայր Տաշյանը կարևորել է յուրաքանչյուր տարածաշրջանի վարչաքաղաքական պատկերի լուսաբանումը: Նա հաճախ պատմական անդրադարձներ է կատարել, ճշդրտել ամեն մի օսմանյան վարչական միավորի աշխարհագրական սահմանները, դրանք համեմատել հայկական ավանդական բաժանման հետ: Այդ հետազոտությունները բերել են հետևյալ համոզման. որքան էլ սուլթանական կառավարության ժողովրդագրական քաղաքականությունը միտված է եղել կազմաքանդելու Հայաստանի

---

[14] Տաշեան Հ.Յ., Տայր. դրացիք եւ Խոտորջուր, էջ 173:

[15] Koch K., Wanderungen im Oriente während der Yahre 1843 und 1844, էջ 54–55, 75–80, 88, 246–248 եւ այլն:

[16] Հակոբոս վ. Տաշեան, Հայ բնակութիւնը Սեւ ծովէն մինչեւ Կարին, էջ 52:

[17] Նույն տեղում, էջ 79:

ավանդական վարչաքննիկ համակարգը, օսմանյան իշխանությունների վարչատարածքային ձեռնարկումների հիմքում դարձյալ ընկած է եղել հայկական պատմական գավառաբաժանման սկզբունքը[18]:

Կարծում ենք, որ վերոշարադրյալը բավարար է պնդելու համար, որ Մխիթարյան վարդապետ Հակովբոս Տաշյանը, ի թիվս հայագիտության այլ ոլորտների, կարևոր դեր է կատարել Հայաստանի պատմական ժողովրդագրության բնագավառի կայացման ու զարգացման գործում:

НОВНЫЕ ПРОБЛЕМЫ ДЕМОГРАФИИ АРМЕНИИ В ТРУДАХ АРМЕНОВЕДА АКОВБОСА ТАШЯНА

(РЕЗЮМЕ)

В арменоведческом наследии мхитаристов особое место занимают историкодемографические исследования, имеющие важную научную и политическую ценность. Достаточно отметить, что, благодаря фундаментальным исследованиям вардапета Гукаса Инчичяна, историческая демография стала в конце XVIII века, одной из важных областей арменоведения. Примечательно, что именно эта область в дальнейшем традиционно доминировала в исследованиях мхитаристов. В начале XX столетия, наряду с Акопом Косьяном, к вопросам демографии обратился также мхитарист Аковбос Ташян (1866–1933).

Параллельно с духовной деятельностью А. Ташян вел исследовательскую работу в Западной Армении, в области Карин собирая информацию по истории, географии и демографии Армении и соседних с ней областей. Он собрал обширный материал по истории и фольклору Трабзона, Эрзрума, Себастии и других областей, сопоставил их с материалами из европейских архивов и фондов мхитаристов, создав ряд значительных исследований по демографии и

հաշտեցում)՝ թուրքական դիվանագիտությունը լուծում էր մի քանի խնդիր. նախ՝ հայ գիտնականներին, մասնավորապես պատմաբաններին, նատելով գիտական բանավեճի թուրքերի հետ Եղեռնի հարցի շուրջ, ակամայից հայտնվում էին «զրոյական» վիճակում և փաստորեն նույնպես կանգնում Ցեղասպանության իրողությունը կասկածի տակ առնողների դիրքերում: Երկրորդ՝ թուրքական կողմը հրաշալի հնարավորություն էր ստանում աշխարհին համոզելու, որ առայժմ, երբ ընթանում են հայ-թուրքական գիտական վեճերը, կարիք չկա խորհրդարանական կամ այլ մակարդակով անդրադառնալ այդ խնդրին: Այ, կավարտվեն այդ բանավեճերը, կգտնվեն դրանց լուծումները, նոր կարելի է արծարծել խնդիրը: Ինքնին հասկանալի էր, որ Արևմուտքի գործուն մասնակցությամբ (գուցեև ազնիվ մղումներով) հայկական կողմի համար պատրաստվում էր ծուղակ:

Դժբախտաբար, հայկական կողմը, որը ներկայացնում էին նաև ճանաչված գործիչներ (ՀՀ նախկին արտգործնախարար, ՀՀՇ-ական Ալեքսանդր Արզումանյան, ռուսաստանաբնակ քաղաքագետ Անդրանիկ Միհրանյան, ամերիկահայ իրավաբան Վան Գրիգորյան և ուրիշներ), հակառակ իր բոլոր հավաստիացումներին, որ Հայոց ցեղասպանության հարցում որևէ զիջում չի լինելու թուրքական կողմին, ի վերջո հայտնվեց ծանր ու խարված վիճակում և հարկադրված եղավ 2003 թ. վերջերից հակվել դեպի այդ տխրահռչակ հանձնաժողովի գործունեության դադարեցումը: ՀԹՀՀ-ի հայ անդամները, իրենց գործելաոճի ձախողումը քողարկելու նպատակով, հանդես եկան հայտարարությամբ, թե իբր հանձնաժողովի գործունեությունն ունեցել է որոշակի դրական հետևանք, և իրենք որոշակի քայլ են կատարել հայ-թուրքական լարվածության թուլացման ուղղությամբ:

Իրականում այդ հանձնաժողովը զգալի վնասներ հասցրեց միջազգայնորեն Հայ դատի ճանաչման գործին: Եղան դեպքեր, երբ տարբեր երկրների խորհրդարաններ իրենց օրակարգերից հանեցին Հայոց ցեղասպանությանը վերաբերող բանաձևերի նախագծերը՝ ՀԹՀՀ-ի աշխատանքների ավարտին սպասելու պատճառաբանությամբ (օրինակ, Գերմանիա, Ավստրիա, Կանադա և այլն): Պատահական չէ, որ ՀԹՀՀ-ի գործունեության ընթացքում (2001 թ. – 2003 թ. նոյեմբեր) ոչ մի երկիր չբննարկեց ու չճանաչեց Հայոց եղեռնը: Միայն 2003 թ. դեկտեմբերին Շվեյցարիայի, 2004 թ. սկզբին՝ նաև Կանադայի, նոյեմբերի 30-ին՝ Սլովակիայի, ապրիլիրջին՝ Նիդեռ-

լանդների խորհրդարանները, երբ ՀԹՀՀ-ն արդեն փաստացի լուծարվել էր, անդրադարձան Հայոց եղեռնին և պետականորեն դատապարտեցին այն: 2004 թ. վերջին Թուրքիայի՝ Եվրամիություն մտնելու բանակցային գործընթացի սկսման կապակցությամբ կրկին չընջանաուվեց Հայոց ցեղասպանությունը: Կարծում ենք, որ Հայ դատի հետապնդման իմաստով 2001–2003 թթ. անպտուղ երեք տարիների համար մեղքի որոշակի բաժին ունեն նաև Հայաստանի իշխանությունները, որոնք, զանազան ճնշումների ազդեցությամբ, հակվել էին դեպի հայ-թուրքական «հաշտեցումը» և առանց նախապայմանի Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու, սահմանը բացելու անհեռանկար քաղաքականությունը, այն դեպքում, երբ անհրաժեշտ էր այդ ընթացքում խնդրով մեծապես շահագրգիռ սփյուռքյան զանազան կառույցների հետ մշակել Հայ դատի ընդհանուր հայեցակարգ:

ՀԹՀՀ-ի գործունեության ձախողումից հետո թուրքական իշխանությունները փորձեցին օրակարգ հանել նոր «ծուղակ»: Արևմուտքի և վերջինիս միացած Ռուսաստանի գործուն մասնակցությամբ 2009 թ. հոկտեմբերի 10-ին Ցյուրիխում կնքվեցին հայ-թուրքական արձանագրությունները: Թուրքական կողմի հիմնական նպատակը՝ արդեն ՄԱԿ-ի անդամ հանդիսացող Հայաստանի կողմից Ախուրյան-Արաքս գիծը դե յուրե ճանաչելը, իմա՝ Թուրքիայի նկատմամբ այլևս տարածքային պահանջ չունենալն իրավաբանորեն ամրագրելը, ինչպես նաև Լ Ղ հակամարտության հարցում հայերից զիջումներ կորզելը և Հայ ու Թուրք պատմաբանների միջև անպտուղ բանավեճ ծավալելն էր: Այդ էր պատճառը, որ ինչպես Հայրենիքում, այնպես էլ Սփյուռքում այդ արձանագրությունները, որոնք թաղում էին պահանջատիրության՝ հատուցման խնդիրը, բուռն հակազդեցության հանդիպեցին:

Այսպիսով, հստակ երևում է, որ Հայ դատի հետապնդման ճանապարհին առ այսօր պետական, հայեցակարգային մոտեցում չկա: Ուստի Հայության համար այս կենսական խնդրի լուծման նպատակով ազգի բոլոր ուժերի համախմբումը դառնում է կյանքի հրամայական, առավել ևս, որ Հայոց եղեռնի ճանաչման ու Թուրքիայի կողմից հատուցման (այդ թվում՝ տարածքային) հարցը, հակառակ շատ ընդդիմախոսների կարծիքի, իրականում ազգային անվտանգության համակարգի ապահովում է:

Մ'րն է լինելու մեր մարտավարությունն ու ռազմավարությունն այս խնդրում.

1. Հայ դատի հետապնդումը պետք է լինի մշակված համազգային հայեցակարգի շրջանակներում, և գործընթացը զգուշավորությամբ ուղղորդվի պետական մակարդակով:

2. Անհրաժեշտ է ամեն կերպ չարունակել Ցեղասպանության միջազգային ճանաչմանն ու դատապարտմանն ուղղված քայլերը՝ ընդհուպ մինչև ԱՄՆ-ի, ՄԱԿ-ի և Թուրքիայի կողմից ճանաչում և հատուցում:

3. Հատուցման խնդրի առումով խիստ կարևոր է հետևել Հայ դատին վերաբերող նորանոր երկրների խորհրդարանական որոշումների հայանպաստ ձևակերպումներին՝ մասնավորապես հայերի՝ պատմական հայրենիքի նկատմամբ իրավունքի արձանագրման տեսանկյունից: Հիշենք, որ ավելի քան մեկ տասնյակից ավելի երկրների ընդունած բանաձևերից միայն Ռուսաստանի Դաշնության պետդումայի 1995 թ. ապրիլին ընդունած փաստաթղթում է հիշատակվում հայերի պատմական հայրենիք Արևմտյան Հայաստանը: Մինչդեռ մյուս որոշումներում դերակշռում է անորոշությունը: Այս հանգամանքն այսօրվա Թուրքիային ազատում է հայությանը հատուցելու ամեն մի պարտավորությունից, առաջին հերթին՝ տարածքների վերադարձման հարցում:

4. Խնդիրը գլխավոր հարթությունից հարկավոր է տեղափոխել իրավաքաղաքական դաշտ, Միջազգային իրավունքը լրամշակել նոր դրույթներով, մասնավորապես՝ ազգին, էթնիկ հանրությանը հայրենազրկելու համար պատիժ նախատեսող հոդվածներով»:

Զեկուցումն ավարտելուց հետո բանախոսը պատասխանեց Մեծ եղեռնի 100-րդ տարելիցի նախաշեմին հայության առջև ծառացած հիմնախնդիրների և մեր հետագա մարտավարության վերաբերյալ ունկնդիրներին հուզող հարցերին:

Հրատարակության պատրաստեց Արման Մալոյանը

Հայագիտության դպրոցում գիտաեկթողական վերլուծական հանդես. Երևան. 2015, № 1, էջ 58–64: http://iert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Hayagitutyuny% 20dprocum/2015%281%29.pdf

1918 Թ. ԳԱՐՆԱՆԸ ԱՆԴՐԱՆԻԿ ՕԶԱՆՑԱՆԻ ՋԱՎԱԽՔ ՄԵԿՆԵԼՈՒ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Անդրանիկ Օզանյանի գործունեության վերաբերյալ տպագրվել է ահռելի դրականություն: Սակայն ժողովրդական հերոսի բուռն ու փոթորկալից կյանքի բազմաթիվ դրվագներ դեռ հետազոտության կարիք ունեն: Դրանց մնջ կարելի է առանձնացնել նաև 1918 թ. գարնանը Ախալքալաքի գավառ նրա զորամասի մեկնելու հանգամանքների խնդիրը, որին անդրադարձած հեղինակների մեծ մասը, արձանագրելով այդ փաստը, այնուամենայնիվ լիովին չի բացահայտել այդ արշավանքի իրական դրդապատճառները, այն իր ավարտին չհասցնելու խոչընդոտների հարցը և այլն: Խնդրի համակողմանի լուսաբանման համար կարևոր նշանակություն ունի Հայաստանի ազգային արխիվի թիվ 370 ֆոնդում պահվող մի փաստաթուղթ[1]: Այն գրված է 1918 թ. մայիսի 13-ին Ախալքալաքի ազգային խորհրդի կողմից ի պատասխան Անդրանիկ զորավարի մայիսի 8-ին նույն խորհրդին հասցեագրած թիվ 184 գրության: Սակայն մինչև սույն փաստաթղթին անդրադառնալը, վերոհիշյալ ժամանակաշրջանում Անդրանիկի ջոկատի Ջավախք ուղարկելու անհրաժեշտության խնդիրն ավելի հստակ դարձնելու համար, ներկայացնենք հայկական այդ գավառում տիրող իրավիճակը:

1917 թ. հոկտեմբերին բոլշևիկյան հեղաշրջումից հետո ինչպես Եվրոպայում, այնպես էլ Անդրկովկասում ռազմաքաղաքական իրադրությունն արմատապես փոխվեց: Պատերազմից դուրս գալուն ուղղված Վ. Լենինի գլխավորած խորհրդային կառավարության քաղաքականությունը հանգեցրեց ռուսական բանակի կազմալուծմանը: Դեկտեմբերի վերջին և 1916 թ. սկզբին, ոգևորված Անդրկովկասից ռուսական զորքերի հեռանալով, թուրքական հրամանատարությունն սկսեց նախապատրաստվել հակահարձակման:

Պետրոգրադում տեղի ունեցած իրադարձությունները իրենց կնիքը դրեցին նաև Ջավախքի իրավիճակի վրա: Օսմանյան թուրքերի դրդմամբ աշխուժացան Ախալցխայի և Ախալքալաքի մահմեդականները «մեսխեթցի» թուրքերը: Նրանք 1917 թ. դեկտեմբերին հարձակվեցին Ախալցխա քաղաքի վրա, որի հայ և վրացի բնակ-

---

[1] Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 370, ց. 1, գ. 1, թ. 18–19 շրջ.: Փաստաթուղթն ամբողջապես տե՛ս սույն հոդվածի հավելվածում:

չության վեցամսյա հերոսական ինքնապաշտպանությունը պլխավորեց երիտասարդ գործիչ, քաղաքագլուխ Զորի Զորյանը[2]:

Օրնօր խորացող իշխանական ճգնաժամի պայմաններում Հայոց ազգային խորհուրդը, նկնելով հայ բնակչության անվտանգության նկատառումներից, քայլեր ձեռնարկեց հայկական գավառներում վարչաքաղաքական ու ուազմական մարմիններ ստեղծելու ուղղությամբ: 1917 թ. վերջին ձևավորվեց Ախալքալաքի Ազգային խորհուրդը, որի ղեկավարությունը ստանձնեց քաղաքագլուխ, դաշնակցական Մկրտիչ Մարգարյանը: Խորհրդի անմիջական օժանդակությամբ նոյեմբերին կազմակերպվեց Ախալքալաքի հայկական հրացանաձիգների (հրաձգային) գունդը[3], *ստեղծվեց գավառի պաշտպանության ժամանակավոր կոմիտե, որոնք որոշ աշխատանք կատարեցին ակտիվացած մեսխեթցիների սանձարձակությունները զսպելու ուղղությամբ: Ի դեպ, այդ գործում ինչպես Ախալքալաքի, այնպես էլ Ախալցխայի գավառներում հայերն ու վրացիները գործում էին միասնաբար՝ դրելով ընդհանուր համագործակցության վառ էջեր:*

«Գաւառի ինքնապաշտպանութիւնը,- կարդում ենք Ախալքալաքի Հայոց ազգային խորհրդի փաստաթղթերում,- և թշնամուն արգելելը ներս խուժել մեր գաւառի այս կամ այն ծայրից, Ախալցխային օգնութեան հասնելու օրհասական պահանջը և Արդահանից սպասուող վտանգի էական նշանակութիւնը պահանջում էին մեզանից ունենալ կամաւորական, պարտիզանական խմբեր, որոնք սկիզբ են առել մեզանում դեռ յունւար ամսից (1918 թ. – Ա.Մ.) և որոնց գոյութիւնն ու անհրաժեշտութիւնը չի կարող ոչ մի առարկութեան նիւթ լինել, և որպէսզի այդ խմբերը չկրեն խուժանական ամբոխային մարդախմբերի բնաւորութիւնը, խորհուրդս աշխատանք ու միջոց չէր խնայում կազմակերպելու և կանոնաւոր զօրախմբերի բնաւորութիւն տալու նրանց»[4]: *Այդ դժվարին, բայց հույժ կարևոր*

---

[2] Ախալցխայի վեցամսյա ինքնապաշտպանության մասին մանրամասն տե՛ս **Սահոյան Ա.**, Ախալցխայի և Ախալքալաքի գավառների 1918 թ. ինքնապաշտպանությունը, Երևան, 1992 և դեպքերի ականատես ու մասնակից Երվանդ Սիմոնյանի հուշերը (**Սիմոնյան Ե.**, Ախալցխան կրակե օղակում, Երևան, 2000):

[3] **Սիմոնյան Հ.Ռ.**, Անդրանիկի ժամանակը, հ. Ա, Երևան, 1996, էջ 666: Ա. Հայոթյունյանի վկայակոչած նյութերի համաձայն այդ գորամասը գործելու էր որպես Հայկական կորպուսի մի ստորաբաժանում և կոչվելու էր առանձին հրաձգային գումարտակ: Ախալցխայում ստեղծվելու էր սակրավորների գումարտակ (**Арутюнян А.О.**, Кавказский фронт 1914–1917 гг., Ереван, 1971, с. 332–334):

[4] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 1, թ. 18:

խնդիրը լուծելու համար Ախալքալաքի ազգային խորհուրդը, ցավոք, դրսից օժանդակություն չստանալով, ստիպված էր բավարարվել սեփական միջոցներով:

Թեպետ տեղի ռուսական զորամասը 1917 թ. վերջին բռնել էր Ռուսաստան վերադառնալու ճանապարհը, սակայն չէր կամենում ընդառաջ գնալ հայկական ուժերի ցանկությանը՝ զենքը տեղում թողնելու վերաբերյալ: Մեծ դժվարությամբ հաջողվեց մուտք գործել զինվորական քաղաք, որտեղ հնարավոր եղավ գտնել հազիվ «...100-ի չափ բերդան հրացաններ, աննշան քանակությամբ փամփուշտներ, մթերքների չնչին պաշար և առհասարակ ամեն ինչ թալանված ու քարուքանդ եղած, ջարդված դրությամբ, աւելորդ է խօսել զինուորական զգեստների մասին, որոնց բոլոր պահեստները գտնուեցին բաց դռնով և դատարկ դարակներով»[5]: Ուստի հնարավոր եղավ վինել տեղական գնդին զինվորագրվել ցանկացող 5 հազար երիտասարդներից միայն 2 հազարին:

Պահանջվեցին անդուլ ջանքեր՝ զինական ջոկատների համար որոշակի քանակությամբ հագուստ, սնունդ և զինամթերք ձեռք բերելու համար: Սակայն այդ կարիքները լիարժեք հոգալ այդպես էլ չհաջողվեց: Այդուհանդերձ, չուտով՝ Թիֆլիսից Ախալքալաք գնդապետ Առաքելովի ժամանելուց հետո, տեղում շարունակվեց Հայկական կորպուսի առանձին գնդի կազմավորման գործը:

Նույնիսկ այսպիսի ծանր պայմաններում Ախալքալաքի հայությունը շրջանցիկ ու վտանգավոր ճանապարհներով զգալի քանակությամբ հացահատիկ առաքեց Ախալցխայի պաշտպաններին: Ասպինձայի ճորում թուրքերը փակել էին ճանապարհը Ախալցխայի ու Ախալքալաքի միջև: Արտաքին աշխարհից լիովին կտրված՝ լիակատար շրջափակման մեջ, Դամալա գյուղը հերոսական կռիվներ էր մղում շրջակա թուրք մեսխեթցիների դեմ:

Այդ օրերին Ջավախք ժամանած հայտնի կամավորական Ուսուլ Խեչոն (Խաչատուր Տեր-Կարապետյան)՝ իր՝ հայրենի Ախալցխայի հետ կապը վերականգնելու նպատակով, փորձեց Ախալքալաքի գավառի հյուսիսում ճեղքել պաշարման օղակը և ճորաբերթով՝ դուրս գալ Դամալա: Հաջողությունն չունենալով՝ նա Բակուրիանով անցավ Բորժոմ, ուր ճանապարհը թուրքերից մաքրելու համար օգնության խնդրանքով դիմեց վրացի գեներալ Գ. Արջևանիձեին: Վերջինս բա-

[5] Նույն տեղում:

վարարվեց միայն խոստումներով: Խնչոն վերադարձավ Ախալքալաք և վճռեց խնդիրն իրականացնել տեղական ուժերով: Նպատակի իրականացման ճանապարհին գլխավոր խոչընդոտը Թրքաբնակ Կոկիա գյուղն էր: Ուստի Խնչոն և նրա զինակից ընկերներից բաղկացած մոտ հազար հոգանոց մի զորախումբ (հիմնականում դաշնակցականներ) Ախալքալաք քաղաքից, Վարևան, Ալաստան, Ազավրեթ և այլ գյուղերից, մարտի կեսերին հարձակվեցին Կոկիայի վրա: Ինչպես այս, այնպես էլ հարևան մի քանի գյուղերում ապրող թուրքերը երկօրյա դիմադրությունից հետո փախուստի դիմեցին դեպի Արդահան: Սակայն, որքան էլ հայ զինյալների այս քայլը թելադրված լիներ կենսական անհրաժեշտությամբ, անթույլատրելի և անհեռատես գործողություն էր: Նախ՝ դրա արդյունքում հնարավոր չեղավ բացել ճանապարհը դեպի Ախալցխա և երկրորդ՝ գավառում անտեղի սրվեցին հայ-թուրքական հարաբերությունները: Եվ երրորդ. Արդահանում թուրք փախստականները, տեղի մահմեդականներին դրդռելով հայերի դեմ, սադրեցին հայկական կոտորածներ: Հազարավոր արդահանցի կանայք, երեխաներ ու ծերեր, մեծ դժվարություններ կրելով, մազապուրծ հասան Ախալքալաքի գավառ:

Արդահանցի գաղթականների ողբալի վիճակը, թուրքերի կողմից նրանց հարազատների նկատմամբ գործադրած վայրագությունների մասին լուրերը ջավախքցի երիտասարդներին մղեցին փոխադարձ վրիժառության: Տեղի դաշնակցական ու էսէռական մի քանի գործիչների առաջնորդությամբ նրանք ուժ գործադրեցին տեղի թուրքերի նկատմամբ: Այսպես գավառում քրիստոնյա-մահմեդական փոխհարաբերությունները ծայր աստիճան սրվեցին: Տեղական իշխանությունները, Անդրկովկասյան սեյմը, Հայոց և վրաց ազգային խորհուրդները գործնական քայլեր չկատարեցին Ախալքալաքի և Ախալցխայի գավառներում ազգամիջյան լարվածության թուլացման ուղղությամբ, որն այնքան անհրաժեշտ էր թուրքական զորքերի ներխուժման նախօրյակին: Սեյմը միայն տարբեր ազգերի ներկայացուցիչներից կազմված մի քննիչ հանձնաժողով ուղարկեց տարածաշրջան: Վերջինս էլ ոչ մի շոշափելի արդյունքի չհասավ[6]:

---

[6] Ախալցխայում. բաղաբապետ Չորի Չորյանի հեռատես քաղաքականության շնորհիվ, հնարավոր եղավ խուսափել հայերի ու վրացիների կողմից տեղի թուրք բնակչության նկատմամբ բռնությունների գործադրումից: Այդ հանգամանքը 1918 թ. մայիս-նոյեմբերին գավառի թուրքական բռնազավթման շրջանում, ստիպեց ինչպես տեղացի թարքերին (որոնց մեծ մասն այդպես էլ չհեռացավ գավառից), այնպես

1918 թ. մարտ-ապրիլին՝ Վեհիբ փաշայի զորքերի հարձակումից և Հատկանիսես Կարսի մարզի դրավումից հետո, Ախալքալաքի վիճակը խիստ ծանրացավ: Թուրքերի կողմից բռնագրավված տարածքներից նորանոր հայ գաղթականներ հաստատվեցին այստեղ[7]: Ախալքալաքցիները կարողացան բանակցություններ մեջ մտնել թուրքական զինվորականության և Արդահանի մահմեդականների ներկայացուցիչների հետ և ապրիլի 9-ին Արդահանի ու Օլթիի գավառների 1500 հայ բնակիչների՝ հիմնականում կանանց ու երեխաների, վրացական Սարո գյուղում փոխանակել իրենց գավառի Կոկիա, Թոք և թուրքական այլ գյուղերի բնակիչների հետ[8]:

Ասպինձա և Ախալցխա տանող կյանքի ճանապարհը մնում էր Թշնամու հսկողության տակ: Ախալցխայի պաշտպանները հացահատիկի խիստ պակաս զգում էին: Ապրիլի վերջին գավառի հյուսիսարևմտյան շրջան տեղափոխված կապիտան Ալեքսիձեի հրետանային մարտկոցի աջակցությամբ Ուսուլ Խեչոյի զորաջոկատը շարժվեց դեպի Դամալա: Ճանապարհին նրանց միացավ դամալացիների վաշտը: Հայ-վրացական ուժերին հաջողվեց Դամալայի մատույցներից հետ շպրտել թուրքերին, ապա նաև ազատագրել Ասպինձան: Նույն ժամանակ հայ-վրացական ուժերի ախալցխայան խմբավորումն ազատագրեց Ախալցխա-Ախալքալաք ճանապարհին ընկած Մուսխ վրացական գյուղը: Սակայն, փոխանակ խճուղին բացելու նպատակով երկուստեք առաջ շարժվելու և միավորելու ուժերը, Անդրկովկասյան սեյմի հրամանով, վրացական ուժերը թողեցին Ասպինձան ու քաշվեցին Դամալա, ապա՝ Վարևան, այնտեղից էլ՝ Բակուրիան[9]:

Վերոհիշյալ դեպքերից հետո նոր աշխուժացում ապրեց օրեցօր առւսջացող օսմանյան զորքերի օգտին Ախալցխայի ու Ախալքալաքի մահմեդականների լրտեսական գործունեությունը: Ապրիլի 13-ին տեղի գործադիր իշխանությունների 40 մահմեդական ներկայացու-

---

էլ օսմանյան զորքերին հրաժարվելու քրիստոնյաներին կոտորելու ծրագրերից, և ամենակարևորը. հնարավորություն տվեց հայ և վրաց բնակչությանը խուսափելու աղետաբեր արտագաղթի պարտադրանքից:

[7] Ընդհանուր առմամբ մինչև մայիսի սկիզբը Ախալքալաքի գավառում ապաստանած հայ գաղթականների թիվն անցավ 6 հազարից, որոնց անհրաժեշտ պարագաներով, հատկապես սննդամթերքով ապահովելու խնդիրն իր վրա վերցրեց Ախալքալաքի ազգային խորհուրդը (տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 1, թ. 18):

[8] Տե՛ս ՀԱԱ. ֆ. 114, ց. 2, գ. 3, թ. 125ա–126 և Մշակ, 1918, թիվ 81:

[9] Տե՛ս **Սաֆոյան Ա.**, նշվ. աշխ., էջ 82–87, 160–163, **Սիմոնյան Ե.**, նշվ. աշխ., էջ 38–41, Ճարժում, Ախալցխա, 1918, թիվ 29:

ղեկների ստորագրությամբ թուրքական հրամանատարությանը ներկայացվեց մի վաստաթուղթ, որում հարց էր բարձրացվում ռուսական հնդավրոխությունների հռչակած ինքնորոշման իրավունքով, մոտ երեք դար Օսմանյան կայսրության կազմում եղած Ախալցխայի գավառը և Ախալքալաքի գավառի մի մասը օսմանյան տերությանը միացնելու մասին: Հատուկ ընդգծվում էր, որ այս «...գավառների մահմեդական բնակչությունը մեծ մասամբ ունի թուրքական ծագում և իր հոգևոր կապերը չի խզել Թուրքիայի հետ»[10]:

Ինչպես երևում է, իրենց անջատողական գործունեության արդարացման համար մահմեդական առաջնորդները վկայակոչում էին ինքնորոշման իրավունքի ընձեռած հնարավորությունը՝ մոռանալով այդ հարցում հաշվի նստել բնակչության մեծամասնության՝ հայերի ու վրացիների կարծիքի հետ: Այս քայլը, ինչպես ապացուցելու հետագա դեպքերը, կազմակերպվել էր թուրքական հրամանատարության կողմից և համաձայնեցվել Անդրկովկասյան ռեյմի մուսավաթական խմբակցության հետ[11]:

Հենվելով տեղերում ձևավորված ռազմական, ազգային ու քաղաքացիական մարմինների վրա՝ Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը, հակառակ Վրաց ազգային խորհրդի ձգտումներին, կարողացավ վիճելի համարվող Ախալքալաքի և Բորչալուի գավառների վրա տարածել իր ազդեցությունը, որոշ ռազմական օգնություն ցուցաբերել Ջավախքին: «Այս ամբողջ ժամանակամիջոցում (1917 թ. հոկտեմբեր – 1918 թ. մայիս – Ա.Մ.),- գրում էր Արշակ Ջամալյանը,- մեր հոգային շրջանը կազմող բոլոր գաւառները, դրանց թւում և Ախալքալակն ու Հայկական Բորչալուն, ենթարկւում էին բացառապէս Հայոց Ազգային Խորհրդին: Վրաց Ազգային խորհուրդը որև-

---

[10] Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, Тифлис, 1919, с. 310–311. Հմմտ.՝ **Ջամալեան Ա.,** Իմ պատասխանները, Յառաջ, 1928, 4 հուլիսի, թիվ 690, էջ 2:

[11] Հետագայում Անդրկովկասյան սեյմի 1918 թ. մայիսի 26-ի նիստում, երբ արդեն դաշնությունը տանուլ էր տվել պատերազմը և կսնգնած էր լուծարման շեմին, վրաց մենշևիկների առաջնորդներից Ի. Ծերեթելին իր արտասանած ճառում հարկ համարեց սուր քննադատության ենթարկել մուսավաթականներին Ախալքալաքի ու Ախալցխայի մահմեդականների պատակտչական բայերը խրախուսելու և թուրքական զավթողական պլաններին աջակցելու համար (տե՛ս Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, с. 324–325): Դրանով նա փորձում էր Անդրկովկասյան դաշնությունը լուծարելու, Օսմանյան կայսրությանը տարածքային զիջումներ կատարելու գործում իր կուսակցությանն «ազատել» պատասխանատվության մասնաբաժնից:

ւէ ատթիւ, որևէ միջամտութիւն չի ունեցել այդ գաւառների գործուած»[12]:

Ակնհայտ է, որ 1917 թ. վերջից մինչև 1918 թ. մայիսի կեսերը Ջավախքում ստեղծվել էր հայկական իշխանություն, որի հետ հաշվի էր նստում Անդրկովկասյան սեյմը: Ի դեպ, վերջինս, հավանաբար ելնելով այդ իրողությունից, ոչ մի չոշափելի քայլ չկատարեց թուրքական ներխուժումն Ախալքալաք կանխելու ուղղությամբ: Անպատասխան մնացին ախալքալաքցի հայտնի մտավորականների՝ գրող Դերենիկ Դեմիրճյանի և հասարակական գործիչ Պողոս Աբելյանի դիմումները սեյմին՝ տեղում եղած հարուստ հացամթերքը թուրքերի ձեռքը չընկնելու համար, նախապես գավառից դուրս բերելու վերաբերյալ[13]:

1918 թ. մարտի վերջին Հայոց ազգային խորհուրդը, հաշվի առնելով, որ սեյմը մոռացության է տվել Ջավախքում լուրջ պաշտպանական ուժեր ստեղծելու խնդիրը, սկսեց այդ ուղղությամբ նոր միջոցներ որոնել: Հայկական կորպուսի հրամանատար գեներալ Թ. Նազարբեկյանի խորհրդով որոշվեց դիմել զորավար Անդրանիկի օգնությանը, որն Ալեքսանդրապոլում ձեռնամուխ էր եղել նոր զորամասի կազմավորման գործին: Նազարբեկյանը մտադիր էր Անդրանիկի զորամասն օգտագործել կամ Մերդենեկում կամ Ախալքալաքում, որոնք թուրքական առաջխաղացման ճանապարհին ամենախոցելի օղակներն էին[14]:

Սակայն Նազարբեկյանը, անտեղյակ լինելով, որ Ապահովության խորհուրդն իր հերթին ծրագրել է զորավարի ուժերն ուղարկել Պարսկաստան՝ այնտեղից Միջագետք անցնելու և անգլիացիներին միանալու համար, առանց Անդրանիկին տեղեկացնելու, ապրիլի 6-ին կարգադրում է Հայկական կորպուսի չտաբից հեռագրել Ախալքալաք ճանաչված զորավարի գալստյան լուրը հայտնելու համար: Հաջորդ օրը Ալեքսանդրապոլում ստացվում է Ախալքալաքի զինական ուժերի հրամանատար գնդապետ Առաքելովի ոգևորական հեռագիրը. «Խնդրում եմ հայտնեք իմ անկեղծ ուրախությունը Անդրանիկի՝ այդ ազգային հերոսի Ախալքալաք նշանակման մասին: Ես անձամբ կխնդրեի չտապեցնեիք նրա գալուստը, որովհետև միմիայն

---

[12] **Ջամալեան Ա.**, Հայ-վիրացական կնճիռը, Հայրենիք, 1928, ապրիլ, էջ 89:

[13] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 3, թ. 123ա:

[14] Տե՛ս **Սիմոնյան Հ.Ռ.**, Անդրանիկի ժամանակը, հ. Բ, Երևան, 1996, էջ 103:

նրա երևան գալը կոգևորե ժողովրդին, որպիսի ոգևորությունը չափազանց կարևոր է: Մեծ կարիք եմ զգում հրացանների, ընդհանրապես զենքերի»[15]*: Եվ իրոք, Անդրանիկի «գալստյան» լուրը մեծ ոգևորություն առաջադրեց ջավախահայության շրջանում: Մարդիկ անհամբեր սպասում էին զորավարի գալուն:*

Սակայն ինչպես երևում է վերոհիշյալից այս «նշանակմանը» տեղյակ էին գրեթե բոլորը, բացի իրենից Անդրանիկ Օզանյանից: Պատահական չէ, որ Ազգային խորհուրդը, կռահելով, որ գեներալ Նազարբեկյանի այս անակնկալ և չհամաձայնեցված որոշումը կարող է առաջացնել Անդրանիկի հասկանալի դժգոհությունը, ապրիլի սկզբին իր ներկայացուցիչ Պարույր Լևոնյանի (աշուղ Ջիվանու որպին) միջոցով պաշտոնապես առաջարկություն ներկայացրեց զորավարին իր 1400 հոգանոց հայկական առանձին հարվածող զորամասով Ախալքալաք անցնելու և Կարսի մարզից թուրքերի մուտքը գավառ կանխելու նպատակով: Անդրանիկը սկզբում թերահավատորեն վերաբերվեց առաջարկին: Նա Լևոնյանին հայտնեց, որ Ալեքսանդրապոլից Ախալքալաք անցնելու համար իրեն հարկ կլինի բախվել Ազրաբայի (այժմ՝ Ամասիա – Ա.Մ.) մեծաթիվ թուրք բնակչության և այդ շրջանում վխտացող բազմաքանակ թուրքական զինվորականության հետ: «Ասոնց մէջէն անցնելով Ախալքալաք հասնիլ,- ասում էր Անդրանիկը,- այն ալ 1000 հոգիով, ինչ որ կը նշանակէ 6–700 հրացան: Այդքան ուժ անբաւական է»: Երկրորդ հանգամանքը, որն ըստ զորավարի հուշում էր այդ ձեռնարկման անհեռանկարայնությունը, գավառին ու նրա տեղանքին իր անծանոթ լինելն էր. «Ես աչքերս գոց կը ճանչնամ Հայաստանի ամէն մէկ ձորը, բլուրը, կիրճը. իսկ սա քարտէսին վրայ երեւցող երկիրը (Ախալքալաքը – Ա.Մ.) ինձ անծանոթ է»[16]*:*

Սակայն, ինչպես ցույց տվեցին հետագա դեպքերը, այնուամենայնիվ, Անդրանիկը, ենթարկվելով զինվորական կարգապահության, փորձեց իրականացնել այդ խնդիրը: Նա թեև անծանոթ էր Ջավախքին, սակայն տասնամյակներ շարունակ Արևմտյան Հայաստանում կռվել էր ախալքալաքցի ֆիդայիների հետ, սերտ շփումներ ունեցել ծնունդով ախալքալաքցի հայտնի գործիչներ Ռուբեն Տեր-

---

[15] Նույն տեղում, էջ 104:

[16] **Չելեպյան Ա.**, Զորավար Անդրանիկ և հայ հեղափոխական շարժումը, Երևան, 1990, էջ 449:

Մինասյանի, Համո Օհանջանյանի, Ռուբեն Դարբինյանի ու այլոց հետ և չէր կարող անտարբեր մնալ Ջավախքցիների ճակատագրի նկատմամբ, առավել ևս, որ պաշտպանության տակ վերցնելով Ալեքսանդրապոլ-Ախալքալաք գիծը, կամրապնդվեր հայկական ուժերի աջ թևը և կփակվեին թուրքական զորքերի ուղիները դեպի Լոռի ու Թիֆլիս: Անկասկած, Ալեքսանդրապոլից մինչև Ախալքալաք գիծը փոքրաթիվ ուժերով պահելու այդ ծրագիրը, ինչպես իրավացիորեն նկատել է ակադեմիկոս Հ. Սիմոնյանը, գրեթե անհնարին խնդիր էր, սակայն արդարացված էր՝ ունենալ սահմանափակ միջոցների պայմաններում: Վերոհիշյալից պարզորոշ երևում է, որ 1918 թ. գարնանը, պայմանավորված թուրքական զորքերի ընդհանուր հարձակմամբ, հայ հասարակական-քաղաքական շրջանակները, հատկապես Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը, գիտակցելով իր թույլ տված սխալը թուրք-անդրկովկասյան ճակատում ռազմավարական նշանակություն ունեցող Ախալքալաքի գավառի ինքնապաշտպանության խնդիրը աչքաթող անելու հաշվում, փորձում էր վիճակը փրկել զորավար Անդրանիկի ուժերն այնտեղ ուղարկելու միջոցով:

Ըստ Հայկական առանձին հարվածող զորամասի պորուչիկ Կոլմակովի՝ 1918 թ. ապրիլի 10 (23)-ին, դուրս գալով Ալեքսանդրապոլից, իրենց «...չոկատն ուղղություն վերցրեց դեպի Ախալքալաք՝ գեներալ Անդրանիկից հրաման ստանալով չանցնել Թուրքիայի հետ կնքված զինադադարի նախատեսած սահմանային գիծը՝ Ախուրյան գետը[17]:

Անդրանիկի զորամասը շարժվեց դեպի Շիրակի հյուսիսային շրջան և հասավ Գյուրջիյոլ (այժմ՝ Թորոս – Ա.Մ.) գյուղը: Ապրիլի 13 (26)-ին զինվորները դիրքեր բռնեցին Աչոցքից Լոռի տանող ռազմավարական նշանակության ճանապարհի երկայնքով, Կարախաչի լեռնանցքի մուտքի մոտ՝ Դուզխարաբա (այժմ՝ Հարթաշեն) և Զիֆթլի (Զուլգաղբյուր) գյուղերում: Զարգացնելով հաջողությունը՝ հաջորդ օրը նրանք հասան Ղազանչի գյուղը և մարտի բռնվեցին տեղի թուրքերի ու քրդերի հետ: Թշնամին ի վիճակի չեղավ դիմադրելու և նահանջեց Ախուրյանի վտակ Ղալիչայի աջ ափը: Այս հաղթական կռվում Հայկական առանձին հարվածող զորամասը ստացավ իր առաջին մարտական մկրտությունը:

---

[17] Микаелян В.А., Закарян А.А., Поручик Колмаков о деятельности Андраника в 1918 г., ԼՀԳ, 1988, N 8, էջ 67:

Ղազանչիից հետո Անդրանիկի զորագունդն ընդհուպ մոտեցավ Ախալքալաքի գավառին: Նրա հսկողության տակ հայտնվեց Աչոցքի սարահարթի զգալի մասը Ղազանչի-Շիշթափա (Սեպասար)–Ջիֆթելի–Բոլյոխուշալի (Մուսայելյան) շրջատարածքը[18]: Աղբաբայի թուրքերի ու քրդերի սարսափից իրենց գյուղերը լքած հայ գյուղացիների զգալի մասը վերադարձավ տուն: Սակայն շուտով թուրքական զորքերը, գրեթե անարգել գրավելով Կարսի մարզի ողջ տարածքը, ապրիլի 16 (29)-ին դուրս եկան Ախուրյանի ափը: Մի զորաջոկատ էլ Աղբաբայի թուրքերի աջակցությամբ հասավ Ախուրյանի ակունքների շրջանը և անմիջական վտանգ ստեղծեց Աչոցքն ու Ջավախքը կապող ճանապարհի համար:

Նման ծանր պայմաններում գեներալ Նազարբեկյանը, անհանգստացած ռազմաճակատի փլուզման վտանգից, Ալեքսանդրապոլից հեռագիր հղեց Անդրանիկին՝ հանձնարարելով հարվածող զորամասի ուժերով վերկարացնել պաշտպանական գիծը, Գյուլիբուլաղ (այժմ՝ Վարդաղբյուր) գյուղից հասցնել մինչև Ախալքալաքի գավառի հարավային սահմանները: Հայաստանի ազգային արխիվում պահվող այդ հեռագրի տեքստում ասվում էր. «Իրադրության փոփոխության կապակցությամբ, ...հրամայում եմ Ձեր ենթակայության տակ գտնվող ջոկատով անհապաղ մտնել Խանչալը-գյուղ լճի և Մարդատապինակոյի (Մադաթափա լճի – Ա.Մ.) շրջանը, որտեղ և ամրանալ, պահպանելով լիակատար հանգստություն Ախալքալաքի գավառի հարավային մասում և հաստատել հսկողություն Կարսի մարզի սահմանի վրա»[19]:

Այդ դժվարին խնդրի իրագործման ճանապարհին Անդրանիկի առջև ծառացան նոր խնդիրներ: Բազմաթիվ արևմտահայ ռազմիկները, չկամենալով մնալ իրենց համար անծանոթ զորահրամանատարների ենթակայության տակ, փախչում էին զորամասերից և, չնայած Անդրանիկի հակազդեցությանը, Աչոցքի սարահարթում միանում Հարվածող զորամասին, որի զինվորների թիվն արդեն հասել էր 2600-ի[20]:

---

[18] Տե՛ս **Աղայան Շ.**, Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Երևան, 1976, էջ 598–599: Այդ օրերին Ջավախքում մեծ ոգևորությամբ էին ապասում Անդրանիկի գալստյանը:

[19] **Սիմոնյան Հ.Ռ.**, Անդրանիկի ժամանակը, հ. Բ, էջ 113, **Կարապետյան Անդրանիկ**, հ. 3, Երևան, 1994, էջ 496:

[20] Տե՛ս **Սիմոնյան Հ.Ռ.**, նշվ. աշխ., էջ 118:

Անդրանիկը Գյուլիբուլաղից մայիսի 8-ին նամակով դիմեց Ախալքալաքի Հայոց ազգային խորհրդին մատչելի գներով իր զորամասին սննդամթերք տրամադրելու առաջարկով: Վերոհիշյալ նամակին, ինչպես արդեն նշվել է հոդվածի սկզբում, Ախալքալաքի ազգային խորհուրդը պատասխանեց մայիսի 13-ին զանազան պատճառաբանություններով, ըստ էության, մերժելով օգնություն տրամադրելու վերաբերյալ զորավարի խնդրանքը:

Ախալքալաքի ազգային խորհուրդը նման պահվածքով, փաստորեն, վիժեցնում էր Անդրանիկի՝ Ջավախք մտնելու վերաբերյալ Հայոց ազգային և զինվորական մարմինների ծրագիրը: Իր այս անհասկանալի քայլը խորհուրդը «հիմնավորում էր» գավառում ստեղծված ծանր իրավիճակով՝ արդահանցի բազմահազար գաղթականների առկայությամբ, սննդամթերքի ու խոտի, դրանց ձեռքբերման համար ֆինանսական միջոցների բացակայությամբ, տեղի զինական ուժերի պետքերը միայն իր միջոցներով հոգալու իրողությամբ և այլն: Ընդ որում՝ Ազգային խորհրդի նախագահի փոխարեն գրությունը ստորագրած Վ. Այվազյանն Անդրանիկին ներողամտաբար խնդրում էր նման քայլը «...չընդունել որպես խուսափողական միջոց ազգային կարիքների դիմաց, այլ անհրաժեշտությունից ստիպված մի յայտարարություն իրագեկ անելու Ձեզ Ախալքալաքի դրության և պայմանների հետ...»[21]:

Սույն նամակին հանգամանորեն ծանոթանալով՝ կարելի է կռահել, որ նրա հեղինակները, զանց առնելով երկրամաս Անդրանիկի գալու կապակցությամբ Ջավախքի հայության, այդ թվում՝ ինքնապաշտպանական ուժերի աննախադեպ ոգևորությունը, հիմնավոր պատճառաբանություններ չէին բերում Ախալքալաք շարժվող զորավարի ուժերին օգնելու առաջարկից հրաժարվելու համար: Նախ անհասկանալի էր, թե ինչու՞ այդ նամակի տակ Ախալքալաքի ազգային խորհրդի նախագահի փոխարեն դրված էր նրա անդամներից մեկի՝ Վ. Այվազյանի ստորագրությունը: Դա արդեն առնվազն տարօրինակ էր, եթե չասենք վիրավորական: Երկրորդ Անդրանիկ Օզանյանը չէր հրաժարվում իր զորքի կարիքների համար միջոցներ հատկացնելուց, այլ միայն փորձում էր դրանք ձեռք բերել ավելի մատչելի գներով:

---

[21] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 1, թ. 18. Սիմոնյան Հ.Ռ., նշվ. աշխ., հ. Բ, էջ 115–116:

Զավեշտալի է, որ նամակագիրները մի կողմից խոստովանում էին, որ «...ճիշտ է թէ Ախալքալաքը իր գաւառով հաշվվում է հայաոատ երկիր, բայց չնորհիւ հարևան գաւառների կարիքներին հացի ու գարու բաւական պաշար դուրս է հանւած գաւառիցս պանգան ուղղութեամբ: Սակայն խորհուրդս յանձն է առնում ամեն միջոց գործ դնել բաւարարելու Ձեր զորամասը պահանջած քանակութեամբ հացով ու գարով», բայց անմիջապես ավելացնում է. «եթէ այդ բանի համար միջոցներ կհայթհայթւին Ձեր կողմից թէ դրամով և թէ տրանսպորտով, քանի որ խորհուրդս անկարող է խոստում անել, որ ինքը կգտնի միջոցներ և այդ նպատակի համար, նկատի առնելով տեղական դնդի, պարտիզանական զօրախմբի, նրանց վարած կռիւների համար պահանջած ղէնքերի ու փամփուշտների և ի վերջոյ գաղթականութեան համար պահանջւող միջոցների ստիպողական կարիքը»[22]: Միծաղելի է, որ նամակում առաջարկվում էր նաև խոտի ու հարդի հարցով իրենց փոխարեն դիմել տեղի ռուս ազանդավորներին՝ դուխոբորներին:

«Դժվարութիւնների» մեջ նշվում էր նաև այն հանդամանքը, որ «...մեր գիւղացիութիւնը զգալի չափով զրկւած լինելով աշխատող ձեռներից՝ համառում է մինչ օրս վճարել որևէ տուրք կամ նպաստ Ազգային կարիքների համար»[23]: Այդ վերջինը, անշուշտ, բացահայտ կեղծիք էր, քանի որ գյուղացիութեան վճարած հարկերի հաշվին էին պահվում գավառի ինչպես զինական, այնպես էլ ազգային մյուս կառույցները: Իսկ իրենց անվտանգութեան նկատառումներով նկող ժողովրդական հերոսին օգնելը, կասկածից վեր է, որ ամեն ջանքեր պարտքի ու պատվի գործն էր լինելու:

Ամենայն հավանականութեամբ տեղական իշխանութիւններն անգամ ժողովրդին չէին իրազեկել զորավարի նամակի մասին և իրականում ջանքեր չեն խնայել նրա մուտքը գավառ ձախողելու համար: Ի՞նչն էր պատճառը, որ սկզբում Անդրանիկի գալստյան լուրը մեծ խանդավառութեամբ էր ընդունվել ժողովրդի և ազգային շրջանակների կողմից, քիչ անց՝ վերաբերմունքն արմատապես փոխվել էր:

Բանն այն է, որ Հայոց ազգային խորհրդում և քաղաքական որոշակի շրջանակներում կար այն մոտեցումը, որ Անդրանիկին

---

[22] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 1, թ. 18:

[23] Նույն տեղում:

թուրքական ճակատի Ալեքսանդրապոլ-Ախալքալաք հատված ուղարկելը սխալ քայլ է: Նրանց կարծիքով, հաստատված զինադադարը, որը նախատեսում էր կրակի դադարեցում և Ախուրյան գետով կողմերի միջև ռազմաճակատի նոր գծի հաստատում, կարող էր խախտվել Անդրանիկի զինվորների ինքնագլուխ քայլերի, կամ, որ ավելի հավանական է՝ թուրքերը, զորավարի նկատմամբ ունենալով անհանդուրժողական կեցվածք, կարող էին վերսկսել հարձակումը և անցնել Ախուրյանը: Այդ կարծիքին էր նաև Ապահովության խորհրդի նախագահ կոմսը՝ Վահան Փափազյանը, որն առաջարկում էր Անդրանիկի ուժերը հետ քաշել ավելի ապահով շրջան:

Նման պայմաններում Թիֆլիսում գործող հայկական ազգային ու զինական մարմինները, թուրքերին «չգրգռելու» մտահոգությամբ, անկասկած, հրահանգել էին Ախալքալաքի ազգային մարմիններին՝ գրեթե անլուծելի պայմաններ դնել Անդրանիկի առջև և ի չիք դարձնել նրա մուտքը Ջավախք:

Հանդիպելով նման վերաբերմունքի, ինչպես և նկատի առնելով Ախուրյանի ուղղությամբ թուրքական զորքերի առաջխաղացման պատճառով շրջապատման մեջ ընկնելու վտանգը, Անդրանիկը հրաժարվեց Ախալքալաք անցնելու մտադրությունից: Նա կարախաչի դժվարանցանելի լեռնանցքով դուրս եկավ Վորոնցովկա (այժմ Տաչիր): Թուրքական զորքերն անարգել շարժվեցին Աչոցքի և Ջավախքի ուղղություններով:

Գավառի հյուսիսային դյուղերի բնակչությունը՝ մոտ 40 հազ. մարդ, գաղթեց դեպի Բակուրիան, իսկ հարավայինը 30–35 հազ. մարդ, հիմնականում Ծալկա՝ տեղում թողնելով իր ամբողջ անշարժ գույքը: Անգամ չհաջողվեց գավառից դուրս բերել հարյուր հազարավոր փութ ալյուր և մինչև 10 մլն. փութ հացահատիկի բերքը[24]: Այս վերջին փաստը խոսում է այն մասին, որ Ախալքալաքի գավառում իրականում հացահատիկի հարուստ պաշարներ կային և դրանից Անդրանիկի զորքին բաժին չհանելու տեղի ազգային խորհրդի պատճառաբանությունները չինծու էին: Այս ամենի հետևանքն այն եղավ, որ ինչպես բերքի, այնպես էլ բնակչության ունեցվածքի մեծ մասը բաժին ընկավ թուրքերին:

Այդ օրերին «Հորիզոն» թերթում Արսեն քահանա Բլրեյանը գրում էր. «Թուրքերի թնդանոթների և գնդացիրների տարափի

---

[24] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 17, թ. 34:

տակ, վախտականները չկարողացան իրենց ունեցած ինչքից որևէ բան վերցնել իրենց հետ և ամեն բան թողին դյուղերում: Շատ հայերի գերել են թուրքերը»[25]*: Զգաղթեցին միայն թրքախոս հայ կաթոլիկներն ու ռուս դուխոբորները: Այսպես մինչև մայիսի վերջը արտագաղթեց ամբողջ Ախալքալաք քաղաքի և 61 հայկական դյուղերի բնակչությունը*[26]*:*

Բակուրյանի անտառներում մնալով բաց երկնքի տակ թուրքերի հարձակումների, վրացական կառավարության անբարյացակամ վերաբերմունքի, սկսված հիվանդությունների պատճառով մինչև տարեվերջ չավախքցի գաղթականներն ունեցան 40 հազար զոհ[27]*: Հարց է ծագում, եթե զորավարի մուտքը Ջավախք արհեստականորեն չվիժեցվեր, հնարավոր կլիներ կանգնեցնել թուրքական զորքերի առաջխաղացումը դեպի գավառ և բնաջնջումից փրկել ջավախահայությանը:*

Կարծում ենք՝ նման հարցի պատասխանը հնարավոր կլինի գտնել միայն համանման մի քանի այլ հարցերի համատեքստում, որոնք բոլորն էլ կապված են 1918 թվականի հետ և առ այսօր պատմագրության մեջ չարունակում են մնալ որպես վիճահարույց հարցեր: Նույն տրամաբանությամբ կարող ենք ասել, եթե փետրվարին Անդրանիկ Օզանյանին հաջողվեր Էրզրումում ճակատն անսասան պահել, ապա չէին լինի դրան հաջորդած մի շարք ձախողումներ: Կամ եթե մայիսի վերջին Անդրանիկը, թողնելով Դսեղում դնալի Թիֆլիս տանող դաղթականների ճանապարհի հսկողությունը, մասնակցեր Ղարաքիլիսայի ճակատամարտին, արդյոք հնարավոր չէ՞ր լինի կանխել թուրքերի մուտքը Լոռու խորքեր: Կամ՝ եթե ամռանը զորավարը, իր հսկողության տակ գտնվող Նախիջևանի գավառը Բաքվի կոմունայի նախագահ Ստ. Շահումյանին հղած հատուկ «Հեռագրով» Խորհրդային Ռուսաստանի տրամադրության տակ դնելու փոխարեն, մնար տեղում, արդեն այդ ժամանակ հնարավոր չէ՞ր դառնա այդ գավառի միացումը Հայաստանի Հանրապետությանը: Եվս մեկ համանման հարցադրում, եթե հոկտեմբե-

---

[25] **Արսեն բահանայ Բլրցեան**, Ախալքալակի գաղթականութիւնը, Հորիզոն, 27 հունիսի 1918, թիվ 125:

[26] ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի արխիվ, Լեոյի անձն. ֆ. 1, ց. 1, գ. 242, թ. 4–5:

[27] Մանրամասն տե՛ս **Մելքոնյան Ա.**, Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, Երևան, 2003, էջ 282–294:

րին, Արցախ չարժվելիս Անդրանիկը Ավդալարի (Ջաբուղի) ճորում հաշվի չառնելով անգլիական գեներալ Թոմսոնի պատվիրակների արշավանքը դադարեցնելու վերաբերյալ պահանջը, և, այնուամենայնիվ, մտներ Շուշի, այդ ժամանակ արդեն Արցախը չէ՞ր անցնի ՀՀ կազմի մեջ:

Նման ոչ դյուրին հարցերի պատասխանները տալու փոխարեն, որպես կանոն, պատմաբանները հիշեցնում են այն ճշմարտությունը, որ պատմության մեջ «եթե»-ները չեն լինում: Ենթադրություններով հնարավոր չէ ստեղծել տրամաբանական կառույց: Արդյոք պատահական է, որ վերոհիշյալ բոլոր իրավիճակները վերաբերում են բարդ ու հակասական 1918 թվականին: Իհարկե ոչ: Այդ տարեթիվը հագեցած է Հայոց պատմության մեջ չրջադարձային իրադարձություններով, ռուսական կովկասյան ճակատի փլուզման պատճառով թուրքերի կողմից Արևմտյան Հայաստանի վերագրավում ու նվաճում Արևելյան Հայաստան, երկրամասում անկախ պետականությունների ստեղծում, նրանց միջև սահմանների ճշավորման դժվարին գործընթաց, Քառյակ դաշինքի երկրների պարտության պատճառով տարածաշրջանում իրավիճակի կտրուկ փոփոխություն և այլն:

Այսպիսի պայմաններում Անդրկովկասի ժողովուրդներից յուրաքանչյուրը փորձում էր օգտվել պատմության ընձեռած հնարավորություններից իր համար առավելագույնս շահեկան վիճակի հասնելու համար: Բնականաբար, չէին կարող չլինել նաև ձախողումներ, հատկապես հայերի համար, ովքեր մեն-մենակ էին մնացել թուրքական ներխուժման առջև: Ցավալի է, որ այդ ձախողումներում, կամ որ ավելի ճիշտ է ասել՝ համեստ արդյունքների հասնելու իրողության մեջ, ինչպես ժամանակի գործիչները, այնպես էլ հետագայի ուսումնասիրողները փորձում են գտնել մեղավորներ: Որպես կանոն, այդ «մեղավորների» մեջ հաճախ հայտնվում են ազգի կողմից՝ սիրված հերոսները, տվյալ դեպքում՝ Անդրանիկ Օզանյանը: Կարծում ենք՝ դա այնքան էլ պատահական չէ, քանի որ ժողովուրդը միշտ հերոսներից է ակնկալել առավելագույն արդյունք, նրա հետ է կապել նաև դժվար ու անլուծելի խնդիրների կենսագործումը:

Լրացել է մեծն զորավար Անդրանիկ Օզանյանի ծննդյան 150-ամյակը: Ինչպես հարյուրամյա, այնպես էլ ավելի վաղ տեղի ունեցած իրավիճակներում մեր ունեցած անհաջողությունների հա-

մար մենք չարունակում ենք «մեղավորներ» փնտրել: Բայց համոզված ենք, որ այդ թեմաներով նոր բանավեճերը ոչ միայն չեն հանգեցնի ճշմարտության բացահայտմանը, այլև մեզ ավելի կխճճեն բարդ հարցերի մեջ, հանիրավի կասվերեն իրական հերոսների կերպարները և ժողովրդին կհեռացնեն իրենց իդեալներից, հերոսներ, որոնց անմահացնելու և նրանց օրինակով սերունդներին դաստիարակելու հարցում ժողովուրդները երբեք չեն սխալվում: Ուրեմն, մեկընդմիշտ հիշենք, որ հերոսներն իրականում արել են այն, ինչը ճիշտ են համարել և ամենակարևորը որքան կարողացել են: Նշանակում է՝ ինչպես Անդրանիկ Օզանյանին, այնպես էլ մեր ժողովրդի նվիրական մյուս անուններին գնահատելիս երբեք չպետք է մոռանալ իրադարձությունների վերլուծության ամենաանհաչատ մեթոդը՝ պատմականության սկզբունքը և ազգին անմնացորդ ծառայելու հերոսների առաքելությունը:

ՀԱՎԵԼՎԱԾ

Ախալքալաքի Հայոց ազգային խորհրդի պատասխան նամակը զորավար Անդրանիկին

13 մայիսի 1918 թ.

Ի հետևումն Ձեր 8 մայիսի N 184 գրության՝ Ախալքալաքի Հայոց Ազգային խորհուրդը, երկար խորհրդակցության նիւթ դարձնելով Ձեր յիշեալ գրութիւնը, հարկաւոր համարեց մանրամասն, թէ ներկայ գրութեամբս և թէ գրութիւնս բերող ներկայացուցիչների միջոցաւ ծանոթացնել Ձեզ ազգային խորհրդի դրության հետ, որից և անմիջապէս բխում է Ձեր N 184 և 194 գրութիւններով արուած դիմումների լուծումը:

Դեռ սրանից մօտ 6 ամիս առաջ խորհուրդս հազար ու մի դժւարութիւններով ու արգելքներով հազիւ տիրանալով տեղիս զօրանոցին՝ հազիւ գտաւ այնտեղ 100-ի չափ բերդան հրացաններ, աննշան քանակութեամբ փամփուշտներ, մթերքների չնչին պաշար և առհասարակ ամեն ինչ թալանուած ու քարուքանդ եղած, ջարդուած դրութեամբ, աւելորդ է խօսել զինուորական զգեստների մասին, որոնց բոլոր պահեստները դատնեցին բաց դռնով և դատարկ դարակներով:

Ահա այսպիսի պայմաններում խորհուրդս ստանալով պետական դատարկ ու կիսաքանդ զօրանոցներ՝ ձեռնարկեց կազմակեր-

պել տեղական լբատալեօնը, որը այժմս վերածւելով գնդի, ունի 3500-ից աւելի զինուորներ, որոնց զգեստաւորելու, զինելու և ռազմամթերքի պաշար պատրաստելու ամբողջ գործը ընկած է միայն տեղիս խորհրդի վրայ:

Ախալքալաքի Հայկական գունդը մինչև օրս պետութիւնից չի ստացել համարեայ ոչինչ ո՛չ դրամով և ո՛չ էլ մթերքներով: Մեր Ազգային և Զինուորական կենդրոնական մարմիններն իսկ իրենց կողմից դեռ ոչ մի օժանդակութիւն չեն արել, չնայած թէ՛ մեր և թէ՛ պնդապետի բազմիցս դիմումների, որոնք միշտ մնացել են ձայն բարբառոյ յանապատի:

Այնպէս որ Ախալքալաքի գունդը իր ամբողջ գոյութիւնը այժմս հիմնել է միայն տեղիս Ազգային խորհրդի միջոցների վրայ: Խորհուրդս հոգում է զօրքի թէ՛ սնունդը և թէ՛ ձեռք բերում նրանց համար զէնք ու ռազմամթերք, զգեստաւորում է նրանց և նոյնիսկ դրամական օժանդակութիւններ տալիս՝ զինուորների ռոճիկները բաժանելու, իսկ այս չանել, կամ կիսով չափ պակաս թողնելը, անշուշտ, առիթ կտար լքման, որից չատ է զգուշանում խորհուրդս նկատի ունենալով չրջապատող պայմանները և մեր զօրքի դիւրաթէք տրամադրութիւնը դէպի լքումը: Բացի այս մեծաքանակ զօհողութիւններից, որ պահանջում է նաև բաւական աշխատանք և էներգևա, խորհուրդս ծանրաբեռնւած է նաև ներկայիս իր գաւառի շուրջը վխտացող թշնամիներից պաշտպանւելու խնդրով:

Գաւառի ինքնապաշտպանութիւնը և թշնամուն արգելելը ներս խուժել մեր գաւառի այս կամ այն ծայրից, Ախալցխային օգնութեան հասնելու օրհասական պահանջը և Արդահանից սպասւող վտանգի էական նշանակութիւնը պահանջում էին մեզանից ունենալ կամաւորական, պարտիզանական խմբեր, որոնք սկիզբ են առել մեզանում դեռ յունւար ամսից և որոնց գոյութիւնն ու անհրաժեշտութիւնը չի կարող ոչ մի առարկութեան նիւթ լինել, և որպէսզի այդ խմբերը չկրեն խուժանական ամբոխային մարդախմբերի բնաւորութիւնը, խորհուրդս աչխատանք ու միջոց չէր խնայում կազմակերպելու և կանոնաւոր զօրախմբերի բնաւորութիւն տալ նրանց:

Եւ այդ խմբերի գոյութիւնը պահպանելու և նրանց զինական ու ռազմամթերքի պահանջների բաւարարութեան համար խորհուրդս, դարձեալ չստանալով դրսից ոչ մի որևէ օժանդակութիւն, իր միջոցներով է հոգում բոլոր կարիքները:

Ցցանկանալով երկարացնել գրութիւնս, խորհուրդս Ձեր ուշադրութեանն է հրաւիրում և այն, բաւիս ամենալայն իմաստով մերկ, նւազած, հիւանդ ու ինչպուրկ գաղթականութեան վրայ, որ բերւեց Արցախանից Ախալքալաք և այժմս 6000-ից աւել գաղթականներ տեղաւորելով գաւառում, նորից, առանց կենտրոնական մարմինների օգնութեան, հոգում է նրանց կարիքները հնարաւորութեան սահմաններում: Նորից սպասւում է նոյն չափ գաղթականութիւն:

Ահա այսպիսի պայմանների մէջ Ախալքալաքի Հայոց Ազգային խորհուրդը իր սակաւ ուժերով ու միջոցներով, ստացած Ձեր դիմումները, որոնց բաւարարութիւնը միանգամայն վեր է տեղական խորհրդի ուժից տեղական միջոցներով:

Անկախ այս ամենից հարկաւոր է նկատի առնել և այն հանգամանքը, որ 4 ամսից աւել է կտրւած լինելով դրսի աշխարհից, զրկված հաղորդակցութեան ճանապարհներից Ախալքալաքը չներմուծելով որևէ նիւթեր սպառել է կամ սպառելու վրայ է տեղում եղած, գաւառական փոքրիկ քաղաքին յատուկ պաշարը, ինչպէս օրինակ նալ և մեխքը, ծխախոտ և թուղթ, հնարաւոր չէ գտնել քաղաքում այն քանակութեամբ, որ բաւարարէ թէ՛ Ձեր և թէ՛ տեղիս դնդի ու պարտիզանական խմբերի պահանջներին:

Գալով հացին ու գարուն, ճիշտ է թէ Ախալքալաքը իր գաւառով հաշվվում է հացառատ երկիր, բայց չնորհիւ հարևան գաւառների կարիքներին հացի ու գարու բաւական պաշար դուրս է հանւած գաւառիցս զանազան ուղղութեամբ: Սակայն խորհուրդս յանձն է առնում ամեն միջոց գործ դնել բաւարարելու Ձեր զորամասը պահանջւած քանակութեամբ հացով ու գարով, եթէ այդ բանի համար միջոցներ կհայթհայթւին Ձեր կողմից թէ՛ դրամով և թէ՛ տրանսպորտով, քանի որ խորհուրդս անկարող է խոստում անել, որ ինքը կգտնի միջոցներ և այդ նպատակի համար նկատի առնելով տեղական գնդի, պարտիզանական զօրախմբի, նրանց վարած կռիւների համար պահանջւած զէնքերի ու փամփուշտների և, ի վերջոյ, գաղթականութեան համար պահանջւոդ միջոցների ստիպողական կարիքը:

Այս և անհրաժեշտ է չեշտել, որ մեր գիւղացիութիւնը զգալի չափով զրկւած լինելով աշխատող ձեռներից համառում է մինչ օրս վճարել որևէ տուրք կամ նպաստ Ազգային կարիքների համար:

Իսկ ինչ վերաբերում է հարդի ու խոտի ձեռք բերելուն, խորհուրդս մատնացույց է անում դուխաբոռական գիւղերը, որոնք, անշուշտ, կկարողանան բավարարել Ձեր կարիքներին տեղում այդպիսիները գտնելու պայճառով և որոնց տեղափոխութեան տեսակետից անգամ կան շատ յարմարութիւններ: Դուխաբոռական Օլովկա և այլ գիւղերուն կան պատրաստի բաւական քանակութեամբ հարդ և խոտ, զօրքի կարիքների համար, որոնք կարող են օգտագործել Ձեր զօրամասի կարիքների հաճար:

Յայտնելով այս ամենի մասին Ձեզ, յարգելի Գեներալ և խնդրում ենք մեր այս գրութիւնը չընդունել որպէս մի խուսափողական միջոց ազգային կարիքների դիմաց, այլ անհրաժեշտութիւնից ստիպւած մի յայտարարութիւն՝ իրազեկ անելու Ձեզ Ախալքալաքի գրութեան ու պայմանների հետ, որոնց մանրամասն նկարագիրը ներկայացուցիչները: Ընդունեցեք մեր երախտագիտական զգացմունքները դէպի Ձեզ:

Ի.տ. Ազգային խորհրդի նախագահի՝ Վ. Այվազեան

ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 1, թ. 18–19 շրջ.: Բնագիր: Ձեռագիր:

Ամպրանիկ Օգանյան – 150 (հոդվածների ժողովածու). Երևան, Պատմ. ինստ., 2015, 210 էջ. էջ 77–98:

CATASTROPHIC CONSEQUENCES OF DEMOGRAPHIC POLICY OF OTTOMAN AUTHORITIES IN WESTERN ARMENIA

(the 16th century-beginning of the 20th century)

Prior to the Armenian Genocide of 1915, permanently, and during several hundred years sometimes slowly and sometimes rapidly, the process of ethnic cleansing in Western Armenia had already taken place; the Ottoman Empire's anti-Armenian demographic policy had been put into service for its realization in Western Armenia[1].

In the second half of the 16th century the Ottomans defeated the Turkmen tribes and occupied Western Armenia. The administrative and demographic policies of the Turkish Sultans was stipulated by the national, political and economic interests, and was distinguished by instabilities and constant changes.

By the 1530s Erzrum (Karin), Sebastia, Kars, Van, Diarbekir (Amid) and Akhaltskha eyalets (administrative divisions or provinces in the Ottoman Empire) were formed in the territory of Western Armenia[2]. What was the demographic situation in Western Armenia during the period from the end of the 15th to the first half of the 17th centuries.

The comparison of different sources definitely shows that despite the unfavourable for the Armenians demographic processes, which occurred in Western Armenia during the preceding period the country was in major part inhabited by the indigenous Armenian nation, but gradually new alien ethnical groups appeared and settled in separate provinces.

---

[1] **Melkonyan A.A.**, Tendencies of demographic policy of the Ottoman authorities in Western Armenia (16th centurybeginning of the 20th century). – The Main Issues of Western Armeniancy's Claims (International research and practical Conference, Ciprus. Nicosia, April 18–19, 2008, pp. 101–116. **Մելքոնյան Ա.**, Հայաստանի պատմության և ժողովրդագրության հիմնահարցեր, Երևան, 2011, էջ 401–411:

[2] Administrative division of the Ottoman Empire. For details see: **Birken A.**, Die Provinzen des Osmanischen Reiches. Wiesbaden, 1976.

Thus, at the end of the 16th century according to a Turkish tax list, "The Great Book of Gyurjistan Vilayet[3]", the overwhelming majority of the inhabitants of 1250 settlements of Cehlder (Akhaltskha) province had Armenian or Georgian names, or their names were widely spread among the Armenians and Georgians, i.e. the province was inhabited by Christians. Muslim names were rather scarce[4].

According to Hakob Karnetsi, in the first half of the 16th century the major part of 23 districts of Karin-Erzrum region were inhabited by the Armenians exclusively[5]. The fact that the northern provinces of Erzrum (which had suffered most from the consequences of the undertakings of the Ottoman government that populated the regions with Muslims and had mixed population) nonetheless, were principally populated by the Armenians, and the number of Turks was minor. But this situation did not last long.

With the aim to introduce the Ottoman administrative machine in Western Armenia and subject to taxes the local Armenian population of Baberd, Sper, Tortum and other districts in the north-western part of Western Armenia, the Turkish bands destroyed hundreds of Armenian settlements in Upper Armenia (Bardzr Hayk) and Tayk putting to the sword tens of thousands people.

Over 50 thousand Armenians were forced to convert to Islam rather than the physical destruction[6]. The cases of massacre and forced Islamization became more frequent since 1512, with the beginning of the long lasting Turkish-Persian War. "...Sacking, demolishing and destroying in general from Kars and Ani and the shores of Lake Van to the valley of Mush, Khnus and Alashkert, Diatn and Kamuray, Batnots and Payazet, the whole country was burnt and destroyed, the women and the children were driven away as

---

[3] Vilaycts – chief administrative divisions or provinces of the Ottoman Empire.

[4] **Melkonyan A.**, Javakhk in the 19th Century and in the First Quarter of the 20th century, Yerevan, 2003, pp. 76–82 and "The Great Book of Gyurjistan Vilayet", volume 2, Tbilisi, 1941 (in Georgian).

[5] **Հակոբ Կարնեցի**, Շինուած Կարնոյ քաղաքին, Մանր ժամանակագրություններ, XIII–XVIII դդ., հ. II: Կազմեց՝ Վ.Ա. Հակոբյան, Երևան, 1956, էջ 550–551:

[6] **Koch K.** Wanderungen im Oriente während der Jahre 1843 und 1846. Weimar, 1846. **Տաշեան Յ.**, Հայ բնակութիւնը Սեւ ծովին մինչեւ Կարին, Վիեննա, 1921, էջ 3–20:

captives... and the country turned to desert so that only the fortresses remained intact in the territory from Erzrum to Erevan", – an eyewitness author wrote[7].

In order to establish a complete hegemony over the homage nations the Sultan's Government started the process of populating the conquered lands with Turkic and Iranic language speaking (mostly the Kurds) tribes.

Just after concluding the Persian-Turkish Peace (1639) in 1643 the Turkish authorities violently carried out general census of the population in Erzrum province. Collection of taxes and violence were so brutal that the Christians of some districts of the province "converted to Islam out of fear"[8].

Ghukas Inchichyan, historian and geographer at the end of the 18th and the beginning of the 19th centuries witnessed about other cases of forced Islamization in the, "tired of the violence and deprivations (the Christians – A. M.) in general adopted Islam." Population of Berdagrak "was of Armenian origin, yet most of them converted to Islam and very few stayed dedicated to Christianity", – Ghukas Inchichyan wrote[9].

The process of forced Islamization of the Christian population was accompanied by destroying and demolishing of the churches or turning them into mosques. In 1662 Roman (Greek – **A. M.**) and Armenian churches were destroyed and demolished or turned into mosque, and every Christian wore black cap by the sanctions of the Ottoman authorities[10].

In 1723 over one hundred Armenian villages were burnt to ashes in Sper, a northern district of Erzrum province, many Armenians were captured, they were forcibly converted to Islam, those who refused were killed[11].

The new calamities of the lasting Turkish-Persian War were added to all these. In 1730s, the army of Nadir Khan invaded Kars and Ardahan provinces and forcedly took around 6 thousand Armenians to Persia. "... And captured the Nariman province, Javakhk, Chldr (Chelter) and Ghayi Ghulu, which

---

[7] Մանր ժամանակագրություններ, հ. II, էջ 566:

[8] Ibid, p. 554.

[9] **Ինճիճեան Ղ.**, Աշխարհագրութիւն յորից մասանց աշխարհի՝ Ասիոյ, Եւրոպիոյ, Ափրիկոյ և Ամերիկոյ: Մասն առաջին. Ասիա, հտ. Ա. Վենետիկ, 1806, էջ 93:

[10] Մանր ժամանակագրություններ, հ. II, էջ 567.

[11] **Ստրպետ, Ճորոխի աւազանը**, Երևան, 1934, էջ 110. Մատենադարան, ձեռ. No. 6332, p. 552:

were all our nation, and drove the men and women, the elderly and youth to Khorasan, and they were six thousand as we heard," Abraham Cretatsi (Cretan) wrote[12].

In order to imagine the disastrous demographic shift, which took place in the period of approximately one century in the same state, a simple comparison of the taxation lists "The Great Book of Gyurjistan Vilayet," which represents the status by the end of the 16th century, and "Chelder Eyalet Jaba Defter," which refers to the end of the 17th century and the first thirties of the 18th century[13], will show the obvious fact that during this period the number of settlements in eyelet had rapidly decreased.

During one century or a little more the number of settlements in Javakhk was reduced from 352 to 142, i.e. about 2,5 times. If formerly there were more than one villages having the same name with definitions "Upper" or "Lower", and "Big", "Medium" or "Small", then a part of those villages was not mentioned at all, whereas the others were indicated as one village per name.

"The fruits" of such policy appeared in the historical Daranaghi province – Kamakh as well. The appearances that occurred there may be noticed in the following lines by Gh. Inchichyan: "The population of the province flourished, especially Armenian and Turkish, the latter in the major part have Armenian origin,"[14] i.e. Armenians who were forcedly assimilated. According to the same author, the Islamic flood was so strong that a part of the local Armenians had to leave and to settle in the Mountains of Tekir Dagh[15].

Реконструкция Азиатско-Европейских торговых путей вызвала интерес Российской империи по отношению к Западной Армении. Царский двор, в особенности императрица Екатерина II (1762–1796), начала заинтересовывать турецко-подданных торговцев-армян с целью оживить торговлю России с азиатскими странами.

Западно-армянские торговцы взяли на себе миссию международного торгового транзита, особенно в XIX веке, когда обострилась борьба между европейскими державами за утверждение власти на Востоке, за слабеющую день это дня Османскую империю. В регион, в частности в Западную Армению, потянулись в большом ко-

личестве европейские путешественники, религиозные проповедники и политические деятели. Каждая из сторон пыталась взять под свой контроль деятельность армянских ростовщиков и обеспечить по возможности большую прибыль для своей страны.

Как следует из свидетельства Г. Инчичяна, в начале XIX века география деятельности армянских торговцев значительно расширилась, включив в себя огромную территорию от Англии до Индонезии. Он описывает армянских торговцев как людей, «чрезвычайно преданных своему делу и знающих его». Их деятельность не ограничивается одним Востоком, но распространяется на многие крупнейшие города Европы. «Их можно видеть, как в Персии, так и в Ливорно и Марселе; они торгуют в Голландии, Англии, Венеции; их торговля доходит до Монголии, Сиама, Индии, Японии, Явы и Филлипинских островов» [3, с. 47]. Из сказанного следует, что в 19-м веке в международной торговле заметно восстановилось значение Западной Армении и возросла роль армянских торговцев. Как заметил видный русский арменовед Сергей Глинка, к тому времени «Армения уже является по своему географическому положению единственным связующим звеном с европейским Востоком» [6, с. 35].

В XIX веке, наряду с торговыми путями Токат-Эрзерум-Басен-Баязет и Трапезунд-Баберд-Эрзерум-Баязет, ведущими из Европы в Индию, постепенно возродилась известная с древнейших времен южная магистраль – прибрежные районы Средиземного моря, Малатия (страны бывшего Леванта), Диарбекир-Муш-Битлис-Ван, а отсюда – в Персию и Китай.

Эрзерум продолжал играть роль главного западно-армянского административного центра, его население составляло около 110 тыс. Человек [5, с. 13–154]. По свидетельству немецкого летописца Фрейгана, побывавшего в Эрзеруме в 1811–1812 гг., «Эрзерум – столица Западной Армении и в то же время – склад турецкой торговли, которая проходит отсюда в Индию» [5]. В начале XIX века генерал Гардан, который был отправлен на Восток Наполеоном Бонапартом.

также отмечает процветающее состояние, в котором находится город Токат: «Там живет тысяча армян-католиков. Изготавливают полотна, но главными материалами торговли являются 500000 вохаолова и в больших количествах медь. Этот город – целый склад для товаров Измира, которые затем направляются к Эрзеруму, Кесарии и Мосулу» [1, с. 410]. Тот же самый автор замечает, что регион этот вовлечен в торговлю и с его родиной. Из Франции сюда ввозили различные предметы роскоши, олово, свинец, оружие, часы, которые обменивали на персидский шелк, табак, шерсть, лекарства, алмаз, жемчуг и т.д. «Это составляет часть нашей торговли с Востоком, – воодушевленно пишет французский военный, – которая приносит Франции в год шестьдесят миллионов чистого дохода. Марсель – главный город этой торговли. Пусть мне будет позволено напомнить об этом, находясь на расстоянии пятисот миль от родины» [1, с. 125]. В другом месте Гардан отмечает, что в этой торговле, в особенности с азиатскими странами, главнейшую роль играют армяне [1, с. 203].

Как уже было отмечено, в XIX веке значительно оживилась торговая магистраль, которая вела из средиземноморских стран Европы в Азию через южные районы Западной Армении. На этой магистрали находился один из знаменитых городов древности – Ван, воздвигнутый на восточном берегу одноименного озера. Примечательно, что торговля проходила не только по сухопутным путям, но и осуществлялась на лодках по ванскому озеру – по маршруту Датван-Ван. «Население Вана составляет от пятнадцати до двадцати тысяч, большинство из них армяне..., – читаем у Пьер Амеди Жобера (Pierre Amedee Emilien-Probe Jaubert), знаменитого французского дипломата, который был отправлен Наполеоном I на Восток с целью подготовки индийского похода. Осуществляемая посредством озера с Мушем и Битлисом торговля, а также караванный путь из Багдада, Мосула, Кара-чиолана (Qara-Tchiolan), Мардина и Диарбекира в Тифлис и северную часть Персии, предоставляла большие преимущества

населению Вана. Рыболовство на озере Ван приносило им доход от пятидесяти до шестидесяти куруш в год» [1, с. 220].

Важно отметить, что в находящихся в то же самое время на том же транзитном пути персидских городах не только не отмечался экономический подъем, но и был заметен упадок. Об этом свидетельствовали посетившие регион европейцы. Так, согласно английскому дипломату Вильяму Сюзлену (1812 год), невозможно сравнить пришедшие в упадок и полузаброшенные персидские города с находившимся в постоянном движении Эрзерумом, в котором осуществлялась оживленная торговля [1, с. 485].

Говоря об упрочении экономических отношений Восток-Запад, а также о той роли, которую играла Западная Армения и, в частности, участвовавшее в развитии этих отношений армянское население, нельзя не отметить и тот факт, что, каким бы заметным ни было это развитие, будучи обусловленным всеобщей кризисной ситуацией, в которой находилась Османская империя, оно не носило стабильного характера и было обречено на неудачу. Неслучайно, что в течение 1820-х гг., в персидско-турецких и русско-турецких войнах 1821–1822 гг., еще более обострилась и без того нестабильная ситуация, сложившаяся в восточных провинциях империи, приостановилось торгово-экономическое развитие, и проходящие здесь международные транзитные пути оказались в бездействии. Одной из главных причин такого упадка явилась миграция – переселение в 1829–1830 гг. к границам Российской империи около 74 тысяч армян из разных провинций Западной Армении, в особенности из Эрзерума, Карса, Баязета и Алашкерта (в числе которых было множество торговцев и ремесленников) [5, с. 138–154].

В результате повторяющихся в течение всего XIX века русско-турецких войн (1828–1829, 1853–1856, 1877–1878 гг.) и новой миграции западных армян, а также организованной в 1890-х гг. султаном Гамидом II армянской резни, политический и экономический кризис еще более углубился. В сложившихся условиях армянские торговцы

вынуждены были перевезти торговлю с Европой из Эрзерума и других западно-армянских городов в более стабильные города – Константинополь и Смирну.

В 1878 г., после Берлинской конференции, когда армянский вопрос–проблема осуществления реформ султанским правительством в Западной Армении под контролем европейских держав – стал вопросом международной дипломатии, наметилась определенная тенденция – вытеснение армян из сферы торговли. Султан Гамид II, установив кровавый деспотический режим, стремился не только вытеснить армян из международной экономической жизни, но и осуществить массовую резню. В результате, в 1894–1896 гг., в организованных массовых убийствах погибло около 300 тысяч армян. В свою очередь, Европейские державы, в частности Англия, Россия, Австрия и Франция, распространяя свое влияние на Османскую империю, превратились в серьезного противника для торгового класса турецкоподанных народов. Достаточно отметить, что в конце XIX и начале XX веков экономика османского государства оказалась в такой мере под влиянием европейского капитала, что единица местной валюты – девальвированная турецкая лира была почти полностью вытеснена находящимися в широком обращении франком (наполеоновские золотые монеты), австрийским дукатом и российским рублем [2, 298–300].

В конце XIX и начале XX веков неспособность турецких предпринимателей конкурировать с армянскими торговцами в 1915–1916 гг. обратилась в один из основных экономических причин Геноцида Армян. Организованный младотурками в Западной Армении Геноцид Армян, в результате которого армянский народ лишился своей исторической родины, не только нанес непоправимый удар по развитию экономических отношений Восток-Запад, но и причинил неоценимый ущерб всей мировой цивилизации.

Литература

1. Акопян О. Путевые заметки. Т. 6. Ереван, 1934.

2. Гамбарян А. Аграрные отношения в Западной Армении. Ереван, 1965 (на арм. яз.).

3. Инчичян Г. География четырех сторон света. Ч. I, Венеция, 1806. С. 63–64 (на арм. яз.).

4. «Малые хроники», составил В. Акопян. Т. 2. Ереван, 1956 (на арм. яз.).

5. Мелконян А. Эрзрум. Ереван, 1994 (на арм. яз.).

6. Энгельс Ф. Турецкий вопрос / Маркс К., Энгельс Ф. Соч. Т. 9. С. 25.

7. Lecomte de Marsigli, Eetat militaire ottoman. Amsterdam, 1732.

8. M. dOhsson, Tableau general de lEmpire Ottoman. V. 4. Paris, 1820.

9. Глинка С. Н. Обозрение истории армянского народа. 4. 1. М., 1832. С. 35.

10. Pitton de Tournefort. Relation d un voyage du Levant, lettre XX.

11. Pitton de Tournefort. Relation d un voyage du Levant. V. 2. Lyon, 1717. Tavernier J.B., Les six voyages Jean Babtiste Tavernier en Perseet aux Indes. Paris, 1679.

Историко-культурное наследие Великого шелкового пути и продвижение туристских дестинации на Северном Кавказе: материалы III международной научно-практической конференции (Ставрополь 5–7 октября 2017 г.). Ставрополь, изд-во СКФУ. 2017. 288 с., с. 64–68.

ՆԱԽԻՋԵՎԱՆ
ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔ ՈՒ ԿԵՆՍԱՏԱՐԱԾՔ

Հայկական լեռնաշխարհի յուրաքանչյուր տարածաշրջան՝ լինի աշխարհ-նահանգ, գավառ թե գավառակ, ունի իր ուրույն ու պատվավոր տեղը Հայոց բազմադարյա պատմության մեջ: Անշուշտ, որպես կանոն, մեծ տարածք ընդգրկող նահանգներն ավելի ծանրակշիռ դեր են խաղացել մեր ժողովրդի կյանքում, մասնավորապես Այրարատը, Տարոն-Տուրուբերանը, Վասպուրականը, Բարձր Հայքը, Արցախը, Սյունիքը և այլն: Սակայն կան նաև առանձին գավառներ, որոնք իրենց նշանակությամբ գրեթե չեն զիջել նահանգներին կամ ավելի ճիշտ՝ նրանց է պատկանել ամբողջ նահանգի պատմության ու մշակույթի առյուծի բաժինը: Այդպիսիք են Այրարատ աշխարհի Ոստան, Տուրուբերանի Տարոն, Բարձր Հայքի Կարին, Վասպուրականի Նախիջևան (Նախճավան) գավառները և այլն: Ցավոք, այդօրինակ վարչամիավորնների մեծ մասն այսօր գտնվում է Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս: Նման տարածքներից է նաև պատմական Հայաստանի կենտրոնական մասում գտնվող Նախիջևան գավառը:

Նախիջևանը հնագույն հայկական գավառներից է: Նրա անունը կապվում է Աստվածաշնչյան Հայտնի Ջրհեղեղի պատմության հետ: Համաշխարհային Ջրհեղեղից հետո Նոյ Նահապետի հանգրվանած առաջին բնակատեղին, այն է՝ նախապես իջևանելու վայր լինելու հանգամանքը, ծնունդ է տվել նրա Նախիջևան անվանմանը:

Սույն գավառը վաղնջական ժամանակներից եղել է հայկական զանազան պետական կազմավորումների կազմում, մաս է կազմել Արարատյան (Ուրարտու) թագավորությանը, կարևոր դերակատարում ունեցել Մեծ Հայքի կյանքում երվանդական, Արտաշեսյան ու Արշակունյաց հարստությունների օրոք: Հատկանշական է, որ 4-րդ դարի վերջին Նախիջևանի տարածաշրջանում՝ Հեթանոսական երդիրի կենտրոն Գողթան գավառում է Մեծն Մեսրոպ Մաշտոցի մտքում ծնվել հայոց գրերի ստեղծման վեհ գաղափարը:

Գտնվելով Հայաստանի աշխարհագրական տարբեր շրջանները միացնող առևտրական ճանապարհների խաչմերուկում՝ Նախիջևանն առավել մեծ չափերով է ենթարկվել օտար նվաճողների հարձակումներին: Այն պատմության ընթացքում տեսել է բազմաթիվ արհա-

վիրքներ, որոնցից թերևս առաջինը վերաբերում է արաբական արշավանքների ժամանակներին: Հասկանալով, որ հայ նախարարական համակարգը Հայաստանի ներքին ինքնավարության կարևոր աղբյուրներից է, արաբները որոշեցին վերացնել հայ իշխանական տներին: Նրանք խաբեությամբ 705 թ. Նախճավան կանչեցին 700–800 հայ նախարարների և նրանց ողջակիզեցին տեղի ու նրա հարևան Խրամավանի եկեղեցիներում: Շուտով սույն գավառը դարձավ Հայաստանում օտար արաբական ցեղերի հաստատման առաջին վայրերից մեկը:

Այլազավան էթնիկ խմբերով Հայաստանի կենտրոնական շրջանների, այդ թվում Նախճավան գավառի հետագա բնակեցումը դաղարեց 9–11-րդ դարերում Բագրատունիների ու Արծրունիների թագավորությունների շրջանում: Բայց դժբախտաբար, այդ ժամանակաշրջանում էլ գավառը կրվախնճոր դարձավ Սյունիքին Վասպուրականի իշխանական տների միջև: Դժգոհ մնալով Նախճավանը Սյունիքին հանձնելու Սմբատ Ա Բագրատունու որոշումից՝ Գագիկ Արծրունին իրեն հռչակեց Վասպուրականի թագավոր՝ հիմք դնելով հայկական պետականության մասնատմանը:

Հետագա դարերի ընթացքում հայկական այլ գավառների թվում Նախիջևանը ենթարկվեց նոր փորձությունների սելջուկ-թուրքերի, մոնղոլների, թուրքմենական կոյունլու ցեղերի ներխուժումների հետևանքով: 16-րդ դարի սկզբներից սկսված թուրք-պարսկական երկարատև ու արյունալի պատերազմների թատերաբեմ դարձավ նաև Նախիջևանի տարածաշրջանը: 1604 թ. պարսից Շահ Աբաս արքան մեծ թվով հայերի այստեղից ևս բռնագաղթեցրեց Իրան: Երբեմնի վաճառաշահ Նախիջևան, Ջուղա, Ագուլիս և այլ քաղաքները զրկվեցին իրենց ժրաջան բնակիչներից: Տարածաշրջանի առևտրական դասն իր ազգանվեր գործողությունը չարունակեց նաև օտարության մեջ՝ Սպահանի մերձակա, իր հիմնադրած Նոր Ջուղա բնակավայրում և հեռավոր Հնդկաստանում:

1639 թ. Կասրե-Շիրինի հաշտության պայմանագրով Նախիջևանի գավառն ընկավ Սեֆյան Իրանի տիրապետության տակ: Բնակչության մեջ իսլամական տարրը չարունակեց աճել: 1828 թ. փետրվարի 10-ին Թուրքմենչայում կնքված ռուս-պարսկական պայմանագրով գավառը միացվեց Ռուսական կայսրությանը: Այն նախ մտավ Հայկական մարզի, ապա՝ Երևանի նահանգի կազմի մեջ:

Ռուսական տիրապետության շրջանում գավառը որոշ չափով վերականգնեց իր նախկին հայեցի ժողովրդագրական պատկերը: Սակայն 1905–1906 թթ. տեղի թաթարների, 1918–1920 թթ. օսմանյան զորքերի կազմակերպած հայկական կոտորածների հետևանքով հայաթյունը կրկին տուժեց: 1919 թ. գավառը միացվեց Հայաստանի Հանրապետությանը: Սակայն 1920 թ. աշնանն այն բռնազավթվեց քեմալական թուրքերի կողմից, իսկ 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի թուրք-ռուսական պայմանագրով ապօրինաբար տրվեց Խորհրդային Ադրբեջանին՝ պայմանով, որ վերջինս այն երրորդ կողմի, այն է՝ Հայաստանին պիջնլու իրավունք չունի:

Նախիջևանի բռնակցումն ամրագրվեց նաև նույն տարվա հոկտեմբերի 13-ին Կարսում Անդրկովկասի խորհրդային հանրապետությունների ու Թուրքիայի միջև կնքված պայմանագրով, միայն այն տարբերությամբ, որ այս փաստաթղթից հանվեց Մոսկվայի պայմանագրի այն կետը, որն Ադրբեջանին արգելում էր Նախիջևանը պիջել որևէ երրորդ կողմի: Ինչևէ, հակահայ այս գործարքի հետևանքով դուտ հայկական գավառը հայտնվեց Ադրբեջանի կազմում՝ անգամ նրա հետ չունենալով ընդհանուր սահման: Մինչդեռ, այդ տարածքի բռնակցումով Ադրբեջանն Արարատյան և Շարուրի դաշտերը միմյանց միացնող «Դայլի դրունք» կոչվող մոտ 10 կիլոմետրանոց միջանցքով ընդհանուր սահման ստացավ Թուրքիայի Հանրապետության հետ:

Ադրբեջանի կազմում իշխանությունների վարած խտրական քաղաքականության պայմաններում Նախիջևանի հայության համար սկսվեց մի ծանր ժամանակաշրջան՝ արտագաղթ, հայկական հուշարձանների ղանգվածային ոչնչացում, Խորհրդային Հայաստանի հետ նախիջևանահայերի առնչությունների սահմանափակում և այլն: Արցախյան շարժման օրերին հակահայ նոր քայլերի հետևանքով տարածաշրջանը լիովին հայաթափվեց: Ադրբեջանական բարբարոսության գագաթնակետը կազմեց 21-րդ դարի սկզբին Հին Ջուղայի հայոց գերեզմանատան հազարավոր խաչքարերի վերջնական ոչնչացումը:

Այսօր Արցախի հիմնահարցի արդարացի լուծումը սերտորեն կապվում է Նախիջևանի խնդրի հետ: Թուրք-ադրբեջանական գործակցության պայմաններում մեր հայրենիքի երբեմնի կարևորագույն մասերից մեկն այժմ վերածվել է իսկական ռազմական հենակետի մեր իսկ դեմ: Օրեցօր Նախիջևանի հանրապետության տարած-

քում ավելանում է թուրքական զինական ներկայությունը, որն ուղղակի վտանգ է մայրաքաղաք Երևանի ու ամբողջ Հայաստանի Հանրապետության համար: Ուստի նոր մարտահավերների չղթայում միանդամայն հասկանալի ու գնահատելի է Կանադայի Հայ օգնության միության հերթական սուն տարեդրձի նվիրումը ***Հավերժական Հայրենիք ու կենսատարածք ՆԱԽԻՋԵՎԱՆԻՆ:***

ՀՕՄ-ի Թորոնթոյի (Կանադա) «Ռուբինա» մասնաճյուղ, Տոհմիկ օր Ջոնած՝ Նախիջեւանին եւ Հինգ Գաւառներուն՝ Գողթան, Երնջակ, Նախիջեւան, Ծահուկ-Շահապոնք, Շարուր, տարեգիրք, Թորոնթօ, 2017, 28 հոկտեմբերի, էջ 13–15: http: //www.academhistory.am/images/HRAPARAKUMNER/1.pdf

Յուրաքանչյուր երկրի ու ժողովրդի պատմության պարբերացման խնդիրը դիտարկելիս անհրաժեշտ է նկատի առնել ինչպես սոցիալ-տնտեսական, այնպես էլ քաղաքական կարևորագույն նախադրյալների առկայությունը: Պարբերացման հարցում, որպես կանոն, առաջնային նշանակություն են ունենում ազդերի ձևավորման ու պետականության զարգացման գործընթացները, որոնք հաճախ ընթանում են զուգահեռաբար: Պատահական չէ, որ շատ դեպքերում ժողովուրդների պատմության պարբերացման հիմքում ուղղակի ընկնում է պետականության ստեղծման ու զարգացման հայեցակարգը: Այդ իմաստով հայոց պատմության պարբերացումը մեծապես պայմանավորվում է պետականության գոյության կամ դրա դադարման ընդհատումների հանգամանքներով: Ավելին՝ հին, միջին, նոր և նորագույն պատմության դարաշրջանները հիմնականում համապատասխանում են պետականության զարգացման չրջափուլերին: Հետևապես, հայոց պետականության պատմության պարբերացումը ևս պայմանականորեն կարելի է բաժանել վերոնշյալ չորս պատմափուլերի՝ հին, միջին, նոր և նորագույն:

1. Հին հայոց պետականության *դարաշրջանն ընդգրկում է վաղնջական ժամանակներից մինչև IV դարի վերջն ընկած հատվածը, որն իր հերթին կարելի է տրոհել հետևյալ փուլերի, ա) վաղագույն պետականություններ՝ Ք.ա. III հազարամյակից մինչև Ք.ա. IX դ. (Արատտա, Արմանում, Արմե-Շուբրիա, Թոգարմա, Հայասա, Նաիրի, Դայա, Էթիուհի և այլն), բ) միասնական պետականություններ՝ Ք.ա. IX դարից մինչև Ք.Հ. IV դ. վերջ (Վանի կամ Արարատյան (Բիայնիլի, Ուրարտու) թագավորություն, Երվանդյաններ, Արտաշեսյաններ և Արշակունիների դահակալություն՝ մինչև Հայաստանի 387 թ. բաժանում:*

*Հին հայոց պետականության սկզբնավորման, այսինքն՝ **վաղագույն ժամանակաշրջանի** վերաբերյալ ինչպես հայ, այնպես էլ օտար հեղինակների մոտեցումները հաճախ արմատապես տարբերվում են: Երկար ժամանակ տիրապետում էր այն տեսակետը, որ հայկական պետականության ձևավորման մասին կարելի է խոսել լավագույն դեպքում Ք.ա. IX–VI դարերում գոյություն ունեցած Ուրարտու (այն է՝ Բիայնիլի, Արարատյան, Վանի թագավորություն) պետութ-*

յան կործանումից հետո, երբ ասպարեզ են եկել հայ Երվանդական (Երվանդունի) արքայատոհմի ներկայացուցիչները, որոնք VI–III դարերում ընդհատումներով իշխել են Մեծ Հայքում, Փոքր Հայքում, Ծոփքում և Կոմմագենեում[1]:

Ավելին՝ հայ ժողովրդի և հայկական միասնական պետության կազմավորման ավարտը չատերը համարել են Ք.ա. II դարի առաջին կեսը, այսինքն՝ Արտաշես Ա-ի կողմից հայկական հողերի միավորման ժամանակաշրջանը: Մեր կարծիքով, հայրենական պատմությունը «երիտասարդացնելու» նման մոտեցումը պայմանավորված էր ասորեստանյան արձանագրություններում «Ուրարտու» անվանված Վանի թագավորությունը ոչ հայկական պետություն տեսնելու և դրանով իսկ եվրոպական պատմագիտական դպրոցների հետ համերաշխվելու մղումով:

Սակայն այդ հեղինակները միաժամանակ ստիպված էին ընդունել, որ հայկական լեռնաշխարհում Ուրարտուից առաջ գոյություն են ունեցել կազմավորումներ, իրենց գործածած եզրաբանությամբ «ցեղային միություններ», որոնց անվանումները հիշեցնում էին նրանց հայկական ծագումնաբանությունը՝ Արմանում, Արմե-Շուբրիա, Հայասա-Ազզի, Էթիունի, Նաիրի, Դայա և այլն: Տարօրինակն այն է, որ հաճախ այդ կազմավորումների գլուխ կանգնած առաջնորդները թեպետ աղբյուրներում հիշատակվում են որպես արքաներ, այդուհանդերձ նրանց գլխավորած կազմավորումները դարձյալ անվանվում էին ցեղային միություններ: Այսպես՝ հանրահայտ Խեթական թագավորության տիրակալների՝ Ք.ա. XV–XIV դարերի արձանագրություններում թեև իրենց ախոյան երկրի՝ Հայասայի կառավարիչներ Կարաննին, Խուկկանան, Անիան անվանվում էին արքաներ, այնուամենայնիվ տարբեր տեքստերում նրանց կարգավիճակը կամայականորեն թագավորից իջեցված էր ցեղապետի աստիճանի, այդ երկրի արքունիքն էլ համարվում էր «ցեղային ռազմական ավագանի»[2]: Այնինչ տվյալ դեպքում՝ խոսքը էթնիկ առումով հայ-

---

[1] Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», ԵՊՀ հրատ., Երևան, 1975, էջ 82, 83:

[2] «Հայասա-Ազզին և.ս.- կարդում ենք հայ ժողովրդի պատմության ակադեմիական առաջին հրատարակությունում,- անշուշտ, պետք է դիտել որպես ցեղային միություն, թեև խեթական աղբյուրները նրա կառավարչին կոչում են «թագավոր»,...Հայասայի «թագավորի» հետ միասին հանդես է գալիս, ... ժողովրդական հավաքը կամ ցեղային (միջցեղային) ռազմական ավագանու ժողովը» («Հայ ժողովրդի պատմություն», հ. 1, էջ 196):

կական պետությունների և նրանց հայազգի արքաների մասին է: Բարեբախտաբար, ինչպես ճիշտ նշում են արևելագետներ Ա. Քոսյանը և Ռ. Ղազարյանը, օտար մի շարք հետազոտողներ (Ա. Գյոթցե, Հ. Դյութներըոկ և ուրիշներ), հիմք ընդունելով աղբյուրների վկայությունները, ևս ընդգծում են, որ Հայասայի վերոհիշյալ տիրակալներն իրապես եղել են թագավորներ, առավել ևս, որ ունեցել են պետականության անվտանգության հիմք հանդիսացող 700 մարտակառքերից և 10 հազար հետևակից բաղկացած կանոնավոր բանակ[3]:

Անկախության ձեռքբերումից հետո հայ պատմաբանների մի մասը, մասնակիորեն վերանայելով նախորդ մոտեցումները, առաջ քաշեց այն տեսակետը, որ Հայկական լեռնաշխարհի առաջին պետություններն առաջացել են ոչ թե Ք.ա. առաջին հազարամյակի կեսերից՝ Երվանդունիների թագավորության ժամանակներից, այլ երկրորդ հազարամյակից: Սակայն այդ տեսակետը ևս չուտով վերանայվեց:

Վերջին տասնամյակների ուսումնասիրությունները հանգեցրին այն համոզման, որ ինչպես հայ ժողովրդի ծագման, այնպես էլ Հայկական լեռնաշխարհում ձևավորված կազմավորումների բնույթի մասին պատկերացումներն արմատական վերանայման կարիք ունեն: Հստակ է, որ ժողովրդի և պետականության կազմավորման գործընթացներն իրականում ընթանում են զրեթե միաժամանակ, կամ ավելի ճիշտ՝ էթնոսի ձևավորման ավարտը տրամաբանորեն բերում է պետության սաղմնավորմանը:

Նախկին հայեցակարգային մոտեցումների վերանայման տեսանկյունից առանձնանում են Արտակ Մովսիսյանի եզրահանգումները: Քննության առնելով խնդիրը՝ նա գալիս է այն համոզման, որ Հայկական լեռնաշխարհի առաջին կազմավորումներն ունեին պետությանը բնորոշ բոլոր ատրիբուտները՝ հատկանիշները (տարածք, բնակչություն, հանրության նկատմամբ իրավունք կիրառելու հնարավորություն, կառավարման համակարգ, ինքնիշխանություն և

[3] Տե՛ս **Քոսյան Ա.**, Հայկական լեռնաշխարհի տեղանունները, Եր., 2004, էջ 136, **Ղազարյան Ռ.**, Հայասա. քաղաքական և մշակութային պատմությունը, Եր., 2009, էջ 84, 85:

այլն), և դրանց մեջ մեզ հայտնի հնագույն պետությունը Ք.ա. XXVIII–XXVII դարերում հիշատակվող Արատտան է[4]:

Այն, որ Ք.ա. III–II հազարամյակներում հայկական լեռնաշխարհում գոյություն ունեցած կազմավորումները պետություններ կարդավիճակ ունեին, հաստատվում է նաև հայ հնագետների կատարած պեղումներով. բանն այն է, որ քաղաքաշինական, մասնավորապես բարձրորակ ամրոցաշինության, խեցեղենի, զարդեղենի, աշխատանքային գործիքների, խաղողագործության, հացահատիկի մշակության և այլնի առկայությունը հուշում է, որ ցեղային հասարակության պայմաններում նման մակարդակ ապահովել հնարավոր չէր:

Բնականաբար, այդ ամենի ստեղծման համար անհրաժեշտ էր պետականության գոյություն[5]:

Այսպիսով, հայկական լեռնաշխարհում Ք.ա. III–II հազարամյակներում պետականության առկայության հարցում հայ հետազոտողների մեծ մասի կարծիքները համընկնում են: Սակայն մասնագետների մի խումբ դեռ շարունակում է պնդել, որ թեպետ այդ կազմավորումները Հայկական լեռնաշխարհում առկա էին, բայց դրանց մասին խոսել որպես հայկական պետական կառույցների մասին հնարավոր չէ: Եվ ենթադրվում է, որ նրանց մեծ մասն ամենայն հավանականությամբ ունեցել է ոչ հայկական էթնիկ նկարագիր կամ լավագույն դեպքում հայերը նոր-նոր սկսել են հայտնվել ու եղանակ ստեղծել այդ պետության մեջ:

Ինչևէ, բոլոր դեպքերում գոնե ձևավորվել է մի միասնական կարծիք այն մասին, որ վաղագույն պետականությունները՝ սկսած Արատտայից, Հայկական լեռնաշխարհում կյանքի են կոչվել վաղ բրոնզի դարից և գրեթե տարեկից են Հին աշխարհի առաջին պետություններին՝ Եգիպտոսին, Աքքադին ու Շումերին: Դրանք որպես

---

[4] Տե՛ս **Մովսիսյան Արտակ, Դանիելյան Երանուհի,** Հայկական լեռնաշխարհում պետականության սկզբնավորման խնդրի շուրջ, Բանբեր Երևանի համալսարանի, 2010, թիվ 130.1. էջ 21–28:

[5] Տե՛ս **Խանզադյան Է.Վ.,** Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ.թ.ա. III հազարամյակում, Եր., 1967, **Սիմոնյան Հակոբ,** Հայկական լեռնաշխարհում հնագույն քաղաքակրթության և պետական կազմավորումների առաջացման խնդրի շուրջ (ըստ հնագիտական տվյալների), Հայոց հին պատմության հիմնահարցեր: Հայկական լեռնաշխարհը հայոց և համաշխարհային քաղաքակրթության բնօրրան. Գիտաժողովի զեկուցումների հիմնադրույթներ. Եր., 2003. էջ 9. 10:

կանոն եղել են միմյանցից անկախ կամ մեկ համադաշնության մեջ գտնվող կազմավորումներ:

Ք.ա. IX դարում Հայկական լեռնաշխարհում ասպարեզ է իջնում առաջին միասնական պետականությունը՝ Վանի կամ Արարատյան (Բիայնիլի, Ուրարտու) թագավորությունը, որը հայ էթնոսի գերազանցության պայմաններում ոչ միայն իր շուրջն է միավորում բարձրավանդակի հայկական պետական կազմավորումները, այլև Ք.ա. IX դարի առաջին կեսին դառնում է Առաջավոր Ասիայի հզոր տերություն: Վանի թագավորության ժամանակներից մինչև Ք.հ. IV դարը հին հայկական պետության սահմաններն առնվազն ընդգրկում են Մեծ Հայքի պատմաաշխարհագրական տարածքը՝ ժամանակ առ ժամանակ ներառելով հարակից երկրներ, իսկ բիայնական Արգիշտի I-ի, Սարդուր II-ի (Ք.ա. 786–743 թթ.) և Արտաշեսյան Տիգրան II Մեծի (95–55 թթ.) գահակալության վերելքների շրջանում հասնում են նաև Միջերկրական ծով ու Պարսից ծոց: Հին հայկական պետականության դարաշրջանում ձևավորվում է պետական կառավարման ամբողջական համակարգը, որի շատ տարրեր պահպանվում են հետագա ժամանակներում:

*2. **Միջնադարյան պետականության** շրջանը ներառում է IV դարի վերջից մինչև XVII դարի կեսերը: Առաջին փուլը (վաղմիջնադարյան պետականություն) սկսվում է Հայաստանի առաջին բաժանումով և ավարտվում IX դարի երկրորդ կեսին՝ Բագրատունիների թագավորության ստեղծումով: 387 թ. Արևելյան Հայաստանը հայտնվում է պարսկական, իսկ Արևմտյան Հայաստանը՝ Հռոմեական կայսրության (395 թվականից՝ Բյուզանդիա) ազդեցության ոլորտում: Հայկական պետականությունը բռնում է թուլացման ուղի: Բայց հայոց Արշակունյաց արքայատոհմի ներկայացուցիչները Հայաստանի երկու հատվածներում դեռ որոշ ժամանակ շարունակում են գահակալել: 391 թ. Արևմտյան Հայաստանում Արշակ III-ի մահվանից, իսկ 428 թ. Արտաշես III (Արտաշիր) արքային գահընկեց անելուց հետո Արշակունյաց հարստությունն անկում է ապրում:*

Բայց Արշակունիների անկումով միայն վերանում է թագավորությունը, իսկ պետականությունը ձեռք է բերում նոր դրսևորումներ՝ Արևելյան Հայաստանում՝ մարզպանական, իսկ Արևմտյան Հայաստանում՝ սատրապական համակարգերով, որոնց հիմքում ընկած էր նախարարական համակարգը: Այդ խնդրի խորագիտակ նիկողա-

յոս Ադոնցն ընդգծում էր, որ. «Նախարարական վարչակարգը իր կայունությամբ այնպիսի տիպական ու ուշագրավ երևույթ է, որ առանց դրա անհնարին են հայոց հին կյանքի և պատմության դիտական ըմբռնումն ու ճիշտ լուսաբանումը: ...Այդ ամբողջ երկարատև ժամանակաշրջանում նախարարությունը հանդիսացավ քաղաքական կարևոր գործոն և, կարելի է ասել, հայոց պատմության լծակը, նախարարություններն ամբողջ երկրով ցրված քաղաքական աղաուտության օջախներ էին..., նրա ժամանակ երկրի արտաքին կախվածությունը համատեղված էր ներքին ինքնուրույնության հետ, և այդ ճանապարհով ապահովվում էր երկրի ինքնատիպությունը»[6]:

Արևելյան Հայաստանում 428 թ. հետո իշխանությունը թագավորից անցնում է նախարարական դասին, երկիրը դառնում է Սասանյաններին հարկատու, սակայն զինական ուժը մնում է նախարարների իրավասության ներքո: Այդ մասին պատմիչ Եղիշեն գրում է, որ երբ պարսից արքունիքը, «...իբրև զնա (Արտաշես արքային – Ա.Մ.) ևս մերժեաց ի թագաւորութենէն, ի նախարարսն Հայոց անկանէր թագաւորութիւնն. զի թէպէտ և գանձն յարքունիս Պարսկաց երթայր, սակայն այրուձին Հայոց բովանդակ ի ձեռն նախարարացն առաջնորդէր ի պատերազմի»[7]:

Այսպես՝ թագավորին փոխարինած մարզպանը ստանձնում է նրա մի շարք գործառույթներ, պահպանվում են Արշակունիների օրոք առկա գրեթե բոլոր գործակալությունները՝ հազարապետությունը, սպարապետությունը, մեծ դատավարությունը և այլն: Հատկապես ուշագրավ է մաղխազության գործակալության, այն է՝ թագավորի թիկնազորի պետի պաշտոնի պահպանումը, այն դեպքում, երբ թագավոր այլևս չկար: Ի դեպ, ոչ միայն պաշտոններն էին պահպանվել, այլ շատ դեպքերում՝ նաև դրանք իրենց նախկին տերերին՝ նախարարական հայտնի տներին՝ Մամիկոնյաններին, Ամատունիներին, Խորխոռունիներին հանձնելու ավանդույթը:

Դժվար չէ կռահել, որ վերոհիշյալ նախարարներն այսուհետ պարտավոր էին ծառայություններ մատուցել թագավորին փոխարինած մարզպանին, որն այժմ Արևելյան Հայաստանի կառավարիչն էր և պարսից արքունիքի առջև ներկայացնելու էր նաև հայ նախա-

---

[6] Ադոնց Նիկողայոս, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում. Եր., 1987, էջ 241:

[7] Եղիշէի վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին, ի լոյս ածեալ բազդատութեամբ ձեռագրաց աշխատութեամբ Ե. Տէր-Մինասեան, Եր., 1957, էջ 6:

բարներին ու երկրի հետ կապված գործերը: Պատահական չէ, որ մարզպանը հայտնի էր նաև որպես Հայոց տանուտեր: Վահանանց պատերազմից հետո, երբ Արևելյան Հայաստանում Պարսկաստանը ճանաչից հայերի ինքնավար ապրելու իրավունքը և առժամանակ դադարեցրեց կրոնական հալածանքները, մեկ այլ պետություն ստեղծվեց Հայոց Արևելից կողմերում՝ Արցախում և Ուտիքում Վաչագան Բարեպաշտի գլխավորությամբ:

Հայոց վաղմիջնադարյան պետականության ինքնատիպ դրսևորում. հանդիսացող սատրապական համակարգն էլ բավական ժամանակ՝ մինչև Հուստինիանոս I (527–565) կայսեր բարեփոխումները, պահպանվեց Արևմտյան Հայաստանում, որտեղ կային հինգ սատրապություններ: Դրանց կառավարիչ սատրապներն օգտվում էին ներքին ինքնավարությունից[8]:

Անուշտ, ինչպես պարսից, այնպես էլ բյուզանդական արքունիքները, ժամանակի ընթացքում տարբեր քայլերով՝ հատկապես նախարարական կալվածքները բաժան-բաժան անելու միջոցով, հետզհետե թուլացրին հայոց ինքնավարությունները, բայց մինչև արաբական արշավանքները այդպես էլ չկարողացան իսպառ վերացնել դրանք: Ավելին՝ անդամ արաբական արշավանքներից հետո, օգտվելով արաբա-բյուզանդական հակամարտության սրումից, հայկական նախարարական դասի մի շարք նշանավոր դեմքերի (Թեոդրոս Ռշտունի, Վարազտիրոց Բագրատունի և այլք) կազմակերպած պայքարի շնորհիվ, հաջողվեց VII դարի երկրորդ կեսին մի միասնական ու ուշադրավ իշխանապետություն ստեղծել, իսկ VIII դ. Արմինիա վարչական միավորումում պահպանել ներքին ինքնավարության տարրեր:

«Հայաստանը արաբական շրջանում,- գրում է արաբագետ Արամ Տեր-Ղևոնդյանը,- երբեք չկորցրեց իր ներքին ինքնավարությունը և վարչական տեսակետից երբեք չկազմալուծվեց, այլ լինելով հանդերձ խալիֆայության «Արմինիա» նահանգի մի մասը, պահպանեց իր ուրույն վարչական ու քաղաքական դեմքը: Հայաստանն այս շրջանում կառավարում էր Հայոց իշխանը, որը թեև ենթակա էր Արմինիայի ոստիկանին, սակայն երկրի գործերի իրական տնօրինողն

---

[8] Արևմտյան Հայաստանի ինքնավար իշխանությունների մասին մանրամասն տե՛ս **Ադոնց Նիկողայոս**, նշվ. աշխ., էջ 39–146:

էր»[9]*: Նույն գիտնականի համոզմամբ Հայաստանի և հարևան Վիրքի նևրքին ինքնավարությունը, ի տարբերություն խալիֆայությանը ենթակա այլ երկրների, պայմանավորված էր այնտեղ ժառանգական հողատիրության պահպանմամբ, որի շնորհիվ էլ հայերն ու վրացիները «պահպանեցին իրենց լեզուն ու մշակույթը և IX դարում ինքնուրույն պետականություն ստեղծեցին»*[10]*:*

Միջնադարում զարգացած ավատատիրության պետականության փուլը վերաբերում է Բագրատունիների վերելքին և հայկական նոր պետությունների (Վասպուրականի, Վանանդի, Տաշիր-Զորագետի, Սյունիքի թագավորություններ, Տարոնի, Տայքի, Համշենի, Սամցխե-Սաաթաբագոյի իշխանություններ, Զաքարյանների, Վահրամյանների իշխանապետություններ, Կիլիկիայի հայկական պետությունն և այլն) ժամանակներին՝ IX դարի կեսերից մինչև XIV դարի վերջը:

Ինչպես աշխարհի շատ երկրներում, այնպես էլ Հայաստանում, պայմանավորված ավատատիրական հարաբերությունների զարգացման նոր մակարդակով, հայկական կենտրոնական պետության հարևանությամբ երևան են գալիս մի շարք մանր ու միջին պետական կազմավորումներ, սկսվում է ֆեոդալական մասնատվածությունը: Բայց եթե որոշ ժամանակ անց եվրոպական երկրների մեծ մասում այդ մասնատվածությունը հաղթահարվում է, և շուտով ձևավորվում են կենտրոնացված միապետություններ (ինքնակալություններ), ապա Հայաստանում մոնղոլական ու թուրքմենական ցեղերի, Լենկ-Թեմուրի արշավանքների, պարսկա-թուրքական երկարատև ու արյունալի պատերազմների հետևանքով պետականության դրսևորումներն ավելի են թուլանում և, բացառությամբ լեռնային մի շարք շրջանների, երկրի մեծ մասում վերանում են: Հայրենիքից դուրս՝ Միջերկրական ծովի հյուսիս-արևելյան առափնյա շրջաններում, որտեղ Հայաստանից հայերի զանգվածային արտագաղթի պատճառով հոծ հայություն էր կուտակվել, XI դ. վերջին ստեղծվում են հայկական մի քանի կազմավորումներ, որոնցից ամենակենսունակը լինում է Ռուբինյան իշխանությունը, որը 1198 թ. Լևոն

---

[9] **Տեր-Ղևոնդյան Արամ,** Հայոց իշխանը արաբական տիրապետության շրջանում, Հոդվածների ժողովածու, Եր., 2003, էջ 133:

[10] Նույնի՝ Հայ նախարարների հողատիրական իրավունքները, Հոդվածների ժողովածու, էջ 299:

Մեծապոծի կողմից վերածվում է թագավորության և դառնում է տարածաշրջանի ուժեղագույն երկրներից մեկը:

Միջնադարում պետականության պատմության վերջին փուլը կարևոր է համարել թագավորության վերականգնման համար փորձերի շրջանը (XV դարից մինչև XVII դարի կեսերը), երբ Կիլիկյան պետության անկումից (1375 թ.) հետո Վասպուրականում և այլուր ձեռնարկվում են քայլեր այն վերականգնելու ուղղությամբ:

Թագավորության անկումից հետո պետականության գաղափարն այնքան զորեղ էր, որ չնայած անելանելի թվացող իրավիճակին հայ հասարակական շրջանակները շարունակում են փորձեր կատարել այն վերականգնելու ուղղությամբ: Կիլիկիայի զանազան հատվածներում, հատկապես լեռնային շրջաններում, չնորհիվ օտար նվաճողների դեմ հայ բնակչության մղած հերոսական պայքարի, հաջողվում է մինչև XV դարի երրորդ տասնամյակը պահպանել թագավորության առանձին բեկորներ և ինքնիշխան կազմավորումներ[11]:

Զարգացած ավատատիրության շրջանի պետական կազմավորումներից ամենաերկար կյանքն ունենում են դեռ X դարից Արցախում իր ինքնիշխանությունը պահպանած Խաչենի, իսկ Ջավախքում 1266 թ. Թմկաբերդի տեր Սարգիս Ջաղեցու հիմնադրած իշխանությունները:

«Ուշ-միջնադարյան Հայաստանում,- գրում է Բ. Ուլուբաբյանը,- թաթար-մոնղոլական գավթիչների, ապա նրանց հետքերով եկած ակ-կոյունլու և կարա-կոյունլու թուրքերի կործանարար հարվածների տակ ոչնչացել էին հայկական իշխանությունները, և Խաչենը համարյա միակ վայրն էր, ուր պահպանվում էին հայ պետականության բեկորները, և ուր դեռևս բորբոք էին մնում հայոց քաղաքական ազատության կայծերը...»[12]: Արցախում, հարակից գավառներում և Հյուսիսարևելյան Հայաստանի այլ շրջաններում պահպանված իշխանական տների (Հասան-Ջալալյաններ, Դոփյաններ, Օրբելյաններ, Մելիք-Շահնազարյաններ և այլք) շառավիղները,

---

[11] Տե՛ս Ռինոյան Դավիթ, Կիլիկիո հայոց թագավորությունը և ինքնիշխան կազմավորումները 1320–1424 թթ., Եր., 2011, էջ 129–154:

[12] Ուլուբաբյան Բ.Ա., Խաչենի իշխանությունը X–XVI դարերում, Եր., 1975, էջ 6:

ըստ մեծանուն վիպասան Րաֆֆու, երբեք չկորցրին «իրենց ինքնավարության իրավունքները» և ձևավորեցին հայ մելիքական դասը[13]:

Օգտվելով վրաց թագավորների և մոնղոլների հակամարտությունից՝ Սարգիս Ջաղեցին կարողանում է ստեղծել մի ընդարձակ իշխանություն, որը չուտով ընդգրկում է Տաշիրից մինչև Էրզրում ընկած տարածքը: Այստեղի իշխանը կրում էր աթաբեկի տիտղոս, որի համար իշխանությունը հայտնի էր նաև Սաաթաբագո (այսինքն՝ աթաբեկին ենթակա) անունով: Հայկական աղբյուրներում այն հիշատակվում է «Իշխանաց երկիր» ձևով[14]: Ինչպես Բագրատունիների, Զաքարյանների, այնպես էլ վերջիններիս հաջորդներ Ջաղեցիների օրոք տնտեսական ու մշակութային կյանքը Ջավախքում և աթաբեկության այլ շրջաններում զգալի վերելք է ապրում: Այս իշխանապետությունը պահպանվեց մինչև XVI դ. վերջը, երբ գրավվեց օսմանյան թուրքերի կողմից[15]:

Այդ ժամանակներում կրկին կարևոր դերակատարություն է ստանձնում հայ եկեղեցին, որն իր վրա է վերցնում հայոց պետության որոշակի գործառույթներ: Պատահական չէ, որ 1441 թ. տեղի է ունենում արդեն պետականությունից զրկված Կիլիկիայից կաթողիկոսական աթոռի վերադարձը Հայրենիք՝ Ս. Էջմիածին: Այդուհետ հայոց կաթողիկոսները ղեկավարում են ազատագրական պայքարը. 1547 թ. Էջմիածնում Ստեփանոս Սալմաստեցի, իսկ 1562 թ. Սեբաստիայում՝ Միքայել Սեբաստացի կաթողիկոսների հրավիրած գաղտնի ժողովների կազմած պատվիրակությունները մեկնում են Եվրոպա՝ Հռոմի պապից և եվրոպական տիրակալներից Հայաստանի ազատագրության համար աջակցություն ստանալու առաքելությամբ: Հայ աշխարհիկ հոգատերերի դասի ներկայացուցիչները փորձում են ելք գտնել ստեղծված անելանելի իրավիճակում, նրանցից՝ շատերն

---

[13] Հայ մելիքների ինքնավար կարգավիճակի, զինուժի, դատական իշխանության և այլ գործառույթների ու առհասարակ նրանց ստեղծած պետականության դրսևորում հանդիսացող մելիքությունների մասին մանրամասն տե՛ս **Բաֆֆի,** Խամսայի մելիքությունները. Երկերի ժողովածու. հ. 10. Եր., 1959, էջ 396–510. **Ալդուբաբյան,** նշվ. աշխ., **Մաղալյան Արտակ,** Արցախի մելիքությունները և մելիքական տները XVII–XIX դդ., Եր., 2007 և այլն:

[14] «Բազմավեպ», Վենետիկ, 1887, էջ 138 և **Լէօ,** Սահմանավեճեր, էջ 105: Հակոբոս Տաշյանի համոզմամբ այս իշխանության մեջ ընդգրկվել են նաև Վիսկիմն ու Ձորքումը (**Տաշեան Հ.Յ.,** Տայք, դրացիք եւ հոտորջուր, Վիեննա, 1973, էջ 61):

[15] Այս իշխանապետության մասին տե՛ս **Մելքոնյան Աշոտ,** Ջավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին, Եր., 2003, էջ 56–63:

իրենց հողերը փոխանցում են օրեցօր ավելի ու ավելի հայ հասարակական ու տնտեսական կյանքը տնօրինող հայ եկեղեցուն, և իրենք էլ անցնում ծառայության արդեն եկեղեցապատկան կալվածքներում: Այդօրինակ հողատերերը հայտնի են դառնում պարոնտեր անունով: Թուրք-պարսկական միրապետության պայմաններում նման եղանակով հնարավոր է լինում որոշ չափով պաշտպանել հայ հողատերերի դուլքային իրավունքը:

Հայրենիքում պետականությունը վերականգնելու ընդգծված ձգտման վառ արտահայտությունն էր 1465 թ. Աղթամարում տեղի Ջաքարիա կաթողիկոսի եղբորորդուն՝ Սմբատ Սեֆեդինյանին, թագադրելու փաստը: Ցավոք, Սմբատի իշխանությունը տարածվեց միայն Աղթամարի ու Վասպուրականի ևս մի քանի շրջանների վրա և գոյություն ունեցավ մինչև 1471 թ.[16]: Այդուհանդերձ, ինչպես ճիշտ նկատել է Ա. Ուլիուջյանը, այդ իրադարձությունը մեծ տպավորություն թողեց Հայության շրջանում, քանի որ «Սմբատ Սեֆեդինեանը մի կարճ պահ ժամանակակիցներին հիշեցրեց Վասպուրականի, ինչու չէ նաև բովանդակ Հայաստանի, անցեալի փառքերը»[17]:

3. Պետականությունը նոր ժամանակներում (XVII դարի կես – 1918 թ.) ունի իր առանձնահատկությունները: Առաջին շրջափուլում (XVII դարի կես – XVIII դարի սկիզբ), որը կարելի է անվանել պետականության տեղական (տեղայնական) շառավիղների ժամանակաշրջան, բացակայում է համահայկական պետականությունը, բայց այն առկայծումներով ու զանազան դրևորումներով ինքնիշխան կազմավորումների (սղնախներ՝ պաշտպանական ամրոցներ, մելիքություններ, իշխանապետություններ, ինքնավար համայնքներ) տեսքով հրևան է գալիս Հայաստանի առանձին շրջաններում՝ Արցախում, Սյունիքում, Գեղարքունիքում, Մոկսում, Շատախում, Սասունում, Կիլիկիայի լեռնային հատվածներում:

Այդ շրջափուլի սկիզբն ազդարարում է 1677 թ. Էջմիածնում Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի հրավիրած ազատագրական գաղտնի ժողովը: Հայոց հայրապետի գլխավորած պատվիրակությունը ժամանում է Կ. Պոլիս, Հայաստանի ազատագրության ծրագրերով դի-

---

[16] «Ուսումնասիրելու տեսություն Աղուանից, Հայկական պետականության վերականգնման փորձ ԺԵ դարի կեսերին. «Հայկազեան հայագիտական հանդես». հ. ԺԲ. Պէյրութ. 1999. էջ 107–122:

[17] Նույն տեղում. էջ 119:

մում է Ռեչ Պոսպոլիտայի թագավոր Ջան Սոբեսկուն: Հակոբ Ջուղայեցու մահվանից հետո Եվրոպա է անցնում պատվիրակության երիտասարդ անդամ Իսրայել Օրին, որը Հայաստանի ազատագրության և պետականության վերականգնման հետաքրքրական ծրագրերով նախ դիմում է Գերմանիայի Պֆալց երկրամասի կուրֆյուրստ (մեծ իշխան) Հովհաննն Վիլհելմին, իսկ 1701 թ.՝ ռուսաց կայսր Պետրոս I-ին: Հատկանշական է, որ իր ծրագրերի (Պֆալցյան և Մոսկովյան) նկատմամբ վերոհիշյալ տիրակալների հետաքրքրությունը չարժեւորելու համար Օրին նրանց դիվանագիտորեն հասկացնում է, որ Հայաստանն ազատագրելուց հետո իրենք կարող են դառնալ հայոց թագավոր: Սակայն իրականում, ինչպես ճիշտ նկատել է ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը, Սյունիքի մելիքների՝ ռուսաց ցարին հասցեագրված նամակի հայերեն տարբերակը մշակելիս Պռոշյան իշխանական տնից սերող «Օրին մի պահ հենց իրեն էր պատկերացնում Ռուսաստանի ձեռքով ազատված և ցարի կողմից հովանավորված ապագա Հայաստանը դլխավորողի դերում»[18]:

Այդուհետ չարունակվում են ազգային-ազատագրական պայքարի ընդհանուր շղթայում պետականության վերականգնման համար գործնական քայլերը Սյունիքում և Արցախում: Դրանով սկսվում է պետականության վերականգնման գործնական քայլերի փուլը (1722–1747 թթ.): Սյունիքում Դավիթ-Բեկի դլխավորած ազատագրական պայքարը պսակվում է հաջողությամբ. 1724 թ. Իրանի Թահմասպ II շահը ճանաչում է Սյունիքի հայկական իշխանությունը՝ հաշվի նստելով հայերի ազատագրական ձգտումների հետ և նպատակ ունենալով Դավիթ-Բեկի իշխանապետությունն օգտագործել ընդհանուր թշնամու՝ Օսմանյան կայսրության դեմ:

Հայ-իրանական համագործակցության արդյունքում 1730-ական թվականներին Նադիր խանի (շահ) ջանքերով ամրապնդվում են հայկական մելիքությունները ոչ միայն Արևելյան Հայաստանի լեռնային շրջաններում (Սյունիք, Արցախ, Դեղարքունիք), այլ նաև հարթավայրերում: Արդեն նրա՝ 1734 թ. հրովարտակով Արցախի Դոլշանլու գյուղի ավագերից Դավիթը հաստատվում է ինչպես այդ, այնպես էլ Խաչենի մի քանի այլ գյուղերի ավագի ու մելիքի պաշտոնում: «Կարգադրությանը չպետք է հակառակվեն,- հրահանգվում

[18] **Հովհաննիսյան Աշոտ**, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք երկրորդ, Եր., 1959, էջ 498:

էր փաստաթղթում,- և այն ընդունելով որպես խիստ կարգադրություն՝ չանք չխնայեն [նրա կատարման հարցում]: Թող այն իրենց պարտականությունը համարեն»[19]:

Մեկ այլ հրովարտակով Նադիրը Գեղարքունիքի մելիք Մելիքջան Մելիք-Շահնազարյանի որդուն՝ Մանուչարին. «ետ նմա իշխանութիւն, ունել ընդ ինքեա զդահլիճ..., և անուանեաց զնա միրիմիրան կամ պէյլէրպէյի ի վերայ Արարատեան երկրի և մասին ինչ Սիւնեաց»[20]: 1738 թ. շահական հատուկ հրամանագրով մուսաֆության իրավունքները չնորհվեցին Երևանի մելիքներ Հակոբջանին ու Մկրտումին՝ «Նմանների մեջ լավագույն խնդրարկուների բարի ծառայության համար այնպես, ինչպես նախկինում արքայական հրամանագրով հաստատվել էր նրանց մելիքության մուսաֆությունն ու մյուս [իրավունքները], ըստ կարգի...»[21]:

Բազմաթիվ հայ մելիքներ, պարսիկների հետ դաշնակցած, պայքարում են ընդհանուր թշնամու՝ օսմանցիների դեմ: Այդ պայքարում փաստական ինքնավարություն են ձեռք բերում հատկապես Արցախի մելիքները Դիզակի մելիք Եգանի գլխավորությամբ, որոնց զինական ուժերի հետ Նադիրի գործակցությունը բարձրանում է նոր աստիճանի: Արցախում Գանձակի նախկին բեկլարբեկությանը են թակա Վարանդայի, Դիզակի, Ջրաբերդի, Խաչենի և Գյուլիստանի դավառներում 1736 թ. ծնունդ է առնում հայկական նոր ինքնավարություն՝ Խամսայի (արաբերեն խամսա՝ հինգ) մելիքությունները:

Նադիրը, խիստ կարևորելով հայության դերը հակաթուրքական պայքարում, չի հապաղում ճանաչել արցախյան այս յուրահատուկ պետականությունը: Նա փաստորեն վավերացնում է հայերի շուրջ 15-ամյա հերոսական պայքարի արդյունքում ստեղծված իրողությունը[22]:

XVIII երկրորդ կեսը և XIX դ. առաջին կեսը Հայաստանի ազատագրության նոր ծրագրերի մշակման և մասնակի գործադրման

---

[19] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 2բ, վավերագիր 182, բնագիր և Ռ. **Կոստիկյան**, Մատենադարան պարսկերեն հրովարտակներ, պրակ IV, Երևան, 2005, վավ. 2:

[20] **Մելիք-Սիլիմեանց Հ. Զմիւռնիացի**, Համառոտութիւն պատմութեան Հայկազեանց, Մատենադարան, ձեռագիր 2888, էջ 341ա, հմմտ. Հայոց պատմություն, ՀՀ ԳԱԱ հրատ., հ. 3, գիրք առաջին, Եր., 2010, էջ 55:

[21] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1գ, վավ. 1032:

[22] Տե՛ս «Հայոց պատմություն», ՀՀ ԳԱԱ հրատ., հ. 3, գիրք առաջին, էջ 64, 65:

փուլն է: Այն սկսվում է հնդկահայ նշանավոր գործիչ Հովսեփ Էմինի բուռն գործունեությամբ[23]: 1768–1774 թթ. ռուս-թուրքական պատերազմը և 1783 թ. ռուս-վրացական Գեորգևսկի դաշնագրով Վրաստանի ռուսական հովանավորության ընդունումը նոր խթան հանդիսացան ավելի բովանդակալից ազատագրական ծրագրերի մշակման համար: 1769 թ. աստրախանաբնակ հայ գործիչ Մովսես Սարաֆյանի կազմած ծրագրերում նախատեսվում էր հայոց թագավորության վերականգնում Ռուսաստանի օժանդակության: Պետականության վերակերտման գործում կարևորություն էր տրվում Հայաստանի այն չրջանների փորձին, որոնք ժամանակ առ ժամանակ եղել էին ինքնավար կազմավորումներ և հայ ժողովրդի կողմից ընկալվել են որպես ընդօրինակության արժանի և թագավորության վերականգնման առավել հնարավոր տարածաշրջաններ: Մասնավորապես մատնանշվում էին Արցախն ու Սյունիքը: Պատահական չէ, որ ապագա հայոց թագավորների թեկնածուների չարքում Մ. Սարաֆյանը տեսնում էր Արցախի մելիքներից մեկին: Ակնհայտ է, որ 1722–1747 թթ. Արցախում պետականության վերականգնման իրողությունը և մելիքությունների չառավիղները հստակ կնիք էին դրել ազատագրական պայքարի ղեկավարների նմանատիպ մտածողության վրա:

Ուշագրավ է, որ այդ ժամանակ մելիքները ևս գիտակցում էին թագավորության վերականգնման գործում իրենց առաքելությունը, չէին հոռանում իրենց հայոց արքայական ծագումն ու առիթ առ առիթ այդ մասին հիշատակում էին պաշտոնական գրագրություններում: Այսպես, 1781 թ. սեպտեմբերի 2-ին ռուս մեծ զորավար Ալեքսանդր Սուվորովին և Եկատերինա II կայսրուհուն հասցեագրած հերթական նամակներում, որտեղ խնդրում էին զինական օգնություն մահմեդականների դեմ անհավասար պայքարում, Արցախի մելիքները (Ադամ, Բեգլար, Իսրայել) իրենց մասին գրում էին. «Մեք ներքոյ անվանեալքս Ղարաբաղու հայոց թագաւորաց ազնիւ զինվորած(ց) մնացեալ ժառանգք մելիքներըս», «մեք ի ազգաց հայոց ի տանիցն Արշակունեաց և Աւղանից ի արքունական գահոյից, մնա-

[23] Հովսեփ Էմինի ազատագրական գործունեության և ծրագրերի մասին մանրամասն տե՛ս **Ноаннисян А.Р.**, Иосиф Эмин, Ер., 1945.

ցեալ ազնիւ վինաւորացէն ժաւանգ մէլիքներս և մեր բոլուր երկիրս իշխանօվք հանդերձ...»[24]:

Այդ ժամանակաշրջանով առանձնակի կարևորվում էին նաև հայերի ու վրացիների հակապարսկական ու հակաթուրքական համատեղ պայքարը և արդյունքում Ռուսաստանի հովանու ներքո հայ-վրացական քրիստոնեական պետություն ստեղծելու գաղափարը: Օրինակ՝ դեռ 1750–1760-ական թթ. Հովսեփ Էմինը, լավ իմանալով, որ վրաց Բագրատունիները սերում են հայ Բագրատուններից, հայ-վրացական պետություն ստեղծելու խնդիրը կապում էր վրաց արքա Հերակլ II-ի անվան հետ[25]:

1783 թ. Հովսեփ Արղությանի ու Հովհաննես Լազարևի՝ 18 կետից բաղկացած նախագիծը շատ ավելի հստակ էր նախանշում հայոց թագավորության վերականգնման ուղին, հինավուրց Անին կամ Վաղարշապատը պետք է դառնար ազատագրված Հայաստանի մայրաքաղաքը: Մրագիրը, որ կրում էր «Կերպ դաշնագրութեան ի մէջ երկուց ազգաց՝ Ռուսաց և Հայոց» անվանումը, ենթադրում էր ազատագրված Հայաստանի և դաշնակից Ռուսաստանի միջև հորիզոնական հարաբերություններ. կնքվելու էր հայ-ռուսական ռազմական դաշինք, Հայաստանում տեղակայված ռուսական զորքերը պետք է պաշտպաններին երկիրը Օսմանյան կայսրության և Պարսկաստանի ոտնձգություններից: Հայաստանը դառնալու էր Ռուսաստանին հարկատու, անհրաժեշտության դեպքում իր հերթին պարտավոր էր զինական ուժեր տրամադրել կայսրությանը: Ռուսաց կայսրուհի Եկատերինա II-ին էր վերապահվում հայերից կամ իր մերձավորներից մեկին հայոց թագավոր ընտրելու իրավունքը[26]:

---

[24] Армяно-русские отношения в XVIII веке (1760–1800 гг.), сборник документов, т. IV, Ер., 1990, էջ 179, 181: Ի դեպ, այդ նամականիի ռուսերեն թարգմանություններում մելիքների՝ հայոց արքաներից սերված լինելու մասին հատվածը հանված է, իսկ «թագավոր» բառը՝ փոխարինված «начальник» բառով (նույն տեղում, էջ 180, 183, 184): Արցախում ազգային ազատագրության և պետականության համար պայքարի մասին տե՛ս նաև՝ **Բալայան Վ.**, Արցախահայ ազատագրական պայքարի բովանդակությունը 17-րդ դ. երկրորդ կեսից մինչև 1813 թ., Ստեփանակերտ, 2013 և **նույնի**՝ Դիվագներ արցախահայության ազատագրական պայքարի և պետականակերտման պատմության, Ստեփանակերտ (1813–2007 թթ.), 2012:

[25] Տե՛ս **Հովհաննիսյան Ա.Ր.**, նշվ. աշխ., էջ 48, 49:

[26] Տե՛ս «Հայոց պատմություն», ՀՀ ԳԱԱ հրատ., հ. III, գիրք առաջին, էջ 168, 169:

Հայոց պետականաշինության գաղափարական տեսլականը նոր բարձրության են հասցնում հնդկահայ նշանավոր գործիչներ Շահամիր Շահամիրյանը և Մովսես Բաղրամյանը: Մադրասում 1771 թ. նրանց հիմնադրած տպարանում չուտով լույս են տեսնում Մ. Բաղրամյանի «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ» և Շ. Շահամիրյանի «Որոգայթ փառաց» աշխատությունները, որոնցում անդրադարձ էր կատարվում հայ ժողովրդի ծանր վիճակին և միապետության փոխարեն, որը, ըստ հեղինակների, հայոց պետականության կործանման գլխավոր պատճառներից է եղել, առաջարկվում էր ստեղծել ժողովրդավար պետություն: Ի տարբերություն նախորդ բոլոր ծրագրերի Շահամիրյանի նախագիծը, որը հայտնի է «Հարավային ծրագիր» անունով, առաջ էր քաշում տվյալ ժամանակաշրջանի համար արտառոց՝ ընդհանուր ընտրական իրավունքի հիման վրա ձևավորված հանրապետական Հայաստան ստեղծելու գաղափարը: Ապագա Հայաստանում ամեն ինչից վեր լինելու էր ոչ թե միապետի կամքը, այլ օրենքը: Ըստ «Որոգայթի փառացի»՝ անհրաժեշտ է «կալ և մնալ ձեզ կախեալ ըստ օրինաց ձերոց զի ո՛չ ոք իցէ՛ որ իշխեսցէ ի վերայ ձեր բայց օրէնս ձեր»[27]:

Ակադեմիկոս Վ. Բարխուդարյանը, անդրադառնալով XVIII դարի երկրորդ կեսի ազատագրական ծրագրերին, ընդգծում է, որ «Առավել էականն ու հատկանշականն այն է, որ ինչպես Հայաստանում, այնպես էլ Ռուսաստանի և Հնդկաստանի գաղութներում երկիրն ազատագրելու հետ մեկտեղ միահամուռ ու աներեր խնդիր էր դրվում վերականգնելու հայկական անկախ պետականությունը»[28]:

XIX դ. առաջին երեսնամյակին գրավելով Արևելյան Հայաստանը՝ ռուսական արքունիքը դեռ որոշ ժամանակ չէր կամենում կամ ավելի ճիշտ չէր կարողանում Անդրկովկասում մոցնել կայսերական վարչակարգեր: Ուստիև առժամանակ տեղական ինքնակառավարման առանձին տարրեր, որոնք կային պարսկական ազդեցության շրջանում, պահպանվեցին: Ավելին՝ հայ հասարակական շրջանակների, մասնավորապես 1827 թ. վերջին Խ. Լազարյանի, Կ. Արղությանի և Ա. Խուդաբաշյանի կազմած ազատագրական ծրագրերին[29] ընդա-

---

[27] «Գիրք անուանեալ Որոգայթ փառաց». Մադրաս, 1773. էջ 15, 16:

[28] «Հայոց պատմություն». ՀՀ ԳԱԱ հրատ., հ. III, գիրք առջին. էջ 178:

[29] Խաչատուր Լազարևի ներկայացրած ծրագրի համաձայն՝ հայկական թագավորությունը պետք է ընդգրկեր Ռուսական կայսրության իշխանության ներքո գտնվող Արևելյան Հայաստանի բոլոր տարածքները Երևանի, Նախիջևանի, Ղա-

ռաջ գնալու պատրանք ստեղծելու նպատակով, 1828 թ. մարտի 21-ի հրամանագրով Երևանի ու Նախիջևանի նախկին խանությունների տարածքից Նիկոլայ I-ի հրամանագրով ստեղծվեց վարչատարածքային մի միավոր՝ «Հայկական մարզ» անունով[30]: Ցարական հրամանագրում հայերին արված «պետականության չնորհը» մատնանշելու նպատակով ընդգծվում էր, որ նորաստեղծ մարզի կառավարումը դրվում է իր՝ կայսեր տիտղոսավոր, իշխանության ներքո[31]:

Անշուշտ, այս վարչամիավորն իր կառավարման համակարգով քիչ էր տարբերվում Ռուսական կայսրության այլ վարչական միավորներից, սակայն նրան բնորոշ որոշ հատկանիշներ, հատկապես հայության շրջանում, ստեղծում էին հայոց պետականության երևութական պատկեր: Այսպես հայության որոշ շրջանակների համար ոգևորության աղբյուր էր միավորի «Հայկական» անունը, այն դեպքում, երբ կայսրության այլ վարչամիավորներ ազգային անվանումներով չէին առանձնանում: Մարզն ուներ սեփական դրոշ, զինանշան և այլն: Ռուսաստանի սենատի 1833 թ. մարտի 25-ի որոշման համաձայն հայկական մարզի զինանշանի կենտրոնում պետք է պատկերված լիներ սպիտակափառ Արարատը Նոյան ոսկեգույն տապանը գագաթին, ներքևի աջ անկյունում հայոց արքաների թագը, ձախում՝ Ս. Էջմիածինը: Զինանշանի վրա լինելու էին ռուսական կայսերական խորհրդանիշները արծիվը և ինքնակալի թագը[32]:

Մարզն իր գոյության 12 տարիներից ութը (1830–1838 թթ.) կառավարվեց հայազգի պետական-զինվորական նշանավոր գործիչ Վասիլ Բեհբութովի կողմից, մելիք Սահակ Մելիք-Աղամալյանցը մարզի կառավարման վարչության մեջ ներկայացնելու էր Երևանի հայ բնակչությանը: Պատմաբան Լեոն նկատել է, որ հայերին արված

բարդի, Շաքիի, Շամխորի շրջանները: Հայաստանը պետք է ունենար սեփական զինված ուժեր, երկրում պետք է գործեին հայկական օրենքները և այլն (տե՛ս «Հայոց պատմություն», նույն տեղում, էջ 262):

[30] Տե՛ս Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа, ч. I, М., 1833, էջ 278, 279: Այս հրամանագրի հայերեն տարբերակում հայ գործիչները «Հայկական մարզ» բառերի փոխարեն գործածել են «գաւառ Հայկազանց» ձևը՝ ամենայն հավանականությամբ տվյալ վարչամիավորն ընկալելով որպես Մեծ Հայքի Հայկազունիների պետության վերականգնման իրողություն (տե՛ս նույն տեղում, էջ 278):

[31] Այդ մասին տես փաստաթղթում. «Повелеваем во всех делах именовать отныне Областию Армянскою и включить оную в титул Наше» (նույն տեղում, էջ 278).

[32] Տե՛ս Собрание актов..., ч. II, М., 1838, էջ 280:

վերոհիշյալ «առանձնաշնորհումները» հայ հասարակության որոշակի շերտերի մեջ առաջացրին պետականության վերականգնման պատրանք, ուստի ամենուր հնչում էին կոչեր ռուսական օգնությամբ «ազատագրված» հայրենիք վերադառնալու մասին[33]:

Սակայն այս ժամանակավոր «զիջումն» իսկ վտանգավոր նկատելով 1840 թ. ապրիլի 10-ին հայկական մարզը վերացվեց, և Անդրկովկասում ստեղծվեցին այլ վարչամիավորներ: Մինչ այդ 1836 թ. մարտի 11-ին ընդունված ցարական հրովարտակով (Պոլոժենիե) արգելվեց հայ եկեղեցուն այդուհետ զբաղվելու պետական-քաղաքական գործունեությամբ:

Միաժամանակ Այսրկովկասի և Արևելյան Հայաստանի այլ շրջաններում անցկացված վարչական վերաբաժանումներով լիովին անտեսվեցին հայության և երկրամասի այլ ժողովուրդների իրավունքները. 1846 թ. ստեղծված Թիֆլիսի, 1849 թ. Երևանի, ապա նաև Ելիզավետպոլի նահանգների ստեղծումով հայկական գավառները հայտնվեցին տարբեր տարածքային միավորների կազմում: Դրանով ավարտվեց Հայաստանի ազատագրության նոր ծրագրերի մշակման և մասնակի գործադրման փուլը: Փաստորեն տարբեր դրսևորումներով հազարամյակներ գոյատևած հայկական պետականությունն այդ ժամանակ, մասնավորապես Արևելյան Հայաստանում, լիովին վերացավ: Հատկանշական է, որ այդ հանգամանքը մատնանշվում է նաև ռուսական պաշտոնական փաստաթղթերում, «Հայկական թագավորությունը,- կարդում ենք այդօրինակ վավերագրերից մեկում,- որ գոյություն է ունեցել գրեթե 4000 տարի, կամ ինքնուրույն կամ այլ ժողովուրդներից կախյալ..., անկում ապրեց»[34]:

XIX դ. երկրորդ կեսից սկսվում է մի ժամանակաշրջան, երբ Արևելյան Հայաստանում երկրամասում ռուսական վարչակարգեր մտցնելուց հետո ինքնիշխանության գրեթե բոլոր սաղմերը վերանում են, իսկ Արևմտյան Հայաստանում, բացառությամբ Սասունի, Կիլիկիայում՝ Զեյթունի[35], պայմանավորված հայ ժողովրդի համար

---

[33] Տե՛ս Լեո. Հայոց պատմություն, նորագույն շրջան, մ. Բ, եր.. 1927, էջ 133:

[34] Собраниє актов..., նույն տեղում, էջ 281:

[35] Լեռնային այս երկու համայնքները զարմանալի հաստատակամությամբ չընկրկեցին օսմանյան իշխանությունների ոտնձգությունների առջև: Զեյթունը 1862 թ. և 1895–1896 թթ., իսկ Սասունը 1894 թ. ու 1904 թթ. ինքնապաշտպանական կռիվների շնորհիվ փաստորեն պահպանեցին իրենց ինքնավարության շատ տարրեր՝

ստեղծված քաղաքական ծանրագույն պայմաններով, պետականության վերականգնման համար պայքարը փոխարինվում է Օսմանյան կայսրության կազմում ընդամենը հայկական ինքնավարության հասնելու տեսլականով: Այդ ժամանակաշրջանում էլ միջազգային դիվանագիտության ասպարեզ է իջնում Հայկական հարցը՝ Արևմտյան Հայաստանում եվրոպական տերությունների հսկողությամբ բարեփոխումներ կատարելու ծրագիրը, որը հայության մի զգալի մասի կողմից ընկալվում է որպես ազատագրության հարց: Հետաքրքրական է, որ Բեռլինի 61-րդ հոդվածի համաձայն՝ բարեփոխումների ճանապարհով ինքնավարության հասնելու համեստ մտայնությունն այնքան գրավիչ է դառնում, որ 1885–1890 թթ. ընթացքում ստեղծված հայ ազգային կուսակցությունների հենակայանների ու գաղնակցության ծրագրային փաստաթղթերում անկախության գաղափարը փաստորեն տեղ չի գտնում[36], և պետականության վեհ իդեալը փոխարինվում է ինքնավարության վերաբերյալ սին պատկերացումներով: Նոր ժամանակների այդ փուլը, որը տևում է մինչև 1918 թ. մայիսի վերջը, պայմանականորեն կարելի է անվանել պետականության վերջին չառավիղների մարման և միաժամանակ պետականության վերականգնման նախադրյալների ստեղծման փուլ:

XX դարի սկզբին օսմանյան և ռուսական տիրապետությունների դեմ հայության ազատագրական չարժման վերելքը (հայդուկային չարժման նոր դրսևորումներ, հայ եկեղեցու գույքի բռնագրավման մասին ցարական օրենքի դեմ ելույթներ, հայ-թաթարական բախումների օրերին ինքնապաչտպանական ջոկատների ստեղծում և

մնալով հայոց նոր ժամանակների ազատատենչության վերջին կղզյակները: Ավելին՝ ամեն մի հնարավորության դեպքում ըսջարի յեռնցիները պահը բաց չէին թողնում ինքնավար կարգավիճակն անկախ դարձնելու համար: Օրինակ՝ 1895 թ. ապստամբության ժամանակ գավառակից թուրքերին դուրս մղելուց հետո նրանք բարձրացրին դրոշ «Զեյթունի անկախ իշխանություն» վերտառությամբ, և փաստորեն երեք ամիս անկախ կարգավիճակում էին (տե՛ս **Մկրտչյան Լ.**, Զեյթունի ապստամբությունը (1895–1896 թթ.). Եր., 1995: Զեյթունի կիսանկախ վիճակի մասին տե՛ս նաև **Պողոսյա. Հ.**, Զեյթունի պատմությունը (1409–1921). Եր., 1969:

[36] Այդ իմաստով թերևս կարելի է առանձնացնել Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցության ծրագիրը, ըստ որի՝ արևմտահայությանն ազատագրելուց պիտի հաջորդեր ռուսահպատակ ու պարսկահպատակ հայերի ազատագրումը: Հայության այդ երեք հատվածների միավորումից հետո հեռավոր ապագայում նախատեսվում էր ստեղծել սոցիալիստական պետություն՝ դեմոկրատական հանրապետության (տե՛ս «Հնչակ», 1888, թիվ 10, հմմտ.՝ **Հովհաննիսյան Գեղամ**, Հնչակյան կուսակցության պատմություն (1887–1915 թթ.). Եր., 2012, էջ 23):

այլն) հայ հասարակական-քաղաքական շրջանակներում հանգեցրեց ինչպես ժողովրդի երկու հատվածների միասնական պայքարի, այնպես էլ Այսրկովկասի հայաշատ գավառների միավորումով հայկական ինքնավարություն ստեղծելու անհրաժեշտության գաղափարներին: Այդ մտայնությունը հատկապես նկատվեց 1906 թ. օգոստոսի 17-ին Էջմիածնում հրավիրված Ռուսաստանի հայության պատգամավորական կենտրոնական ժողովում[37]*: Պատահական չէ, որ իշխանություններն այդ ժողովը գնահատեցին որպես հայկական պետականության վերականգնմանը միտված գործողություն և չուտով այն փակեցին:*

*Դարասկզբին ցարիզմի գաղութային քաղաքականության սաստկացումը և հայության երկու հատվածների ազատագրական ընդհանուր պայքարի վերելքը մի շարք կարևոր հարցերում հայ քաղաքական կուսակցությունների մոտեցումների վերանայման անհրաժեշտություն առաջացրին: 1907 թ. Ժնևում հրավիրված ՀՅԴ IV ընդհանուր ժողովը որոշակի փոփոխություններ մտցրեց կուսակցության ծրագրում: Եթե 1892 թ. ծրագրում նախատեսվում էր Օսմանյան կայսրության կազմում ինքնավար կարգավիճակ միայն Արևմտյան Հայաստանի համար, ապա այստեղ ավելանում էր նաև Ռուսական կայսրության կազմում Արևելյան Հայաստանի և ամբողջ Անդրկովկասի հայության ինքնավարության հարցը. «Անդրկովկասյան ռամկավար ֆեդերատիվ հանրապետությունը պիտի կազմի Ռուսաստանի դաշնակցական (պիտի հասկանալ դաշնային – **Ա.Մ.**) հանրապետության անբաժան մասը, կապված նրա հետ պետական ինքնավարության, դրամական սիստեմի, մաքսի և արտաքին քաղաքականության խնդիրներով»*[38]*:*

---

[37] Տե՛ս «Հայոց պատմություն», ՀՀ ԳԱԱ հրատ., հ. III, գիրք երկրորդ, Եր., 2015, էջ 22, հմմտ.՝ **Սիմոնյան Հրաչիկ**, Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք I, Եր., 2003, էջ 767–786:

[38] Հայ յեղափոխական դաշնակցութեան ծրագիրը, Կ. Պոլիս, 1908, էջ 26, հմմտ.՝ **Համբարյան Ազատ**, Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում, Եր., 1999, էջ 165: Գ. Խուդինյանի համոզմամբ՝ «Դրանով իսկ, քաղաքական գետնի վրա առաջին անգամ հենց Հ.Յ. Դաշնակցության ծրագիրն էր նախանշում Անդրկովկասում առանձին հայկական տարածքի և դրա հիման վրա՝ հետագայում նաև պետականության ձևավորման խնդիրը» (**Խուդինյան Գևորգ**, Հայ Յեղափոխական Դաշնակցություն. Հայ ազգային և Հայաստանի ու Անդրկովկասի սոցիալիստական կուսակցությունների պատմության ակնարկներ (1885–1914 թթ.), Եր., 2003, էջ 108):

Արևմտահայության շրջանում ինքնավարության համար շարժումը նոր թափ ստացավ Առաջին աշխարհամարտի նախօրյակին: Հայության որոշ շրջանակներում որոշակի ոգևորություն առաջացրեց հայկական բարեփոխումների ռուսական Ա. Մանդելշտամի ծրագիրը (1913), որը, նախատեսելով արևմտահայկական վեց նահանգներից մեկ նահանգի ստեղծում, միասնական Հայաստանի պատրանք ստեղծեց: Դրանով էլ պիտի բացատրել այդ նախագծի հանդեպ Օսմանյան կայսրության դաշնակից Գերմանիայի մերժողական վերաբերմունքը, որն էլ հանդեցրեց նրա մերժմանն ու դրա փոխարեն հայկական ինքնավարության որևէ նշույլ չպարունակող 1914 թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագրի կնքմանը:

1914 թ. ամռանը և սեպտեմբերին դեռ մինչև ռուս-թուրքական կովկասյան ճակատի բացումը, կարևորելով պատերազմում հայության դիրքորոշումը, ինչպես երիտթուրքերը, այնպես էլ ռուսական արքունիքը, չհապաղեցին հայերին շռայլ խոստումներ տալ: Ջավեշտալի է, որ թուրքերը խոստանում էին հայերի աջակցությամբ Արևելյան Հայաստանը դրավելու դեպքում թույլատրել այնտեղ կազմավորել «հայկական ինքնավարություն», իսկ ռուսները՝ Արևմտյան Հայաստանին տիրելուց հետո՝ վարձահատույց լինել Ռուսաստանի հովանու ներքո ինքնավար Հայաստանի ստեղծումով: Ժամանակը ցույց տվեց, որ երկուստեք այդ խոստումները միայն նպատակ էին հետապնդում օգտագործելու հայերին իրենց քաղաքական ծրագրերի իրականացման համար:

Պատերազմում ռուսական զորքերի հաղթանակները, որոնցում իրենց ծանրակշիռ ավանդն ունեցան նաև հայկական կամավորական ջոկատները, օսմանյան տիրապետությունից ազատագրվելու և Արևմտյան Հայաստանում հայկական ինքնավարություն ստեղծելու հույսեր արթնացրին, ուստիև հայ հասարակական-քաղաքական ուժերի մեծ մասը հնարավոր միջոցներով աջակցեց ռուսական իշխանություններին[39]: Իսկ 1915 թ. մայիսի սկզբին, երբ մոտ մեկամսյա հերոսական ինքնապաշտպանությունն ավարտվեց Վանի ազատա-

---

[39] **Կիրակոսյան Զ.**, Առաջին համաշխարհային և արևմտահայությունը, Եր., 1965, էջ 174–190: 1914 թ. նոյեմբերին Նիկոլայ II-ը Թիֆլիսում հայ գործիչներին խոստացել էր, որ Հայկական հարցը կլուծվի հայերի ապստամբների համաձայն, միայն թե նրանք ազատագրվելուց հետո բոլշևիկների նման Ռուսաստանի հանդեպ ապերախտ չգտնվեն (տե՛ս նույն տեղում, էջ 190):

գրումով, բազմահազար հայերին իրատեսական թվաց հնամենի թափավորությունը վերականգնելու երազանքը:

Հայության այդ միամիտ ծրագրերի մասին ռուսական բանակի սպա կապակ Ֆ. Ելիսեևը, ով քաջատեղյակ էր Արևմտյան Հայաստանում «Եփրատյան կազակություն» ստեղծելու ցարական ծրագրին, իր հուշերում գրում էր. «Դժբախտներ..., նրանք անշուշտ համոզված էին, որ գոնե հիմա, ռուսական հաղթական զորքերի օգնությամբ կազատագրվի և կվառուցվի իրենց Մեծ Հայաստանը»[40]:

Հայ գործիչներից հատկապես Արամ Մանուկյանը, լինելով Վանի ինքնապաշտպանության փաստական ղեկավարը, գործնական քայլեր կատարեց հայկական ինքնավարության հասնելու համար, որի սաղմերը նա դրել էր ապրիլյան կռիվների օրերին: Գեներալ Ա. Նիկոլաևի կողմից նշանակվելով Վանի նահանգի կառավարիչ (նահանգապետ)՝ նա կարճ ժամանակում ստեղծեց տեղական ինքնավարության մարմիններ[41]:

Հայկական պետականության սաղմնավորման գործընթացն օրեցօր սկսեց վերածվել իրողության, ուստիև չէր կարող աննկատ մնալ ոչ միայն ցարական իշխանությունների տեսադաշտից, այլ նաև մարտերին ականատես պատանի վանեցիների ուշադրությունից: Վանի թեմական դպրոցի 11-ամյա Գրիգոր Գրիգորյանը Վ. Տերյանի խնդրանքով 1916 թ. սկզբին երևանյան որբանոցում գրած իր հուշերում նշում էր. «Վանի փառաւոր կռիւէն հետո Վան ամբողջապէս թոյրքերէն մաքրուած և դուտ հայկական կառաւարութեան ներքև, երջանիկ կերպով կապրէինք: ...Կապրէինք ապագայի յոյսերով: ...Բայց հանկարծ դժբախտութիւն պատահեցաւ. ռուս զինուորներ նահանջեցին և մենք ստիպվեցանք դէպի Ռուսաստան գաղթել»[42]:

Մեծ եղեռնը, Վանի 1915 թ. հուլիսյան ազետալի նահանջը միայն առժամանակ կասեցրին հայության անկախական քայլերը: 1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո ժամանակավոր կառավարության անհամեմատ բարյացակամ վերաբերմունքը հայկա-

---

[40] **Елисеев Ф.И.** "Казаки на Кавказском фронте". 1914–1917, Москва, с. 102.

[41] Տե՛ս **Սահակյան Ռուբեն**, Արևմտյան Հայաստանի ռազմաքաղաքական և վարչատնտեսական իրավիճակը 1914 թ. հուլիս – 1917 թ. փետրվար. Եր., 2015, էջ 178–215:

[42] **Էմին-Տերյան Գևորգ**, Վահան Տերյանի անհայտ նախածեռնությունը. հայ որբերի հուշերը, Եր., 2016, էջ 30:

կան հարցի նկատմամբ, մասնավորապես ապրիլի 26-ի հրամանագրով թուրքերից գրավված արևմտահայ գավառներում գեներալ-կոմիսարության ստեղծումը, կրկին օրակարգ բերեցին Արևմտյան Հայաստանում ինքնավար պետություն ստեղծելու խնդիրը: Գեներալ-կոմիսարի տեղակալ Հակոբ Ջավրիյանի, տեղերում տարբեր պաշտոնների նշանակված հայազգի այլ գործիչների (Սեբաստացի Մուրադ, Սեպուհ, Կ. Համբարձումյան, Համազասպ և այլք) ու Այսրկովկասում գործող հայկական զանազան կազմակերպությունների, մասնավորապես ազգային խորհուրդների[43] ջանքերով բազմաթիվ արևմտահայ պաղթականներ վերադարձան հայրենի եզերքներ և թվեցին հայրենիքի վերաշինման գործին: Տիրող ոգևորության մասին Ս. Վրացյանը գրում էր. «Մի տեսնուկ արտահողային պետություն էր ստեղծվում՝ կենտրոնական տեղական իշխանություններով: Ապագայում, երբ Թուրքահայաստանը դառնար ազատ, կառավարական մեքենան արդեն պատրաստ էր»[44]:

1917 թ. բոլշևիկյան հեղաշրջումից հետո էլ, երբ Ռուսաստանի նոր իշխանություններն աչքի չընկան իրենց «հայասիրությամբ» և վարած քաղաքականությամբ հանգեցրին կովկասյան բանակի ու ճակատի կազմալուծմանը, հայ քաղաքական շրջանակները շարունակեցին Արևմտյան Հայաստանում ինքնավար պետություն ստեղծելու ջանքերը: Դրա վառ արտահայտություններից էր տարբեր քաղաքական կուսակցություններ ներկայացնող ու հայացքներ ունեցող գործիչների մասնակցությամբ ստեղծված և բոլշևիկյան Ռուսաստանի կառավարության (ժողկոմխորհ) կողմից 1917 թ. դեկտեմբերի 29-ին ընդունված «Թուրքահայաստանի մասին դեկրետը», որն անվանապես ճանաչում էր Արևմտյան Հայաստանում հայ ժողովրդի ինքնորոշման իրավունքը:

Նմանատիպ մեկ այլ դրսևորում տեղի ունեցավ վերոհիշյալ հրովարտակի ընդունումից մեկ ամիս անց՝ 1918 թ. հունվարի 30-ին,

---

[43] 1917 թ. ընթացքում Անդրկովկասի զանազան շրջաններում ստեղծված ազգային խորհուրդները դարձան հայ քաղաքական կյանքի կազմակերպման կենտրոններ: Դրանց մեջ առանձնանում էր Թիֆլիսում գործող Արևելահայ ազգային խորհուրդը, որը պատմական դեպքերի բերումով կարևոր դերակատարություն ունեցավ հայոց պետականության նախապատրաստման ու վերականգնման գործում (**Պետրոսյան Գ.**, Հայոց ազգային ժողովի և Հայոց ազգային խորհրդի ստեղծման պատմությունից, «Հայագիտության հարցեր», Եր., 2016, թիվ 2, էջ 51–57):

[44] **Վրացյան Սիմոն**, Հայաստանի հանրապետություն, Եր., 1993, էջ 33:

երբ հայ գործիչներից գնդապետ Թորգոմը (Արշակ Երվանդյան) հատուկ հռչակագրով ազդարարեց հայկական պետականության վերականգնումը՝ Էրզրումում մայրաքաղաքով: Սակայն ռուսական ռազմական իշխանությունները թշնամաբար ընդունեցին այդ քայլը և, ձերբակալելով Թորգոմին, դատական գործ հարուցեցին նրա դեմ[45]*:*

1918 թ. հունվարին Թիֆլիսում քննարկումներ սկսվեցին դաշնակցականների (Ռ. Տեր-Մինասյան, Հ. Ջավրիյան և ուրիշներ) և հայ բոլշևիկների (Ս. Շահումյան, Դ. Շահվերդյան, Ս. Կասյան և այլք) միջև՝ Հայաստանի երկու հատվածների ապագայի վերաբերյալ մոտեցումները հատակեցնելու նպատակով: Կողմերը եկան այն եզրակացության, որ պետք է պայքարել Արևմտյան Հայաստանում անկախ պետություն, իսկ Արևելյան Հայաստանում՝ ռուսական հովանավորությամբ ինքնավարություն՝ հայկական կանոն ստեղծելու համար[46]*: Ցավոք, այս ծրագիրը քաղաքական զանազան պատճառներով չիրագործվեց:*

Պայմանավորված դեպքերի սրընթաց զարգացումներով (Ռուսական կայսրության քայքայման գործընթացի խորացում, կովկասյան ճակատի փլուզում և այլն) հայ ազգային գործիչներին ստիպեցին ակամայից Ռուսաստանից անջատվելու քայլեր կատարել մաս կազմել 1917 թ. նոյեմբերի 15-ին ստեղծված Անդրկովկասի կոմիսարիատին, որոշ ժամանակ անց նաև Անդրկովկասյան սեյմին:

Գիտակցելով ստեղծված ռազմաքաղաքական իրավիճակի ողջ բարդությունը 1917 թ. դեկտեմբերին Արևելահայ ազգային խորհուրդը Երևան գործուղեց 1915 թ. Վանում պետականաշինության ղեկավի փորձ կուտակած Արամ Մանուկյանին: Ստանձնելով Երևանի ազգային խորհրդի նախագահի և դիկտատորի պարտականությունները Արամն ահռելի աշխատանք տարավ Արևելյան Հայաստանում, մասնավորապես Երևանի նահանգում կարգուկանոն հաստատելու, պաշտպանության գործը կազմակերպելու, դրանով իսկ պետականության վերականգնման նախադրյալներ ստեղծելու ուղղությամբ: Պատահական չէ, որ 1918 թ. մայիսի վերջին Սարդարապատի, Բաշ Ապարանի, Ղարաքիլիսայի հերոսամարտերի օրերին, երբ փլուզվեց Անդրկովկասի Դաշնային Դեմոկրատական Հանրապետության իշ-

---

[45] Տե՛ս **Մելքոնյան Ա.**, Էրզրում. «Հայկական հարց» հանրագիտարան. Եր., 1996, էջ 136:

[46] Տե՛ս **Մելիքյան Վահան**, Իշխանության հիմնահարցը Անդրկովկասում. Եր., 2010, էջ 242:

խանության մարմին սեյմը, մի քանի օր անց Հայոց ազգային խորհուրդը Հայաստանը հռչակեց անկախ Հանրապետություն: Դրանով սկսվեց հայոց պետականության նորագույն դարաշրջանը:

*4. **Պետականությունը նորագույն ժամանակներում** ներկայանում է երեք հանրապետությունների պատմափուլերով՝ 1918–1920, 1921–1991 և 1991–2017 թթ.: Թեպետ իրենց քաղաքական համակարգերով այդ հանրապետություններն արմատապես տարբերվում են միմյանցից, սակայն նորագույն ժամանակներում դրանք կազմում են պետականության մեկ ընդհանուր շղթայի օղակները:*

1918 թ. մայիսի 28-ով սկսվող Հայաստանի Հանրապետության (1918–1920) պատմության փուլը նշանավորվում է ոչ միայն անկախության վերականգնումով, այլ նաև իր վարչական կառուցվածքով ժողովրդավարական խորհրդարանական Հանրապետության ստեղծումով[47]: Ընդամենը երկուսուկես տարիների պետությունը ձեռք է բերում անկախ պետականությանը բնորոշ բոլոր հատկանիշները՝ տարածք, իշխանության մարմիններ, բանակ, միջազգային ճանաչում և այլն:

Առաջին Հանրապետությունը ձևավորվում է չատ ծանր աշխարհաքաղաքական՝ իրադրության պայմաններում՝ սահմանափակ տարածքի վրա, սակայն 1919 թ. ընթացքում ընդարձակվելով՝ ներառում է Կարսի մարզը, Նախիջևանը, 1920 թ.՝ Արցախը՝ չուրջ 60–70 հազ. կմ տարածքով: Սևրի դաշնագրի (1920 թ. օգոստոսի 10) համաձայն Հայաստանի Հանրապետությունն ընդգրկելու էր նաև Արևմտյան Հայաստանի Վանի, Բիթլիսի, Էրզրումի և Տրապիզոնի նահանգների մեծ մասը: Միացյալ Հայաստանի տարածքը կազմելու էր չուրջ 160 հազ. քառ. կմ: Դրանով իսկ իրականություն պիտի դառնար Հայկական միասնական պետականության ստեղծումը:

Աչխարհամարտում Օսմանյան կայսրության պարտությունը պետության ստեղծման հույսեր արթնացրեց նաև կիլիկիահայության շրջանում: Ստանալով հայ ազգային այլ կուսակցությունների և քաղաքական ուժերի համաձայնությունը 1920 թ. օգոստոսի 4-ին հնչակյան հայտնի գործիչ Միհրան Տամատյանի գլխավորությամբ Հայոց ազգային միության անդամները հռչակեցին Կիլիկիայի «ան-

---

[47] Տե՛ս Richard G. Hovannisian, The Republic of Armenia, vol. I–IV, Berkeley, Los Angeles, London, 1971–1996, Հակոբյան Արարատ, Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918–1920 թթ.), Եր., 2005:

կախ» քրիստոնեական Հանրապետությունը[48]: Սակայն ֆրանսիական զինվորական իշխանությունները չճանաչեցին Տամատյանի «կառավարությունը», զենքի ուժով ցրեցին այն և սկսեցին բռնություններ գործադրել կիլիկիահայության նկատմամբ:

Քեմալաբոլշևիկյան գործակցության արդյունքում 1920 թ. դեկտեմբերի սկզբին Հայաստանի Հանրապետությունը կործանվեց: Բայց անկախ Հայաստանի կարճատև գոյությունն, իսկ հարկադրեց բոլշևիկներին հաշվի նստելու սոցիալիստական Հայաստանի իրողության հետ: Այսպես սկսվեց խորհրդային պետականության պատմության փուլը (1920–1991):

Խորհրդային Հայաստանը (մինչև 1936 թ. Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն՝ ՀՍԽՀ) քանի որ ուներ պետությանը բնորոշ հատկանիշների մեծ մասը, անշուշտ նույնպես պետականություն էր, առավել ևս, որ իր գոյության առաջին տարիներին ուներ հարաբերական անկախ կարգավիճակ: Այսպես Խորհրդային Ռուսաստանի և Հայաստանի Հանրապետության միջև 1920 թ. դեկտեմբերի 2-ին Երևանում կնքված համաձայնագրի առաջին կետով «Հայաստանը հայտարարվում էր անկախ (ընդգծումն իմն է – Ա.Մ.) Սոցիալիստական Հանրապետություն»[49]: Եվ իրոք, առաջին տարիներին այդ հարաբերական անկախությունը պահպանվեց մինչև 1922 թ.: Միջազգային իրավունքի մասնագետ Ա. Եսայանը գրում էր, որ այդ մի քանի տարիների ընթացքում Խորհրդային Հայաստանն ուներ անկախության այնպիսի մի հատկանիշ, որպիսին արտաքին քաղաքականություն վարելու իրավունքն էր. «Սովետական անկախ Հանրապետությունների առաջացումից մինչև... մեկ միութենական պետության մեջ նրանց միավորվելն ընկած ժամանակաշրջանում յուրաքանչյուր սովետական անկախ Հանրապետություն միջազգային ասպարեզում հանդես էր գալիս ինքնուրույնաբար, որպես միջազգային իրավունքի ինքնուրույն սուբյեկտ...»[50]: ՀՍԽՀ-ն Առաջին Հանրապետության նման մի շարք երկրներում ուներ դիվանագիտական ներկայացուցիչներ: Այն միջազգայնորեն

---

[48] Տես «Յուշամատեան Մեծ եղեռնի (1915–1965)», Պէյրութ, 1965, էջ 911:

[49] «Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. (քաղաքական պատմություն)», փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Եր., 2000, էջ 383:

[50] **Եսայան Ա.**, Հայաստանի միջազգային իրավական դրությունը 1920–1922 թթ., Եր., 1967, էջ 3:

ճանաչվեց անգամ եվրոպական մի քանի երկրների կողմից»[51]: Այդ ամենին գումարվում էին զինական ուժեր, իշխանության օրենդիր, գործադիր ու դատական մարմիններ, սահմանադրություն (1922 թ.), պետական խորհրդանիշներ և այլ ատրիբուտներ ունենալու իրավունքները[52]: Ուստի Խորհրդային Հայաստանի պատմության 1920–1922 թթ. պայմանականորեն կարելի է համարել խորհրդային պետականության առաջին՝ անկախության ենթափուլը:

Միաժամանակ չի կարելի մոռանալ, որ նույն հարաբերական անկախության ենթափուլում, օգտվելով Հայաստանի համար ստեղծված արտաքին ու ներքին անբարենպաստ պայմաններից, հայկական մի շարք տարածքներ (Նախիջևան, Լեռնային Ղարաբաղ, Ուխիք, Ջավախք, Կարսի մարզ, Սուրմալուի գավառ և այլն) դուրս մնացին ՀՍԽՀ սահմաններից: Դրանցից գոնե Լեռնային Ղարաբաղին Ադրբեջանի կազմում տրվեց ինքնավար մարզային կարգավիճակ 1923 թ. հուլիսի 7-ին, երբ կազմավորվեց Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը (ԼՂԻՄ): Վերջինս թեև զրկված էր ինքնավարության շատ տարրերից, այնուամենայնիվ իր սահմանափակ ինքնավարության չնորհիվ կարողացավ պայքարել Ադրբեջանի ազգայնամոլ քաղաքականության դեմ և մինչև 1988 թ. Արցախյան շարժումը պահպանել երկրամասի ընդհանուր հայկական դիմագիծը:

Հանրապետության կազմում հայտնված մյուս հայկական երկրամասը Նախիջևանը, 1924 թ. փետրվարի 9-ին վերակազմվեց Նախիջևանի Ինքնավար Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության (ՆԻԽՍՀ): Այդ վարչատարածքային միավորի ստեղծման դրդապատճառները փաստորեն չպարզաբանվեցին: Նախ՝ երկրամասը հինավուրց հայկական տարածք էր և, սահմանակից լինելով ՀՍԽՀ-ին, Թուրքիայի ճնշման և Խորհրդային Ռուսաստանի հաճախայնությամբ միացվել էր ընդհանուր սահման չունեցող Ադրբեջանին: Անհասկանալի էր, թե ում համար էր Ղարաբաղից ավելի բարձր, ինքնավար հանրապետական կարգավիճակը, երբ հայերն այնտեղ 1905–1906, 1918 և 1920 թվականների կոտորածներից հետո դարձել էին փոքրամասնություն: Ստացվում էր, որ Ադրբեջանի կազմում կովկասյան թաթարները (ներկայիս ադրբեջանցիները)

---

[51] Տե՛ս նույն տեղում, էջ 242–258:

[52] Տե՛ս Հարությունյան Կ., Հայկական առաջին զորամիավորումները 1918–1945 թթ., Եր., 2002, Ղազախեցյան Վ., Հայաստանը 1920–1940 թթ., Եր., 2006:

ստանում էին ինքնավարություն «իրենց» իսկ հանրապետության մեջ: Այդուհանդերձ, այդ հերթական ճչացող անարդարությունը «մեղմելու» համար խորհրդային իշխանություններն առերես ձևացնում էին, թե այդ «ինքնավարությունը» ստեղծված է նաև հայերի շահերի պաշտպանության համար: Օրինակ՝ կարող է տարօրինակ թվալ, բայց ՆիխՍՀ զինանշանի և դրոշի վրա մինչև 1937 թ. գրված էր ոչ միայն թուրք-թաթարերեն (ադրբեջաներեն), այլ նաև՝ հայերեն, վերևի տողում՝ Ադրբեջանական ԽՍՀ, ներքևում՝ Նախիջևանի ԱխՍՀ[53]:

Խորհրդային Հայաստանի ղեկավարության ջանքերն ապարդյուն անցան նաև գերազանցապես հայաբնակ Ջավախքի և Խրամի (Ծալկա) միացման հարցում: Ուստի փորձ արվեց Վրաստանին միացված տարածքներում հայության համար ապահովելու որևէ ինքնավարություն: Դեռ 1922 թ. մի խումբ հայ գործիչներ ներկայացրին նախագիծ Ախալքալաքի գավառից և Բորչալուի հայաբնակ գյուղերից (հյուսիսային Լոռի) Վրաստանի ՍԽՀ կազմում մեկ հայկական ինքնավար վարչամիավոր ստեղծելու մասին: Սակայն վրաց պետական շրջանակները, մտավորականության որոշ ներկայացուցիչներ (հատկապես պատմաբան Իվ. Ջավախիշվիլին) սվիններով ընդունեցին այդ նախագիծը՝ այն դիտելով իբրև Վրաստանն անդամահատելու քայլ և 1923 թ. հասան նրա մերժմանը[54]:

Այսպիսով, Հայաստանի խորհրդայնացումից հետո ստեղծվեց մի քանի հայկական պետական կազմավորում՝ ՀՍԽՀ-ն, ԼՂԻՄ-ը, ձևականորեն նաև՝ ՆիխՍՀ-ն:

Խորհրդային բռնահամակարգի ամրապնդմանը զուգընթաց ինչպես վերոհիշյալ, այնպես էլ խորհրդային ազգային-պետական այլ կազմավորումների ինքնիշխանությունը չուտով պակասեց: Խորհրդային Միության (ԽՍՀՄ) ստեղծելու Վ. Լենինի «ազգային-պետական շինարարության» ծրագրի շրջանակներում սկսվեց Անդրկովկասի խորհրդային երեք անկախ պետությունների մեկ միութենական դաշնային հանրապետություն Անդրդաշնություն կազմավորելու գործընթացը: 1922 թ. մարտի 12-ին Թիֆլիսում Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի կենտգործկոմների ներկայացուցիչների

---

[53] **Поцелуев В.А.**, «Гербы Союза ССР. Из истории разработки». Москва. 1987, с. 158:

[54] Տե՛ս **Մելքոնյան Աշոտ**, Ջավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին, էջ 346, 347:

լիազոր կոնֆերանսում ստեղծվեց Անդրկովկասի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների Դաշնային Միությունը (ԱՍԽՀԴՄ)։ Այսինքն՝ անկախ խորհրդային Հանրապետությունները դարձան մեկ դաշնային միության անդամ՝ կորցնելով անկախությունը։ Նույն տարվա դեկտեմբերին Բաքվում ԱՍԽՀԴՄ-ն վերակազմվեց Անդրկովկասի Սոցիալիստական Դաշնային Խորհրդային Հանրապետության (ԱՍԴԽՀ)։ Այն է՝ երեք Հանրապետությունների միությունը վերածվեց մեկ Հանրապետության և այդպես մտավ դեկտեմբերի վերջին ձևավորված ԽՍՀՄ-ի մեջ։ Դրանով իսկ էլ ավելի խորացավ դաշնության անդամների ինքնիշխանության կորուստը։

Հայաստանն այդուհետ զրկվեց միութենական կենտրոնի հետ ուղղակի չփվելու հնարավորությունից և փաստորեն ընկավ Թիֆլիսում գործող անդրդաշնային իշխանության մարմինների ենթակայության տակ, որոնցում հայ գործիչներն առանձնապես մեծ ազդեցություն չունեին։ Պատահական չէ, որ ԱՍԴԽՀ կազմում, ինքնիշխանության նվազմանը զուգընթաց, մինչև 1936 թ.՝ Անդրդաշնության վերացումը, Հայաստանում ունեցավ տարածքային կորուստներ՝ Հօգուտ Վրաստանի և Ադրբեջանի[55]։ Այսպիսով, 1922–1936 թթ. Խորհրդային Հայաստանի ինքնիշխանության կորստի ենթափուլն էր։

Եվ վերջապես, Խորհրդային Հայաստանի պետականության պատմության երրորդ ժամանակաշրջանը կարող է համարվել միութենական Հանրապետության կարգավիճակի ենթափուլը (1936–1991 թթ.), երբ Հայաստանը (արդեն նոր անունով՝ Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն՝ ՀԽՍՀ) վերադարձնում է ինքնիշխանության շատ տարրեր, այդ թվում՝ կենտրոնական իշխանությունների հետ ուղղակի հարաբերվելու հնարավորությունը։ 1937 թ. ընդունվում է երկրորդ միութենական Հանրապետության նոր սահմանադրությունը։ Հայրենական պատերազմի տարիներին հայկական ազգային զորամիավորումների թիվը հասնում է վեցի։ 1946 թ. Հայաստանի նախարարությունների շարքում վերականգնվում է արտաքին գործերի մինիստրությունը, 1978 թ. ընդունված երրորդ սահմանադրության մեջ տեղ են գտնում Հանրապետության

[55] ՀԱԽՀ տարածքային կորուստների մասին տե՛ս Խաչատրյան Կ., Սուքիասյան Հ., Բադալյան Գ., Խորհրդային Հայաստանի և ԼՂԻՄ-ի տարածքային կորուստները 1920–1930-ական թվականներին, Եր., 2015 և Մելքոնյան Աշոտ, Ջավախքը..., էջ 354–356։

ինքնուրույնությունն ամրագրող մի քանի կարևոր կետեր. ՀԽՍՀ պետական լեզուն հռչակվում է հայերենը, առանց օրենսդիր մարմնի՝ Գերագույն խորհրդի համաձայնության արգելվում է հանրապետության տարածքի փոփոխությունը և այլն:

Նորագույն ժամանակաշրջանում հայոց պետականության երրորդ՝ անկախության փուլը սկսվում է 1991 թ. սեպտեմբերից, երբ ամսի 2-ին կյանքի է կոչվում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը (ԼՂՀ), իսկ 21-ին անցկացված համաժողովրդական հանրաքվեից հետո՝ Հայաստանի Հանրապետությունը: Այս գործընթացի հիմքերը վճաստորեն դրվեցին Արցախյան ազատագրական հուժկու շարժումով, 1990 թ. մայիսին կայացած բազմակուսակցական, ժողովրդավարական ընտրություններով և նորընտիր Գերագույն խորհրդի (հետագայում՝ Ազգային ժողով) կողմից օգոստոսի 23-ին ընդունված «Անկախության հռչակագրով»:

Ներկայումս հայկական երկու պետությունները՝ ՀՀ-ն և ԼՂՀ-ն, բոլորելով իրենց վերաանկախացման քառորդ դարը, չարունակում են հայոց հինգհազարամյա պետականության երթը:

Այսպիսով, հայոց պետականության ուրվագծային պատմության վերոհիշյալ չարադրանքը հուշում է, որ անհրաժեշտ է վերանայել հայ պատմագրության մեջ գոյություն ունեցած այն թյուր տեսակետը, որ դարեր չարունակ հայ ժողովուրդը եղել է պետականազուրկ: Այս հոդվածով առաջարկվում է նոր կառուցակարգ, ըստ որի՝ ժամանակ առ ժամանակ կործանվել է միայն միապետական թագավորությունը, իսկ պետական ինքնատիպ դրսևորումները՝ տեղական թագավորությունները, իշխանապետությունները, մելիքությունները և այլ կազմավորումներ գրեթե բոլոր պատմափուլերում եղել են և դրանով իսկ պահպանել հայկական պետականության ընդհանուր շղթան:

ԱՄՓՈՓՈՒՄ

Յուրաքանչյուր երկրի ու ժողովրդի պատմության պարբերացման հարցում, որպես կանոն, առաջնային նշանակություն են ունենում ազգերի ձևավորման ու պետականության զարգացման գործընթացները, որոնք հաճախ ընթանում են զուգահեռաբար: Պատահական չէ, որ հին, միջին, նոր և նորագույն պատմության դարա-

շրջաններըը հիմնականում համապատասխանում են պետականության պարզացման շրջափուլերին:

Հին հայոց պետականության շրջանն ընդգրկում է վաղնջական ժամանակներից մինչև IV դարի վերջն ընկած հատվածը, որն իր հերթին կարելի է տրոհել մի քանի փուլերի: Միջնադարյան պետականության շրջանը ներառում է IV դարի վերջից մինչև XVII դարի կեսերը: Նոր ժամանակներում պետականության (XVII դարի կես – 1918 թ.) պատմությունն ունի իր առանձնահատկությունները, բացակայում է համահայկական պետականությունը, այն առկայծումներով ու զանազան դրսևորումներով ինքնիշխան կազմավորումների (սպնախներ, մելիքություններ) տեսքով երևան է գալիս միայն Հայաստանի առանձին շրջաններում:

Հայոց պետականությունը նորագույն ժամանակներում ներկայանում է երեք Հանրապետությունների պատմափուլերով՝ 1918–1920, 1921–1991 և 1991–2017 թթ.: Այսպիսով, վերանայվում է հայ պատմագրության մեջ գոյություն ունեցած թյուր տեսակետը դարեր շարունակ հայ ժողովրդի պետականազուրկ լինելու վերաբերյալ, և առաջարկվում է նոր կառուցակարգ, ըստ որի՝ ժամանակ առ ժամանակ կործանվել է միապետական թագավորությունը, բայց պետական ինքնատիպ դրսևորումները՝ տարածաշրջանային թագավորությունները, իշխանապետությունները, մելիքությունները և այլ կազմավորումներ գրեթե բոլոր պատմափուլերում պահպանել են հայկական պետականության ընդհանուր չղթան:

Բանալի բառեր. *ազգերի ձևավորում, հայոց պետականություն, պատմափուլեր, հին, միջին, նոր և նորագույն պատմության դարաշրջաններ:*

ЭТАПЫ РАЗВИТИЯ АРМЯНСКОЙ ГОСУДАРСТВЕННОСТИ

РЕЗЮМЕ

Процессы формирования наций и развитие государственности, которые часто протекают одновременно, как правило, имеют первостепенное значение в периодизации истории каждой страны и

народа. Не случайно, что периоды древней, средневековой, новой и новейшей истории, в основном соответствуют этапам развития государственности.

Этап древней армянской государственности начинается с первобытных времен до начала IV-го века, который в свою очередь, можно разделить на несколько периодов. Этап средневековой государственности включает в себя период с IV века до середины XVI века. История государственности нового времени (с XVII века до 1918 г.) имеет свои особенности: не было общеармянской государственности, она возникала в виде различных суверенных государственных образований (схнахов, меликств) только в некоторых регионах Армении.

Армянская государственность новейшего этапа предстает в виде исторических периодов трех республик – 1918–1920 гг., 1921–1991 гг. и 1991–2016 гг.

Ключевые слова: формирование нации, армянская государственность, исторические этапы, древняя, средневековая, новая и новейшая истории.

THE HISTORICAL STRAGES OF ARMENIAN STATEHOOD

SUMMARY

The ethno-formation and statehood development processes often taking place concurrently are of primary significance for periodization of the history of each country and nation. It is no coincidence that ancient, medieval, modern and contemporary history eras mainly correspond to the statehood development phases.

The early statehood stage of ancient Armenia encompasses a period from primordial times up to the end of the IV c. AD which in its turn may be divided into several subphases. The medieval statehood stage presents

the time period lying between the end of the 4th c. AD until the mid-17th c. c. In modem times (mid-17th c. 1918) the statehood history demonstrates its own peculiarities: inspite of the absence of pan-Armenian statehood in separate regions of Armenia it was manifested by various forms and entities of statehood as well as numerous self-governing formations (syghnakhs, melikdoms).

In the contemporary period the Armenian statehood is represented by historical stages of the three republics: 1918–1920, 1921–1991, 1991 – present. Therefore, the wrong standpoint of Armenian historiography about the Armenian people of being stateless for centuries is reviewed and a new historiographical mechanism is suggested. According to the latter the united kingdom experienced downfalls but the distinct state formations such as regional kingdoms (principalities), princedoms, melikdoms and other formations almost in all historical stages preserved the continuous chain of the Armenian statehood.

Key words: formation of the nation, Armenian statehood, historical stages ancient, medieval, new and modem history.

Հայոց նորագույն պետականության բառորդ դարը (գիտաժողովի զեկուցումների ժողովածու), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2017, 204 էջ, էջ 39–70:

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՊԱՐԲԵՐԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հայոց պատմության պարբերացման խնդիրն այսօր էլ շարունակում է մնալ հայ պատմաբանների հետաքրքրությունների կիզակետում: Հաճախ հարց է ծագում, թե պարբերացման խնդրում ինչը պետք է դնել յուրաքանչյուր դարաշրջանի հիմքում՝ սոցիալ-տնտեսական զարգացմա՞ն հանգամանքը, ինչպես արել էր Կարլ Մարքսը, մշակութայի՞ն մակարդակը, թե՞ պետականության գոյության փաստը կամ մեկ այլ նախապայման:

Զգիտես ինչու մեզանում դասագրքային ճշմարտություն է դարձել այն սխալ թեզը, թե մենք դարեր շարունակ պետականություն չենք ունեցել: Այդ իմաստով նկատի ենք ունեցել հատկապես 1045 թվականից մինչև 1918 թվականն ընկած ժամանակահատվածը, երբ մայր Հայրենիքում 1045 թ. կորցրել ենք Անիի Բագրատունյաց թագավորությունը և պետականությունը վերականգնել միայն 1918 թ.: Այս ձևակերպումը մենք չատ ենք կրկնել՝ առիթ տալով մեր հարևաններին՝ պնդելու, որ հայերը փաստում են դարեր շարունակ իրենց պետականության բացակայությունը:

Պետականության խնդիրներն ուսումնասիրելիս հանգում ենք այն համոզման, որ իբրև ազգի գոյության և զարգացման թիվ մեկ նախապայման այդ կարգավիճակը դասական իմաստով, իր բոլոր հատկանիշներով (ատրիբուտներով) պարտադիր չէ, որ մշտապես առկա լինի: Վերցնենք մեր դասական պետականության օրինակը՝ Բագրատունյաց Հայաստանը, զարգացած միջնադարում: Փորձենք, օրինակ, Աշոտ Երրորդ Ողորմածի կամ Գագիկ Առաջինի Հայաստանը համեմատել Ֆրանսիայում Լյուդովիկոս XIV-ի կամ Լյուդովիկոս XV-ի ժամանակաշրջանների հետ: Դրանք անհամեմատելի են: Կպարզվի, որ Բուրգունդիայի կամ Տոսկանայի դուքսերն ավելի զորեղ են եղել՝ չլինելով թագավորներ: Այնպես որ, թագավորի կարգավիճակը նկատի ունենալով՝ հնարավոր չէ հստակորեն տալ պետականության սահմանումը:

Հետազոտությունները բերում են այն համոզման, որ համաշխարհային պատմության հետ հայոց պատմությունը ոչ միայն չատ ընդհանուր աղերսներ ունի, այլև բազմաթիվ հարցերում ուղենիշ է դառնում նրա համար: Համաշխարհային պատմության պարբերաց-

ման հարցում գիտնականների մեծագույն մասը համերաշխվում է գոնե մեկ հարցում, այն է՝ կա հնադար՝ հին դարեր, միջնադար, նոր շրջան և նորագույն: Գուցե նորագույնի հետ խնդիրներ կան, երբ եվրոպական պատմագիտության մեջ նրանք նորն ու նորագույնը տեսնում են մեկ ընդհանուր չղթայում, դրանք չեն բաժանում միմյանցից: Բայց միաժամանակ նորագույն պատմություն, որպես այդպիսին, արևմտյան պատմագրության մեջ ևս օգտագործվում է:

Պարբերացման խնդրին հայ հեղինակներից անդրադարձել են Ղուկաս Ինճիճյանը, Ղևոնդ Ալիշանը, Անտոն Գարագաշյանը, Ստեփան Պալասանյանը և ուրիշներ: Նրանց կարծիքով՝ դասական բաժանումը հետևյալն է. հին Հայաստան, միջնադար և նոր շրջան: Նորագույնի դաղափարը խորհրդային ժամանակներում հասկանալի է, որ կապվեց Ռուսաստանում 1917 թ. հեղափոխության, մեզանում՝ 1920 թ. նոյեմբերի 29-ից Հայաստանի խորհրդայնացման գործընթացի հետ: Խորհրդային ժամանակաշրջանում հին պատմությունը հասցվում էր մինչև V դարի սկիզբը: V դարից սկսվում էր միջնադարը, որը տևում էր մինչև XVIII դարի վերջը, ավելի ստույգ՝ 1801 թվականը: Ինչպես հայտնի է՝ 1801 թ. Հյուսիսային Հայաստանի մի քանի գավառներ՝ Լոռին, Շամշադինը, Ղազախը, Փամբակը, անցան ռուսական տիրապետության տակ. կործանվեց վրացական՝ Քարթլի-Կախեթի թագավորությունը: Ստացվում էր, որ մեր հարևան ժողովրդի ողբերգությունը դարձել էր մեր պատմության նոր ժամանակաշրջանի սկիզբը:

Նոր պարբերացումն արմատապես տարբերվում է խորհրդային ժամանակներում առաջարկվողից: Մինչ պետականության ժամանակահատվածը, բնականաբար, նախնադարն է: Ք.ա. III հազարամյակից սկսվում է պետական կազմավորումների դարաշրջանը: Շատ ուրախալի է, որ պատմաբանների, հնագետների, լեզվաբանների մոտեցումներն այդ հարցում միմյանցից էականորեն չեն տարբերվում: Ընդունված է, որ այդ կազմավորումները համադաշնություններ ձևով էին հանդես գալիս արդեն Ք.ա. III–II հազարամյակներում, ինչպես Արատտան, Էթիունին, Դիաուխին, Նաիրին, Հայասա-Ազզին, Արմե-Շուբրիան և այլն: Հայկական լեռնաշխարհում Ք.ա. IX դարում ասպարեզ իջած Արարատյան թագավորությունը (Ուրարտու, Վանի թագավորություն, Բիայնիլի) դառնում է առաջին միասնական պետությունը:

Միասնական պետականությունների պատմությունը հարատևում է մինչև 387 թ. Հայաստանի բաժանումը կամ 428 թ. Արշակունյաց արքայատոհմի անկումը: Բայց պետականությունը չի վերանում, մասնավորապես վաղ միջնադարում: Հայտնի է, որ համաշխարհային պատմության մեջ հին շրջանն ավարտվում է 476 թվականով՝ Հռոմեական կայսրության անկումով, և ապա սկսվում է միջնադարը: Մեզանում միջնադարն ավելի վաղ է սկսվում՝ քրիստոնեության ընդունումով: Գաղափարական նոր դաշտ է ի հայտ գալիս, և ամենակարևորը՝ սոցիալ-տնտեսական առումով փոփոխություն է տեղի ունենում. կա արդեն ավատատիրությունը, որն ուսումնասիրել և փառահեղ ձևով ներկայացրել է Նիկողայոս Ադոնցը: Այստեղ խնդիր չկա, որ միջնադարը մեզանում սկսում է IV դարում:

Վաղ միջնադարում պետականությունը 428 թ. հետո չի վերանում: Այն թագավորից անցնում է նախարարներին, ինչպես վկայում է Եղիշեն, այնուհետև գոյատևում VI–VII դարերում՝ մինչարաբական ժամանակահատվածում, և ինչու չէ՝ նաև արաբական շրջանում՝ հատկապես 652 թվականից հետո: Ինքնավար Հայաստանը պահպանում է իր գոյությունը Արմինիա-Էրմենիստան վարչական միավորի տեսքով: Այդ պարագայում պետականության շատ ու շատ հատկանիշներ պահպանվում են, և դրանք չեն վերանում ընդհուպ IX դարի կեսերը, այսինքն՝ լիարժեք պետականության՝ թագավորության տեսքով նրա վերականգնումը:

X–XIV դարերը զարգացած միջնադարի ժամանակաշրջանն են: XIV դարի վերջին Կիլիկիայի հայկական թագավորության կործանումով ավարտվում է հայոց պետականության և միջնադարի զարգացած ժամանակահատվածը: Ուշ միջնադարը՝ XVI դարից մինչև XVII դարի կեսերն ընկած օտար տիրապետությունների ժամանակահատվածը, իսկական մղձավանջի շրջափուլ է: Դրանով ավարտվում է միջնադարը:

Գիտենք, որ համաշխարհային պատմության նոր շրջանի սկիզբը կապում են կա՛մ XVI դարի երկրորդ կեսի նիդեռլանդական, կա՛մ XVII դարի 40–60-ական թվականների անգլիական հեղափոխությունների հետ: Մեզանում երկար քննարկումներից հետո ընդունվեց այն տեսակետը, որի համաձայն՝ ինչպես համաշխարհային, այնպես էլ հայոց պատմության ընդգրկած ժամանակահատվածի կապակցությամբ մոտեցումները համընկնում են. միջնադարի և նոր շրջանի սահմանագիծը XVII դարի կեսն է: Մեր պարագայում՝ ավարտվում

են թուրք-պարսկական արյունալի ու երկարատև պատերազմները, որոնցից հետո ծավալվում են հայ ազգային-ազատագրական շարժումները, որոնք հատկապես նոր թափ են ստանում 1677 թ.՝ Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի էջմիածնում հրավիրած գաղտնի ժողովից հետո:

Հատկանշական է, որ նոր ժամանակներում, մասնավորապես XVII–XVIII դարերում հայոց պետականությունը մելիքությունների տեսքով ունենում է իր նոր, բայց շատ հստակ դրսևորումները: 1724 թ. Սյունիքի Դավիթ Բեկի իշխանությունը ճանաչվում է պարսից շահ Թահմազ Երկրորդի կողմից: 1736–1747 թթ. Նադիր շահը Արցախի հինգ մելիքությունները միավորում է մեկ՝ Խամսայի մելիքության մեջ: XVIII դարի երկրորդ կեսին հայ ազգային-ազատագրական շարժման գաղափարախոսությունը հասնում է այնպիսի մակարդակի, երբ ժամանակի նշանավոր գործիչները (Մովսես Սարաֆյան, Հովսեփ Արղության, Հովհաննես Լազարև, Հովսեփ Էմին, Շահամիր Շահամիրյան, Մովսես Բաղրամյան) առաջ են քաշում հայկական պետականության վերականգնման վերաբերյալ նախագծեր: Ընդ որում, հայ ազատագրական միտքն առաջադրում է նաև աշխարհում այդ ժամանակ եզակի՝ կառավարման հանրապետական համակարգ ստեղծելու գաղափարներ:

Նոր դարաշրջանի փուլերից է XIX դարի երկրորդ կեսը, երբ Արևելյան Հայաստանում պետականությունների շառավիղներն իսպառ վերանում են: Ռուսական տիրապետության ժամանակ հայկական ինքնավարության վերջին նշույլներն ու շառավիղները վերանում են 1840 թ. հայկական մարզի վերացումով, որը, այնուամենայնիվ, որոշ ինքնավարության տարրեր պարունակող միավոր էր. ուներ դրոշ, զինանշան, հայկական անուն և այլն: 1849 թ. Երևանի նահանգի ստեղծումով Արևելյան Հայաստանում վերջնականապես արմատախիլ են արվում պետականության բոլոր, անգամ նվազագույն դրսևորումները: Բայց որքան անհավատալի է, Արևմտյան Հայաստանում՝ Մոկսում, Շատախում, Սասունում, ինչպես նաև Կիլիկիայում, հատկապես Զեյթունում, դրանք ինքնավարությունների ձևով դեռևս պահպանվում են:

Ե՞րբ է ավարտվում պատմության նոր դարաշրջանը. եթե համաշխարհային պատմության մեջ այն 1918 թ. նոյեմբերի 11-ին կնքված Կոմպիենյան հաշտությամբ Առաջին աշխարհամարտի ավարտն է, ապա հայոց նոր պատմության պարագայում տրամաբա-

նական է այդ ժամանակը համարել 1918 թ. մայիսի երկրորդ կեսը՝ Սարդարապատի, Բաշ-Ապարանի ու Ղարաքիլիսայի հերոսամարտերը: Հենց այդ հերոսական կռիվների բոցերում մայիսի 28–30-ին Հայաստանի Հանրապետության ծնունդը պետք է դիտել իբրև նորագույն պատմության սկզբնավորում:

Վերջապես, 1918 թ. մայիսի 18-ից սկսված նորագույն ժամանակաշրջանը կարելի է տրոհել երեք փուլի՝ Առաջին հանրապետության շրջանի (1918–1920), որն անկախ պետականության փուլն է: Երկրորդը՝ անկախ, սոցիալիստական հանրապետության շրջանն է (1920 թ. դեկտեմբերի 2 – 1922 թ. մարտի 12), երբ սոցիալիստական խորհրդային Հայաստանը հարաբերականորեն անկախ պետություն էր, ուներ անգամ արտաքին քաղաքականություն վարելու որոշ հնարավորություններ: Բայց այդ հարաբերական ինքնուրույնությունը վերացվեց 1922 թ. մարտի 12-ին Անդրդաշնության, ապա վերջինիս կազմում նույն տարվա վերջին ԽՍՀՄ-ում Հայաստանի ընդգրկմամբ:

Պայմանականորեն խորհրդային Հայաստանի պատմության հաջորդ շրջափուլը կարելի է համարել 1936–1991 թթ., երբ այն ձեռք բերեց միութենական հանրապետության կարգավիճակ և որոշ չափով ապահովեց ներքին ինքնուրույնությունը:

Հայոց նորագույն պատմության արդի փուլի սկիզբը նշանավորվեց 1990 թ. օգոստոսի 23-ին Գերագույն խորհրդի կողմից անկախության հռչակագրի ընդունումով, որի տրամաբանական զարգացումը հանգեցրեց 1991 թ. սեպտեմբերի 21-ի անկախության հանրաքվեին ու սեպտեմբերի 23-ին անկախության հռչակմանը: Հայոց նորագույն պատմության արդի փուլը կարևորվեց նաև 1991 թ. սեպտեմբերի 2-ին Լեռնային Ղարաբաղի հանրապետության հռչակումով:

«Հայագիտության հարցեր», Երևան, թիվ 3(12), 2017, էջ 199–203:
http://www.armin.am/images/menus/2822/Gitakan_Kyanq.pdf

THE ARMENIAN GENOCIDE: THE HISTORICAL BACKGROUND AND CURRENT PROCESS OF INTERNATIONAL RECOGNITION AND CONDEMNATION

The historical facts presented below spread light on the actual reasons of the Armenian Genocide and its pre-planned nature which has so far been and is still being officially rejected by the Turkish authorities of today.

The Armenian Genocide – extermination of the Armenian nation in its Motherland (Western Armenia and Cilicia) is the most horrific act in the history of humanity. Most part of the 400, 000 sq. km. historical Armenia – Western Armenia, appeared under the cruel domination of the Ottoman Empire in the 16th century. Eastern Armenia first appeared under the rule of Persia and then, in 1830s – under the rule of the Russian Empire.[1] At the conclusion of the Russo-Turkish war of 1877–1878, when most of the Western Armenian provinces formerly occupied by the Russian Empire again passed to the Ottoman Empire, pressured by Russia and then by the great European powers, a special provision was introduced in the peace treaties of San Stefano and Berlin in 1878. According to the provision the Turkish Government was under the obligation of undertaking and carrying out reforms for the Western Armenians who had remained under the Ottoman yoke. In international diplomacy the question of these reforms was termed as "the Armenian Question".

However, very soon the Turkish Sultan Abdul Hamid II not only forgot about the Berlin Congress provision 61 but also offered a unique way of implementation of the provision – he chose to "solve" the Armenian Question by annihilating the Armenians. Hamid was the first to make Pan-Islamism and Pan-Turkism a state ideology: the first assumed unification of all Islamic and the second – of all Turkic peoples under the flag of Turkey

[1] See: **Melkonyan A.A.**, The 1915 Mets Yeghern (genocide) of Armenians: history and contemporary problems,- Armenian Folia Anglistika, International journal of English Studies, 1(13)/2015 – Yerevan, pp. 180–185.

and waging "a holy war" against "infidel" Christians. Armenians who geographically stood in the way to the plans of Pan-Turkism were targeted in particular.

In order to "solve" the Armenian Question Hamid instigated the contumacious nomadic Kurdish tribes to assault Armenians. In 1891 he established special Kurdish cavalry regiments and named after himself – Hamidiye. The Hamidiye members received government salaries and were authorized to freely plunder and loot the Armenian population. A brutal regime of terror was set up in the country. Strict censorship was imposed.

The years of 1894–1896 witnessed the assaults of the Hamidiye troops upon the villages and towns of Western Armenia. Mass slaughters of Armenians were organized throughout the Ottoman Empire, 300.000 Armenians perished. Thousands of Western Armenians emigrated to different countries; about 100.000 – to Russia, 200.000 to Europe and America. To escape the pogroms many Armenians were forced to adopt Islam. These violent actions committed by Turkish authorities and subsequent tragic events, were the first manifestations of genocide (geno- race, tribe/ethnos, cide- killing) in the world. Genocide is a state-organized mass crime against a nation or a religious community, aiming at a total annihilation of the given ethnic or religious group.

In July, 1908 the Young Turks seized power in a coup. A constitutional monarchy was established. Promises of ethnic and social equality were made. But soon the Young Turk government showed its real racist tendencies, actually adhering to the chauvinistic policy of Hamid. 30,000 Armenians fell victim to massacres organized in Adana and other parts of Cilicia in April, 1909.

In the secret meeting held in the Greek city of Thessaloniki in 1911 the Young Turks adopted a resolution which stated the intention of turning Turkey into a Turkish state and the necessity of ethnic cleansing. A decision was made under Talaat (the Interior Minister), Enver (Minister of Military Affairs), Jemal (Minister of Maritime Affairs) to try, in case of war, to finally "resolve" the Armenian Question by completely annihilating

the Armenian nation and realizing Pan-Turkish plan of establishing "Great Turan".

Representatives of different nationalities were killed during World War I (1914–1918). However, considering the population density, no other nation suffered so many losses as the Armenians did, particularly in their Homeland – Western Armenia and Cilicia. It was the world's first organized mass crime – a genocide.

On April 15, 1915 the Young Turk committee adopted an anti-Armenian resolution intending

– to disarm the Armenian soldiers of the Ottoman army accusing them of high treason;

– to arrest and exile Armenian intellectuals from all Armenian-populated regions;

– to deport the Armenian civilian population and to exile them to the Syrian deserts on the pretext of physical and property security reasons;

– to send the copies of the resolution to governors.

The copies of the command were sent to all governors. Those who refused to carry out the above-mentioned orders, regardless of nationality, were subject to liability.

April 24 (morning of 25), 1915 saw the arrest of numerous Armenian intellectuals (according to official Turkish data 2345 people); political, national, religious leaders, teachers, doctors and other professionals in Constantinople. Among them were Grigor Zohrap and Vartkes – members of the Ottoman Parliament, the writers Daniel Varuzhan, Ruben Sevak, Siamanto, Telagadintsi, Yerukhan and others. Nazaret Chaush in Zeitoun and Vramian in Van fell victim to the plot.

Armenian intellectuals were exiled in three directions – Chankri, Chorum, Ayash. Varuzhan and Sevak were killed near Chankri, Zohrap – near Edessa-Urha (Urfa). Approximately 200 thousand Armenians in the Turkish army were disarmed and executed by firing squad. The famous Armenian composer Komitas who witnessed the Turkish atrocities and miraculously escaped death, became mentally disabled.

A Special Organization for deportation (Teşkilât-ı Mahsusa) was set up. Young Turk Committee member Behaeddin Shakir coordinated special chete forces consisting of intentionally released convicts to raid on Armenian villages and displace the population. Mass deportations started in May, 1915. From May to October native Armenians of Karin-Erzrum, Trabzon, Van, Baghesh (Bitlis), Amid (Diyarbakir), Sebastia (Sivas), Adana, Iconium, Aleppo and other provinces were killed or deported.

On June 15 twenty Armenian Hnchak party members, among them the famous activist Paramaz (Matheos Sargsian) were hung in Sultan Bayazid Square, Constantinople.

The whole Armenian population of Cilicia, with the exception of the Musa Ler resisters, were deported.

The caravans of Western Armenian deportees stretched to Erznka (Erzincan), Derjan, Kharpert, Malatya, Aleppo, Der Zor. The worst massacres took place when crossing the Euphrates – near the town of Kamakh and in the Syrian desert of Der Zor.

From 500,000 Armenian deportees in Der Zor only 10–20,000 survived the disaster. Hundreds of thousands people left their Motherland and found refuge in different countries of the world.

According to the German humanist Dr. Johannes Lepsius an estimated 1.5 million Armenians perished in the Ottoman Empire during the Armenian Genocide. Apart from this, immense material losses were caused – 15 million francs. The Armenian districts of 170 towns, 2800 villages, 2350 churches and monasteries, 1500 schools and colleges were destroyed.

When the US Ambassador to the Ottoman Empire Henry Morgenthau expressing his complaints on the mentioned atrocities to Talaat Pasha said that he would have to be answerable to the Armenians for what he had done, the latter replied cynically that there were no more Armenians to be answerable to, and that he had done more in three months than Sultan Hamid did in three decades.

Turkey's ally Germany constantly backed and encouraged the Young Turks[2]. Famous humanists Y. Lepsius, A. France, F. Nansen, V. Bryusov, A. Block and others raised their voices in defence of Armenians.

The Armenian avengers (Soghomon Tehlirian, Arshvir Shirak, Aram Yerkanian, Artashes Gevorgian and others) committed assassinations of the Genocide orchhestrators Grand Vizier Talaat, Minister of Maritime Affairs Jemal, leader of chete regiments Behaeddin Shakir, Prime Minister Said Halim, governor of Trabzon Jemal Azmi and others. The operations are known as "Nemesis" (in classical mythology the Greek goddess of vengeance).

Thus the Armenian Question was "resolved" through the Genocide of Armenians. The Armenian people not only suffered tremendous physical and material losses but also were deprived of the Motherland, the historic Homeland – Western Armenia and Cilicia. Later the issue of the international recognition of the Armenian Genocide and the compensation for it was formulated as the Armenian Cause (Hay Dat).

As Armenia lacked independent statehood, for seventy years (1921–1991) the pursuit of the Armenian Cause was mainly carried out by the Armenian Diaspora. Noteworthy are the years of 1945–1947 when, on behalf of the Armenians, the issue of the Western Armenian lands was again raised but this time within the frames of the Soviet foreign policy. However, it was strongly opposed by the Anglo-Americans. Soon the issue faded into oblivion in the USSR. Moreover, the Khrushchev regime of 1950s declined any territorial claim to Turkey. The Armenian Cause became a taboo in the Soviet Union.

Since 1965 (after the official commemoration of the semi-centennial of the Armenian Genocide) Armenia has participated in the pursuit of the Armenian Cause.

According to Armenia's Declaration of Independence (August 23, 1990), the Supreme Council of the Armenian SSR

---

[2] A hundred years later, in 2016 German Parliament recognized the Armenian Genocide (https://www.nytimes.com/2016/06/03/world/europe/armenian-genocide-germany-turkey.html)

"Expressing the united will of the Armenian people; Aware of its historic responsibility for the destiny of the Armenian people engaged in the realization of the aspirations of all Armenians and the restoration of historical justice; Proceeding from the principles of the Universal Declaration on Human Rights and the generally recognized norms of international law; Exercising the right of nations to free self-determination; Based on the December 1, 1989, joint decision of the Armenian SSR Supreme Council and the Artsakh National Council on the "Reunification of the Armenian SSR and the Mountainous Region of Karabakh: Developing the democratic traditions of the independent Republic of Armenia established on May 28, 1918";

DECLARES

"The beginning of the process of establishing of independent statehood positioning the question of the creation of a democratic society based on the rule of law:

1. The Armenian SSR is renamed the Republic of Armenia (Armenia)[3]. The Republic of Armenia shall have its flag, coat of arms, and anthem..."

The Declaration had twelve points; according to the 11th point: "The Republic of Armenia stands in support of the task of achieving international recognition of the 1915 Genocide in Ottoman Turkey and Western Armenia"[4].

The President of the Republic of Armenia R. Kocharyan raised the issue of the Armenian Genocide in September 1998 at the UN General Assembly session[5] and a year later, in October 1999, at the OSCE Summit. Then the issue of the Armenian Genocide several times was

---

[3] On September 21, 1991 the Republic of Armenia declared its independence.

[4] http://www.gov.am/en/independence/ It was signed by: L. Ter-Petrosyan, President of the Supreme Council of the Republic of Armenia and A. Sahakyan, Secretary of the Supreme Council of the Republic of Armenia. On October 16, 1991 L. Ter-Petrosyan was elected the first President of the Republic of Armenia (http://www.president.am/en/levon-ter-petrosyan/).

[5] President Kocharyan denoted in his speech: "The fact that some of the parliaments have recognized that the Armenians were subjected to genocide and condemned it is a sign of the growing realization that this evil should be fought against" (http://www.ca-c.org/journal/2000/journal_eng/eng06_2000/14.shah.shtml).

raised in the Parliamentary Assembly of the Council of Europe. The question was also touched on in different speeches of the RA Minister of Foreign Affairs and other officials.[6] The issue is a serious argument against Turkey (its government is engaged in a well-financed campaign of denialism and distortion of history)[7] and in favour of Armenia in various international organizations. Actually many countries, official institutions and organizations as well as individuals started to condemn the Genocide.

Since 1965 until the present, the Armenian Genocide has been recognized and condemned by Uruguay, Cyprus, Argentina, Russia, Greece, Canada, Belgium, France, Italy, Vatican[8], Lebanon, Switzerland, Netherlands, Slovakia, Poland, Lithuania, Venezuela, Chile, Sweden, Bolivia, Austria, Germany, Luxemburg, Brazil, Bulgaria,[9] Paraguay[10]. Regions or provinces recognizing the Armenian Genocide include: parliaments of several regions of Spain (Basque Country, Catalonia, Balearic Islands, Navarre, and the city of Burjassot), United Kingdom (Wales, Scotland, Northern Ireland) and Australia (New South Wales, South Australia); the city councils of Aleppo and Deir ez-Zor of the Syrian Arab Republic; the Tehran regional government; the State Assembly of São

---

[6] Fundamental Armenology, 2015, N I, pp. 57–62 http://www.fundamentalarmenology.am/datas/pd fs/4.pdf

[7] THE ARMENIAN GENOCIDE Historical Background and the Aftermath of Genocide, p. 3 http://www.ancawr.org/wp-content/uploads/2015/04/3-Historical-Background-and-the-Aftermath-of-Genocide.pdf

[8] "Pope Francis, during a meeting Monday with a delegation led by Nerses Bedros XIX, Catholicos Patriarch of Cilicia of the Armenian Catholics at the Vatican reiterated his earlier recognition of the Armenian Genocide... This recognition of the Armenian Genocide as the first genocide of the twentieth century reaffirms the statements of John Paul II [which were made] upon his arrival in Armenia on September 25, 2001, demonstrating that more and more states, parliaments and international organizations are adopting this position against the denial of history perpetrated by the Turkish State" (http://asbarez.com/110442/in-vatican-pope-recognizes-genocide/)

[9] http://hraparak.am/?p=78106&l=am/bulxariayi+xorhrdarany+chanachel+e+hayoc+cexaspanutyuny

[10] http://asbarez.com/142147/turkey-threatens-paraguay-for-armenian-genocide-recognition/ 11 http://www.genocide-museum.am/eng/states.php

Paulo, the Legislative Councils of States of Ceará and Paraná (Brazil); Quindío department (Colombia); 45 U.S. states, etc.

Among all these resolutions adopted by the mentioned countries,[11] the document passed by the State Duma of the Russian Federation in April 1995 mentions the historical Homeland of Armenians – Western Armenia[12].

Thus, it is evident that the existence of independent Armenian statehood and its activities in foreign policy along with the organizational activities of Hay Dat (the Armenian Cause) have had a paramount importance in international recognition and condemnation of the Armenian Genocide[13]. As follows from the "Pan-Armenian Declaration on the Centennial of the Armenian Genocide", the State Commission[14] on the Coordination of Events Dedicated to the Centennial of the Armenian Genocide, in consultation with its regional committees in the Diaspora, "considers the Centennial of the Armenian Genocide an important milestone in the ongoing struggle for historical justice under the motto "I remember and demand"[15].

"Fundamental Armenology" Electronic journal, Yerevan, Issue 1 (5), 2017, pp. 129–134. http://www.fundamentalarmenology.am/datas/pdfs/426.pdf

[11] http://www.genocide-museum.am/eng/states.php

[12] http://www.armenian-genocide.org/Affirmation.151/current_category.7/affirmation_detail.html; http://www.genocide-museum.am/rus/Russia_Duma_Resolution.php

[13] **Melkonyan A.A.**, The Armenian Genocide: from international recognition and condemnation to reparations and restitution. -Fundamental Armenology, Issue 1, 2015.

[14] The Chairman of the Commission is RA President Serzh Sargsyan (http://www.president.am/en/press-release/item/2014/05/27/President-Serzh-Sargsyan-Commission-on-coordination-of-activities-dedicated-to-100th-anniversary-of-Armenian-Genocide/).

[15] http://www.genocide-museum.am/eng/29.01.2015-hrchakagir.php

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԻ ԱՐԾԱՐԾՈՒՄՆԵՐԸ ՊՈԼՍԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ՄԻՆՉԵՎ ՀՐԱՆՏ ԴԻՆՔԸ ԵՎ ՆՐԱՆԻՑ ՀԵՏՈ*

Օսմանյան կայսրությունում քեմալականների իշխանության գալուց հետո Հայոց ցեղասպանության հարցում թուրքական իշխանությունների վերաբերմունքը ոչ միայն չփոխվեց, այլև այն կազմից նախորդների՝ երիտթուրքերի հայաջինջ քաղաքականության շարունակությունը: Դա պատահական չէր, քանի որ ապագա քեմալականները դեռ երիտթուրքերի օրոք որդեգրել էին հայաջինջ գործելակերպ և իշխանության գալուց հետո, բնականաբար, շարունակելու էին նույն ծրագրի իրագործումը:

Մուստաֆա Քեմալի կառավարությունը ջանք չխնայեց դեռ Կ.Պոլսում ապրող բազմահազար հայերի շրջանում մոռացության տալու նրանց բնաջնջման վերաբերյալ հիշողությունները և շարունակելու «Թուրքիան թուրքերին» տխրահռչակ քաղաքական ուղեգիծը: Նման պայմաններում հայությունը, որի զգալի մասը, հրաշքով խուսափելով կոտորածից, հաստատվել էր Կ.Պոլսում, ստիպված էր շարժվել իշխանությունների պարտադրած կանոններով և փորձել իր սերունդներին անհաղորդ պահել Մեծ եղեռնի խնդիրներին: Ուստի պատահական չէ, որ Հայոց ցեղասպանությունից հետո ինչպես պոլսահայության, այնպես էլ Արևմտյան Հայաստանի փոքրաթիվ հայության նոր սերունդները գրեթե անտեղյակ մնացին հայկական ջարդերի և հայրենազրկման պատմությանը:

Իրականությանն անիրազեկ մնալուն մեծապես նպաստում էին Թուրքիայի Հանրապետությունում պարբերաբար կրկնվող ռազմական հեղաշրջումները, որոնց պայմաններում ազատ խոսքն ամեն կերպ ճնշվում էր, իսկ թուրքական պաշտոնական շրջանակները կամ լռում էին կամ խեղաթյուրում իրականությունը: Վախի ու անվստահության մթնոլորտում, քաղաքական գրաքննության պայմաններում հայ հասարակությունը շարունակում էր իրեն հեռու

---

* Սույն հոդվածը հեղինակի զեկուցումն է 2017 թ. հունվարի 19-ին ՀՀ Սփյուռքի նախարարության կազմակերպված գիտաժողովում ընթերցված, Հրանտ Դինքի մահվան 10-րդ տարելիցին:

պահել այդ վտանգավոր թեմայից, հայկական մամուլն էլ խնդրին անդրադառնում էր չատ զգուշորեն՝ ենթատեքստով, Թուրքիայից դուրս տպագրվող օտար թերթերին հղումներ տալու եղանակով և այլն:

Իրավիճակն աստիճանաբար փոխվեց 1996 թ., երբ ապրիլի 5-ից Ստամբուլում սկսեց լույս տեսնել Լուիզ Բաքարի, Հրանդ Դինքի, Հալուբթյուն Շեչեթյանի և Աննա Թուրայի հիմնադրած «Ակոս» պարբերականը, որը, ի տարբերություն տեղի հայալեզու մամուլի, ունեցավ Թուրքերեն ընդարձակ բաժին, և որի համար չատ չուտով դարձավ պոլսահայության լրատվության կարևոր աղբյուրներից մեկը, առավել ևս, որ հասկանալի պատճառներով համայնքում հայերենով ընթերցողների թիվը կտրուկ նվազել էր:

Բայց «Ակոսն» անմիջապես չէ, որ Հայոց ցեղասպանության թեման դարձրեց քննարկման նյութ: Թուրքական հասարակության աստիճանական ժողովրդավարացման գործընթացին զուգահեռ՝ անդրադարձերն այդ խնդրին հաճախակի, ապա և՝ մշտական դարձան: Ակնհայտ էր, որ այս պարբերականը, մնալով իր անվանը հարատ, սիրուն ակոսեր ճանապարհ դեպի Թուրքիայում տաբու համարվող թեմաների հրապարակայնացում և տաստամայկներ դոյություն ունեցած կարծրատիպերի վերացում: Այդ գործում ծանրակչիռ դեր ունեցավ Հրանտ Դինքը, որի համար նա հայտնվեց Թուրքական իշխանությունների ուշադրության կենտրոնում:

Հատկանշական է, որ Դինքն ու նրա փոքրաթիվ համախոհները միաժամանակ հայտնվեցին նաև յուրայինների քննադատության կրծքակետում: Հայ համայնքի զգալի մասը մտավախություն ուներ, որ արգելված թեմաների արծարծումները կարող են Թուրքական ազդայնականության նոր պոռթկումների առիթ հանդիսանալ: Հայախոս մտավորական չրջանակներն էլ Հրանտ Դինքին և մյուս «ակոսականներին» մեղադրում էին Թուրքալեզու թերթով համայնքն էլ ավելի հայախոսությունից հեռացնելու և Թուրքախոսությունը խրախուսելու մեջ: Այդուհանդերձ, ստեղծված անբարենպաստ պայմաններում, իսկ Հ. Դինքը չարունակեց Թուրքական հասարակությանը ճշմարտությունը մատուցելու ճանապարհով ներսից այն փոխելու իր հաստատակամ ուղեգիծը:

Ժամանակի ընթացքում Հայոց ցեղասպանության մասին «Ակոսի» հրապարակումներն ավելի ու ավելի համարձակ ու համոզիչ դարձան և ներառեցին Թուրքական հասարակության նորանոր չեր-

տերի: Հրանտ Դինքն իրերի բերումով խնդիրը քննության առնելիս դարձրեց նաև թուրքական պաշտոնական շրջանակներում, այդ թվում՝ խորհրդարանում, ընդ որում ամեն անգամ մատնանշելով այն հանգամանքը, որ կարևոր չէ Առաջին աշխարհամարտի տարիներին հայության հետ տեղի ունեցածն անպայման որակել որպես ցեղասպանություն: Բայց անհրաժեշտ է նկատի ունենալ, որ հայերն ապրում էին իրենց բնօրրանում և պատերազմի ժամանակ բնակվեր եղան, արմատախիլ արվեցին ու այժմ իսպառ ոչնչացված են: Ուստի ավելի ճիշտ է տեղի ունեցածի գնահատականը, ըստ Դինքի՝ թողնել թուրքական իշխանություններին և թուրք ժողովրդին:

Տարօրինակ է, որ այս վերջին միտքը՝ տեղի ունեցածի գնահատականը թուրքական հասարակությանը թողնելու մասին, հատկապես Թուրքիայից դուրս՝ Հայրենիքում և Սփյուռքում ոմանց կողմից գնահատվեց որպես հարմարվողականության դրսևորում, ցեղասպանության խնդրից նահանջ արձանագրելու գործելակերպ և այլն: Ցավալի է, որ եղան նաև մարդիկ, որոնք Դինքին հանիրավի մեղադրեցին անգամ ազգային չահերի անտեսման, թուրքական պաշտոնական շրջանակների մոտեցումները պաշտպանելու մեջ:

Ինչևէ, Հրանտ Դինքը, չկարևորելով նման գնահատականները, շարունակեց իր համարձակ գործունեությունը: Նրան հաջողվեց տարիների ընթացքում արմատապես փոխել պոլսահայության չրջանում տիրող իրավիճակը. վախի մթնոլորտը հետզհետե նահանջեց, զգույշ ու երկչոտ շատ հայ գործիչներ, հետևելով Դինքի օրինակին, ժամանակի ընթացքում իրենց հերթին դարձան հայկական կնճռոտ խնդիրները բարձրաձայնողներ: Վերջապես, 2007 թ. հունվարի 19-ին նրա եղերական մահը և թաղման արարողության ժամանակ հասարակության արձագանքը՝ «Բոլորս հայ ենք», «Բոլորս Դինք ենք» կարգախոսներով, փաստորեն վերջ դրեցին Թուրքիայում ինչպես Հայոց ցեղասպանության, այնպես էլ այլ հանգուցային հարցերում գոյություն ունեցած տաբուներին: Խնդրի նկատմամբ աննախադեպ հետաքրքրության աճ արձանագրվեց: Բազմահազար մարդկանց կողմից Դինքի սպանությունը գնահատվեց որպես էթնիկ-ազգային հողի վրա կատարված ցեղասպանական գործողություն, որը յուրօրինակ ձևակերպում ստացավ «1500000 + 1» հայտնի կարգախոսի տեսքով:

Անվիճելի է, որ Հրանտ Դինքը, մշտապես գտնվելով սպառնալիքների տակ, անընդհատ դատական խնդիրներ ունենալով իշխա-

նուիրյունների հետ, համոզված էր, որ այդ ամենն իր համար կարող է ունենալ ողբերգական վախճան: Բայց նա գիտակցաբար գնաց դրան, և վճաստորեն իր մահը ծառայեցրեց ազատական գաղափարների հաղթանակի համար: Նրա մահվանից հետո պոլսահայ մամուլը և հայ համայնքի նորանոր շերտեր հետզհետե որդեգրեցին ակոսական գործելակերպը և նույնպես բացեիբաց սկսեցին արծարծել հայ ազգային խնդիրներ, այդ թվում՝ ցեղասպանության թեման:

Պատահական չէ, որ Դինքի մահվան 10-րդ տարելիցի առիթով պոլսահայ մամուլը միմիայն դրվատանքի, խոնարհումի և երախտագիտության խոսքերով անդրադարձավ նրա գործունեությանը: «Ժամանակի» 2017 թ. հունվարի 19-ի համարում Արա Գուչունյանը գրում էր. «Թրքահայ համայնքը բիւր յարգանքով ու ջերմութեամբ կը վերյիշէ իր ծոցէն հասած հարազատ զաւակը, որու սպանութեան վէրքը տակաւին հեռու է սպիանալէ»:[1] Հրանտի հարազատ «Ակոս» շաբաթաթերթերը նույն օրվա համարի խմբագրականում պիտի բանաձևվեր նրա ապրած կյանքը հետևյալ խոսքերով. «Հակառակ քեզ մեզմէ խլած խաւարին կ աճի խօսքդ տարիներու ընթացքին»: «Ակոսի» հաջորդ օրվա համարում քուրդ քաղաքական գործիչ Սալահհադդին Դեմիրթաշի խոսքում, որը նա գրել էր Էդիրնեի բանտից, պիտի երևար Դինքի համարձակ ու արդյունաշատ գործունեության գնահատականը ամբողջ Թուրքիայի հասարակության ժողովրդավարացման գործում. «Կը ցաւիմ որ ազատազրկման պայմաններու բերմամբ պիտի բացակայիմ այս տարուայ ոգեկոչման հանրահաւաքէն: Բայց հոս ալ կը չարունակեմ Հրանդի համար արդարութեան պայքարին...Ախբարիկ կարօտած ենք, բայց ճակատաբաց կը ներկայանանք քեզ, ինչպէս որ դուն տեսնել պիտի ուզէիր»:[2]

Այսօր պոլսահայ համայնքը ծանր օրեր է ապրում: Օրեցօր թուրքական ազգայնական շարժումները նոր թափ են հավաքում, իշխանություններն ավելի ու ավելի են ոտնահարում ժողովրդավարական արժեքները, ամենուր տիրում է կամայականություն, սահմանափակվում է ազատ խոսքը, երկիրը հետզհետե հիշեցնում է սուլթանական ժամանակները: Սակայն Հրանտ Դինքի ակոսած ազատ մտքի ուղին այնքան հաստատուն է, որ հետադարձ լինել չի

---

[1] Ժամանակ, 19 յունուար 2017, էջ 1:

[2] Ակօս, 19 յունուար, 2017, էջ 1:

[3] Նույն տեղում, 20 յունուար, 2017, էջ 1:

կարող: Այսօր Ռաքել Դինքը, Հրանտի ընտանիքի մյուս անդամները, Բագրատ Էսդուգյանը,[4] այլ ակոսականներ, Թուրքիայի խորհրդարանի անդամ Կարո Փայլանը և ուրիշներ շարունակում են հայկական խնդիրների արծարծումները տարբեր հարթակներում և դռնդաղ, բայց հիմնավոր ճանապարհ հարթելով դրանց համար՝ ընդհուպ Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումն ու դրա հետևանքների վերացումը իրականություն դարձնելը:

Հրանտ Դինքի գաղափարները խոր հետք են թողել մարդկանց սրտերում, դարձել են համոզմունք և օրակարգ բերել անգամ պահանջատիրության խնդիրը: Նրա գործի շարունակողները, գաղափարակից ընկերները համոզված են, որ այդ վեհ գաղափարի կենսագործման ճանապարհին կրկին կանգնած է նույն ազգայնամոլ Թուրքական պետությունը: Ուստի Բ. Էսդուգյանը իր «Ոճրագործ պետություն» հոդվածում գրել է. «Այսօր կը նշենք Հրանդ Տինքի մահուան տասնամեակը: Կը նշենք վիպագիր Սապահաթթին Ալիի հետ, լրագրող Մեթին Կէօքթեփէյի, փաստաբան Թահիր Էլչիի հետ: 24 Ապրիլի բիւրաւոր նահատակներուն հետ կը յիշենք Հրանդ Տինքը եւ կը խոստանանք վերջ ի վերջոյ կործանել ոճրագործ պետութիւնը»[5]:

---

[4] «Ակոս» հայկական բաժնի պատասխանատու Բագրատ Էսդուգյանը, անդրադառնալով Թուրքիայի նախագահ Ռ. Էրդողանի այն հայտարարությանը, թե թուրքերը դժգոհ են 1923 թ. Լոզանի կոնֆերանսով ամրագրված սահմաններից, հայտնել էր, որ ինքը ևս դժգոհ է այդ սահմաններից, քանի որ հայոց խորհրդանիշ Արարատ լեռը հանիրավի հայտնվել է Թուրքիայի կազմում:

[5] Ակօս, 20 յունուար. 2017, էջ 1:

ՂՈՒԿԱՍ ԻՆՃԻՃՅԱՆԻ ԱՎԱՆԴԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

300-ամյա բեղմնավոր գործունեություն ծավալած Մխիթարյան միաբանության բազմաթիվ հայագետների շարքում իր ծանրակշիռ տեղն ունի բանասեր, պատմաբան, աշխարհագրագետ, խմբագիր Հայր Ղուկաս Ինճիճյանը (Ղուզիոս Միքայելյան)։ Նա իրավամբ Հայաստանի պատմական աշխարհագրության խոշորագույն հետազոտողներից է և նոր ժամանակներում հայր Ղևոնդ Ալիշանի հետ միասին արժանի է համարվելու հայ իրականության մեծ այդ դպրոցի հիմնադիրը։ Ի դեպ, եթե ինչպես գիտական, այնպես էլ լայն հանրության շրջանում հայր Ալիշանի անունը մեծապես ծանոթ է, ապա նույնը չի կարելի ասել նրանից չուրջ կես դար առաջ 18-րդ դարի վերջին և 19-րդ դարի սկզբին գործած ու հայագիտական հարուստ ժառանգություն թողած Ղուկաս Ինճիճյանի մասին[1]։

Ծնվել է Կ. Պոլսում 1758 թ. ադրիանուպոլսեցի Ինճիճի (մարգարտագործ) Հաջի Միքայելի որդու Պողոս Միքայելյանի ընտանիքում։ Նախնիների մասնագիտությունից էլ ընտանիքն ընդունել է Ինճիճյան ազգանունը։ Մայրը Տիրուհին մեծանուն պատմաբան հայր Միքայել Չամչյանի քույրն էր։ Անվիճելի է, որ թե հոգևոր-եկեղեցական և թե գիտական հարցերում Ինճիճյանը մշտապես կրել է քեռու ազդեցությունը։ Հենց հայր Մ. Չամչյանի խորհրդով 1770 թ. Պողոս Միքայելյանն իր ուշիմ որդուն ուղարկում է Մխիթարյան միաբանություն։ Մի քանի տարի անց 1774-ին Ինճիճյանը դառնում է Մխիթարյան միաբանության անդամ։

Հոգևոր-եկեղեցական ծառայության ընթացքում բուռն գործունեություն է ծավալում նաև Կ. Պոլսում։ Գործուն մասնակցություն է ունենում ժողովրդի մեջ հայ դիր և գրականություն տարածելու նպատակին կոչված և պոլսահայ մեծահարուստ Միքայել Զելեբի

---

[1] Հայագետ Նազարեթ Բերբերյանի պատկերավոր խոսքով՝ «Հայր Ղուկաս Ինճիճեան անվիճելիօրէն կը հանդիսանայ գլխաւոր ռահվիրաներէն մեկը 19-րդ դարու հայոց Ազգային Զարթօնքին» (տե՛ս **Նազարէթ Պէրպէրեան**, Հայր Ղուկաս Ինճիճեան. Միխիթարեան միաբանութեան բազմավաստակ ու մեծարժէք երախտաւորը. Ժամանակ, Կ.Պոլիս, 8 յուլիս 2015)։

Տյուզյանի նյութական աջակցությանն արժանացած «Արշարունեաց մխիթեան» ստեղծմանը: Կաթոլիկների նկատմամբ Օսմանյան կայսրությունում սկսված հալածանքների պատճառով վերադառնում է Վենետիկ, դառնում է Մխիթարյան միաբանության փոխառաջնորդ: Հայր Ղուկաս Ինճիճյանն իր մահկանացուն կնքում է 1833 թ.:

Նշանավոր հայագետ, հետագայում աբբահայր Ստեփանոս արքեպիսկոպոս Ագոնց Գյուվերին աշակերտելու չրջանում Ղուկաս Ինճիճյանի մոտ ծնվում է հետաքրքրությունը ինչպես Հայաստանի, այնպես էլ այլ երկրների աշխարհագրության նկատմամբ: Արդեն 1791 թ. Վենետիկում լույս է տեսնում հայր Ինճիճյանի առաջին «Տիտղոսիւն համառօտ հին եւ նոր աշխարհագրութեան» աշխատությունը: Աշխարհի, ինչպես և Հայաստանի համառոտ պատմաաշխարհագրական պատկերը ներկայացնող այս չափածո երկը մեծ հետաքրքրություն է առաջացնում, որի համար էլ չուտով մասնակիորեն թարգմանվում է իտալերեն ու ֆրանսերեն: Երեք տարի անց հրատարակվում է «Ամարանոց Բիւզանդեան» գիրքը, որը եզակի հետազոտություն էր Բոսֆորի և Դարդանելի նեղուցների, Մարմարա ծովի ջրային հոսանքների, երկրաբանական կառուցվածքի և այլնի մասին: Ինքնատիպ հրատարակություն էր նաև Ղուկաս Ինճիճյանի հաջորդ աշխատությունը՝ «Պատմութիւն կենդանեաց ի չորս կարգս բաժանեալ ի ցամաքային, ի ջրային, յերկակենցաղ և յօդային» (1801 թ.) վերնագրով:

Հայր Ղուկաս Ինճիճյանը ժամանակակիցների մեջ առանձնանում էր իր առաջադիմական հայացքներով: Պատահական չէ, որ 1799 թ. նա դառնում է Եվրոպայում հայկական առաջին, իսկ «Ազդարարիչ» հետո հայ իրականության մեջ երկրորդ «Տարեգրութիւն» պարբերականի (1799–1802 թթ.) հրատարակիչ-խմբագիրը: Ուշագրավ է, որ ինչպես «Տարեգրութիւնը», այնպես էլ նրա փակվելուց հետո Ինճիճյանի հրատարակած մյուս «Եղանակ Բիւզանդեան-Բազմավէպը» (1803–1820 թթ.) աշխարհաբարով լույս ընծայված առաջին հայկական պարբերականներն էին[2]: Այսինքն՝ ստեղծագործելով գրաբարով, որին նա տիրապետում էր կատարելապես, հայր Ղուկաս Ինճիճյանը ժամանակի հայ մտավորականների մեջ առաջիններից էր, ով հասկանալի պատճառներով նախապատվությունը տվեց ժողովրդին ավելի հոգեհարազատ դարձած աշխարհաբարին՝ դրանով

---

[2] Վերոհիշյալ պարբերականի մասին տե՛ս **Շտիկյան Ս.**, «Եղանակ Բյուզանդյան» տարեգիրքը. (Բանասիրական ճշգրտումներ), ՊԲՀ, 1966, թիվ 2, էջ 173–177:

իսկ դառնալով դրական արևմտահայերենի ջատագով անդրանիկ բանասերներից մեկը:

Շուտով մեկը մյուսի հետևից լույս տեսան Հայաստանի ու երկրագնդի այլ երկրների պատմական աշխարհագրությանը նվիրված «Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի» կոթողային շարքի տասնմեկ հատորները: Տարիների տիտանական աշխատանքի արդյունք այդ ինքնատիպ շարքի առաջին, հինգերորդ և վեցերորդ հատորները հեղինակել էր Հայր Ղ. Ինճիճյանը, իսկ մնացածները՝ Հայր Ստեփանոս Ագոնցը: Կարելի է անվարան պնդել, որ այդ աշխատությանն լույսընծայումը պատմական իրադարձություն էր ոչ միայն հայ, այլ նաև համաշխարհային աշխարհագրության ուսումնասիրության բնագավառում:

Պատահական չէ, որ հայրենապաշտ Ղուկաս Ինճիճյանի «Աշխարհագրութեան» շարքի առաջին հատորը, որը տպագրվեց Վենետիկում 1806 թ. և նվիրված էր Ասիա աշխարհամասին, ամբողջապես ընդգրկում էր Հայաստան աշխարհը: Նախ ընդհանուր գծերով ներկայացվում էր Ասիան, ապա մանրամասնորեն նկարագրվում համաշխարհային քաղաքակրթության մեջ կարևոր դեր ունեցած Հայաստան երկիրը:

Այդ հատորում ընթերցողը ծանոթանում է Հայոց աշխարհի աշխարհագրական դիրքին, սահմաններին, վարչական բաժանումներին, բնակչությանը, ժողովրդագրական տեղաշարժերին, էթնոկրոնական վերակերպումներին և այլն: Հեղինակը առանձնակի ուշադրություն է հատկացնում Օսմանյան կայսրության պաշտոնական բաժանումների և քրդական աշիրաթների՝ ցեղապետությունների կիսանկախ վիճակի պատճառով ստեղծված վարչական քաոսի վրա, որի պատճառով հատկապես տուժում էր հայությունը:

Աշխատության ամենամեծ արժանիքներից է այն, որ նրանում հստակ տրվում է հայության բռնի իսլամացման, այն է՝ թուրքացման ու քրդացման գործընթացը, Հայկական լեռնաշխարհը օտար էթնիկ խմբերով բնակեցնելու, հայերին հայրենի եզերքից դուրս մղելու սուլթանական քաղաքականությունը: Այդ ամենի պատճառով 19-րդ դարի սկզբին երբեմնի միատարր հայաբնակ Հայաստանն արդեն ուներ խայտաբղետ ժողովրդագրական նկարագիր. «Բնակիչք նորա որչափ ինչ դտանին յազգէս Հայոց, - գրում է Հայկական լեռնաշխարհի էթնիկ խճանկարի մասին Հայր Ինճիճյանը, - գրեթէ նոյնչափ դտանին և ի քրդաց. յետ սոցայ են օսմանեանք և թիւրք-

մանք. դտանին ի մեծ հայս նաև բազում եկզիտիք, և ի տեղիս տեղիս ասորիք, ...նաև վիրք ի հիւսիսակողմն մեծին հայոց. իսկ յոյնք սակաւք՝ և այն մանաւանդ ի փոքր հայս»[3]:

Հայաստանում ստեղծված բարդ ժողովրդագրական իրավիճակի գլխավոր պատճառներից մեկը, ըստ Ղուկաս վարդապետի՝ հարավից Հայկական լեռնաշխարհ քրդական ցեղերի զանգվածային ներհոսքն էր. «Գան այլուստ և այլ պէսպէս ցեղք վրանաբնակ քրդաց,- սարսափով դրում էր նա,- որ յամարայնի սիրուին ի լերինս նահանգին (Էրզրումի – Ա.Մ.), մանաւանդ ի մեծ գօտիս Պինկէօլայ»[4]:

Վերոհիշյալ էթնիկ իրավիճակը հեղինակի դիտարկմամբ ստեղծվել էր նաև այն պատճառով, որ օսմանյան իշխանությունների վարած ազգայնամոլ ճեռնարկումները ստիպել են չատ հայերի կրոնափոխ լինելու: Օրինակ՝ խոսելով Էրզրումի նահանգի Թորթում գավառի հայության ծանր իրավիճակի մասին հայր Ինճիճյանը մատնանշում է, որ այնտեղի բնակիչները «...ձանձրացեալք ի բռնութենէ և ի զրկանաց, դարձան առհասարակ ի կրօնս տաճկաց»[5]: Նույն իրավիճակն էր այլ գավառ-գավառակներում. Կամախի այսպես կոչված տաճիկները «...ըստ մեծի մասին դարձեալ են ի հայոց»[6]: Իսկ Բերդագրակ գավառակի «բնակիչք նոցա առհասարակ էին յազգէս հայոց, այլ ապա ըստ մեծի մասին դարձան ի տաճկութիւն և սակաւ մնացին ի քրիստոնէից»[7]:

Հայր Ինճիճյանը բազմաթիվ փաստեր է բերում Արևմտյան Հայաստանի երբեմնի բարգավաճ վիճակի և անհամար քրդական միջցեղային բախումների, պետական պաշտոնյանների կողմից կեղեքումների աղետալի հետևանքների մասին: Այսպես՝ Երզնկայի գավառն «յառաջադոյն ունէր 250 գիւղօրէս. այլ այժմ ի պատճառս կեղեքելոյ իշխանաց, բազում գիւղօրէք նորա լքեալ կան և անմարդաբնակ, և գիւղօրէք ինչ կործանեալք, կամ ըստ կիսոյն քայքայեալք»[8]: Բավական է նշել, որ 1762 թ. Մանազկերտի շրջանում քրդական միջցե-

---

[3] **Ինճիճեան Ղ.**, «Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի», հ. Ա, Վենետիկ, 1806, էջ 14–15:

[4] Նույն տեղում, էջ 64:

[5] Նույն տեղում, էջ 93:

[6] Նույն տեղում, էջ 101–102:

[7] Նույն տեղում, էջ 131–132:

[8] Նույն տեղում, էջ 98:

դային բախումների հետևանքով ոչնչացվել է 360 հայկական գյուղ[9]:

Էթնոդավանական վերակերպումների գործընթացները բացահայտելու տեսանկյունից հայր Ղուկաս Ինճիճյանի հետազոտություններն ունեն գիտաքաղաքական նշանակություն: Նրա ուսումնասիրությունները բերել են այն համոզման, որ կրոնափոխվելուց, դավանափոխվելուց կամ ազգափոխվելուց հետո հայ բնակչության մի ահռելի զանգված Հայաստանում շարունակել է պահպանել իր հայկական ինքնությունը: Անդրադառնալով Ախալցխայի նահանգում տեղի ունեցած էթնոդործընթացներին՝ Ղուկաս վարդապետը համոզված գրում է, որ տեղի թուրքերը՝ տաճիկները, սերում են հայերից ու վրացիներից: Բացի այդ, վրացիների մի մասն էլ ունի հայկական ծագում. «Գիւղօրէք այսր նահանգի սակաւ...: Բնակիչք նոցա ըստ մեծի մասին տաճիկք, դարձեալք գրեթէ առհասարակ կամ ի հայոց և կամ ի վրաց. են գիւղօրէք բնակեալք մինչև ցայժմ ի քրիստոնէից հայոց նաև ի վրաց, որք գրեթէ առհասարակ սերեալ երևին ի հայկազանց: Քանզի ի վերջին ժամանակս կործանելոյ տերութեան մերոյ՝ այս նահանգ եղև պատսպարան բազմութեան իշխանաց մերոց, նաև հասարակ ժողովրդեան, որք ապա սակաւ առ սակաւ սովորեալք ի լեզու ի բարս, նաև ոմանք ի ծէսս վրաց, փոխեցան յազգ նոցա»[10]:

Հայր Ղ. Ինճիճյանի ծառայություններից մեկն էլ ծպտյալ հայերի մի ստվար չերտի բացահայտումն էր, որոնք հայտնի էին մասնավորապես «կէսկէսներ» անունով: Պոնտոսի լեռների արևելյան շրջանում՝ Համշեն գավառում ապրող այդ հայության մի ստվար պանգված, որ դեռ 17-րդ դարում և 18-րդ դարի սկզբներին իսլամ էր ընդունել, այսօր էլ տասնյակ գյուղերում դեռ հայախոս է: «Համշէն: Բնակիչք երկրին յառաջագոյն հայ էին,- կարդում ենք «Աշխարհագրութիւնում»,- այլ ի յելս ժէ (17-րդ) դարուն և ի սկիզբն ժը (18-րդ) երրորդին առ հասարակ հանդերձ ամենայն շրջակայ գիւղօրէիւք դարձան ի տաճկութիւն սակս բռնութեան հարկապահանջութեան, բայց գտանին տակաւին ի նոսա և քրիստոնեայք...: Իսկ տաճիկք խօսին մինչև ցայժմ հայերէն..., պահեն պահս, և զայլ ծէսս և օրէնս քրիստոնէական հաւատոյ, յաճախեն յեկեղեցիս..., ոմանք

---

[9] Տե՛ս նույն տեղում, էջ 112:

[10] Նույն տեղում, էջ 123:

կէսկէս են հաւատովք, արտաքուստ միայն ցուցանելով գտաճկութիւն»[11]:

Բավարարվելով «Աշխարհագրութիւն...» աշխատության առաջին հատորի քննությամբ, նշենք որ ինչպես Ղուկաս վարդապետի, այնպես էլ Հայր Մանուէլեան Ագոնցի հեղինակած հատորները դարձան երկիր մոլորակի աշխարհագրության ու պատմության վերաբերյալ հայերենով գրված յուրօրինակ ու անփոխարինելի դասագրքեր և այսօր էլ շարունակում են մնալ որպես սեղանի գրքեր պատմական աշխարհագրությամբ զբաղվող մասնագետների համար:

Ինչպես տեսանք, վերոհիշյալ հատորում Հայր Ղ. Ինճիճյանը ցավով ներկայացնում էր 17-րդ դարից մինչև 19-րդ դարի սկիզբն ընկած ժամանակաշրջանում Հայաստանում տեղի ունեցած ոչ հայանպաստ ժողովրդագրական գործընթացները: Այդ ընթացքում նա հաճախ անդրադառնում էր նախորդ ժամանակներին՝ հիշելով Հայաստանի ընդարձակ տարածքն ու բարգավաճ վիճակը: Ուստի պատահական չէ, որ չուտով փորձառու աշխարհագրագետը ձեռնամուխ է լինում հին և միջնադարյան Հայաստանի պատմական աշխարհագրության վերաբերյալ աշխատությունների ստեղծմանը:

1822 թ. լույս է տեսնում Ղուկաս Ինճիճյանի նշանավոր մեկ այլ աշխատությունը՝ «Ստորագրութիւն հին Հայաստանեայց» վերտառությամբ: Հնությունների, ասորական, հայկական ու այլ աղբյուրների համադրությամբ հեղինակը ներկայացնում է Մեծ Հայքի պատմաաշխարհագրական նկարագիրը՝ բոլոր 15 նահանգ-աշխարհները՝ իրենց գավառներով, սահմաններով, օգտակար հանածոներով, բնակլիմայական պայմաններով, եկեղեցիներով ու վանքերով, հիշարժան պատմական իրադարձություններով, կատարում է տեղանունների ստուգաբանություն, տեղագրում բնակավայրերը և այլն:

Աշխարհագրագետը յուրաքանչյուր աշխարհի կապակցությամբ վկայակոչում է անգամ սկզբնաղբյուրներում առաջին հայացքից կարևորություն չներկայացնող ամեն մի տեղեկություն, առանձնացնում հատկապես տվյալ վարչական միավորին առավել բնորոշ

---

[11] Նույն տեղում, էջ 396: Հետագայում «կէսկէսների» մասին Ղ. Ինճիճյանի հետազոտությունները խորացրեց Մխիթարյան վարդապետ Հակովբոս Տաշյանը (տե՛ս **Տաշեան Յ.**, Հայ բնակչութիւնը Սեւ ծովէն մինչեւ Կարին, Վիեննա, 1921, **նույնի՝** Տայք դրացիք եւ Խոտորջոր, Վիեննա, 1978: «Կէսկէսների» մասին տե՛ս նաև **Մելքոնյան Ա.**, Էրզրում. Էրզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը 19-րդ դարի առաջին երեսնամյակին, Երևան, 1994, էջ 52–88:

երևույթները: Օրինակ՝ Վասպուրականի վերաբերյալ Հայր Ինճիճյանը գրում է. «Մեծ է քան զայլ ամենայն նահանգս Հայոց, և աթոռ առանձին թադաւորութեան և կաթողիկոսութեան և զի սեպհական է Արծրունեաց տոհմի, կոչի և Աչխարհ կամ երկիր Արծրունեաց»[12]: Հայրենասեր գիտնականն առանձնակի հպարտությամբ է գրում կենտրոնական աշխարհի՝ Այրարատի մասին՝ հիշելով պատմիչ Ղազար Փարպեցու խոսքերը. «Հասաք ի ստորագրել զվերջին նահանգ Մեծին Հայոց հոյակապ, հռչակաւոր եւ ականաւոր անուանեալի Ղազարայ»[13]:

Հատկանշական է, որ «Ստորագրութիւն հին Հայաստանեայց» աշխատությունը փաստորեն Հայաստանի աշխարհագրության ընդհանուր խորապատկերի վրա Հայոց հին ու միջնադարյան պատմության զուգահեռ շարադրանքն է: Զարմանք է առաջացնում ամեն մի նահանգի, գավառի, բնակավայրի աշխարհագրությունն ու պատմությունը ներկայացնելիս հեղինակի բծախնդիր վերաբերմունքը հնարավոր բոլոր աղբյուրների տվյալներն անպայման չրջանառելու, դրանք քննաբար օգտագործելու և ճշմարտությունը գտնելու հարցում: Ընթերցողի մոտ ինչպես այս, այնպես էլ այլ աշխատություններին բնորոշ ինճիճյանական այդ ոճը ընթերցողի մոտ առանձնակի հետաքրքրություն ու գրավչություն է առաջացնում: Օրինակ՝ երբ հեղինակը ներկայացնում է Վասպուրական աշխարհը, յուրաքանչյուր բնակավայրի հետ կապված շարադրում է Արծրունյաց թագավորության պատմությունը: Այսունիքի աշխարհագրությունը Ղուկաս վարդապետը չաղկապում է Սյունյաց, Այրարատինը՝ Արշակունյաց ու Բագրատունյաց հարստությունների պատմությանը: Նման մեթոդաբանությամբ հայրենասեր հեղինակն ընդգծում է Հայոց հին ու միջնադարյան պետականության փառքն ու հզորությունը:

Հայր Ղուկաս Ինճիճյանի աներևակայելի աշխատասիրությունը չուտով հրապարակ է հանում ևս մեկ ստվարածավալ աշխատություն՝ «Դարապատումի» ինը հաստատոր գրքերի շարքը (Վենետիկ, 1824–1828 թթ.), որը 18-րդ դարի երկրորդ կեսի, այսինքն՝ հեղինակի ապրած ժամանակաշրջանի համաշխարհային պատմության հայերեն առաջին բարձրորակ ու հանգամանալի չարադրանքն է: Ղ. Ինճիճ-

---

[12] Ինճիճեան Ղ., Ստորագրութիւն հին Հայաստանեայց. հ. Ա. Վենետիկ. 1822. էջ 156:

[13] Նույն տեղում. էջ 376:

յանն այդ վիճակարի հետազոտության նախաբանում նշում է, որ հայրենի պատմությունից զատ ամեն մի բանասեր մարդու համար խիստ չահեկան է նաև համաշխարհային պատմության իմացությունը: Հայր Ղուկասն այդ կապակցությամբ գրում է. «Սորայս բուսրեւտհմութեան արգասիք որչափ հարկաւորք և օգտակարք՝ նոյնչափ և առաւել պակասեալ գտանին յարամեանս մեր բարբառ, յորում հաղիւ է տեսանել զիւրոյ ազգին պատմութիւն, իսկ սակս այլոց ազգաց ընդ համօրէն աշխարհ սփռելոց՝ գրեթէ համակ վերջացեալ տեղեկութիւն, որ արդարեւ ցաւալի պակասութիւն ասասցի»[14]:

Զանդրադառնալով հայր Ղ. Ինճիճյանի բազմաթիվ ու բազմաբնույթ այլ աշխատություններին՝ համառոտ կանգ առնենք ևս մեկի վրա, որը լույս տեսավ հեղինակի մահվանից հետո՝ 1835 թ. և հանդիսացավ Հայաստանի պատմաաշխարհագրական, ազգագրական, բանասիրական, ժողովրդագրական բնույթի աշխատությունների ինքնատիպ ու ամփոփ հավելվությունը: Խոսքը «Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի» եռահատոր հետազոտության մասին է:

Ի տարբերություն հայր Ինճիճյանի այլ աշխատությունների, «Հնախօսութեան...» մեջ պատմաաշխարհագրական հարցադրումներից բացի փաստորեն կարելի է գտնել Հայաստան աշխարհի հետ կապված ամեն տեսակ նյութ: Հեղինակը հանգամանորեն անդրադառնում է բազմալեզու աղբյուրներում Հայոց աշխարհի բոլոր անվանումներին (Հայք, Հայաստան, Թորգոմայ տուն, Հաբեթեան նահանգ, Արամեան նահանգ, Դրուց աշխարհ, Արմենիա, Արամայ երկիր, Այրարատ և այլն), պատմական սահմաններին, լեռնագրությանն ու ջրագրությանը, տնտեսությանը, մարդկանց կենցաղին և այլն: Եթե նախորդ երկերում Ղ. Ինճիճյանը ժողովրդագրական խնդիրները շոշափում էր հարևանցիորեն, ապա այժմ առանձին բաժին է հատկացնում բնակչության տեղաբաշխման, էթնիկ կազմի, տեղաշարժերի և այլ հարցերին: Առաջին հատորի իններորդ և տասներորդ գլուխները, որոնք համապատասխանաբար վերնագրված են «Բնակիչք Հայաստանյայց» և «Սակաւամարդութիւն բնակչաց», նվիրված են Հայաստանի պատմական ժողովրդագրությանը և ամբողջապես գիտական նորույթ են: Հետազոտողն ուշադրության է արժանացնում հնագույն ժամանակներից Մեծ Հայքում տեղի ունե-

[14] **Ինճիճեան Ղ.**, Դարապատում. Աշխարհամատ կամ ընդհանուր պատմութիւն, հ. I, Վենետիկ, 1824, էջ 5:

ցած ժողովրդագրական ամեն մի տեղաշարժ, քննության է ենթարկում օտար էթնիկ տարրերի ներթափանցման կամ հայերի արտագաղթի վերաբերյալ յուրաքանչյուր դրվագ:

Երկրորդ հատորը վերաբերվում է հայկական թագավորությունների ու իշխանությունների պատմությանը, իսկ երրորդը՝ հայոց լեզվի, դպրության, արվեստի, կրոնի, եկեղեցու հարցերին:

Պատմական ժողովրդագրության հարցերը վերլուծելիս Ղուկաս վարդապետը նշում է, որ Հայաստանի աշխարհագրական դիրքի պատճառով երկրի բնակչությունը մշտապես շարժման մեջ է եղել. բազմաթիվ օտար ժողովուրդներ ու ցեղեր (փյունիկացիներ, ասորեստանցիներ, հրեաներ, մարեր, պարսիկներ, սկյութներ, ալաններ, ճաներ, քրդեր, կայսիկներ, ութմանիկներ և այլք), որոնց ամենայն բծախնդրությամբ անդրադարձ է կատարվում, անընդհատ ներխուժել են Հայոց երկիր, բնակություն հաստատել այնտեղ կամ հայությանը բռնագաղթեցրել իրենց բնօրրանից: Այդուհանդերձ, Հայոց լեռնաշխարհը շարունակել է մնալ գերազանցապես հայաբնակ և հայալուն: Բանն այն է, որ Հայաստանը, ըստ հայր Ինճիճյանի՝ ունի աստվածային ծնունդ. առաջին անգամ այնտեղ՝ դրախտում, մարդ արարածն է առաջացել, երկրորդ անգամ՝ համաշխարհային ջրհեղեղից հետո ոչնչացումից վրկվել ու վերակենդանացել է մարդկային հասարակությունը. «Պատմութիւն առաջին բնակութեան Հայաստանեայց սկսանի յառաջին բնակութենէ համօրէն մարդկային ազգի. Զի Աստուած կամելով ընտրել բնակարան քաջադէպ առաջին մարդոյն Ադամայ զոր ստեղծ, զՀայաստան ընտրեաց»[15]:

Հեղինակն առաձնակի ցավով է գրում գաղթականության մասին, որը նա համարում է Հայոց երկրի «սակաւամարդութեան» գլխավոր պատճառը: Հատկանշական է, որ բոլոր օտար նվաճողների արշավանքների մեջ Հայր Ինճիճյանն ամենաաղետալին համարում է 11-րդ դարում սկսված թուրքականը, որը նա անվանում է պարսկական՝ նկատի ունենալով սելջուկ-թուրքերի Պարսկաստանից Հայաստան ներթափանցելու հանգամանքը. «Դարն մետասաներորդ, որ է ժամանակ ի վեր երևելոյ Պարսից Տուղրիլեանց՝ եղև արդարեւ դար կործանման տէրութեան մերոյ և ցիրուցան սփռելոյ ազգիս մերոյ»[16]:

---

[15] **Ինճիճեան Ղ.**, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, հ. I, Վենետիկ, 1835, էջ 244:

[16] Նույն տեղում, էջ 339:

Ամփոփելով վերոնշյալը՝ կարող ենք հաստատապես պնդել, որ 18-րդ դարի վերջին և 19-րդ դարի սկզբին Հայր Ղուկաս Ինճիճյանը, չարունակելով Մխիթար Արբահոր ստեղծած ավանդույթները, Հայր Միքայել Չամչյանցի հետ միասին նոր բարձրության հասցրեց հայ պատմագիտությունը և իր հերթին դրեց նոր ժամանակներում Հայաստանի պատմական աշխարհագրության և ժողովրդագրության բնագավառի հետազոտությունների հիմքերը: Վերջիններիս թողած հարուստ գիտական ժառանգությունը Մխիթարյան միաբաններից Հայր Ղևոնդ Ալիշանին 19-րդ դարի երկրորդ կեսին հնարավորություն տվեց Հայագիտության այդ բնագավառների ուսումնասիրությունը հասցնել դասական մակարդակի:

GHUKAS INCHICHYAN'S CONTRIBUTION IN THE STUDY OF HISTORICAL GEOGRAPHY AND DEMOGRAPHY OF ARMENIA

Summary

During the 300-year-long fruitful activity on San Lazzaro island in Venice, the Mekhitarist Congregation has given many eminent Armenian scholars. Father Ghukas Injijian (1758–1833) is distinguished among them with his outstanding contribution in the study of historical, geographical and demographic issues of Armenia. Among his dozens of studies the first volume of "The Geography of Four Parts of the World" is especially notable, concerning Armenia. Father Injijian is truly the founder of the Armenian historical geography and demography of new times.

Archimandrite Ghukas was also the founder of the first Chronicle magazine in Europe (the second one in Armenian reality) – the first Armenian magazine in modern Armenian language.

Վենետիկի Մխիթարյան միաբանություն – 300, միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Երևան, << ԳԱԱ պատմ. ինստ, 2018, 665 էջ, էջ 24–36:

1918–1920 ԹԹ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՄԱՆ ԵՎ ԿԱՅԱՑՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

(ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ)

1918–1920 թթ. Հայաստանի Հանրապետության պատմության վերաբերյալ ստեղծվել է գիտաքաղաքական բնույթի ահռելի գրականություն: Այդուհանդերձ, այսօր էլ կան հիմնահարցեր, որոնց ուսումնասիրությունն ունի ոչ միայն զուտ գիտական, այլ նաև ճանաչողական, քաղաքական ու գործնական մեծ նշանակություն:

Ներկայումս նկատի առնելով թուրք-ադրբեջանական պատմագրության կողմից խնդրո առարկա հիմնահարցի ոլորտում կեղծարարության օրեցօր աճը, արդիական է նկատվում մասնավորապես հետևյալ հարցերի քննությունը.

– Հանրապետության ստեղծման պատմական և գաղափարաքաղաքական նախադրյալները

– Նորաստեղծ պետության մեջ ժողովրդավարական գործընթացները

– Կառավարության վարած քաղաքականությունը

– Առաջին Հանրապետության դասերը, պետականության շարունակականության խնդիրը երեք հանրապետությունների (1918–1920, 1921–1991 և 1991–2018 թթ.) օրինակով:

Այսօր էլ գիտաքաղաքական գրականության մեջ շարունակվում է չընդունվել այն թյուր տեսակետը, թե իբր 1918 թ. մայիսին հայ ժողովուրդը ոչ թե պայքարի շնորհիվ վերականգնեց պետականությունը, այլ Ռուսական կայսրության փլուզման պայմաններում դատապարտվեց անկախության, ավելին՝ այն տրվեց օսմանյան իշխանությունների բարի կամքի հետևանքով: Բայց իրականությունն այն է, որ հայ ժողովուրդն իր անկախությունը վերանվաճեց ազգային-ազատագրական հուժկու պայքարի շնորհիվ:

Այսպես՝ 1918 թ. փետրվարից, օգտվելով Կովկասյան ճակատից ռուսական զորքերի հեռանալուց, օսմանյան զորքերն անցան հակահարձակման և կարողացան մարտ ամսի ընթացքում վերագրավել Արևմտյան Հայաստանի մի շարք գավառներ՝ Երզնկան, Դերջանը, Էրզրումը, Սարիղամիշը, ապրիլին՝ Կարսը: Նման պայմաններում Վանի նահանգային վարչությունում դեռ 1915 թ. մայիս-հունիսին

ձևոք բերած փորձառությունն Արամ Մանուկյանին հուշում էր, որ օր առաջ Թիֆլիսի հայոց ազգային խորհուրդը, որը 1917 թ. աշնանից վերածվել էր հայ քաղաքական կյանքի ղեկավարման լուրջ կենտրոնի, պարտավոր էր անհապաղ զբաղվել Հայաստանում բնակչության պաշտպանության և այնտեղ պետականության հիմքեր ստեղծելու գործով: Ուստի Ազգային խորհրդից ստանալով դիվտատորական լիազորություններ՝ նա տեղափոխվեց Երևան, ստանձնեց տեղի ազգային խորհրդի ղեկավարի պարտականությունները, կարճ ժամանակում կարգուկանոն հաստատեց երկրամասում, կազմակերպեց զինական ուժեր: Ուստի և հիրավի դարձավ ապագա Հայաստանի Հանրապետության հիմնադիրը[1]:

Ապրիլի 9 (22)-ին Օսմանյան կայսրության ճնշման տակ Անդրկովկասի օրենսդիր մարմինը՝ Սեյմը որոշում ընդունեց երկրամասը Ռուսաստանից անջատելու մասին: Սեյմի հայ պատվիրակները, որոնք ունեին թուրքերի դեմ միասնակ մնալու մտահոգությունը, կատարեցին անկախության ուղղությամբ վճռական քայլ՝ նույնպես քվեարկելով երկրամասը Ռուսական կայսրությունից անկախ Հանրապետություն հռչակելու բանաձևի օգտին: Ակնհայտ է, որ հայ դործիչների համար ևս անկախանալու տեսլականը օրեցօր դառնում էր օրակարգային խնդիր:

Մայիսի 15-ին Ալեքսանդրապոլը գրավվեց թուրքական զորքերի կողմից, և Արարատյան դաշտ ներխուժած թշնամին լուրջ սպառնալիք ստեղծեց ինչպես արևելահայության, այնպես էլ Արևելյան Հայաստանում ծվարած հարյուր հազարավոր արևմտահայ գաղթականների համար: Ուստի հայության առաջնակարգ խնդիրը թշնամուն կանգնեցնելն էր, ինչին էլ նա լծվեց ռազմաճակատի ողջ երկայնքով՝ Ախալցխայից մինչև Շարուրի դաշտ:

1918 թ. մայիսյան հերոսամարտերի կապակցությամբ հայ պատմագրությունն առ այսօր գերազանցապես անդրադարձել է Սարդարապատի, Բաչ Ապարանի և Ղարաքիլիսայի կռիվներին, սակայն նոր ուսումնասիրությունները բերում են այն համոզման, որ դրանք սկսվել են դեռևս 1917 թ. վերջերից: Դեկտեմբերից 6 ամիս շարունակ նախ՝ տեղի թուրք-մեսխեթցիների, ապա՝ կանոնավոր օսմանյան

---

[1] Երևանի նահանգում հայոց պետականության վերականգնման գործում Արամ Մանուկյանի բացառիկ դերի մասին հանգամանորեն տե՛ս **Ասլյան Ա.**, Արամ Մանուկյան. կյանքը և գործը, Ե., 2005:

զորքերի դեմ ընթացել էին Ախալցխայի ու Հարակից հայկական, ինչպես և վրացական գյուղերի դիմադրական մարտերը Զորի Զորյանի գլխավորությամբ[2]: Մարտ-մայիս ամիսներին տեղի էին ունեցել Ախալքալաքի գավառի, մասնավորապես Դամալա, Կարզախ և Սաթխա գյուղերի ինքնապաշտպանական կռիվները[3]: Թուրքական ներխուժման դեմ հայրող մարտեր են մղել նաև Շիրակի դաշտի բնակիչները, որոնց միացել են հայտնի կամավորական Պանդուխտի զինյալները[4]: Տեղի թաթարների ոտնձգությունները կարողացել էին սանձել նաև Արարատյան դաշտի հարավային հատվածի՝ Ղամարլուի (այժմ՝ Արտաշատ) հայկական ինքնապաշտպանական ուժերը: Այնպես որ մինչև մայիսի վերջին տասնօրյակը տեղի ունեցած վերոհիշյալ ծանր մարտերը զգալիորեն թուլացրել էին արշավող թուրքական զորքերին ու նրանց միացած տեղական ավազակային ջոկատներին և նախապատրաստել հայկական զորքերի հաղթանակները Սարդարապատում, Բաշ Ապարանում ու Ղարաքիլիսայում:

1918 թ. մայիսին Թովմաս Նազարբեկյանի, Մովսես Սիլիկյանի, Դանիել-բեկ ու Պողոս-բեկ Փիրումյանների, Գարեգին Նժդեհի, Դրոյի, Ա. Բեյ Մամիկոնյանի, Ն. Ղորղանյանի և տաղանդավոր այլ զորավարների գլխավորությամբ մայիսյան հերոսամարտերում հայ զորականների ու աշխարհազորի տարած հաղթանակների չնորհիվ հնարավոր եղավ կասեցնել թուրքական զորքերի առաջխաղացումը դեպի Արևելյան Հայաստանի խորքերը և խափանել հայության վերջնական բնաջնջման թուրքական ծրագիրը: Այդ համաժողովրդական պայքարին մասնակցություն ունեցան հայ ժողովրդի բոլոր խավերը: Մայիսյան մարտերին մասնակցեցին հեծյալ դասակի հրամանատար, ապագա մարշալ Հովհ. Բաղրամյանը, լեզվաբան Գր. Ղափանցյանը, գրող Ա. Բակունցը, Գարեգին արք. Հովսեփյանի գլխավորած հոգևորականների ջոկատը: Կռիվներում աչքի ընկան այլազգի բազմաթիվ զինվորականներ՝ ռուսներ Վ. Պերեկրյոստովը, Ն. Կլիչը, Ա. Շնեուրը, հույն Վլ. Սակիլարին և ուրիշներ:

---

[2] Ախալցխայի ինքնապաշտպանության մասին մանրամասն տե՛ս **Սիմոնյան Ե.,** Ախալցխան կրակե օղակում, Ե., 2000:

[3] Տե՛ս **Սանոսյան Ա.,** Ախալցխայի և Ախալքալաքի 1918 թ. ինքնապաշտպանությունը, Ե., 1992 և **Մելքոնյան Ա.,** Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դ. առաջին քառորդին, Ե., 2003, էջ 271–284:

[4] Տե՛ս 1918 թ. Մայիսյան գոյապայքարի պատմության նոր էջ, Ե., 2005, էջ 54–85:

Պատահական չէ, որ վերջին տասնամյակներում հայ պատմագրությունը զգալիորեն վերանայել է իր մոտեցումները 1918 թ. մայիսի վերջին Հայաստանի անկախության վերականգնման գործում ստեղծված նախադրյալների կապակցությամբ՝ միանշանակ դրանում կարևորելով հայ ժողովրդի մղած հերոսական պայքարի համահայկական բովանդակությունը: Հետևապես մեկընդմիշտ պետք է մոռացության տալ այն թյուր կարծիքը, թե անկախությունը հայ ժողովրդին տրվել է սկուտեղի վրա, այն էլ թուրքերի բարի կամքի արդյունքում:

Ինչպես հայտնի է, մայիսի սկզբներից լիովին անկախանալու և անփակաձնությունը՝ վերականգնելու նպատակով վրաց քաղաքական շրջանակները տարածաշրջանում գտնվող գերմանացի գեներալ Ֆոն Լոսովի հետ իրենց չփումներն ավելի ինտենսիվ դարձրեցին և, ի վերջո, նույն ամսի 26-ին հայտարարեցին Անդրկովկասյան սեյմի լուծարման և Վրաստանի անկախության հռչակման մասին: Հաջորդ օրը նրանց օրինակին հետևեցին կովկասյան թաթարները: Մայիսի 28-ին Հայոց ազգային խորհուրդն անկախության ուղղությամբ լուրջ քայլ կատարեց՝ պատվիրակություն ուղակելով Բաթում թուրքերի հետ բանակցելու նպատակով: Մայիսի 30-ին ընդունվեց Հայաստանի անկախության հռչակագիրը, որը գրված էր Նիկոլ Ադբալյանի ձեռքով:

Հայոց պետականության վերականգնման ու ամրապնդման գործում մեծ դերակատարություն ունեցավ Հայ առաքելական եկեղեցին Գևորգ Ե Ամենայն Հայոց կաթողիկոսի գլխավորությամբ: Ինչպես Մայիսյան հերոսամարտերին, այնպես էլ Հայոց նորօրյա պետականաշինության գործընթացին իրենց գործուն մանակցությունը բերեցին հայաստանաբնակ եզդիները Ուսուբ բեկ Թեմուրյանի (ՀՀ խորհրդարանի անդամ) և Ջհանգիր աղայի առաջնորդությամբ:

1918 թ. մայիսի 28-ով սկսվող Հայաստանի Հանրապետության (1918–1920) պատմության փուլը նշանավորվում է ոչ միայն անկախության վերականգնումով, այլ նաև իր վարչական կառուցվածքով ժողովրդավարական՝ խորհրդարանական Հանրապետության ստեղծումով[5]: Ընդամենը երկուսուկես տարիների ընթացքում Առաջին

---

[5] Տե՛ս Hovannisian R.G., The Republic of Armenia, vol. I–IV, Berkeley, Los Angeles, London, 1971–1996, Հակոբյան Ա., Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918–1920 թթ.), Ե., 2005:

Հանրապետությունը ձեռք է բերում անկախ պետականության բնորոշ բոլոր հատկանիշները՝ տարածք, իշխանության մարմիններ, բանակ, միջազգային ճանաչում և այլն: Այդ գործում անգնահատելի դեր ունեցան վարչապետներ Հովհ. Քաջազնունին, Ալեքսանդր Խատիսյանը, Համո Օհանջանյանը, Սիմոն Վրացյանը, ազգային-պետական գործիչներ Դրոն, Ավետիս Ահարոնյանը, Աբրահամ Գյուլխանդանյանը, Լևոն Շանթը, Վահան Թեքեյանը, Սամսոն Հարությունյանը, Խաչատուր Կարճիկյանը, Նիկոլ Աղբալյանը, Ռուբեն Տեր-Մինասյանը և այլք:

Անկախության հռչակումից հետո առաջնահերթ խնդիրներից մեկն իշխանության մարմինների ստեղծումն էր: Սկզբում իշխանության ժամանակավոր գործառույթներն իրականացնում էր Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը, որը, թուրքերի կողմից ճանապարհներին հարուցած արգելքների պատճառով, ինչպես և այլ հանդամանքների բերումով, չէր կարողանում Վրաստանից տեղափոխվել Երևան: Հայաստանում իշխանության ղեկը շարունակում էր մնալ Երևանի ազգային խորհրդի ձեռքում:

1918 թ. հուլիսի 19-ին Ազգային խորհուրդը ժամանեց Երևան: Թիֆլիսի և Երևանի Ազգային խորհուրդների, քաղաքական կուսակցությունների համաձայնությամբ կազմվեց իշխանության բարձրագույն մարմին՝ Հայաստանի խորհուրդ (պառլամենտ, խորհրդարան), որի մեջ մտան ազգային խորհուրդների, տարբեր կուսակցությունների, անկուսակցականների, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ, ընդամենը՝ 46 հոգի: Հուլիսի 24-ին հրապարակվեց կառավարության կազմը. վարչապետ՝ Հովհ. Քաջազնունի, ներքին գործերի նախարար՝ Արամ Մանուկյան, արտգործնախարար՝ Ալեքսանդր Խատիսյան, ֆինանսների նախարար՝ Խաչատուր Կարճիկյան, զինվորական նախարար՝ գեներալ Հովհաննես Հախվերդյան և արդարադատության նախարար՝ Գրիգոր Տեր-Պետրոսյան:

Օգոստոսի 1-ին Երևանում հանդիսավորությամբ բացվեց Հայոց առաջին պառլամենտի՝ խորհրդի (խորհրդարանի) անդրանիկ նստաշրջանը: Խորհրդի նախագահ ընտրվեց Ավետիք Սահակյանը (Հայր Աբրահամ): Նստաշրջանը որոշում ընդունեց երկիրը ծանրագույն վիճակից դուրս բերելու ուղղությամբ չուտափույթ քայլեր ձեռնարկելու մասին: Մինչև հիմնական օրենքի՝ սահմանադրության ընդունումը, որոշվեց ժամանակավորապես առաջնորդվել ցարական Ռուսաստանի հավաք օրինաց օրենքների ժողովածուով: Մինչև տա-

ընվերջ բարելավվեց դատական համակարգը: Ստեղծվեց երդվյալ ատենակալների դատարան:

1919 թ. դեկտեմբերի 26-ին խորհրդարանն ընդունեց կարևոր որոշում՝ հայոց լեզուն պետական ճանաչելու մասին: Գործավարությունը բոլոր հիմնարկներում այդուհետ կատարվելու էր հայերենով: Ընդունվեց պետական դրոշը՝ եռագույնը, որը պետք է բարձրացվեր պետական կառավարման մարմինների շենքերի վրա: Ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանի և նկարիչ Հակոբ Կոջոյանի կողմից ներկայացվեց Հանրապետության զինանշանը: Հանրապետությունում իբրև պետական հիմն գործածվում էր Մեր հայրենիքը: Սահմանվեցին չքանշաններ, տոներ: Հայրենիքին ծառայության համար, Վարդան զորավար և այլ չքանշաններ ունենալու մասին որոշումներ ընդունվեցին: Սկսվեց հայրենադարձությունը:

1919 թ. հունիսի 21–23-ին անցկացվեցին ընտրություններ՝ 366 հազար ընտրողների, քաղաքական 7 կուսակցությունների մասնակցությամբ: Ընտրելու իրավունք ստացան 20 տարին լրացած բոլոր քաղաքացիները՝ անկախ սեռից, ազգային ու կրոնական պատկանելությունից: Ընտրության իրավունք վերապահվեց նաև արևմտահայ գաղթականությանը: Խորհրդարանի 80 անդամներից 72-ը դաշնակցականներ էին: Ընտրվածներից երեքը կանայք էին: 1919 թ. օգոստոսի 1-ին բացվեց նորընտիր խորհրդարանը, որը հաստատեց նոր կառավարության կազմը վարչապետ Ալ. Խատիսյանի ղեկավարությամբ:

Հանրապետության կառավարությունը մեծ ուշադրություն հատկացրեց բանակի ամրապնդման հարցին: Հին բանակը, որի կորիզը հայկական կորպուսն էր, այլևս չէր համապատասխանում ժամանակի ոգուն, ուստի կազմացրվեց և նոր՝ 20–25 տարեկանների զորահավաքի հիման վրա կազմվեց հայկական դիվիզիան՝ Մովսես Սիլիկյանի հրամանատարությամբ: Մինչև 1920 թ. բանակի թիվն իր 10 դնդերում հասավ 25 հազարի: Սևանում հիմք դրվեց ռազմական նավատորմին, որի առաջնեկը դարձավ «Աչոտ Երկաթ» ռազմանավը:

Հայաստանն իր դիվանագիտական ներկայացուցչությունները բացեց չորջ երկու տասնյակ երկրներում: Արշակ Ջամալյանը դարձավ ՀՀ ներկայացուցիչը Վրաստանում, Միքայել Վարանդյանը՝ Իտալիայում, Ավետիս Ահարոնյանը՝ Ֆրանսիայում, Հովսեփ Արղությանը՝ Պարսկաստանում: 1920 թ. հունվարի 23-ին ստացվեց Անգլիայի արտգործնախարար լորդ Քերզոնի հեռագիրը, որում աս-

վում էր, որ Անտանտի երկրների հրավիրած Փարիզի վեհաժողովը որոշել է ճանաչել Հայաստանի անկախությունը: Այդ լուրը երևանում նշանավորվեց 101 թնդանոթային զարկերով: 1920 թ. ապրիլի 24-ին Հայաստանը ճանաչվեց ԱՄՆ-ի կողմից. Արմեն Գարոն նշանակվեց այնտեղ հանրապետության ներկայացուցիչ: Հայաստանն ունեցավ նաև կին-դիվանագետ՝ Դիանա Աբգարը, որն իր գործունեությունն սկսեց Հեռավոր Ճապոնիայում:

Հայաստանի առաջին Հանրապետությունը ծնվել էր ընդամենը 12 հազ. քառ. կմ-ի վրա: Սակայն նրա տարածքն աստիճանաբար ընդարձակվեց, երբ պատերազմում Թուրքիան պարտություն կրելով, 1918 թ. հոկտեմբերի 30-ին Մուդրոսում Անտանտի երկրների հետ կնքած զինադադարով կապիտուլացիայի ենթարկվեց: Թուրքերը պարտավորվեցին իրենց զորքերը հետ քաշել մինչև նախապատերազմյան՝ 1914 թ. սահմանները:

Արդեն 1919 թ. գարնան ընթացքում Հանրապետությունն իր մեջ ներառեց Կարսի մարզը, Նախիջևանը, 1920 թ. Արցախը՝ չուրջ 60–70 հազ. կմ տարածքով:

Առաջին Հանրապետության պատմության վիճահարույց խնդիրների մեջ այսօր էլ կարելի է առանձնացնել երկրի իշխանությունների վարած արտաքին քաղաքականության հիմնահարցը: Այժմ էլ պետության ղեկավարների հասցեին հնչում են մեղադրանքներ երկրի քաղաքական կողմնորոշման հարցում նախապատվությունը Ռուսաստանի փոխարեն արևմտաեվրոպական երկրներին տալու համար, որն էլ նկատվում է Հանրապետության տարածքային կորուստների ու կործանման գլխավոր պատճառներից մեկը: Սակայն նման կարծիք հայտնողները մոռացության են տալիս ժամանակի գործոնը, այն է՝ պատմականության սկզբունքը: Նախ՝ տվյալ ժամանակաշրջանում միասնական Ռուսաստան չկար: Բացի կենտրոնական խորհրդային Ռուսաստանից, կային բազմաթիվ ռուսական հակախորհրդային կազմավորումներ (Դենիկինի, Կոլչակի, Վրանգելի և այլոց ստեղծած պետական կազմավորումները), որոնց մի մասի հետ Հայաստանի Հանրապետությունը հաստատել էր բազմապիսի կապեր՝ միաժամանակ չմոռանալով քայլեր կատարել Խորհրդային Ռուսաստանի հետ հարաբերություններ ստեղծելու ուղղությամբ[6]:

---

[6] 1918–1920 թթ. ՀՀ և Ռուսաստանի ոչ խորհրդային կազմավորումների փոխհարաբերությունների մասին մանրամասն տե՛ս **Պետրոսյան Գ.**, Հայաստանի Հան-

Ինչ վերաբերում է հանրապետության ղեկավարների «արևմտամետությանը», ապա այն թելադրված էր ժամանակի իրողություններով. Անտանտի երկրները հաղթական կողմ էին և Առաջին աշխարհամարտից հետո ինչպես Եվրոպայում, այնպես էլ աշխարհում եղանակ ստեղծող հիմնական ուժն էին, որն էլ չռայլ խոստումներ էր տալիս Հայկական հարցը Հայաստանի երկու հատվածների միավորման ճանապարհով իրականացնելու խնդրում:

Հատկանշական է, որ Առաջին աշխարհամարտում Օսմանյան կայսրության պարտությունը պետականության ստեղծման հույսեր արթնացրեց նաև կիլիկիահայության շրջանում: Ստանալով հայ ազգային այլ կուսակցությունների և քաղաքական ուժերի համաձայնությունը 1920 թ. օգոստոսի 4-ին հնչակյան հայտնի գործիչ Միհրան Տամատյանի գլխավորությամբ Հայոց ազգային միության անդամները հռչակեցին Կիլիկիայի «անկախ քրիստոնեական հանրապետությունը»[7]: Սակայն Ֆրանսիական ղեկավարական իշխանությունները չճանաչեցին Տամատյանի «կառավարությունը», զենքի ուժով ցրեցին-այն և սկսեցին բռնություններ գործադրել կիլիկիահայության նկատմամբ:

Therefore, having received dictatorial powers from the National Council, he moved to Yerevan, assumed the duties of the head of the local national Council, established order in the region within a very short period of time, organized the military forces. Thus, he truly became the founder of the future Republic of Armenia[1].

The legislative body of Transcaucasia (the Seim), under the pressure of Turkey, adopted the decision on secession of the region from Russia. The Armenian delegates of the Seim, in fear of being left alone against the Turks, made a decisive step towards independence, and voted in favor of the resolution on the Declaration of the region as a Republic independent from the Russian Empire. It is obvious that day by day the issue of independence was becoming an agenda for the Armenian leaders.

On May 15, Alexandropol was captured by the Turkish troops. The enemy that invaded Ararat valley had created a serious threat for both Eastern Armenians and hundreds of thousands of Western Armenian refugees who had taken refuge in Eastern Armenia. Therefore, the primary task of the Armenians was to stop the enemy, and they started along the entire front line from Akhaltsikhe to the Sharour plain.

In connection with heroic battles the May in 1918, the Armenian Historiography mainly refers to the battles for Sardarapat, Bash Aparan and Gharakilisa. However, recent investigations have led to the conclusion that they began in 1917.

Beginning from December, for 6 months the resistance battles against the Meskhetian Turks and regular Ottoman troops continued in Akhaltsikhe and the neighboring Armenian and Georgian villages under the leadership of Zori Zoryan[2]. In March-May, defensive battles took place in the province of

---

[1] On the exclusive role of Aram Manukyan in the restoration of the Armenian statehood in the province of Yerevan, see in **Ասլյան Ա.**, Արամ Մանուկյան. կյանքը և գործը, Ե., 2005:

[2] See more about Akhaltsikhe's self-defense in **Սիմոնյան Ե.**, Ախալցխան կրակե օղակում, Ե., 2000:

Akhalkalaki, in particular in the villages of Damala, Karzakh and Satkha[3]. Successful battles against the Turkish invasion were also fought by the inhabitants of the Shirak plain, joined by the fighters of the famous volunteer Pandoukht[4]. The abuses of the local Tatars were also curbed by the Armenian self-defense forces of Ghamarlu (now Artashat) – the southern part of Ararat valley. Thus, the aforementioned heavy fightings, continuing until the end of May, significantly weakened the threatening Turkish troops and local gangs that joined them and prepared the victories of the Armenian troops in Sardarapat, Bash Aparan and Gharakilisa.

In May 1918, thanks to the victories in the heroic battles for Sardarapat, Bash Aparan and Gharakilisa, the Armenian soldiers and people's militia led by Tovmas Nazarbekyan, Movses Silikyan, Daniel-bek and Pogos-bek Pirumyants, Garegin Nzhdeh, Dro, A. Bey-Mamikonyan, N. Ghorghanyan and other talented military leaders managed to stop the advance of the Turkish troops deep into Eastern Armenia and disrupt the Turkish program of destruction of the Eastern Armenians and the final extermination of hundreds of thousands of Western Armenian refugees who had found shelter in Ararat valley and elsewhere. All strata of the Armenian people participated in this national struggle. The commander of the cavalry platoon, the future Marshal H. Baghramyan, linguist H. Ghapantsyan, writer A. Bakounts, Archbishop Garegin Hovsepyan, leading the detachment of clergymen took part in the May battles. The servicemen – representatives of other nationalities, the Russians - N. Perekrestov, N. Klich, A. Shneur, the Greek Sakilari, many Yezidis and others distinguished themselves in the battles.

It is no coincidence that in recent decades, the Armenian Historiography has significantly revised its approaches in connection with the prerequisites for the restoration of Armenia's independence at the end of May 1918, clearly emphasizing the pan-Armenian essence of the heroic struggle of the Armenian people. Therefore, once and for all, this erroneous opinion that the

---

[3] **Սանոյան Ա.**, Ախալցխայի և Ախալքալաքի 1918 թ. ինքնապաշտպանությունը, Ե., 1992 and **Մելքոնյան Ա.**, Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դ. առաջին քառորդին, Ե., 2003, էջ 271–284:

[4] 1918 թ. Մայիսյան գոյապայքարի պատմության նոր էջ, Ե., 2005, էջ 54–85:

independence of the Armenian people was presented on a silver platter, by the good will of the Turks, should be consigned to oblivion.

Since early May, the Georgian political circles, in order to achieve complete independence and restore their own statehood, intensified their contacts with the German General von Losov in the region and, ultimately, on the 26th of the same month announced the dissolution of the Transcaucasian Seim and the declaration of independence of Georgia. The Caucasian Tatars followed their example. On May 28, the National Council of Armenia made a serious step towards independence by sending a delegation to Batumi for negotiations with the Turks. The Declaration of Independence of Armenia, written by Nikol Aghbalyan, was adopted on May 30.

The Armenian Apostolic Church headed by Catholicos of All Armenians Gevorg V, the Prime Ministers Hovhannes Kajaznuni, Alexander Khatisyan, Hamo Ohanjanyan, and Simon Vratsyan, national and state figures Dro, Avetis Aharonyan, Abraham Gyulkhandanyan, Levon Shant, Vahan Tekeyan, Samson Harutyunyan and Khachatur Karchikyan, Nikol Aghbalyan and others played a significant role in the restoration and strengthening of the Armenian statehood.

The Yezidis living in Armenia, led by Usub Bek Temuryan (member of the Armenian Parliament) and Jhangir Agha, contributed to the effective participation both in the heroic May battles and in the state-building process.

The history of the Republic of Armenia (1918–1920), which began on May 28, 1918, is marked not only by the restoration of independence, but also by the creation, in its administrative structure, of a democratic parliamentary Republic[5]. In just two and a half years, the First Republic acquired all the characteristic features of independent statehood – the territory, the authorities, the army, international recognition, etc.

After the proclamation of independence, one of the priority tasks was the establishment of authorities. At first, the temporary functions of power

[5] **Hovannisian R.G.**, The Republic of Armenia, vol. I–IV, Berkeley, Los Angeles, London, 1971–1996, **Հակոբյան Ա.**, Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918–1920 թթ.), Ե., 2005:

were carried out by the Armenian National Council in Tiflis, which could not move from Georgia to Yerevan because of the prohibitions imposed on the roads by the Turks, as well as by other circumstances. In Armenia, power remained in the hands of the Yerevan National Council.

On July 19, 1918, the National Council arrived in Yerevan. With the consent of the Tiflis and Yerevan National Councils and political parties, the Supreme body of power – the Council of Armenia (Parliament) was formed. It included representatives of National Councils, different parties, non-party and national minorities – a total of 46 members. On July 24, the composition of the government was made public: Prime Minister Hovh. Kachaznuni, the Minister of Internal Affairs Aram Manukyan, the Minister of Foreign Affairs Alexander Khatisian, the Minister of Finance Khachatur Karchikyan, the Minister of Defence General Hovhannes Hakhverdyan, the Minister of Justice Grigor Ter-Petrosyan.

On August 1, the initial session of the first Armenian Parliament – Council (Khorhrdaran) was solemnly opened in Yerevan. Avetik Sahakyan (father Abraham) was elected Chairman of the Council. The session adopted a decision on the earliest possible measures concerning the withdrawal of the country from the most difficult situation. Before the adoption of the Basic Law – the Constitution, it was decided to temporarily be guided by the Collection of Laws of Tsarist Russia. By the end of the year, the judicial system had improved. A jury trial was established.

On December 26, 1919, the Parliament adopted an important decision on the recognition of Armenian as the state language. Office work in all institutions should henceforth be conducted in Armenian. The national flag – the tricolor was adopted, which was to be erected over the buildings of public administration. The architect Alexander Tamanyan and artist Hakob Kojoyan presented the Coat of Arms of the Republic. "Our Fatherland" was used as the national anthem in the Republic. The awards and holidays were determined. Decisions were made on the creation of the Orders "For Services to the Motherland", "Vardan Zoravar" and others. Repatriation began.

The government of the Republic of Armenia paid great attention to the issue of strengthening the Army. The old Army, the core of which was the

Armenian corps, no longer corresponded to the spirit of the time, and therefore, on the basis of a new mobilization of 20–25-year-old young people, the Armenian division was formed under the command of Movses Silikyan. Until 1920, the number of 10 regiments of the Army reached 25,000. Foundations were laid for a Navy on Lake Sevan with the first military vessel "Ashot Erkat".

On June 21–23, 1919 elections were held with the participation of 366 thousand voters and 7 political parties. All citizens who had attained the age of 20, regardless of gender, nationality or religious affiliation, received the right to vote. The right to vote was also granted to Western Armenian refugees. Of the 80 members of Parliament, 72 were Dashnaks. Three of the elect were women. The newly elected Parliament opened on August 1, 1919 and approved the composition of the new government under the leadership of Al. Khatisyan.

The western Armenian refugees, who constituted a large number in the Republic's, population were dissatisfied with the fact that their homeland – Western Armenia was left out of attention by the Armenian government. At the end of October 1918, the news of the defeat of Turkey by the Entente countries in the World War aroused enthusiasm among the Armenians. In February, 1919, a Congress of Western Armenian refugees was held in Yerevan, which put forward the idea of creating a United Armenia. The congress considered that this Republic should be called the Ararat Republic. As for the Republic of Armenia, it should include Western Armenia as well. To solve this historical problem – the creation of a United Armenia, on the day of the anniversary of independence – May 28, 1919, the government headed by Al. Khatisyan declared Armenia a "United Free Republic". Thus, the authorities considered themselves also the owner of Western Armenia. Armenia was proclaimed a single unified state.

Today, among the controversial issues of the history of the First Republic, we can highlight the problem of foreign policy pursued by the authorities of the country. And nowadays, the state leaders are accused of political orientation in the issue of Russia's preference to Western European countries, which is one of the main reasons for the territorial losses and the

fall of the Republic. However, the principle of Historicism, time factor should not be ignored. First, during that period there was no single Russia. In addition to Central Soviet Russia, there were many Russian non-Soviet formations (state entities created by Denikin, Kolchak, Vrangel, and others), with some of which the Republic of Armenia established various ties, while taking parallel steps to establish relations with Soviet Russia[6].

As for the "pro-western" orientation of the leaders of the Republic, that was dictated by the realities of the time. The countries of the Entente as the victorious side after the First World War, being the main force that "created weather" in Europe and in the world, gave generous promises to solve the Armenian issue by uniting the two parts of Armenia.

It is noteworthy that the defeat of the Ottoman Empire in the First World War awakened the hope of creating statehood among the Cilician Armenians as well. Having received the consent of other Armenian national parties and political forces, on August 4, 1920, members of the Armenian National Union headed by the prominent leader of the Hnchakyan party Mihran Tamatyan, proclaimed the "Independent Christian Republic" of Cilicia[7]. However, the French military authorities did not recognize Tamatyan's "government" and, having dispersed him by force of arms, began to use violence against Cilician Armenians.

Armenia opened its diplomatic missions in almost twenty countries. Arshak Jamalyan became the representative of Armenia in Georgia, Mikael Varandyan in Italy, Avetis Aharonyan in France, Hovsep Arghoutyan in Persia. On January 23, 1920 a telegram was received from the Minister of Foreign Affairs of Great Britain Lord Curzon, which stated that the Paris Conference, convened by the Entente countries, had decided to recognize the independence of Armenia. This news was marked by 101 cannon shots in Yerevan. On April 24, 1920 Armenia was recognized by the United States. Armen Garo was appointed the representative of Armenia in the USA.

---

[6] Read more about the relations between the Republic of Armenia of 1918–1920 and non-Soviet formations of Russia in Պետրոսյան Գ., Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ (1918–1920 թթ.), Ե., 2006:

[7] Յուշամատեան Մեծ եղեռնի (1915–1965), Պէյրութ, 1965, էջ 911:

Armenia also had a female diplomat in the person of Diana Abgar, who began her activities in faraway Japan.

The First Republic of Armenia was born on the territory of only 12 thousand square kilometers. However, its territory gradually expanded when Turkey defeated in the war, capitulated and signed an armistice with the Entente countries in Mudros on October 30, 1918. The Turks pledged to withdraw their troops to the pre-war (until 1914) borders. During the spring of 1919, the Republic included the region of Kars, Nakhichivan, and in 1920 – Artsakh, with a territory of about 60–70 thousand square kilometers.

The Entente countries were preparing to sign Peace with the countries of the Triple Union, which was to determine the post-war borders. At the end of 1918, the Parliament of the Republic of Armenia formed a special delegation chaired by Avetis Aharonyan, which was sent to Europe to protect the interests of the Armenian people at the Peace Conference opened in Paris, in January, 1919.

An Armenian national delegation headed by an Egyptian Armenian Poghos Noubar, representing the Western Armenians scattered throughout the world, also arrived in Paris. Separate differences between the two delegations were resolved through negotiations and a joint program was developed to be presented to the Conference.

On August 10, 1920, Peace between the Entente and Turkey long-awaited for the Armenians was signed in Sevres, a suburb of Paris. The chairman of the Armenian delegation Av. Aharonyan signed the Treaty on the Armenian side with a pre-ordered golden pen. Articles 88–93 of the Treaty concerned Armenia. Turkey recognized Armenia as a free and independent state, to which most of the provinces of Erzroum, Van, Bitlis and Trabzon should have been attached. The right to sustain the new Armenian-Turkish border was granted to the American President Woodrow Wilson. Armenia received access to the Black Sea through the port of Trabzon. Thus, the territory of Armenia was to be about 160 thousand square km, the centuries-old dream of the Armenian people to create a united state was becoming a reality.

Unfortunately, this Treaty was not implemented due to a multitude of circumstances. First, it was not ratified by the Parliaments of the signatory countries – Great Britain, France, Italy, Japan, Romania, Turkey and, because of the outbreak of the Turkish-Armenian war, even Armenia. Secondly, the Great Powers postponed its implementation, and then gave it to oblivion, arguing that they would need huge military means in order to crush the Kemalists who did not recognize this Treaty in Turkey. Thirdly, the opponent of the Entente – Soviet Russia – supported Kemal Ataturk, the enemy of the Treaty of Sevres, and became his ally.

On April 28, 1920, with the active support of Mustafa Kemal, Musavatist Azerbaijan accepted the 11th Red Army without resistance and became Soviet. The Russian-Kemalist cooperation began to take more effective forms. In 1920, the government of Lenin provided Turkey with 200 kilograms of gold bars, a large amount of weapons and ammunition, and sent experienced military commanders there.

The Armenian-Russian negotiations launched in May in Moscow were accompanied by various obstacles from Azerbaijan and Turkey and were eventually interrupted with the decision to continue in Yerevan.

The Red Army entered Karabakh in May 1920, Zangezur in June, and Nakhichivan in August. On August 10, on the same day when the Treaty of Sevres was signed, an Armenian-Russian agreement was signed in Tiflis according to which Russia recognized the Republic of Armenia, and the latter agreed to the temporary occupation of the above-mentioned three provinces as Armenian-Azerbaijani disputed territories by the Soviet Russians.

On August 24, 1920, a draft of the Russian-Turkish Treaty of cordial and sincere friendship was agreed in Moscow. It recognized the integrity of Turkey, including the cities of Kars, Ardahan and Batumi, that is, the borders of 1877. In fact, the agreement on August 24 was directed against Armenia.

It is not accidental that soon - on September 1–7 – at the congress of the peoples of the East in Baku, convened on the initiative of the Communist International, the Bolsheviks, appealing to the Muslim peoples, came out against the infidels with a call to carry out a socialist revolution. It is noteworthy that Azerbaijan, which was already Soviet, was proclaimed at the

Congress as the stronghold of the international proletariat, and the Republic of Armenia replete with refugees - the den of imperialism. In order to crush it and establish the Soviet order there, it was supposed to use the armed forces of the Kemalist Turks. A few days after that anti-Armenian Congress, the Kemalists, with the connivance and support of the Soviet government, invaded the territory of the Republic of Armenia. The Bolsheviks, among whom were also figures of Armenian nationality, began propaganda in the Armenian Army, urging not to fight against Russia's allies – the Kemalist Turks. This circumstance had a negative impact on the combat capability of the Army. On October 30, the enemy captured the Kars fortress.

On November 29, 1920, the Military Revolutionary Committee of Armenia, with the help of the 11th Army, entered Ijevan from Azerbaijan and declared Soviet power in Armenia. The government of the last Prime Minister Simon Vratsian was forced to relinquish power on December 2, in Yerevan. The Armenian-Turkish agreement signed in Alexandropol on the night of December 3 ended the war. According to this truce, the territory of Armenia was significanty diminised. The Armenian-Turkish border was to pass along the Akhurian-Araks line. The province of Sourmalu, which was not part of the Ottoman Empire, was transferred to Turkey; a special administration under the control of the Turks was to be established in Nakhchivan.

According to the figurative expression of the last Prime Minister of the Republic of Armenia S. Vratsian, Armenia was crushed between the Bolshevik hammer and the Turkish anvil. It is clear that in such conditions the collapse of the Republic was inevitable.

Despite the fall, the existence of the Republic did not remain without consequences. The Bolsheviks were forced to create a new Republic – Soviet Armenia on its basis. During the period of almost 70-year history of Soviet Armenia the Armenian people experienced an economic and cultural boom. In fact, on the basis of the First Republic, although in conditions of a completely different political and administrative system, the ground was prepared for the formation of the Third Independent Republic.

From the distance of a century, that is the historical account of the restoration of independent statehood in May 1918.

1918–1920 ԹԹ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՄԱՆ ԵՎ ԿԱՅԱՑՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ամփոփում

Ջնայած 1918–1920 թթ. Հայաստանի Հանրապետության պատմության վերաբերյալ ստեղծված գիտական և քաղաքական բնույթի ահռելի գրականությանը, այսօր էլ կան հիմնահարցեր, որոնց ուսումնասիրությունն ունի ոչ միայն զուտ գիտական, այլ նաև ճանաչողական, քաղաքական ու գործնական մեծ նշանակություն:

Նկատի առնելով թուրք-ադրբեջանական պատմագրության կողմից խնդրո առարկա հիմնահարցի ոլորտում կեղծարարության օրեցօր աճը, արդիական է, մասնավորապես, մի քանի հարցերի քննությունը, որպիսիք են Հանրապետության ստեղծման պատմական և գաղափարաքաղաքական նախադրյալները, նորաստեղծ պետության մեջ ժողովրդավարական գործընթացները, կառավարության վարած քաղաքականությունը, Առաջին Հանրապետության դասերը, պետականության շարունակականության խնդիրը՝ երեք Հանրապետությունների օրինակով:

Հանրապետությունը կարճ կյանք ունեցավ, սակայն նրա գոյությունն անհետևանք չմնաց: Նրա հիմքի վրա բոլշևիկները պարտավորված ստեղծելու նոր Հանրապետություն՝ Խորհրդային Հայաստանը, որն էլ իր հերթին հող նախապատրաստեց Երրորդ՝ անկախ Հանրապետության ձևավորման համար:

Այս է չուրջ հարյուրամյա հեռավորություններից 1918 թ. մայիսին անկախ պետականության վերականգնման պատմական խորհուրդը:

ИСТОРИЧЕСКОЕ ЗНАЧЕНИЕ ПРОВОЗГЛАШЕНИЯ И СТАНОВЛЕНИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ 1918–1920 ГГ.

Резюме

Хотя и по истории Республики Армения 1918–1920 гг. издан огромный массив литературы научно-политического характера, но на сегодняшний день есть множество вопросов, изучение которых имеет не только сугубо научное, но и познавательное, политическое и практическое значение.

Поскольку турецко-азербайджанская историография изобилует бесчисленными фактами фальсификаций по данной проблеме, то по сей день весьма актуальным остается изучение ряда вопросов, к каковым относятся: исторические и идеолого-политические предпосылки создания республики, демократические процессы, имевшие место в новосозданной республике, политическая линия правительства республики, уроки Первой республики, вопрос преемственности государственности на примере трех республик.

Первая республика просуществовала недолго, но на ее основе большевики создали новую республику – Советскую Армению, которая в свою очередь подготовила почву для формирования Третьей – независимой республики.

В этом и заключается, спустя почти столетие, историческое значение восстановления независимой государственности в мае 1918 года.

"Journal of Armenian studies", Yerevan, № 3 (18), 2018, pp. 32–42.

1919 ՄԱՅԻՍԻ 28-Ի ՄԻԱՑԵԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՌՉԱԿԱԳԻՐԻ ԴԵՐԸ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՀԱՏՈՒԱԾԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹԵԱՆ ՑԱՂԹԱՀԱՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Պատմական ճակատագիրի բերումով դեռևս Դ. դարի վերջին Մեծ Հայքի թագաւորութիւնը բաժանուեց աշխարհակալ տէրութիւնների՝ Պարսկաստանի եւ Հռոմի միջեւ: Այդ ժամանակուանից շրջանաւուրթեան մէջ մտան Արեւմտեան եւ Արեւելեան Հայաստան եզրոյթները, որոնք հետզհետէ աշխարհագրականից վերածուեցին քաղաքական հասկացութիւնների: Յաւօք, 1555-ին Ամասիայի հաշտութեամբ, երբ Հայաստանն առաջին անգամ տրոհուեց Օսմանեան կայսրութեան եւ Սէֆեան Իրանի միջեւ, հայ ժողովրդի քաղաքական երկփեղկուածութիւնն աւելի խորացաւ: Այդ հողի վրայ նկատուեց ոչ միայն սովորութային-կենցաղային որոշ օտարացում, այլեւ ի յայտ եկան որոշակի տարբերութիւններ նաեւ լեզուամտածողութեան մէջ: Պատահական չէ, որ գրաբարի հիմքի վրայ պատմական նոր շրջափուլում՝ 17–18-րդ դարերում միջին հայերէնը ծնունդ տուեց աշխարհաբարի երկու ճիւղերին՝ արեւմտահայերէնին եւ արեւելահայերէնին: Առաջինի համար հիմք ծառայեցին պոլսահայ, երկրորդի համար Արարատեան ու Թիֆլիսահայոց բարբառները, որոնք հայ դասական գրական դեմքերի կողմից 19-րդ դարի երկրորդ կեսին հասցուեցին կատարելութեան:

19-րդ դարի վերջին քառորդից՝ պայմանաւորուած Հայկական հարցի միջազգայնացումով, ազգային-ազատագրական գաղափարների ու շարժման հետագայ տարածմամբ ազգային միասնութեան ձգտումն աւելի խորացաւ: Բազմաթիւ արեւելահայեր՝ Անդրկովկասի տարբեր գաւառներից գինուորագրուե- ցին արեւմտահայութեան ազատագրական պայքարին՝ Սեւքարեցի Սագօ, Նիկոլ Դուման, Սարգիս Մևհրապեան, Հաճի Լեւոն, Իշխան Արղութեան, բազմաթիւ կուսակցական նշանաւոր գործիչներ՝ Քրիստափոր Միքայէլեան, Սիմոն Զաւարեան, Ռոստոմ եւ այլք: Նմանապէս 20-րդ դարի սկզբին արեւմտահայ գործիչները յայտնուեցին հայ եկեղեցու եւ ողջ Անդրկովկասի հայութեան պաշտպանութեան դիրքերում հակացարական ելոյթների եւ հայ-թաթարական կռիւների շրջանում՝ Սեբաստացի Մուրատ, Արմէն Գարօ (Գարեգին Փաստրմաճեան), Համազասպ

(Սրուանձտեանց), Արշակ Գաւաֆեան՝ Քեռի եւ այլք: Հայ յեղափոխական դաշնակցութեան կողմից 1904-ին «Կովկասեան ծրագիրի» ընդունումը հանդիսացաւ այդ գաղափարական ու գործնական միաւորման փաստաթղթային-իրաւական արտայայտութիւնը:

Հետագայում՝ 1912-ին հայ հոգեւոր եւ հասարակական-քաղաքական շրջանակների կողմից հայկական հարցի, այն է՝ հայկական բարեփոխումների իրագործման խնդիրը եւս առաջադրուեց որպես մէկ միասնական, համահայկական խնդիր: Սակայն հետզհետէ, մասնաւորապէս Արեւմտահայերի ազգային պատուիրակութեան (նախագահ՝ Պօղոս Նուպար) գործունեութեան հետեւանքով միեւնոյն խնդրի վերաբերեալ ի յայտ եկան ոչ այնքան տարբեր, որքան ինքնուրոյն մօտեցումներ:

Առաջին աշխարհամարտի տարիներին, չնայած պատերազմում չէզոքութիւն պահպանելու կուսակցական շրջանակների, յատկապէս դաշնակցութեան 8-րդ Ընդհանուր ժողովի որոշման (1914 յուլիս), ռուսական արքունիքի ջանքերի շնորհիւ կովկասահայութեան զգալի մասը հակուեց պատերազմում ռուսական զօրքերի կազմում թուրքերի դէմ կռուելու մարտավարութեանը: Այդ հանգամանքը, անշուշտ, ազգային գործիչների մի մասն իրաւացիօրէն նկատեց վտանգաւոր՝ համոզուած լինելով, որ դրանով իսկ օսմանեան իշխանութիւններին ընձեռւում է առիթ ու հնարաւորութիւն՝ դաւաճանութեան մեղադրանքով արեւմտա- հայութեանը բնաջնջելու համար: Պատահական չէ, որ ստանալով Թիֆլիսի հայոց ազգային բիւրոյի անմիջական ղեկավարութեամբ Արեւելեան Հայաստանում ու Անդրկովկասի այլ շրջաններում կամաւորական շարժում ծաւալելու լուրը, Վանում գտնուող Յովհաննէս Քաջազնունին բացասաբար արձագանգեց՝ ասելով, որ «ռուսահայերը կրակի հետ են խաղում»: Յաւօք, նա այս հարցում չսխալուեց: Օսմանեան իշխանութիւնները առիթը բաց չթողեցին իրականացնելու արեւմտահայութեանը ցեղասպանելու եւ հայրենազրկելու իրենց դիւային ծրագիրը: Ընդհանուր յուսահատութեան մթնոլորտում ոմանք փորձեցին կատարուածի ողջ մեղքը բարդել արեւելահայ գործիչների վրայ: Ընդ որում այդպիսի մեղադրանքներ հնչեցրին նաեւ այն արեւմտահայ գործիչները, որոնք կամաւորական շարժման ամենակարկառուն դեմքերից էին (օրինակ՝ Անդրանիկը պատերազմի օրերին մեղադրում էր ոչ միայն ռուսական հրամանատարութեանը՝ Մուշ – Սասունի հայութեանը օգնութեան չգնալու, այլեւ արեւելահայութեանը):

Ինչևէ, ակնյայտ է, որ Հայոց մեծ եղեռնից յետոյ արեւելահայ-արեւմտահայ «հակամարտութեան» մէջ աւելացաւ նաեւ բարոյազրկացական կողմը, որը, դժբախտաբար, իր կնիքը թողեց հետագայ ողջ դարաշրջանի վրայ: Դժուար չէ նկատել, որ այդուհետ հայ հասարակական կեանքի երկփեղկուածութիւնը խորացաւ: Արդէն 1917 մայիսին արեւմտահայերն իրենց «սեպարատ» համագումարում հռչակեցին Արեւմտահայոց ազգային խորհրդի ստեղծումը՝ Վահան Փափազեանի (Կոմս) գլխաւորութեամբ: Նոյն թուականի սեպտեմբեր-հոկտեմբերին ստեղծուեց Արեւելահայերի (Թիֆլիսի) Հայոց ազգային խորհուրդը (նախագահ՝ Աւետիս Ահարոնեան): Նկատենք, որ միաժամանակ ծնուեցին նաեւ այլ ազգային խորհուրդներ ըստ տարածաշրջանների՝ Պաքուի, Երեւանի, Ախալքալաքի եւ այլն: Ստացւում է, որ մի դեպքում հիմնւում էին հայ ժողովրդի երկու հատուածների առանձին կառոյցներ, միւս դեպքում՝ Անդրկովկասի իւրաքանչիւր տարածաշրջան կամ քաղաք ունենում էր իր ազգային մարմինը:

Յատկանշական է, որ Արեւելահայ ու Արեւմտահայ ազգային խորհուրդների համագործակցութեան հարցը սերտօրէն կապուեց տուեալ ժամանակի պատմական անցքերի զարգացման հետ: Այսպէս, 1917 հոկտեմբերի սկզբին, երբ ժամանակաւոր կառավարութեան հայանպաստ քայլերն Արեւմըտեան Հայաստանում տուել էին իրենց առաջին պտուղները (չուրջ 387 հազար հայ գաղթականների վերադարձ իրենց հայրենի օճախներ, արեւմտահայ գաւառներում հայերի գործուն մասնակցութեամբ ռազմավարչական մարմինների ստեղծում, հայկական զինական ուժի ձեւաւորում եւ այլն), հայաթափւած հայրենիքը համատեղ ջանքերով վերաշինելու արեւելահայ ու արեւմտահայ խորհուրդների համագործակցութեան դրսեւորումներն աւելի յաճախակի դարձան:

Սակայն 1918 մարտ-ապրիլին՝ թուրքական զօրքերի յարձակումը կասեցնելու անյաջող փորձերի օրերին, փոխադարձ մեղադրանքներն աճեցին: Արեւմտահայ գործիչները (Անդրանիկ, Սեպուհ, Սեբաստացի Մուրատ եւ այլք) պնդում էին, որ արեւելահայերն իրենց միայնակ թողեցին թուրքերի դէմ, առանց դիմադրութեան թշնամուն յանձնեցին բաւական լաւ ամրացուած Կարսի բերդը եւ նահանջեցին մինչեւ Արարատեան դաշտ:

Ռազմաքաղաքական անբարենպաստ պայմաններում ունեցած անյաջողութիւնների մեղքը հայութեան երկու հատուածների

առանձին գործիչներ փորձեցին փնտռել միմեանց գործունեութեան մէջ: 1918-ին մայիսեան հերոսամարտերի օրերին արեւելահայ-արեւմտահայ վիհը կարծես վերացաւ՝ տեղի տալով թշնամու դէմ պայքարի յաջողութիւնները կիսելու մարտավարութեանը: Բայց նորահռչակ Հայաստանի Հանրապետութեան եւ Օսմանեան կայսրութեան միջեւ յունիսի 4-ին կնքուած Պաթումի պայմանագիրը, որով հայկական կողմը յօդուտ թուրքերի ստիպուած էր հրաժարուել ոչ միայն Արեւմտեան Հայաստանից ու Կարսի մարզից, այլեւ Արեւելեան Հայաստանի զգալի մասից, կրքերը ծայր աստիճան բորբոքեց:

Պայմանագրում տեղ գտած 5-րդ յօդուածը, որով «Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը պարտաւորւում էր գործուն կերպով ... զինաթափել ու ցրել բոլոր հրոսակախումբերը, որոնք կը փորձեն թաքնուել այնտեղ»[1], ուղղակիօրէն նկատի առնելով Անդրանիկի եւ այլ ղոկատների գործունեութիւնը, արեւմտահայ կամաւորականների չլքանում բուռն դժգոհութիւն առաջացրեց: Ի զուր չէ, որ ցօրավար Անդրանիկը, ստանալով այդ պայմանագրի լուրը, զօր. Թովմաս Նազարբէկեանին գրած նամակում յայտնում էր իր զայրոյթը. «Վեց հարիւր տարուան ստրկութեան չղթան դարձեալ ձեր վիզն ու ոտքը ձանձնեք ձեր ձեռքով: Ջեմ կրնար այս պայմաններուն հանդուրժել՝ մոռնալով մեր երեսուն տարուան զոհերը եւ մէկ միլիոն նա- հատակները»[2]:

Սակայն, խօսելով արեւմտահայութեան հասկանալի դժգոհութեան մասին, միաժամանակ չպիտի մոռանալ, որ 1918 յունիսին Հայաստանի նորահռչակ հանրապետութիւնը ռազմաքաղաքական ծանր պայմաններում ոչ միայն չէր կարող պաշտպանել արեւմտահայութեան, այլեւ արեւելահայութեան շահերը, ուստի այնքան էլ արդարացի չէ նրան մեղադրել համազգային խնդիրներից, մասնաւորապէս արեւմտահայ դատից հրաժարուելու մէջ: Ինչեւէ, փաստը մնում է փաստ, որ հանրապետութեան գոյութեան առաջին տարում արեւելահայ-արեւմտահայ յարաբերութիւնները մնացին բաւական լարուած:

1918 հոկտեմբերի 30-ին համաշխարհային պատերազմում յաղթանակած Անտանտի երկրների եւ պարտուած Օսմանեան կայսրութեան միջեւ Մուդրոսում կնքուած զինադադարը հայկական հարցի լուծման մեծ յոյսեր ներշնչեց: Թուրքական կառավարութիւնը պարտաւորւում էր զօրքերը հետ քաշել մինչեւ 1914-ի նախապատերազմեան սահմանները: Շուտով ստացուեց նաեւ Փարիզում սկսուելիք

խաղաղութեան վեհաժողովի լուրը, որն էլ աւելի ոգեւորեց համայն հայութիւնը:

Վեհաժողովին հայ ժողովրդի շահերը ներկայացնելու համար կազմուեց հայկական երկու պատուիրակութիւն: Մէկը ներկայացնում էր Հայաստանի Հանրապետութիւնը՝ Ա. Ահարոնեան (նախագահ), Մ. Պապաճանեան եւ Օհանջանեան կազմով, միւսը՝ եգիպտահայ մեծահարուստ, նշանաւոր հասարակական գործիչ Պօղոս Նուպարի գլխաւորած «Ազգային պատուիրակութիւնը» (անդամներ՝ Ա. Ջօպանեան, Վ. Թէքէեան), հանդէս էր գալիս աշխարհով մէկ սփռուած արեւմտահայութեան անունից: Ի սկզբանէ երկու պատուիրակութիւնների միջեւ ի յայտ եկան լուրջ տարաձայնութիւններ: «Ազգային պատուիրակութիւնը» համարում էր, որ Ա. Ահարոնեանի պատուիրակութիւնը լաւագոյն է միայն Արարատեան (կամ՝ Երեւանեան) հանրապետութիւնը, ուստի իրաւունք չունի վեհաժողովում հանդէս գալու Հայաստանի անունից: Ընդ որում, Պօղոս Նուպարի պատուիրակութիւնը «Հայաստան» ասելով նկատի ունէր Արեւմտեան Հայաստանը, որին յետոյ պիտի միանար Արեւելեան Հայաստանը: Ա. Ահարոնեանն ընդհակառակը՝ հայկական հարցի լուծումը տեսնում էր արդէն պետականութիւն համարուող Հայաստանի Հանրապետութեանը ազատագրուելիք Արեւմտահայաստանը միացնելու եղանակով[3]: Ի վերջոյ, երկու պատուիրակութիւնները կարողացան միաւորել իրենց ծրագրերը եւ հանդէս գալ միասնական պահանջներով: Հայկական հարցի լուծման խնդրում դաշնակից երկրների խոստումները, միացեալ Հայաստանի ազգային երազանքի իրականացման մօտալուտ զգայողութիւնն արագօրէն սկսեցին մերձեցնել հայութեան երկու հատուածներին:

Համերաշխութեան եւ միասնականութեան ձգտումը նկատուեց նաեւ Հայաստանի Հանրապետութեան հասարակական-քաղաքական շրջանակներում: Պատահական չէ, որ ապագայ միացեալ հայրենիքի ստեղծման մտահոգութեամբ 1919-ի փետրուարի 6–13-ը Երեւանում գումարուած Արեւմտահայերի երկրորդ համագումարը ստացաւ Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան բազմակողմանի օժանդակութիւնը[4]: Բազմաթիւ կենսական հարցերի վերաբերեալ ընդունած որոշումների մէջ համագումարը կարեւորեց «Արարատեան Հանրապետութեան նախարարութեան (կառավարութեան – Ա.Մ.) եւ խորհրդարանի հետ միացեալ Ազատ Հայաստանի անկախութիւնը յայտարարելու» անհրաժեշտութիւնը[5]: Այսպէս՝ 1919-ի

վեսրուար-մարտից ընդհանուր խանդավառութեան մթնոլորտում ներազգային միասնութեան գաղափարն օրէցօր ամրապնդուեց, առաւել եւս, որ Փարիզից ստացւում էին նորանոր ոգեւորիչ լուրեր՝ Հայկական հարցը Հայաստանի երկու հատուածների միացման ճանապարհով լուծելու՝ Անտանտի երկրների ղեկավարների պատրաստակամութեան մասին[6]:

Նման պայմաններում տրամաբանօրէն դէպքերը տարան դեպի Միացեալ Հայաստանի ազգի ընդունմանը: 1919-ին ապրիլի 27-ին Հայաստանի Հանրապետութեան խորհրդարանը կառավարութեանն տուեց լիազօրութիւններ՝ հռչակելու Միացեալ Հայաստանի անկախութիւնը: Ուղիղ մէկ ամիս անց՝ մայիսի 27-ին Հայաստանի Հանրապետութեան նախարարաց խորհուրդը (կառավարութիւնը) միացեալ Հայաստանի հռչակման նպատակով օրէնք ընդունեց Հայաստանի խորհրդի (խորհրդարան) կազմը Արեւմտահայ գործօնի մարմնի 12 ներկայացուցիչներով համալրելու մասին[7]: Մէկ օր անց՝ մայիսի 28-ին, այսինքն՝ անկախութեան հռչակման տարեդարձի օրը, Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը հանդէս եկաւ վարչապետ Ալեքսանդր Խատիսեանի կազմած «Միացեալ Հայաստանի անկախութեան» հռչակագրով: Այս կարեւորագոյն պատմաքաղաքական փաստաթղթում մասնաւորապէս ասուած էր. «Հայաստանի ամբողջութիւնը վերականգնելու եւ ժողովրդի լիակատար ազատութիւնն ու բարգաւաճումն ապահովելու համար Հայաստանի կառավարութիւնը, համաձայն բովանդակ հայ ժողովրդի միահամուռ կամքի եւ ցանկութեան, յայտարարում է, որ այսօրուանից Հայաստանի բաժան-բաժան մասերը մշտնջենապես միացած են իբրեւ անկախ պետական միութիւն»[8]:

Այնուհետեւ ընդգծւում էր բովանդակ հայութեան դարաւոր իղձերի իրականացման արտայայտութիւն այս հռչակագրի վաւերականութիւնը. մի կողմից՝ ճիշդ մէկ տարի առաջ Արեւելահայ ազգային խորհուրդն իրեն հռչակել էր հայկական բոլոր գաւառների (իրականում՝ արեւելահայ գաւառների – Ա.Մ.) միակ եւ բարձրագոյն իշխանութիւն եւ միւս կողմից՝ 1919-ի փետրուարին կայացած Արեւմտահայերի երկրորդ համագումարը յայտարարել էր, որ ճանաչում է «Հայաստանը Միացեալ եւ անկախ»[9]: Ընդ որում, մատնանշւում էր, որ Հայաստանը Միացեալ հռչակելու լիազօրութիւնը կառավարութիւնը ստացել է խորհրդարանից:

Հռչակագրում յիշատակւում էր նաեւ. «Անդրկովկասում եւ Օսմանեան կայսրութեան սահմաններում գտնուած պապենական հայկական երկրների միացման եւ անկախութեան այս աքթը կատարելով՝ Հայաստանի կառավարութիւնը յայտարարում է, որ Միացեալ Հայաստանի պետական ձեւն է Ռամկավար Հանրապետութիւնը»: Նշանակում է՝ կարեւորւում էր միասնական պետութեան ազատական-ժողովրդավարական կառուցուածքն ու բնոյթը:

Միացեալ Հայաստանի Հռչակագրում մի անդամ եւս ընդգծւում էր այն հանգամանքը, որ հայ ժողովուրդն այսուհետեւ իր ամբողջական հայրենիքի լիակատար տէրն է, իսկ Հայաստանի Հանրապետութեան խորհրդարանն ու կառավարութիւնը այդ պետութեան ընդհանուր օրէնդիր ու գործադիր մարմիններն[10]:

Հռչակագրի ընթերցումից յետոյ, նախապէս ձեռք բերուած պայմանաւորուածութեան համաձայն, Արեւմտահայ գործադիր մարմնի 12 անդամներ՝ որպէս լիարժէք անդամներ, խորհրդարանում զբաղեցրին իրենց համար յատկացուած տեղերը՝ արժանանալով ծափողջոյնների: Ապա եղան ողջոյնի ելոյթներ: Իր տպաւորիչ ճառում Ամենայն Հայոց կաթողիկոս Գէորգ 5-րդը, արտասահմանեան հիւրերի ու դիւանագէտների ներկայութեամբ, մեր ժողովրդին մասնաւորապէս կոչ յղեց «յոյս չդնել օտարի վրայ, ...: Այժմ, երբ Մասիսը մագնիսի պէս քաշեց ու միացրեց հայութեան երկու հատուածները, երբ ստեղծուեց Միացեալ Հայաստան, այժմ պետք է լարենք մեր ազգային բոլոր կարողութիւնները՝ փրկելու եւ դաստիարակելու համար մեր ժողովուրդը ի փառս իր ազատ հայրենիքի[11]:

Խօսելով 1918 եւ 1919-ի Հռչակագրերի պատմական նշանակութեան մասին՝ հետագայում Ա. Խատիսեանը գրում էր. «Հայ ազգային դիտակցութիւնն էր, որ արիւնի եւ արցունքի գետեր անցնելով, կու գար այդ աքթերով դարբնելու հայ ժողովրդի ազատութեան անկախութեան եւ միութեան կռուանները»[12]:

Միացեալ Հայաստանի հռչակումը ցնծութեամբ ընդունուեց համայն հայութեան կողմից: Այդ օրը Երեւանում եղան մեծ տօնախմբութիւններ: Փողոցներում ծածանւում էին Եռագոյն դրօշները, հնչում էին երգն ու երաժշտութիւնը, մարդիկ իրաւական այդ փաստաթղթի ընդունումն իրաւամբ ընկալում էին իրենց դարաւոր երազանքների իրականացման ճանապարհին կատարուած մեծագոյն քայլ:

Պատահական չէ, որ Միացեալ Հայաստանի հռչակագրի ընդունումից յետոյ Ա. Ահարոնեանի պատուիրակութիւնը Փարիզում սկսեց աւելի համարձակ գործել եւ նրա առաջադրած պայմաններն սկսեցին հնչել համայն հայութեան անունից: Շուտով այդ գործունեութիւնը տուեց իր առաջին պտուղները. 1920-ի ապրիլին Սան Ռեմոյում դաշնակից երկրների ղեկավարները յայտնեցին իրենց կարծիքը՝ Հայկական հարցը Հայաստանի երկու հատուածների միաւորման ճանապարհով լուծելու վերաբերեալ: 1920 օգոստոսի 10-ին Փարիզի արուարձան Սեւր քաղաքում, համաշխարհային պատերազմում յաղթանակած Անտանտի երկրների եւ պարտուած Թուրքիայի միջեւ կնքուած դաշնագրով, որի տակ Հայաստանի կողմից նախապէս պատուիրուած ոսկէ գրչով ստորագրեց Ա. Ահարոնեանը, Միացեալ Հայաստանը ստեղծուելու էր Հայաստանի Հանրապետութեանը արեւմտահայ չորս նահանգների (Տրապիզոն, Էրզրում, Պիթլիս եւ Վան) մեծ մասի միաւորման ուղիով: Ի կատարումն նոյն դաշնագրի 89-րդ յօդուածի՝ նոյեմբերի 22-ին Միացեալ Նահանգներու նախագահ Վուտրօ Ուիլսընը ներկայացրեց իր իրաւարար վճիռը Հայ-Թուրքական սահմանի վերաբերեալ, որով Հայաստանի Հանրապետութեան տարածքը կազմելու էր մօտաւորապէս 160 հազ. քառ. քմ արտաքին ելքով դէպի Սեւ ծով:

Անկախ այն բանից, որ աշխարհաքաղաքական աննպաստ զարգացումների, մասնաւորապէս քեմալապոլշեւիկեան գործակցութեան հետեւանքով հայ ժողովրդի արդարացի պահանջները չիրագործվեցին, իսկ Հայաստանի Հանրապետութիւնը կործանուեց, Միացեալ Հայաստանի տեսլականը, որպես ազգի միասնութեան, երկու հատուածների կամրջման անխախտ գաղափար, հայ ժողովրդին ուղղորդեց դէպի 21-րդ դար: Այդ գաղափարը, առաջին հերթին որպես Հայոց ցեղասպանութեան հետեւանքների վերացման առաջին նախապայման, այսօր էլ չարունակում է մնալ Հայութեան հաւաքական գիտակցութեան անկիւնաքարը եւ կազմում է Հայաստան-սփիւռք իրական գործակցութեան գերագոյն նպատակը:

1. Հայաստանը միջազգային դիւանագիտութեան եւ սովետական արտաքին քաղաքականութեան փաստաթղթերում (1828–1923), Զ. Ս. Կիրակոսեանի խմբագրութեամբ, Ե., 1972, էջ 534:

2. Զօրավար Անդրանիկը կը խօսի, էջ 26–27:

3. Հայկական ազգային պատուիրակութեան ներկայացրած պահանջների մասին տե՛ս «Հայաստանի Հանրապետութիւնը 1918–1920 թթ.» (քաղաքական պատմութիւն), վաստաթղթերի եւ նկարների ժողովածու, Է., 2000, էջ 89–91, 100–101:

4. Նոյն տեղում, էջ 91:

5. **Վրացեան Ա.**, Հայաստանի Հանրապետութիւն, Է., 1993, էջ 272:

6. Փարիզի վեհաժողովում հայկական հարցի քննարկումների մասին տե՛ս **Ցովհաննիսեան Ռ.Գ.** Հայաստանի Հանրապետութիւն, հ. 1, (1918–1919), Է., 2005, էջ 273–372:

7. «Հայաստանի Հանրապետութիւնը 1918–1920 թթ.». էջ 105:

8. Հայաստանի ազգային արխիւ, ֆ. 198, ց. 1, պ. 4, թ. 1, Տես նաեւ **Խատիսեան Ա.**, Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Պէյրութ, 1968, էջ 152–153:

9. Նոյն տեղում:

10. Նոյն տեղում:

11. **Վրացեան Ա.**, Նշվ. աշխ., էջ 230:

12. **Խատիսեան Ա.**, Նշվ. աշխ., էջ 153–154:

Հայաստանի Հանրապետության 100-ամեակ, Ազդակ (բացառիկ), Պէյրութ, 28 մայիս, 2018, էջ 28–33:

ՇՆՈՐՀԱՒՈՐԱԳԻՐ

15 Հոկտեմբեր, 2018

*Շատ ուրախալի է, որ խորապէս գիտակցելով Հայոց պատմութեան մէջ մեր ազնուականութեան կատարած դերակատարութիւնը, ՀՕՄ-ի Թորոնթոյի «Ռուբինա» մասնաճիւղը տարիներ չարունակ կազմակերպել է **Տոհմիկ Օրեր**, հրատարակել հայագիտական տարեգրքեր: Աւելի քան խորհրդանշական է, որ այդ բնագաւառում մեր ՀՕՄ-ուհիներն իրենց քառորդ դարեայ ազգանուէր գործունէութեան յոբելեանական ձեռնարկն այժմ նուիրել են մէկ այլ՝ համահայկական նշանակութեան յոբելեանի՝ Հայաստանի Ա. Հանրապետութեան փառապանծ 100-ամեակին:*

Մեր ջերմ ու սրտագին մաղթանքները նրանց՝ դարակազմիկ այդ տօնի կապակցութեամբ իրականացրած ձեռնարկումներում:

ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆԵԱՆ
Հայաստանի Գիտաթիւնների ազգային ակադեմիայի
պատմութեան ինստիտուտի տնօրէն, ակադեմիկոս

ԱՐՔԱՅԱԿԱՆ ԱԶՆՈՒԱԿԱՆԱԿԱՆ ՏՈՀՄԵՐԻ ԴԵՐԸ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Պատմաբանների ու քաղաքագէտների շրջանում մշտապէս ընթացել են վէճեր այն հարցի շուրջ, թէ պատմութեան կերտման գործում աւելի վճռական տեղ ու դեր ունեցել են ժողովրդական լայն զանգուածները, թէ՞ նրանց վերնախաւը՝ ի դէմս արքայական-ազնուականական տոհմերի եւ վերջիններիս ակնառու անհատների: Մարքսիստական պատմագրութիւնը նախապատուութիւնը մշտապէս տուել է ժողովրդական զանգուածներին: Սակայն որքան էլ ընդհանրական ձեւով ժողովուրդներն են եղել եղանակ ստեղծողներն իրենց տարեգրութեան մէջ, այնուամենայնիւ նրանց էլիտան՝ թագաւորական-ազնուականական խաւերն ու տոհմերն են ազգերին ուղղորդել պատմական ամենաբարդ ժամանակաշրջաններում, նրանք են թողել մնայուն հետք պատմութեան մէջ: Պատահական չէ, որ ժողովուրդների ու ազգերի իրական պատմութեան սկիզբը են համարուել միայն այն ժամանակները, երբ ասպարէզ են իջել պետականութիւնները, հետեւաբար եւ դրանց գլուխ կանգնած արքայական տոհմերը:

Զարմանալի չէ, որ Մովսէս Խորենացին, Հայոց երկրի վաղադոյն պատմութիւնն աւարտելուց յետոյ, մեծ ոգեւորութեամբ խօսելով առաջին հայ թագակիր, այն է՝ պսակաւոր արքայի՝ Սկայորդու որդի Պարոյրի մասին, միաժամանակ ցաւ է ապրում, որ ինչո՞ւ ինքն այդ ժամանակ աշխարհ չի եկել եւ չի դարձել այդ պատմական իրադարձութեան ականատեսը: «Եւ այժմ ահա զուարճացայց,- գրում է Պատմահայրը,- ոչ փոքր ինչ կրկնով խնդութիւն, ասանելով ի տեղիս, յորում մերոյ իսկ բնիկ նախնւոյն սերունդք ի թագաւորութեան հասանեն յաստիճան: Վասն որոյ արժան է մեզ աստանաւոր մեծ գործ կատարել, եւ բազումս ասել առարկութիւնս ճառից»[1]:

Հայոց թագաւորական պատմութեան սկիզբն ընդունուած է համարել Հայոց բուն թուականը՝ Ք.ա. 2492 Օգոստոսի 11-ը, երբ Հայկ նահապետը Վանայ լճի ափին պարտութեան է մատնել բռնակալ Բելին: Այդ օրուանից դրուել է հայկական առաջին թագաւորական տոհմի՝ Հայկեանների կամ Հայկազունիների գահակալութեան սկիզբը:

---

[1] **Մովսէս Խորենացի**, Պատմութիւն հայոց, գիրք առաջին, Մատենագիրք Հայոց, Բ. հատոր, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 1809:

Յատկանշական է, որ ըստ հայ պատմագիրների՝ յետագայի հայոց մի քանի արքայատներ սերուել են Հայկեաններից եւ իրենց ճիւղերով Ք.ա. III–I հազարամեակներում իշխել հայկական տարբեր պետական կազմաւորումներում՝ Արատտայում (Արարատի երկիր), Հայասայում, Էթիուհիում, Դիաուխիում, Վանի թագաւորութիւնում (Բիայնիլի, Ուրարտու) եւ այլուր: Խեթական թագաւորների թողած արձանագրութիւնների չնորհիւ մեզ են հասել Բարձր Հայքի, Տայքի եւ Փոքր Հայքի տարածքում Ք.ա. XV–XIII գոյութիւն ունեցած Հայասա երկրի արքաների անուննները՝ Հուկաննաս, Գարաննի եւ Անխա, որոնք միշտ մրցակից են եղել խեթերի երկրին, երբեմն էլ համարձակուել են յարձակուել Խեթական Հզօր տէրութեան վրայ:

Հայկական լեռնաշխարհում Ք.ա. IX դարի առաջին կէսին ասպարէզ է իջել առաջին միասնական պետութիւնը՝ Վանի կամ Ուրարտական թագաւորութիւնը, որի հիմնադիր արքան եղել է Արամը (Արամէ): Վերջինիս անունից նրա յաջորդներին անուանել են նաեւ Արամեան-Հայկեաններ: Արամի յաջորդներից Մենուայի, Արգիշտի Ա.-ի եւ Սարդար Բ.-ի օրօք երկիրը դարձել է տարածաշրջանի հզօրագոյն տէրութիւններից մէկը, որի սահմանները ձգտել են մինչեւ Միջերկրական ծով ու Պարսից ծոց:

Հայկեանների չառաւիղներից էին նաեւ Երուանդունիները: Արքայատոհմի հիմնադիրը Պարոյր Սկայորդու տոհմից սերուած Երուանդ Սակաւակեաց էր: Երուանդունիները Ք.ա. VI դարից գահակալել են Մեծ Հայքում, մշտական չփումներ են ունեցել ժամանակի հզօրագոյն տէրութեան՝ Աքեմենեան Պարսկաստանի հետ, ապա Ալէքսանդր Մակեդոնացու զօրքերի կողմից վերջինիս չախչախումից յետոյ IV դարի վերջերից իշխել են նաեւ Փոքր Հայքում, Ծոփքում եւ Կոմմագենէում: Ի դէպ, Ծոփք-Կոմմագենէի արքաներ Սամոսի (Շամ) եւ նրա որդի Արշամի օրօք (Ք.ա. 260–220-ական թթ.) հաւտուել են առաջին հայկական դրամները:

*Ք.ա. II դարի սկզբներից Երուանդունիներին յաջորդեց Արտաշէս Ա.-ն (Ք.ա. 189–160 թթ.), որը միայն մօր կողմից էր Երուանդական: Սակայն իր գահակալութիւնը օրինական ներկայացնելու համար իրեն կոչում էր **Արտաշէս՝ որդի Երուանդական:** Նա կարողացաւ մէկ պետութեան մէջ միաւորել Հայքի նահանգների մեծ մասը, հիմնադրել մայրաքաղաք Արտաշատը, իրականացնել բազմաթիւ բարեփոխումներ, որոնց համար էլ պատմութեան մէջ մնաց **Արտաշէս Բարեպաշտ** անունով:*

*Արտաշիսեաններուն արքայատոհմն իր հզօրութեան դադաթնակէտին հասաւ Տիգրան Բ. Մեծի օրօք (Ք.ա. 95–55 թթ.): Հայկական տէրութեան սահմանները կասպից ծովէն հասան Միջերկրական ծով, Եգիպտոսի հիւսիս-արեւելեան շրջաններ ու Պարսից ծոց: Պարտութեան մատնելով տարածաշրջանի ամենահզօր տէրութեանը՝ Պարթեւստանին՝ Տիգրան Մեծը ստիպեց պարթեւների թագաւորին յօդուտ իրեն հրաժարուելու **արքայից արքայ** պատուատիտղոսից: Ննթակայ երկրների հետ միասին Հայկական կայսրութեան տարածքն հասաւ չուրջ 3 մլն քառ. քմ.-ի: Մեզ են հասել Տիգրան Մեծի ու նրա յաջորդների Արտաւազդ Բ.-ի, Արտաչէս Բ.-ի, Տիգրան Գ.-ի, Տիգրան Դ.-ի հատած բազմաթիւ դրամներ՝ հայոց արքաների թագակիր դիմապատկերներով, թագաւորական ծիրանին հագած, **արքայից արքայ** կամ **մեծ արքայ** մակագրութիւններով: Արտաշիսեանների օրօք հելլենիստական մշակոյթը Հայաստանում հասաւ աննախադէպ բարձրութեան: Նրանց հիմնադրած Արտաշատ եւ Տիգրանակերտ քաղաքները վերածուեցին Արեւելքի խոշոր առեւտրա-արհեստագործական կենտրոնների:*

Ք.յ. I դարի I կէսին պարթեւա-հռոմէական երկարատեւ մրցակցութիւնն աւարտուեց 66 թ., երբ Հայոց գահն անցաւ Պարթեւստանի Արշակունի արքայ Վաղարշ Ա.-ի եղբօրը՝ Տրդատ Ա.-ին: Արշակունիները, լինելով Պարթեւներ, ժամանակի ընթացքում ամուսնական կապեր հաստատեցին հայ աղնուականական տների հետ եւ սերտօրէն կապուելով Հայաստանի հետ, հայացան: Աւելին՝ նրանք դէխաւորեցին հայ ժողովրդի պայքարը՝ 226 թ. Պարսկաստանում Պարթեւ Արշակունիներին տապալած Սասանեանների դէմ:

Հայ Արշակունիների օրօք (66–428 թթ.) Մեծ Հայքի թագաւորութիւնում տեղի ունեցան դարակազմիկ իրադարձութիւններ. 301 թ. Տրդատ Գ. Մեծի եւ Գրիգոր Լուսաւորչի ջանքերով Հայաստանն աշխարհում առաջինը պետականօրէն ընդունեց քրիստոնէական կրօնը: Խոսրով Կոտակ (330–338) հիմնադրուեց Դուին մայրաքաղաքը: IV դարի երրորդ քառորդին Պարսից արքայ Շապուհ Երկարակեացի ոտնձգութիւնների դէմ չնորհալի թագաւորներ Արշակ Բ.-ի եւ Պապի առաջնորդած պայքարի չնորհիւ Մեծ Հայքը պահպանեց իր տարածքային ամբողջականութիւնը եւ չարունակեց մնալ տարածաշրջանի կարեւոր երկրների շարքում: Վռամշապուհ Արշակունի արքայի (389–415) եւ Սահակ Պարթեւ կաթողիկոսի գործուն աջակցութեամբ 405 թ. հայ ժողովրդի հանճարեղ զաւակ Մեսրոպ Մաշտո-

ցը ստեղծեց հայոց գրերը, դրուեցին հայալեզու հարուստ մատենագրութեան հիմքերը: Հայաստանի 387 թ. պարսկա-հռոմէական բաժանումից եւ 428 թ. Արշակունիների հարստութեան անկումից յետոյ նրանց մի մասն անցաւ Բիւզանդիա: Ոմանք մտան ծառայութեան բիւզանդական արքունիք, իսկ Բարսեղ Ա.-ն 867 թ. հիմնադրեց կայսրութեան նշանաւոր Հայկական Մակեդոնական հարստութիւնը (867–1057):

Վերջապէս՝ Արշակունիները կատարելութեան հասցրեցին երկրի կառավարման համակարգը՝ բարելաւելով դեռ նախորդ ժամանակներից յայտնի գործակալութիւնների աշխատանքը: Մեզ հասած երկու կարեւոր փաստաթղթերի՝ «Գահնամակի» ու «Զօրանամակի» շնորհիւ մենք յստակ պատկերացում ենք կազմում Մեծ Հայքի թագաւորութեան պետական կառուցուածքի մասին: Պարզորոշ երեւում է, որ արքունիքի կողքին պետական կեանքում կարեւոր դեր են ունեցել գործակալութիւնները, որոնցից իւրաքանչիւրը եղել է այս կամ այն նշանաւոր նախարարական տան ժառանգական պաշտօնը: Սպարապետութեան (զօրքերի հրամանատարութիւն) գործակալութիւնը պատկանել է քաջարի Մամիկոնեաններին, հազարապետութիւնը (տնտեսական հարցերի կազմակերպում)՝ Ամատունիներին, թագադիր ասպետութիւնը (թագաւորին թագադրողները)՝ Բագրատունիներին, մաշխազութիւնը (արքունի թիկնազօրի պետեր)՝ Խորխոռունիներին եւ այլն: Սահմանակալ խոշոր նահանգների կառավարիչները, որոնք յայտնի էին դրդեչիներ անունով, արքունիքում յատուկ բարձերի վրայ նստում էին անմիջապէս թագաւորի կողքին: Տաս հազար եւ աւելի զօրք ունեցող նախարարներին կոչում էին բիւրաւորք, միւռնեներին՝ հազարաւորք, հարիւրաւորք եւ հիսնաւորք: Ուշագրաւ է, որ 428 թ. Արշակունիների հարստութեան անկումից յետոյ պետականութիւնը չկործանուեց, այլ անցաւ նախարարական տներին: Այդ մասին պատմիչ Եղիշէն գրում է, որ երբ պարսից արքունիքը «...իբրեւ զնա (Արշակունեաց վերջին արքայ Արտաշէսին – Ա.Մ.) եւս մերժեաց ի թագաւորութենէն, ի նախարարսն Հայոց անկանէր թագաւորութիւնն, զի թէպէտ եւ գանձն յարքունիս Պարսկաց երթայր, սակայն այրուձին Հայոց բովանդակ ի ձեռն նախարարացն առաջնորդէր ի պատերազմի»[2]:

---

[2] Եղիշէի վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին, ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց աշխատութեամբ Ե. Տէր-Մինասեան, Եր., 1957, էջ 6:

Պատահական չէ, որ մինչեւ IX դարի երկրորդ կէսը չնորհիւ պարսիկների, բիւզանդացիների ու արաբների դէմ նախաձարական տների (Արծրունիներ, Ռշտունիներ, Մամիկոնեաններ, Բագրատունիներ) մղած պայքարի, հնարաւոր եղաւ տարբեր դրսեւորումներով պահպանել հայոց պետականութիւնը, իսկ Բագրատունիներին՝ 885 թ. վերականգնել կորցրած թագաւորութիւնը:

IX–XI դարերում Հայաստանում Անիի կենտրոնական պետութեան հարեւանութեամբ ստեղծուեցին մի քանի այլ թագաւորութիւններ: Արդէն 908 թ. Վանայ լճի աւազանում ձեւաւորուեց Վասպուրականի Արծրունիների թագաւորութիւնը (908–1021): X դարի երկրորդ կէսին Բագրատունիները ստեղծեցին ինքնուրոյն թագաւորութիւններ նաեւ Կարսում (Վանանդի, 963–1064) եւ Լոռիում (Տաշիր-Զորագետի, 978–1118), իսկ Սիւնիները՝ Սիւնիքում (Կապանի, Բաղաց, 987–1170): Գագիկ Արծրունին (908–937) Աղթամար կղզու վրայ կառուցեց հայ միջնադարեան ճարտարապետութեան գլուխգործոց Սբ. Խաչ եկեղեցին, Աշոտ Գ. (Ողորմած) Բագրատունին (953–977) մայրաքաղաքը Կարսից տեղափոխեր Անի, այն կառուցապատեց, իսկ Զորագետի հովտում նրա կինը՝ Խոսրովանոյշ թագուհին հիմնադրեց Հաղպատի եւ Սանահինի վանական չքեղ համալիրները: Անիի թագաւորութիւնը հզօրացաւ յատկապէս Գագիկ Ա.-ի օրօք. Անին դարձաւ ժամանակի գեղեցկագոյն եւ խոշոր քաղաքներից մէկը, իր բազմաթիւ հոգեւոր կառոյցների պատճառով ստացաւ «Հազար ու մի եկեղեցիների քաղաք» անունը: Տաշիրի Բագրատունիները, որոնք յայտնի դարձան Կիւրիկեաններ անունով, կարողացան նաեւ սեփական դրամ հատել: Հայ ազնուականական տներից չատերը շարունակեցին իշխել Տայքում, Արցախում եւ այլուր՝ ունենալով ինքնավար կարգավիճակ: Հայ արքայական ու իշխանական տների հովանաւորութեամբ այդ դարաշրջանում աննախադէպ զարգացում ապրեց հայ մշակոյթը:

XII դ. վերջին Սիւնիքի Բաղաբերդ ամրոցի գրաւումով մայր հայրենիքում կործանուեց հայկական վերջին թագաւորութիւնք: Սակայն պետականութիւնը շարունակեց գոյատեւել Հիւսիսային Հայաստանում՝ Զաքարեանների, Վահրամեանների, Սիւնիքում՝ Օրբելեանների, Արցախում՝ Առանշահիկների, Դոփեանների ու Հասան-Ջալալեանների եւ կիսանկախ այլ իշխանութիւնների կարգավիճակով:

Անիի ու Կարսի թագաւորութիւնների կործանումից եւ սելճուկ-թուրքերի արշաւանքներից յետոյ Հայաստանից զանգուածային արտագաղթ սկսուեց դէպի Վրաստան, Հիւսիսային Կովկաս, Ղրիմ եւ յատկապէս՝ Կիլիկիա: Արտագաղթողների մէջ կային նաեւ թագաւորական ու ազնուականական տների ներկայացուցիչներ: Պետականութեան զգացողութիւնը տրամաբանօրէն բերեց օտար ափերում եւս պետութիւն ստեղծելու անհրաժեշտութեանը:

XI դ. վերջին Միջերկրական ծովի հիւսիս-արեւելեան ափամերձ շրջաններում ստեղծուեցին մի քանի հայկական իշխանութիւններ, որոնցից ամենակենսունակը եղաւ Ռուբէն իշխանի հիմնադրած Կիլիկեան պետութիւնը: Ռուբէնը դարձաւ Հերթական հայկական ազնուականական տոհմի՝ Ռուբինեանների հիմնադիրը: Վերջիններս մէկ դարի ընթացքում ընդարձակեցին իրենց տիրոյթները, Սիս բերդաքաղաքը դարձրեցին նստավայր եւ Լեւոն Մեծագործի օրօք (1187–1219) երկիրը հռչակեցին թագաւորութիւն: 1198 թ. յունուարի 6-ին՝ Սբ. Ծննդեան օրը Տարսոն քաղաքում, օտարերկրեայ հիւրերի ներկայութեամբ, մեծ հանդիսաւորութեամբ կաթողիկոս Գրիգոր Ջ. Ապիրատը Լեւոնին օծեց Հայոց թագաւոր: Այդ իրադարձութիւնը ցնծութեամբ ընդունուեց համայն հայութեան կողմից:

1226 թ. Ռուբինեաններին Հայոց գահի վրայ փոխարինեցին Հեթումեանները: Հեթում Ա.-ի գահակալութեան շրջանում (1226–1270) Կիլիկեան թագաւորութիւնը, յայտնուելով աշխարհաքաղաքական բարդ իրավիճակում, 1256 թ. դաշինք կնքեց աշխարհակալ մոնղոլական տէրութեան հետ եւ պահպանեց իր ինքնիշխանութիւնն ու տարածաշրջանի ազդեցիկ երկրի դիրքը: XIV դարում՝ մինչեւ 1375 թ. Կիլիկեան Հայաստանի անկումը, երկրում գահակալեցին Լուսինեան արքայատոհմի ներկայացուցիչները: Վերջին թագաւոր Լեւոն Ե.-ն (1373–1375), որին մայրաքաղաք Սիսի գրաւումից յետոյ Եգիպտոսի մամլուքները գերի էին տարել, եւրոպական տիրակալների չանքերով փրկագնով ազատուեց ու տեղափոխուեց Եւրոպա՝ գործունէութիւնը շարունակելով Իսպանիայում եւ Ֆրանսիայում: Լեւոն Ե.-ն, որին վիճակուած էր լինել Հայոց վերջին արքան, իր յաւերժական հանգիստը գտաւ Փարիզի հիւսիսում գտնուող Սեն Դենի տաճարում՝ Ֆրանսիական արքայական նշանաւոր տոհմերի աճիւնների կողքին:

Թագաւորութիւնը կորցնելուց յետոյ տարբեր ժամանակներում հայ ազգային գործիչները քայլեր կատարեցին այն վերականգնելու

ուղղութեամբ: Նման ջանքերը երբեմն արդիւնք էին տալիս: Այսպէս՝ 1465 թ. Աղթամարում Զաքարիա կաթողիկոսն իր եղբօրորդուն՝ Սմբատ Սեֆեդինեանին թագադրեց: Յաւելք, Սմբատի իշխանութիւնը տարածուեց միայն Աղթամարի ու Վասպուրականի հետ մի քանի շրջանների վրայ եւ գոյութիւն ունեցաւ մինչեւ 1471 թ.: Այդուհանդերձ, ինչպէս ճիշտ նկատել է պատմաբան Ա. Ութուջեանը, այդ իրադարձութիւնը մեծ տպաւորութիւն թողեց հայութեան շրջանում, քանի որ «Սմբատ Սեֆեդինեանը մի կարճ պահ ժամանակակիցներին յիշեցրեց Վասպուրականի, ինչու չէ նաեւ բովանդակ Հայաստանի, անցեալի փառքերը»[3]:

Ճիշտ է՝ այդուհետ թագաւորութիւնը վերականգնել չյաջողուեց, սակայն պետականութիւնը զանազան դրսեւորումներով (իշխանապետութիւններ, կիսանկախ ղեռնային համայնքներ եւ այլն) գոյատեւեց Մոկսում, Շատախում, Համշէնում, Սասունում, Զէյթունում, Արցախում, Սիւնիքում եւ այլուր: Յիշատակութեան արժանի են յատկապէս Արցախի, Սիւնիքի, Գեղարքունիքի, Արարատեան երկրի մելիքութիւնները, որոնց առաջնորդ — մելիքներն օժտուած էին ռազմա-քաղաքական ու տնտեսական իշխանութեամբ: Պատահական չէ, որ արաբերէն **մելիք-մլիք** նշանակում է թագաւոր: Կարեւորելով հայկական մելիքութիւնների դերը տարածաշրջանում թուրքական ոտնձգութիւնների դէմ պայքարի մէջ՝ Պարսից շահերն իրենց նպաստն էին բերում այդ կազմաւորումների ամրապնդման գործին[4]: Զարմանալի չէ, որ Թահմասպ Բ. շահը 1724 թ. պաշտօնապէս ճանաչեց Սիւնիքում Դաւիթ-Բէկի իշխանութիւնը, իսկ Նադիր շահը 1736 թ. Արցախի հինգ իշխանութիւններից ստեղծեց մի ազդեցիկ պետական կազմաւորում՝ Խամսայի (խամսա արաբ. նշանակում է՝ հինգ) մելիքութիւնները եւ հայ մելիքներին շնորհեց նոր արտօնութիւններ: Հայկական մելիքութիւններից շատերը պահպանուեցին մինչեւ XIX դ. սկիզբը՝ Ռուսական կայսրութեան կողմից Արեւելեան Հայաստանի գրաւումը:

Հայկական թագաւորական ու իշխանական տների պատմութիւնը, որ դարեր շարունակ կազմել է Հայոց պատմութեան ողնաշարը,

---

[3] **Ութուջեան Աղաւնի**, Հայկական պետականութեան վերականգնման փորձ ԺԵ. դարի կէսերին, Հայկազեան հայագիտական հանդէս, հ. ԺԹ., Պէյրութ, 1999, էջ 107–122:

[4] Տես Մատենադարան, Ստեփոսիկոսական դիւան, թղթապանակ 1 գ, վաւերագիր 1032:

բազմաթիւ սերունդների դաստիարակել է հայրենասիրական շնչով, անսահման հաւատ ներշնչել ապագայի նկատմամբ: Հենց այդ համոզումն ու հաւատն էին, որ սերնդէ սերունդ անցնելով, 1918 թ. մայիսի 28-ին կեանքի կոչեցին մերնորագոյն դարաշրջանի պետականութիւնը՝ Հայաստանի Հանրապետութիւնը:

ՀՕՄ-ի Թորոնթոյի (Կանադա) «Ռուբինա» մասնաճիւղ, 25-րդ Տոհմիկ օր Հայոց Փառքի, Նուիրուած՝ Հայաստանի Ա. Հանրապետութեան 100-ամեակին, Զօնուած՝ Հայոց Թագաւորական Տոհմերուն Ուրարտական, Արտաշէսեան, Արշակունեաց, Բագրատունեաց և Կիլիկիոյ, տարեգիրք, Թորոնթօ, 2018, 1 դեկտեմբերի, էջ 14–20:

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԵՐԵՎԱՆԸ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՐԴԻՆ

Երևանն Արևելյան Հայաստանի վարչատնտեսական համակարգում

XIX դարասկզբին Հայաստանը շարունակում էր մնալ բաժանված Օսմանյան կայսրության և շահական Պարսկաստանի միջև: Հյուսիսային Հայաստանի մի շարք գավառներ՝ Լոռին, Շամշադինը, Փամբակը և Հարավային Ղազախը (այժմ՝ Իջևանի տարածաշրջան — խմբ.), Արևելյան Վրաստանի՝ Քարթլի-Կախեթի թագավորության կազմում էին: Արևմտյան Հայաստանը տրոհված էր վարչական խոշոր միավորների, որոնք կոչվում էին էյալեթներ: Արևելյան Հայաստանում կազմավորված նահանգները հայտնի էին խանություններ կամ բեկլարբեկություններ անվանումներով:

Արևելյան Հայաստանում նահանգների ընդհանուր կառավարումն իրականացնում էր Երևանում նստող խանը, ում հաճախ կոչում էին սարդար:

Երևանի խանը պարսից շահի առաջ պատասխանատու էր ոչ միայն Երևանի, այլ նաև Արևելյան Հայաստանի մյուս նահանգների՝ Նախիջևանի, Գանձակի, Մակուի խանների գործողությունների համար: Սարդարի առանձնահատուկ դիրքը մատնանշում էր Երևանի կարևորությունը նաև ամբողջ տարածաշրջանում: Հուսեյն Կուլի խանի օրոք (1807–1827 թթ.) խանության եկամուտներն արդեն միանձնյա տնօրինում էր սարդարը: Նա բազմաթիվ այլ հարցերում ևս գործում էր առանց շահական իշխանության հետ իր քայլերը համաձայնեցնելու:

Երևանի խանության սահմանները հյուսիսում ձգվում էին մինչև Սևանա լիճ և Քարթլի-Կախեթի թագավորություն: Հարավում Նախիջևանի, արևելքում Ղարաբաղի խանություններ էին, արևմուտքում՝ Օսմանյան կայսրությանը ենթակա Բայազետի և Կարսի գավառները, որոնցից սույն խանությունը հիմնականում բաժանվում էր Հայկական պարի լեռնաշղթայով և Ախուրյան գետով:

Երևանի խանության տարածքը բաժանվում էր 15 գավառների (մահալ):

Օտար տիրապետության պայմաններում այդ գավառների մի մասի երբեմնի հայկական անուննները կա՛մ փոխվել էին, կա՛մ աղավաղվել թուրք-թաթարական հնչողությամբ: Սակայն տեղի հայությունը շարունակում էր գործածել դրանց հայկական անունները, ոչ թե Կարբիբասար, Վեդիբասար, Գառնիբասար, այլ համապատասխանաբար՝ Կարբի, Վեդի, Գառնի և այլն: Խանության տարածքում եղած միակ քաղաք Երևանը համարվում էր վարչական առանձին միավոր և որևէ մահալի կազմի մեջ չէր մտնում:

Գավառապետները, որ հայտնի էին միրբուլուկներ անունով, նշանակվում էին Երևանի սարդարի կողմից և պարտավոր էին հետևել մահալում կարգուկանոնի հաստատմանը, հարկերի հավաքմանն ու բաշխմանը, դատական վճիռների կատարմանը:

Որքան էլ ինչպես գավառների, այնպես էլ Երևանի բնակչությունը զրկված էր երկրի կարևոր գործերի կառավարմանը մասնակցելու հնարավորությունից, այնուամենայնիվ՝ առանձին հարցերում ուներ որոշակի ինքնուրույնություն: Առավել հայաշատ գավառների կառավարիչներն ազգությամբ հայեր էին և սովորաբար կրում էին մելիքական տիտղոսներ: Երևանի կառավարումը հաճախ իրականացնում էին մելիք Աղամալյանցներն ու Գեղամյանները:

Ներքին համայնքային խնդիրների կարգավորման գործում հայոց եկեղեցին, հայ մելիքական դասն օժտված էին դատական որոշակի լիազորություններով:

Քաղաքը կառավարելու համար սարդարին կից գոյություն ուներ հատուկ խորհուրդ, որի մեջ ընդգրկված էին զանազան պաշտոնյաներ: Երևանի կարգուկանոնի համար անմիջապես պատասխանատու էր սարդարի կողմից նշանակված ռատիկանապետը, ով հայտնի էր դարուղա անունով: Վերջինս հարկերի հավաքման, բաշխման և այլ հարցեր լուծում էր մելիքների, հարյուրապետների (յուզբաշի), տասնապետների (չաուշ), չուկայապետի (բազարբաշի), կշռապետի (միզանդար) և մյուսների միջոցով: Սարդարին էին ենթարկվում մի քանի հազարից մինչև մեկ-երկու տասնյակ հազար զինվորից բազկացած ռազմական ուժերը: Սարդարին ենթակա ամենաընտիր զորաջոկատում՝ սարբազական գնդում ծառայող զինվորականների մեջ քիչ չէին ազգությամբ հայ ռազմիկները:

Երևանի տնտեսական աճը որքան էլ նկատելի էր, այն պարսկական տիրապետության պայմաններում չարունակում էր մնալ առավելապես ավատատիրական հարաբերությունների մակարդակի վրա: Ուստի, այդ ժամանակահատվածում հնարավոր չէր խոսել չուկայական՝ ազգային հարաբերությունների, առավել ևս՝ արդյունաբերության մասին: Հետևապես խոսքը արդյունագործության և արհեստների մասին է:

Հենվելով Ի. Շոպենի տվյալների վրա և դրանցից առանձնացնելով 1828–1829 թթ. Երևանում վերաբնակվածների ղբաղմունքը՝ հնարավոր է դառնում պարզել XIX դարասկզբին քաղաքում առկա մասնագիտությունների թիվը՝ չուրջ 65 տեսակ: Տեղաբնիկ 1904 արհեստավորների մեծ մասը՝ 874-ը, բաժին էր ընկնում Շահար թաղամասին, 743-ը՝ Թափաբաշին, 287-ը՝ Դեմիրբուլաղին: Արհեստավորների շարքերում մեծ թիվ էին կազմում մաշկակարները, դերձակները, դարբինները, կաշեգործները, վարսավիրները, թամբագործները, հացագործները, զինագործները, խառատները, մսագործները: Բերդում կար թնդանոթաձուլարան: Երևանն ուներ նաև վառոդի և ապակու ձեռնարկություններ, դրամահատարան և այլն: Բերդի մոտ գտնվող վառոդի գործարանը, որը հիմնել էր Կարապետ անունով մի հայ արհեստավոր, աշխատում էր Հրազդան գետից հանված ջրի ուժով:

Վաճառականների թիվը քաղաքում 219-ն էր: Բայց այդեպիսանների մեծ թիվը (668 մարդ)՝ միանշանակորեն հուշում էր, որ Երևանում գլխավոր զբաղմունքը չարունակում էր մնալ այդեգործությունը: Միջնադարյան քաղաքների օրինակով Երևանի արհեստավորները ևս միավորվում էին մասնագիտական կազմակերպություններում՝ համքարություններում:

Երևանը XIX դարի առաջին երեսնամյակի պատերազմների տարիներին

Արևելյան Վրաստանը Ռուսաստանին բռնակցելու մասին 1801 թ. հունվարին Պավել I-ի ստորագրած հրամանագրից հետո ռուսական արքունիքն անցավ ավելի գործուն քայլերի Անդրկովկասի մնացած տարածքները, հատկապես Երևանի ու Նախիջևանի խանությունները տիրելու ուղղությամբ: Քանի որ խոսքն արդեն լուն հայկական հողերի մասին էր, Վրաստանում ռուսական զորքերի

Հրամանատար Կ. Քնորինգին գրած նամակում ցարը հրահանգում էր առանձնակի ուշադրություն հատկացնել հայերին և փորձել «այժմ զբաղվել ոչ թե նվաճումներով, այլ Հայաստանի հետ կամավոր համաձայնագիր ձեռք բերելով»: Ռուսական դիվանագիտությունը ենթադրում էր, որ սիրաշահելով հայերին՝ կարելի է նրանց միջոցով ազդել Երևանի խանի վրա և նրան ստիպել ընդունել ռուսահպատակություն:

Վրաստանում ռուսական զորքերի նոր հրամանատար Պ. Ցիցիանովը 1803 թ. ապրիլի 2-ին Երևանի նշանավոր մելիք Աբրահամ Աղամալյանին, մեծամեծներին և ամբողջ հայ բնակչությանը հասցեագրած դիմումում կոչ էր անում Դավիթ-Դանիել կաթողիկոսական պայքարում ամեն կերպ աջակցել ռուսական կողմնորոշում ունեցող Դանիելին՝ դրանով իսկ նպաստելով տարածաշրջանում Ռուսաստանի ազդեցության ամրապնդմանը: Հայ բնակչությունը հայտնվել էր վտանգավոր իրավիճակում: 1803 թ. վերջին ռուսական զորքերը մտան Գանձակի խանության տարածք և 1804 թ. հունվարի սկզբին գրավեցին նրա կենտրոնը: Տեղի հայությունը ողջունեց ռուսների մուտքը տարածաշրջան՝ հետևապես քայլ առ քայլ հայտնվելով պարսկական իշխանությունների վրեժխնդրական գործողությունների կիզակետում:

Ռուսաստանի կողմից Երևանի խանությունը գրավելու ռուսների քայլերը կասեցնելու և ժամանակ չահելու նպատակով Մամադ խանը Պ. Ցիցիանովի մոտ ուղարկեց պատվիրակություն՝ խոստանալով հնազանդորեն ծառայել Ռուսական կայսրությանը: Միաժամանակ նա բանտից ազատեց Երևանի մելիքներից Գեղամյանցին՝ նրան ևս առաջարկելով միջնորդ դառնալ իր և ռուսների միջև: Ի հավաստումն իր խոստումների՝ Ցիցիանովը պահանջեց թուլյատրել իր 500 զինվորներին տեղակայել Երևանի բերդում: Ստանալով նման պատասխան՝ Մամադը Նախիջևանի խանի, Երևանցի երևելի դեմքերի՝ մելիք Գաբրիել Գեղամյանցի ու Հովհաննես Հարյուրապետի միջոցով ռուսներին առաջարկեց Երևանի փոխարեն հաստատվել Էջմիածնի շրջանում՝ հավաստիացնելով, որ պատրաստ է Ցիցիանովի ուղարկած մի ներկայացուցչի թուլյատրել մտնել բերդ և այնտեղ վերջինիս հսվատարմության երդում տալ: Այս անլուրջ պատասխանից պարզ էր դառնում, որ Մամադ խանը ձգտում էր միայն ժամանակ չահել՝ սպասելով չհական զորքերի ժամանմանը:

1804 թ. գարնանը ռուսական զորքերն ուղղություն վերցրին դեպի Երևան: Պարսկական իշխանությունները սաստկացրին հայերի հալածանքները, հայության ղժալի մասին ստիպեցին տարհանվել և բռնել գաղթի ճանապարհը դեպի հարավ՝ Պարսկաստանի խորքերը: Տեղահանված խաղաղ բնակիչներին փոխարինեցին 7-հազարանոց պարսկական կայազորն ու նրան Թեհրանից օգնության հասած մի քանի հազարանոց չահական զորքերը: Եղան հայերի նոր ձերբակալություններ: Խանի զինյալներն ամեն վայրկյան նրանց հետ կարող էին դաժան հաշվեհարդար տեսնել: Նույնիսկ նման պայմաններում որոշ հայեր՝ որպես կամավորականներ, կարողացան անցնել ռուսների կողմը և խանական զորքերի պաշարումը ճեղքելու փորձերի ժամանակ մայոր Մոնտրեզորի գլխավորած կազակական ջոկատի կազմում մարդկային զոհեր պատճառել պարսիկներին:

Հունիսի սկզբին Ցիցիանովի զորքերն ընդհուպ մոտեցան Երևանի բերդին և պաշարեցին այն: Մամադ խանը կարողացավ զանազան կեղծ խոստումներով ռուսներին հեռու պահել ընդհանուր դրոհից: Պաշարումը ձգձգվեց: Պարսից չահն օգնական նոր զորքեր ուղարկեց:

Երևանում պաշարվածների վիճակն օրեցօր ծանրանում էր, սննդամթերքը սպառվում էր: Հատկապես ահագնանում էր բերդում արգելափակված հայերին սպառնացող վտանգը: Ստեղծված իրավիճակից դուրս գալու համար նրանք ժամանակ առ ժամանակ փախուստի էին դիմում: Ըստ ռուսական ռազմական զեկուցագրերի՝ եղել են դեպքեր, երբ բերդից խումբ-խումբ փախուստի են դիմել անգամ երեխաները: Հավանաբար նրանց ծնողները՝ ենթադրելով, որ պարսկական կայազորը կրակ չի բացի երեխաների վրա, նրանց դրդում էին փախուստի: «(Օգոստոսի) 14-ին կարդում ենք մի վավերագրում,- բերդից դուրս եկան մի հայ ու հայուհի՝ երկու երեխաներով...: (Ամսի – խմբ.) 16-ին երեկոյան կողմ բերդից փախան հինգ հայ մանչուկներ»: Նույն փաստաթղթի համաձայն՝ ևս երկու հայեր փախուստի դիմեցին ամսի 17-ին: Օգոստոսի 23-ին «բերդից դուրս եկան երկու հայեր, որոնք փախել էին պարսիկների հալածանքների պատճառով»: Ի դեպ, սննդամթերք (այն է՝ հիմնականում այգիներից մրգեղեն) հայթայթելու նպատակով բերդից դուրս գալու փորձեր էին անում նաև պարսիկները: Վերջիններիս նկատմամբ ռուսական զորքերը կիրառում էին զենք կամ նրանց

գերի էին վերցնում: Ակնհայտ է, որ վերոհիշյալ դեպքերի պատճառով քաղաքի բնակչության թիվն արագորեն նվազում էր:

1804 թ. օգոստոսի վերջին և սեպտեմբերի սկզբին Ցիցիանովը, փոխանակ անցնելու գրոհի, կրկին չարունակեց անպտուղ բանակցությունները Մամադ խանի հետ՝ պահանջելով առանց կռվի հանձնել բերդաքաղաքը: Կողմերի միջև սուրհանդակների ու բանագնացների գործառույթը շարունակում էին կատարել երևանցի հայերը: Տեսնելով, որ իր զորքի սննդամթերքն սպառվում էր, տարբեր կողմերից պարսից գահաժառանգ Աբբաս Միրզայի ջոկատների հարձակումները դառնում էին վտանգավոր, իսկ 200–300 զինվորների չրջանում էլ սկսվել էին հիվանդություններ, Ցիցիանովը հարկադրված եղավ սեպտեմբերի 4-ին դադարեցնել պաշարումը՝ ուղղություն վերցնելով դեպի Էջմիածին: Մայր աթոռում ռուսական զորքերը «ստացան» հարուստ սննդամթերք, ինչպես նշվում է, ռուսական պաշտոնական զեկուցագրերում, այնտեղից դուրս գալուց առաջ իրենց հետ հանեցին «մնացած եկեղեցական հարստությունները, որպեսզի դրանք չընկնեն պարսիկների ձեռքը»: Մինչև ռուսական տիրապետության սահման՝ Ղարաքիլիսա հասնելը՝ Ապարան-Համամլու ճանապարհին, պարսիկների նորանոր հարձակումների պատճառով ռուսներն ունեցան նոր կորուստներ: Տեղի հայությանը մեծ տառապանքներ պատճառած ռուսական զորքերի երևանյան առաջին արշավանքը ձախողվեց:

Երևանը գրավելու ռուսական սրբունիքի ձգտումն այնքան մեծ էր, որ 1806 թ. դեկտեմբերին սկսված ռուս-թուրքական պատերազմը, այն է՝ միաժամանակ պարսիկների և թուրքերի դեմ երկու ճակատով կռվելու իրողությունն, իսկ արգելք չեղավ այդ հանդուգն ծրագրից հրաժարվելու համար: Ուստի՝ 1808 թ. աշնանը նոր հրամանատար Ի. Գուդովիչը, չունենալով մեծաքանակ ուժեր, ձեռնարկեց երևանյան նոր արշավանք: Քանի որ առաջին արշավանքի ընթացքում ռուսներն ակտիվ ռազմական գործողություններ չէին իրականացրել բերդը մնացել էր անվնաս: Ավելին՝ անգլիացիների ու ֆրանսիացիների օժանդակությամբ այն ավելի էր ամրացվել: Նոր՝ Հուսեյն Կուլի խանը կայազորի զինվորների թվաքանակը հասցրել էր մինչև 5 հազար, ավելացրել էր պարիսպներին տեղադրված թնդանոթների թիվը, մինչև պաշարումը երևանից Պարսկաստան տեղափոխել իր ունեցվածքի մեծ մասը: Բերդի պարետ էր նշանակվել խանի եղբայրը՝ Հասան խանը: Պարսիկներին օգնելու

նպատակով Երևան էր ժամանել Նապոլեոն Բոնապարտի բանակի բարձրաստիճան սպաներից մեկը:

Աշտարակի մոտ տարած հաղթանակից հետո սեպտեմբերի 29-ին, ռուսները պաշարեցին Երևանը: Ռուսական հետախուզական տվյալներով բերդում փակված 7 հարյուր հայ ու թաթար ընտանիքները, նորից հայտնվելով նոր փորձությունների առջև, սպասում էին իրենց սպառնացող «կործանարար ռազմական գործողությունների շուտափույթ ավարտին և ռուսների կողմից Երևանի գրավմանը»:

Ռուսական հրամանատարությունն այս անգամ էլ ձեռնպահ մնաց ընդհանուր հարձակողական գործողություններից և բավարարվեց միայն Աբբաս Միրզայի ուղարկած օգնական զորքերի մուտքը Երևան արգելափակելու քայլերով: Շաբաթներ տևած անպտուղ բանակցություններն ավելի ու ավելի հանդուգն ու համարձակ դարձրին Հասան խանին: Մինչդեռ ռուսների ուժերն օրեցօր սպառվում էին: Միայն նոյեմբերի 17-ի լուսադեմին Գուդովիչն ընդհանուր գրոհի հրաման արձակեց: Բայց թանկագին ժամանակն արդեն ձեռքից բաց էր թողնվել, բերդը մնաց անառիկ:

Զգուշանալով վերահաս ձմռան պատճառով դեպի Վրաստան տանող ճանապարհների փակման հեռանկարից նոյեմբերի վերջին ռուսական հրամանատարությունը դադարեցրեց պաշարումը: Ռուսները թողեցին նաև մինչ այդ գրաված Նախիջևանն ու Արարատյան դաշտի բնակավայրերը:

1812 թ. մայիսին ռուս-թուրքական և 1813 թ. հոկտեմբերին ռուս-պարսկական հաշտության պայմանագրերից հետո տարածաշրջանում հաստատվեց խաղաղություն: Երևանի ու Նախիջևանի խանությունները կրկին մնացին Պարսկաստանի տիրապետության տակ: Ավերված ու լքյալ տարածքները վերաշինելու ուղղությամբ առանձնակի մեծ աշխատանք ծավալեցին հատկապես պարսկական իշխանությունները: Սակայն կրկին իրենց վերահսկողության տակ մնացած տարածքները «վերաբնակեցնելու» նպատակով նրանք սաստկացրին հայերի հալածանքները: Մահվան սպառնալիք կախվեց բոլոր այն հայերի գլխին, ովքեր կփորձեին փախուստի դիմել դեպի ռուսապատկան շրջաններ: Պատահական չէ, որ հետախուզության միջոցով այդ մասին իրազեկվելով Վրաստանում ռուսական զորքերի գլխավոր հրամանատար Ա. Երմոլովը 1816 թ. հրահանգում էր չխրախուսել Երևանի և նրա խանության բնակչութ-

յան վախուստը Ռուսաստանին ենթակա տարածքներ, առավել ևս, որ այդ երկրամասը գրավելու ծրագիրը նորից բերվում էր օրակարգ:

Շահական Պարսկաստանը, համոզված լինելով, որ առաջիկայում Երևանի ու Նախիջևանի համար պայքարը կրկին թեժանալու է, սկսեց նախապատրաստվել պատերազմի: Ռուսական զորքերի երևանյան արշավանքների ձախողումները պարսիկներին հուշում էին, որ Արևելյան Հայաստանը Պարսկաստանի կազմում պահելու իրենց գլխավոր կռվանը մնում էր Երևանը: Ռուստի՝ չարունակեցին բերդաքաղաքի ամրացման ու վերաբնակեցման քաղաքականությունը:

1820-ական թթ. սկզբին ծագած թուրք-պարսկական պատերազմում ունեցած հաջողությունները Պարսկաստանին մղեցին համարձակ քայլերի նաև Ռուսաստանի դեմ: Ստանալով աջակցության խոստումներ Անգլիայից՝ 1826 թ. հուլիսին պարսից գահաժառանգ Աբբաս Միրզայի 60-հազարանոց զորքը երկու ուղղություններով ներխուժեց Շիրակ և Ղարաբաղ: Շիրակի ու Փամբակի տասնյակ գյուղերի հայ բնակիչներ կողոպտվեցին ու գերեվարվեցին: Սակայն չուտով հայ կամավորականների ու աչխարհազորայինների ակտիվ մասնակցությամբ Շուշիի ռուսական կայազորի հերոսական պաշտպանության և սեպտեմբերի առաջին կեսին պարսիկների դեմ Շամքորի և Գանձակի հաղթական ճակատամարտերում ռուսների տարած հաղթանակներից հետո ռազմաքաղաքական իրավիճակը փոխվեց: Պարսիկներն արագորեն սկսեցին Արաքսյան դաշտի բերքը հասցնել Երևան՝ փորձելով պատսպարվել բերդի պարիսպների հետևում:

Շուտով նոր գլխավոր հրամանատար Իվան Պասկևիչն Արևելյան Հայաստանում իր գերխնդիրը դարձրեց Երևանի գրավումը: 1827 թ. մարտից պարսկական իշխանությունները կրկին գործի դրեցին իրենց նենգ «զինանոցը»՝ սկսելով քաղաքի ու շրջակայքի բնակչությանը տեղահանել ու գերեվարել դեպի Հարավ: Երևանում եղած մի զարաքիլիսեցի հայից ռուսական հրամանատարությունն իմացավ, որ «Երևանի խանության բոլոր բնակիչները, որոնք (այժմ – խմբ.) տեղակայված են Արաքսի ձախ ափին, իրենց ամբողջ ունեցվածքով քշված են դեպի գետեզերք, և երբ մեր զորքերը չարժվեն դեպի Երևան, սարդարի կարգադրության համաձայն՝ նրանք պետք է անցկացվեն Արաքսը՝ Մասիսի խոների մոտ, և այն-

տեղից տարվելու են Պարսկաստան: Որոշված է նրանց ամենատեսակ մթերքն ու կացարանները կրակի մատնել»: Անշուշտ, անվերապահորեն չի կարելի ընդունել վերոհիշյալ փաստաթղթում բերված այն հաղորդումը, թե այդ ժամանակ բռնագաղթեցվել է խանության ողջ բնակչությունը: Հայտնի է, որ սեպտեմբերի վերջին՝ ռուսների կողմից բերդի գրավումից առաջ միայն Երևանում կար տարբեր տեղերից այնտեղ քշված չուրջ 10 հազար հայ բնակիչ:

Երկրամասն ու նրա կենտրոն Երևանն ամայացումից փրկելու համար այս անգամ ռուսական հրամանատարությունն ընդառաջ դնաց հայերի հորդորներին և ծավալած ռազմական գործողություններով փորձեց թիկունքից փակել դեպի պարսկական ներքին նահանգներ տանող ճանապարհը: Ամռան ամիսներին ռուսներն հակառակորդից ազատեցին Արարատյան դաշտը, արդեն հունիսի վերջին գրավեցին Նախիջևանը: Այնուամենայնիվ, ինչպես երևում է արխիվային վավերագրերից, ապրիլի վերջի դրությամբ պարսիկներին հաջողվեց բռնագաղթյալներից Կըրխբուլաղի (Երևանի չրջակայքի) ու Սևանի ավազանի բնակիչներին անցկացնել Արաքսը: Մի խումբ երևանցիների էլ սարդարը կարողացավ էրզրումի սերասկյարի համաձայնությամբ տեղավորել Բայազետի գավառի տարածքում:

Օգոստոսի 17-ի Օշականի ճակատամարտից և սեպտեմբերի 20-ին Սարդարապատի գրավումից հետո ռուսական զորքերը մոտեցան Երևանին և նույն ամսի 24-ին հիմնավորապես օղակեցին բերդը: Այստեղ բերվեց ռուսական ծանր հրետանին:

Կրած ծանր պարտություններից հետո Հուսեյն Կուլի խանը փախուստի դիմեց և կտրելով պարսկա-թուրքական սահմանը՝ անցավ Բայազետի փաշայության տարածք: Նա փորձում էր այստեղ հաստատված երևանցիներին ստիպել իր հետ տեղափոխվել Պարսկաստան: Սակայն վերջիններս ոչ միայն տեղի չտվեցին սարդարի պահանջին, այլև հրացանային կրակ բացեցին նրա պահակախմբի վրա՝ հարկադրելով փախչել Խոյ: Երևանի պաշտպանությունը մնաց Հասան խանի վրա: Պարսիկներն իրենց տրամադրության տակ ունեին 6-հազարանոց կայազոր և ավելի քան 50 թնդանոթ: Հազարավոր երևանցիներ, որոնց պարսիկները քշել էին բերդի պարիսպներից ներս, դեպքերի ականատես, ռուս դիվոորական Ե. Լաչինովի վկայությամբ՝ բաց երկնքի տակ, նեղլիկ փողոցներում մի կերպ իջկված՝ հայտնվել էին պատանդի կարգավիճակում:

Սեպտեմբերի 25-ի լուսադեմին հրանոթային կրակ տեղաց բերդի վրա: Թշնամու պատասխան հրետակոծության պայմաններում ռուսական զորքն ու հայ աշխարհազորայիններն ընդհուպ մոտեցան պարիսպներին: Սեպտեմբերի 30-ի գիշերը հակառակորդը նկատելով, որ ռուսները բերդի շրջակայքում տեղադրում են հրետանային մարտկոցներ, կրակ բացեց նրանց վրա՝ վիրավորելով մի քանի զինվորականների: Պասկևիչը հրամայեց սկսել սաստիկ հրետակոծությունը: Ռուսական հրամանատարությանը ներկայացած Հասան խանի սուրհանդակը հայտնում էր, որ իրենք պատրաստ են հանձնել բերդն այն պայմանով, որ Պարսկաստանից ստացվի Աբբաս Միրզայի համաձայնությունը: Սակայն Պասկևիչը հայտնում էր, որ իր համար բերդի հանձնման որևէ նախապայման ընդունելի չէ և պահանջում էր շարունակել ռմբակոծությունը: Բերդի հյուսիսային ուղղությամբ սկսվել էր նաև տեղ հասած գեներալ Կրասովսկու զորախմբի գրոհը:

40 հրանոթներից ավելի քան 1600 արկ արձակվեց բերդի ուղղությամբ: Ուժեղ հրետակոծությունից մեծապես տուժեց ոչ միայն կայազորը, այլ նաև այնտեղ գտնվող խաղաղ բնակչությունը: Ականատեսի վկայությամբ՝ «սարսափը պատել էր բնակիչների սրտերը, կանանց աղաղակները, երեխաների ճիչերը լսվում էին գիշերային լռության մեջ..., դժբախտներն ամեն րոպե սպասում էին տանջալից մահվան և հայացքով հետևում էին ռումբերի ահեղ թռիչքին..., որոնք ամենուր մահ ու ավեր էին սփռում»: Շուտով քանդվեցին հարավարևելյան պարիսպները, որոնց վրա երևում էին քաղաքի մի խումբ բնակիչներ, ովքեր Հասան խանի դեմ ապստամբած բնակիչների անունից սպիտակ դրոշներով ներկայանում էին ռուսներին՝ հայտնելով բերդը հանձնելու իրենց համաքաղաքացիների մտադրությունը: Հոկտեմբերի 1-ին ռուսներն ու հայ աշխարհազորայինները ներթափանցեցին ամրոց: Հյուսիսային կողմից բերդ մտած կրասովսկու զինվորները տեղի բնակիչների օգնությամբ մզկիթում գերի վերցրին Հասան խանին: «Աննկարագրելի սրտառուչ էր ուրախության այն պատկերը,- գրում է Ե. Լաչինովը,- որով մեզ դիմավորում էին հայ ընտանիքները, երբ մենք գրավում էինք այն (Երևանը – խմբ.)»:

Ռուսների ձեռքն անցավ 35 թնդանոթ, մեծ քանակությամբ ռազմամթերք ու սննդամթերք, դրոշներ:

Գերի ընկան տիտղոսակիր մեկ տասնյակի չափ խաներ, ավելի քան 3 հազար սպաներ ու սարբազներ: Սարսափելի հրետակոծությունից ամբողջ բերդի պարիսպներն ու շինությունները մեծապես տուժեցին, նաև զգալի թվով զոհեր կայազորի ու խաղաղ բնակիչների շրջանում: Ռուսների կորուստներն անհամեմատ քիչ էին՝ 52 սպանված ու վիրավոր:

Երևանի գրավումը հայության կողմից ընդունվեց ցնծությամբ: Մի քանի օր քաղաքում տեղի ունեցան տոնախմբություններ, կազմակերպվեց չքահանդես: Բազմաթիվ զինվորներ պարգևատրվեցին «Երևանի գրավման համար» մեդալով, Ի. Պասկևիչին շնորհվեց «Կոմս Էրիվանսկի» պատվատիտղոսը: Պատմական այդ իրադարձությունը հայ ժողովուրդն ընկալեց որպես քրիստոնյա երկրի կողմից իրենց ազատագրելու իրողություն՝ անգամ կարծելով, թե Ռուսաստանը կարող է վերականգնել հայկական պետականությունը:

Ինչպես ժամանակի. այսպես էլ հետագայի հայ մեծերի՝ Ներսես Աշտարակեցու, Հարություն Ալամդարյանի, Հովհաննես Թումանյանի և մյուսների կողմից 1828 թ. փետրվարի 10-ի Թարքմենչայի ռուս-պարսկական պայմանագրով Արևելյան Հայաստանի ու նրա վարչաքաղաքական կենտրոն Երևանի միացումը Ռուսական կայսրությանը գնահատվել է որպես շրջադարձային իրադարձություն. արևելահայությունը հայտնվեց կյանքի ու գույքի անհամեմատ ավելի ապահով պայմաններում, Երևանը, Արարատյան դաշտն ու շրջակա գավառները կրկին վերածվեցին հայահավաքման օջախների: Ընդամենը մի քանի տասնամյակ անց սկիզբ առավ Երևանի եվրոպականացման դանդաղ, բայց հաստատուն գործընթացը:

Ժողովրդագրական իրավիճակը

Ի՞նչ ժողովրդագրական իրավիճակ էր Երևանամ XIX դարի առաջին քառորդին: Պայմանավորված տարածաշրջանում ռազմաքաղաքական իրավիճակի հարատև փոփոխություններով (մասնավորապես 1804–1813 թթ. ռուս-պարսկական, 1806–1812 թթ. ռուս-թուրքական և 1821–1823 թթ. թուրք-պարսկական պատերազմներ) Արևելյան Հայաստանում և նրա կենտրոն Երևանում տեղի ունեցան ժողովրդագրական որոշակի տեղաշարժեր: Ելնելով նշված հանգամանքից՝ բնակչության թվաքանակի, ազգային կազմի հիմնահարցն անհրաժեշտ է քննարկել՝ նկատի առնելով վերոհիշյալ իրադարձութ-

յուններից յուրաքանչյուրի ընթացքում և պատճառով տվյալ ժամանակի մեջ տեղի ունեցած էթնիկ տեղաշարժերը: Օրինակ՝ ժողովրդագրական մի իրավիճակ էր XVIII դարավերջին և XII դարասկզբին, և միանգամայն այլ վիճակ ստեղծվեց սկսված պատերազմների պատճառով: Նոր իրավիճակներ առաջացան ինչպես 1813 թ. ռուս-պարսկական հաշտության կնքումից հետո, այնպես էլ 1820-ական թթ., երբ Արևմտյան Հայաստան ներխուժած պարսկական զորքերը սահմանամերձ գավառների հայ բնակիչներից չատերին բռնագաղթեցրին Երևանի խանության տարածք:

Նախորդ դարերում խանության տարածքից զգալի թվով հայերի բռնագաղթեցրել էին զանազան երկրներ ու գավառներ: Հայտնի է, որ Քարթլիի թագավոր Հերակլ II-ը Երևանից ու Արարատյան դաշտից զգալի թվով հայ արհեստավորների ու գյուղացիների էր գաղթեցրել Վրաստան: Ջուգահեռաբար թյուրքական ու քրդական ծագում ունեցող ցեղեր էին ներթափանցել ինչպես Երևանի խանության, այնպես էլ Արևելյան Հայաստանի այլ տարածքներ, այդուհանդերձ, հայությունը չարունակում էր կազմել բնակչության գերակշիռ մասը:

Պարսկական իշխանությունները, խիստ կարևորելով Երևանի խանության ռազմավարական նշանակությունը, անմիջապես լուրջ քայլեր էին ձեռնարկում՝ անմարդաբնակ դարձած վայրերն այլ տեղերից բերված բնակչությամբ, առաջին հերթին՝ աշխատասեր հայերով վերաբնակեցնելու համար: XVIII դարավերջին Աղա Մամադ խանի՝ դեպի Ղարաբաղ կատարած ավերիչ արշավանքների ժամանակ Երևան բերդաքաղաքը, համեմատաբար ավելի ապահով տարածք լինելով, ապաստան էր տվել բազմաթիվ հայ գաղթականների, և դրանով իսկ հայերի թիվն այնտեղ կրկին աճել էր: Նրանց թվում զգալի էին հատկապես Արցախից Երևան հանգրվանածները: «Մեք ի ստորև Ղարաբաղու և Խամսայու հայքս,- Քարթլիի Գեորգի XII թագավորին հայտնում էին Արցախի մելիքներն ու տանուտերները,- պատճառէ գալստեան Աղա Մահմատ խանին, տարամերժեալք ի հայրենեաց մերոց եկաք ի յԵրևան»:

Արդեն 1800 թ. սեպտեմբերին Արցախի մելիքներից Ջիմշիդ Շահնազարյանցը խնդրում էր Վրաստանում տեղակայված ռուսական ռազմական իշխանություններին Երևանում ապաստանած իր հպատակներին վերադարձնել իրենց նախկին տերերին: «...յԵրևան եղեալ մեր Ղարաբաղու ռայաթ,- կարդում ենք Թիֆլիսում նստող

ռուս պաշտոնյա Պյոտր Կովալենսկուն մելիք Ջիմշիդի հասցեագրած մի գրության մեջ,- մինչ գդճ (300–400 – խմբ.) տուն փախուստ առնալ ի պարսից...: Որոյ յաղագաւ խնդրեմք հրամայես ամէն մելիք իւրեան ռայաթին և երկրացւոյն տիրեացէ...»: Բայց քանի որ Ռուսական կայսրությունը նպատակ էր դրել առաջիկայում գրավել ինչպես Ղարաբաղի, այնպես էլ Երևանի խանության տարածքները, անհրաժեշտ չանքեր չգործադրեց հայ գաղթականներին իրենց նախկին տերերին վերադարձնելու ուղղությամբ: Հետևապես նրանց զգալի մասը մնաց բնակության նոր վայրերում, այդ թվում՝ Երևանում և Փամբակում:

Դարասկզբին Երևանում հայ բնակչության թվաքանակի աճի վկայությունն է Վենետիկի Մխիթարյան միաբանության հայրերից Ղուկաս Ինճիճյանի մի հաղորդումը, ըստ որի՝ այդ ժամանակ քաղաքն ուներ 2000 տուն բնակիչ: Քանի որ տվյալ ժամանակաշրջանում Հայաստանի քաղաքներում ապրող ընտանիքների անդամների միջին թվաքանակը կազմում էր 6 մարդ, նշանակում է՝ Երևանում հաշվվում էր շուրջ 12 հազար մարդ: Բացի դրանից՝ դրական գործընթացը երկար չտևեց, և շուտով սկսվեց հակառակ երևույթը: 1804 թ. սկսված ռուս-պարսկական պատերազմը պատճառ դարձավ բնակչության արմատական տեղաշարժերի համար. Երևանում և նրա նահանգում հայության թիվը չեչտակի նվազեց: Պատերազմող կողմերից յուրաքանչյուրը փորձում էր հակառակորդի կողմից գրաված տարածքներից իր հսկողության տակ գտնվող շրջաններում բնակեցնել տեղի հայությանը: Որպես կանոն, պարսիկները քայլեր կատարեցին Երևանի խանությունից հայերին Պարսկաստանի խորքերը, իսկ ռուսները՝ Վրաստան բռնագաղթեցնելու համար: Երկուստեք սկսեցին իրականացնել հայերի իսկական որս: Այդ ամենի հետևանքով հայ թնակչությունը հայտնվեց մշտական տեղաշարժերի մեջ, ունեցավ մարդկային կորուստներ կամ հայտնվեց բնակության միանգամայն նոր վայրերում:

Ստանալով դեպի Երևան ռուսական զորքերի չարժվելու լուրը՝ մայիսի վերջին պարսկական իշխանություններն անցան գործնական քայլերի՝ ստիպելով արտագաղթել քաղաքի գրեթե ողջ բնակչությանը: Սակայն, ինչպես պարզվում է աղբյուրների վերլուծությունից, ոգտվելով առիթից, որ ռուսական հարձակման պատճառով Մամադ խանի զորքերը հսկողությունից դուրս էին թողել խանության գրեթե ողջ տարածքը և գերազանցապես զբաղված էին Երևանի բերդը

պաշտպանելու խնդրով, տարհանված երևանցիների մեծ մասը՝ շուրջ 2 հազար ընտանիք, չենթարկվելով դեպի Պարսկաստան գաղթելու պարսիկների հրահանգներին, կարողացավ փախուստի դիմել: Նրանց մի մասն անդամ անցավ թուրք-պարսկական սահմանը՝ ապաստան գտնելով Կարսի նահանգի տարածքում: Կարելի է ենթադրել որ թուրքական իշխանությունները ոչ միայն չեն խոչընդոտել վերջիններիս գործողություններին, այլև նպաստել են նրանց փախուստին՝ նպատակ ունենալով չենացնել իրենց տարածքներն աշխատասեր բնակչությամբ:

Ռուսական ռազմական իշխանությունները չհապաղեցին առիթն օգտագործել՝ փախստական երևանցիներին 1801 թ. Ռուսաստանին անցած տարածքներ՝ կիսատմայի դարձած թե՛ Լոռի ու Փամբակ, թե՛ Վրաստան վերաբնակեցնելու համար: Պ. Ցիցիանովի հանձնարարությամբ 1804 թ. հունիսի սկզբին Թիֆլիսից փախստականների մոտ ժամանած Հովհաննես եպիսկոպոսը փորձում էր համոզել նրանց տեղափոխվել ռուսապատկան տարածքներ՝ հավաստիացնելով, որ Երևանի գրավումից հետո ռուսական իշխանությունները երաշխավորում էին նրանց վերադարձն իրենց քաղաք:

Մեծ խոստումների չնորհիվ ռուսներին հաջողվեց շուրջ 2 հազար երևանցի փախստականների մեծ մասին համոզել փոխադրվել Լոռի ու Վրաստան: Նրանց թվում էին նաև Երևանի հայ համայնքի ղեկավար մելիք Աղամալյանների և Կըրխբուլաղ մահալի կառավարիչ Գեղամյանների տոհմերի ներկայացուցիչներ, որոնք Վրաստանում ստացել էին ռուսական ազնվականական տիտղոսներ:

1804 թ. դեկտեմբերին Պ. Ցիցիանովի գրած մի զեկուցագրում նշվում էր, որ «Երևանի խանը հովանավորում է (հայ – խմբ.) փախստականներին, քանի որ մենք (ռուսները – խմբ.) բռնագրավել ենք նրա 900 ընտանիքներին»: Նշանակում է՝ 2 հազարից դեպի ռուսահպատակ տարածքներ անցածների թիվն այդ օրերին 900 ընտանիք էր, իսկ մնացածները կամ չարունակել էին մնալ Կարսի նահանգում, կա՛մ հանգրվանել էին այլ տարածքներում: Ի դեպ, վերջիններիս մի մասը ռուսական աջակցությամբ ավելի ուշ նույնպես անցավ Վրաստան, այդ թվում՝ Թիֆլիս, և Կուր գետի ձախափնյակում համալրեց հայկական Հավլաբար թաղամասի բնակչության չարքերը: 84 ընտանիք էլ հաստատվեց Գանձակում և հարակից շրջակայքում՝ զբաղեցնելով Պարսկաստան գաղթած թաթարների տեղերը: Այսպիսով՝ 1804 թ. մայիս-հունիսին Երևանը լքած հայ,

մասամբ նաև մահմեդական բնակիչների զգալի մասն այդպես էլ չկարողացավ բռնել տունդարձի ճամփան և հաստատվեց տարբեր վայրերում՝ հայտնվելով անօգնական ու թշվառ վիճակում: 1805 թ. փետրվարին երևանցիների մի մասը Ցիցիանովի ցուցումով տեղափոխվեց Միննծղարո ամայի բնակավայրում մելիք Սահակ Աղամալյանի և Հովհաննես Հարյուրապետի ենթակայությամբ: 1805 թ. գեներալ Նեսվետաևը շարունակեց հայ բնակչությանը Ռուսաստանին անցած չրջաններ բռնագաղթեցնելու ռուսական քաղաքականությունը: Նա մայիսին Երևանի խանության բազմաթիվ հայկական բնակավայրերի այլ բնակիչների ևս վերաբնակեցրեց Լոռի-Փամբակում:

Ռուսների կողմից երևանաբնակ հայերի մեծ հարկադիր արտագաղթից հետո տեղում մնացած հայության վիճակն ավելի ծանրացավ: 1804 թ. աշնանը Ցիցիանովին գրած նամակում երևանցի մելիք Աբրահամն ու հարյուրապետ Գաբրիելն օգնություն էին. խնդրում ռուսներից՝ հայտնելով, որ իրենք անցել են ռուսական տիրապետության տակ, բայց «Երևանի բերդի մոտ ապրող ավելի քան 500 ընտանիքներ դեռ մնացել են այնտեղ, և քանի որ ամենուր նշանակվել են ժամապահներ, նրանք չեն կարող փախուստի դիմել և շարունակում են մնալ անհավատ պարսիկների ձեռքում»:

1805 թ. հուլիսի սկզբին ռուսական ռազմական իշխանությունները նոր փորձ կատարեցին Երևանում մնացած վերոհիշյալ հայ ընտանիքներին ևս բռնագաղթեցնելու ուղղությամբ: Ռուսաստանի արտգործնախարար Ա. Զարտորիյսկուն գրած նամակում Պ. Ցիցիանովը հայտնում էր, որ պարսիկներն ուզում են Երևանի «հայերին փոխադրել Արաքսի մյուս ափը: Եթե այժմյան պատերազմի հանգամանքները չխանգարեն..., ապա ինքը կձգտի նրանց վերաբնակեցնել Վրաստանում, ինչը որ իրենք (հայերը-խմբ.) ուզում են»:

Օգոստոսի 21-ին չուրջ հազար ընտանիքի անունից մելիք Աբրահամին և հարյուրապետ Գաբրիելին գրած գաղտնի նամակում երևանցիները ռուսներից կրկին աջակցություն էին խնդրում. «Մենք անհապաղ օգնություն ենք սպասում,- գրում էին նրանք,- եթե հապաղեք, ապա մեզ կգաղթեցնեն և կսնանկացնեն...: Եթե մեր կրած տառապանքների մասին գրենք, ապա ոչ թուղթ կբավականացնի, ոչ էլ թանաք»: Քաղաքաբնակ հայերին գաղթեցնելու ռուսական այդ ծրագիրն այս անգամ չիրականացավ և չէր էլ կարող իրականանալ. Երևանը չարունակում էր մնալ պարսիկների ձեռքում, իսկ հայերի

նկատմամբ հսկողությունն ուժեղանում էր: Բայց ուշագրավ է, որ այդ օրերին Երևանից բնակչության փախուստ, այնուամենայնիվ, եղել է: Փաստորեն՝ հսկողությունից դուրս մնացած թաթարներից մինչև 400 ընտանիք իրենց առաջնորդների հետ կարողացել են լքել քաղաքը և անցնել ռուսների մոտ՝ Փամբակ ու Շիրակ:

Ինչպես նշվեց, ռուսական իշխանությունները խոստացել էին Վրաստան գաղթեցված երևանցի հայերին ռուսների կողմից իրենց քաղաքի գրավումից հետո հայրենի օջախներ վերադառնալու հնարավորություն տալ: Բայց, քանի որ, Երևանը մնաց անառիկ, հազարավոր երևանցիներ այդպես էլ չկարողացան վերադառնալ տուն: Մնալով անօգնական վիճակում՝ նրանք, փաստորեն, ստիպված եղան տեղից տեղ անցնել օգնության խնդրանքով դիմել իշխանություններին կամ զանազան մարդկանց: Իրենց արտագաղթից ավելի քան երկու տարի անց Վրաստանում, Գանձակում, Ղազախում և այլուր շուրջ 2 հազար երևանցի ընտանիքներ մնացել էին անօգնական վիճակում, պետական աջակցությունից զուրկ:

Մի փաստաթղթի համաձայն՝ գաղթականների վիճակն անփոփոխ էր նաև հաջորդ տարում, անգամ անհամեմատ բարվոք վիճակում գտնվող Թիֆլիսում ապրողները 1807 թ. հոկտեմբերի 18-ին ռուսական իշխանություններին գրած խնդրագրում նորից հիշեցնում էին, որ տարիներ առաջ, Երևանում թողնելով իրենց տները, այգիները, առևտրական կրպակները, ինչպես և ողջ ունեցվածքը, իրենք հավատացել են՝ շուտով Երևանն ազատագրելու և կրկին իրենց տները վերադարձնելու Ցիցիանովի խոստումներին, բայց առ այսօր մնում են անօթևան: Դրա համար խնդրում էին գոնե իրենց տրամադրել տներ ու այգիներ մինչև Երևանի գրավումը:

Ռազմաքաղաքական իրավիճակը Երևանի շուրջ կրկին սրվեց 1808 թ. աշնանը՝ ռուսական զորքերի երևանյան երկրորդ արշավանքի ժամանակ: Մի վավերագրից պարզ է դառնում, որ բերդի երկրորդ պաշարումից առաջ այնտեղ, երկուհազարանոց պարսկական կայազորից բացի, կային շուրջ 700 հայ և թաթար ընտանիքներ: Այս անգամ էլ՝ շատ խաղաղ բնակիչներ ստիպված եղան փախուստի դիմել և ապաստանել զանազան շրջաններում: Մարդային զոհեր եղան սկսված համաճարակի պատճառով:

Հենվելով արխիվային փաստաթղթերի տեղեկությունների վրա՝ պրոֆ. Վալտեր Դիլոյանը կարծում է, որ 1804 թ. ռուսական արշավանքի նախօրյակին Երևանի և Հարևան Կըրխբուլաղի ու Էջմիածնի

գավառներից պարսիկները բռնագաղթ են պարտադրել 4 հազար հայ ընտանիքի, իսկ առաջին ռուս-պարսկական պատերազմի տարիներին Վրաստան և Հյուսիսային Հայաստանի շրջաններ վերաբնակված հայերի թիվը գերազանցել է 10 հազարը:

Այսպիսով՝ հատկապես 1804–1808 թվականները ինչպես ամբողջ Արևելյան Հայաստանի, այնպես էլ Երևան քաղաքի հայության համար աղետալի ժողովրդագրական փոփոխությունների տարիներ էին: Այդ ընթացքում Երևանի խանության բազմաթիվ բնակավայրեր կորցրին իրենց հազարավոր աշխատասեր բնակիչներին՝ վերածվելով կիսաամայի վայրերի: Ցավալի է, որ ռուսական իշխանությունների հորդորներով ու ապահով կյանքի խոստումներով Լոռի, Փամբակ, Գանձակ, Թիֆլիս և այլուր հաստատված հայ փախստականները, տարիներ շարունակ չստանալով պետական աջակցություն, կրեցին անասելի տառապանքներ, ունեցան մարդկային մեծ կորուստներ: Հետևապես, ինչպես Երևանի, այնպես էլ ամբողջ Հայաստանի էթնոժողովրդագրական նկարագիրը ճշգրիտ ներկայացնելու համար անհրաժեշտ է խորությամբ վերլուծել տարածաշրջանում գերիշխանության համար պայքարող տերությունների ժողովրդագրական քաղաքականությունը, որը, որպես կանոն, ծառայել է իրենց նվաճողական նպատակների շահերին:

* * *

Երևանյան երկրորդ արշավանքից հետո պարսից իշխանությունները հապշտապ ձեռնամուխ եղան ռուսական զորքերի լքած տարածքները վերաշինելու և վերաբնակեցնելու գործին: Աբբաս Միրզան և Հուսեյն Կուլի խանը հսկայական ջանքեր գործադրեցին հատկապես Երևանի բնակիչներին իրենց տները վերադարձնելու և այլ բնակավայրերից մարդկանց այստեղ բերելու ուղղությամբ: Ուշագրավ է, որ ընթացող ռուս-պարսկական պատերազմի պայմաններում կողմերը 1811 թ. քայլեր կատարեցին երկու եկեղեցիների միջև առևտուրը վերականգնելու, ճանապարհների անվտանգությունն ապահովելու ուղղությամբ: Այդ հանգամանքը զգալիորեն նպաստեց Երևանով Պարսկաստանի ու Ռուսաստանի միջև առևտրատնտեսական հարաբերությունների աշխուժացմանը, արտագաղթած բնակչության վերադարձին:

Պատահական չէ, որ արդեն 1812 թ. Հայաստան այցելած դիվանագետ Մ. Ֆրեյգանին Արևելյան Հայաստանի վարչաքաղաքական կենտրոնը ներկայացավ որպես «մեծ քաղաք»: «Երևանը,- գրում է

նա,- Թավրիզից երեք հարյուր վերստ հեռու մի մեծ քաղաք է, որի գլխավոր տարածությունը գրավում են պարտեզները»:

Մ. Ֆրեյդանի՝ Երևանի մեծ քաղաք լինելու վերոհիշյալ վկայությունը հաստատում է նույն՝ 1812 թ. այնտեղ այցելած անգլիացի դիվանագետ Ուիլյամ Աուզլեյը. «Միաժամանակ տեղեկացա, որ այս գեներալի (նկատի ունի սարդար Հուսեյն Կուլի խանին – խմբ.) կառավարության ընծայած պաշտպանության ու առավելությունների շնորհիվ Երևանը մի քանի տարվան ընթացքում 4 հազար բնակչությունից բարձրացած է 13 կամ 14 հազարի: Այսու հանդերձ փողոցների կեսը լի են ավերակ տներով, բայց միջնաբերդը ամենահատարյալ վիճակումն է...»:

Նշված հաղորդումից կարելի է եզրակացնել, որ Հուսեյն Կուլի խանը ռուս-պարսկական ռազմական գործողությունների պատճառով Արևելյան Հայաստանի, նաև այլ երկրների տարբեր շրջաններից ինչպես փախուստի դիմած բնակիչների մի ստվար զանգվածի, այնպես էլ այլ տեղերից բերված բնակիչների ապաստան էր տվել Երևանում, ինչի արդյունքում բնակչության թվաքանակն զգալիորեն աճել էր:

Այդուհանդերձ, դեռ Երևանի զգալի մասը չարունակում էր մնալ անմարդաբնակ: Թերևս միայն սարդարի նստավայր բերդն էր, որի բարվոք լինելու մասին Աուզլեյի հաղորդումից հետևում էր, որ Պարսկաստանը միջոցներ չէր խնայել քանդված բերդի պարիսպները նորոգելու, այնտեղի տները վերակառուցելու ու բնակեցնելու համար, իսկ անպարիսպ հայկական թաղամասերը թեև բնակեցվել էին, բայց դարձյալ չարունակում էին մնալ անհամեմատ ավելի անբարեկարգ վիճակում:

1813 թ. հոկտեմբերի 12-ին Արցախի Գյուլիստան գյուղում Ռուսաստանի հետ հարկադրաբար կնքած հաշտության պայմանագրից հետո Պարսից Ֆաթհ Ալի շահն ու նրա որդին՝ գահաժառանգ Աբբաս Միրզան, փորձեցին ժամանակ շահել և նախապատրաստվել Արևելյան Անդրկովկասում, Ղարաբաղում, Զանգեզուրում, Շիրակում կորցրած տարածքները վերադարձնելու արշավանքին: Նրանք չարունակեցին ամրացնել Երևանի բերդը և շինարարական աշխատանքներն արագացնելու նպատակով նոր քայլեր կատարեցին՝ աշխատասեր հայ բնակչության հոսքը քաղաք խթանելու, ամայացած թաղերն ու տները վերաշինելու համար: Բավական կարճ ժամանակում այդ քաղաքականությունը տվեց իր պտուղները: 1810-ական

թթ. կեսերից Երևանի համեմատաբար աշխույժ կյանքը վկրականգնվեց, բնակիչների թվաքանակի անշեղ աճը շարունակվեց: Ակնհայտորեն քաղաքի ընդհանուր բնակչության մեջ հայերի տեսակարար կշիռն ավելի բարձրացավ:

*Նշված դրական տեղաշարժերն աննկատ չէին մնում եվրոպացի ուղեգիրների կողմից: Հնդկաստանում բրիտանական բանակի սպա Ջոն Ջոնսոնը, որ 1817 թ. այցելել էր Երևան, այդ կապակցությամբ գրել է. «Քաղաքն ունի բազմաթիվ գեղեցիկ պարտեզներ ու տներ և **շատ բնակիչ. հայերը համեմատաբար ավելի շատ են, քան մահմեդականները** (ընդգծումը – խմբ.): Ինչպես Ջ. Ջոնսոնի, այնպես էլ այլ հեղինակների նմանօրինակ վկայությունները հաստատում են այն ճշմարտությունը, որ միանգամայն սին են ժամանակակից ադրբեջանցի «գիտնականների» պնդումները, թե մինչև 1828–1829 թթ.՝ Պարսկահայքից հայերի վերաբնակեցումը, Երևանում «ադրբեջանական», այն է՝ թաթարական բնակչությունը կազմել է մեծամասնություն: Իրականությունն այն է, որ հայերի թիվը գերազանցել է ինչպես առանձին թաթարներին, այնպես էլ նաև քրդերից ու պարսիկներից բաղկացած ամբողջ մահմեդական բնակչությանը, որի մեծ մասը կազմում էին բերդի տարածքում բնակվող և զանազան ծառայություններ մատուցող պաշտոնյաներ ու զինվորականներ: Իսլամական բնակչության մնացած սահմանափակ թվաքանակը բաժին էր ընկնում գերազանցապես Քարհանք թաղամասին, մինչդեռ հայությունը տեղաբաշխված էր գրեթե բոլոր թաղամասերում: Առավել հայաշատ էին Կոնդը, Շահարը, Նորքը և այլն:*

Նկատենք, որ վերոհիշյալ հեղինակի կողմից Երևանի՝ «շատ բնակիչ» ունենալու մասին եզակի հաղորդումը տվյալ ժամանակաշրջանի համար պատահական չէր և մի անգամ ևս վկայում էր վերոհիշյալ գործընթացի մասին, որը շարունակվել է մինչև 1826 թ.՝ ռուս-պարսկական երկրորդ պատերազմի սկիզբը: Եվ իսկապես, զարմանալի զուգադիպությամբ նորից 1817 թ. Երևան ժամանած Ռոբերտ Քեր Փորթերն իր մի վկայությամբ հաստատում է իր հայրենակից Ջոն Ջոնսոնի պնդումը՝ գրելով. «Ինձ ասացին, թե քաղաքի ներկա բնակչության թիվը 15.000 անձից ավել չէ»: Բայց այս հեղինակը միաժամանակ համոզված է, որ ներկա վիճակը համեմատելի չէ քաղաքի երբեմնի փառավոր անցյալի հետ, երբ շատ ավելի բազմամարդ ու հարուստ է եղել: Այդ ամենի պատճառը նա իրավամբ հա-

մարում է օտարների ավերիչ ասպատակություններն ու դժնդակ տիրապետությունը:

1820 թ. վերջին Պարսկաստանի ու Օսմանյան կայսրության միջև սկսվեց պատերազմ: Պարսիկներին հաջողվեց ներխուժել Հակառակորդի տարածք: Երևանի պարետ Հասան խանը, որն էլ 1821 թ. գարնանը Վերին Բասենի, Խնուսի, Բայազետ ու Ալաշկերտի գավառներից տեղահանած հազարավոր հայերի բռնագաղթեցրեց Երևան ու խանության այլ բնակավայրեր: Դեպի Արևելյան Հայաստան էրզրումցի, կարսեցի, վանեցի հայերի մի բռնագաղթ էլ Հասան խանը կազմակերպեց 1822 թ.:

Այսպիսով 1813 թ. վերջերից ստեղծված համեմատաբար խաղաղ ու նպաստավոր պայմանների շնորհիվ և 1821–1822 թթ. արևմտահայերի բռնի վերաբնակեցման հետևանքով Երևանի բնակչության աճը շարունակվեց: Կարելի է պնդել, որ մինչև XIX դարի 20-ական թթ. կեսերին Երևանում արդեն բնակվում էր ոչ պակաս, քան 17–18 հազար մարդ:

Թելադրված 1826–1827 թթ. նոր պատերազմական գործողություններով տեղի ունեցան բնակչության նոր տեղաշարժեր: Ինչպես նախորդ բաժնում նշվեց, հատկապես 1827 թ. մարտից, պայմանավորված ռուսական զորքերի առաջխաղացմամբ, պարսկական իշխանությունները Երևանի ու խանության բնակավայրերի մեծ մասի բնակիչներին բռնագաղթեցրին դեպի Արաքսի ալ ափը, օսմանցիների համաձայնությամբ նաև Բայազետի փաշայության տարածք, իսկ մնացածներին ստիպեցին անասելի ծանր պայմաններում մի կերպ տեղակայվել բերդի պարիսպներից ներս, հիմնականում բաց երկնքի տակ: «Շատ բնակիչներ չունեն կացարաններ,- կարդում ենք սեպտեմբերի սկզբներին Երևանից ռուսների մոտ փախած հայերի վկայություններում,- և մեծ մասամբ տեղավորված են բաց տեղերում»: Ինչպես արդեն նշվել է, 1827 թ. սեպտեմբերի վերջին ռուսների կողմից քաղաքի գրավման նախօրյակին, այնտեղ հաշվվում էր միայն 10 հազար հայ, նրանց թվում ինչպես տեղաբնակ երևանցիներ, այնպես էլ տարբեր տեղերից բռնությամբ բերված փախստական հայեր:

Ի դեպ, 1827 թ. հոկտեմբերի 1-ին քաղաքին տիրելու օրը, Պասկևիչը նամակ է ուղարկել Բայազետի փաշային պահանջելով անհապաղ ազատ արձակել դեռ գարնանն իր փաշայության տարածքում ապաստան գտած երևանցիներին: Պատասխան նամակում փաշան խոստացել է, որ «մինչև վերջին ընտանիքը ազատ կարձակվի,

քանի որ շուտով կստացվի Արզրումի սե- րասկյարի (համապատաս- խան – խմբ.) թուլլտվուԹյունը...»: Եվ իսկապես, հոկտեմբեր ամսից սկսած՝ ինչպես Բայազետի, այնպես էլ Արևելյան Հայաստանի ու Վրաստանի տարածքում հաստատված երևանցիների մի մասը վերադարձավ հայրենի քաղաք՝ զբաղեցնելու կա՛մ իրենց նախկին տները, կա՛մ Պարսկաստան հեռացած մահմեդականների տեղերը: Նշանակում է՝ 1827 թ. հոկտեմբեր-նոյեմբերին, երբ զգալի թվով երևանցիներ արդեն վերադարձել էին, քաղաքում արդեն առնվազն 12–13 հազար մարդ կլիներ, որոնց մեջ մահմեդականներն իրենց հավատակիցների փախուստից հետո չէին կարող գերազանցել 1–2 հազարը:

Ամփոփելով վերոնշյալը՝ գալիս ենք այն համոզման, որ Երևանի բնակչության թվաքանակի հաշվարկն անել ամբողջ XIX դարի առաջին քառորդի կտրվածքով սխալ է: Համեմատաբար այդ կարճ ժամանակահատվածում, ինչպես տեսանք, քաղաքական գործոնների ազդեցությամբ տեղի են ունեցել ժողովրդագրական լուրջ գործընթացներ, որոնք յուրաքանչյուր տասնամյակի կամ ավելի կարճ ժամանակի ընթացքում հանգեցրել են արմատական փոփոխությունների, մասնավորապես բնակչության չեչտակի նվազման կամ աճի: Այդ հանդամանքը վրիպելէ հետագայի շատ ուսումնասիրողների ուշադրությունից՝ նրանց բերելով սխալ հետևությունների:

Իրական պատկերը հետևյալն էր. դարասկզբին՝ մինչև ռուսական զորքերի երևանյան առաջին արշավանքը, քաղաքն ուներ առնվազն 12 հազար բնակիչ, ապա՝ 1804–1808 թթ. արտագաղթի, բռնագաղթի ու մահացության պատճառով այդ թիվը կտրուկ նվազել է՝ հասնելով մինչև 4–5 հազար, գուցեև ավելի պակաս, իսկ պարսկական իշխանությունների վարած քաղաքականության հետևանքով հետագա տարիներին չեչտակի աճել և 1812–1813 թթ. կրկին հասել է նախապատերազմյան թվաքանակին՝ մոտ 12 հազարի: Արդեն դարի երրորդ տասնամյակի կեսերին այդ թիվը չուրջ 17–18 հազար էր, իսկ 1827 թ. սեպտեմբերի դրությամբ այն կազմել է ոչ ավել, քան 12–13 հազար մարդ, որից 10 հազարը՝ հայեր: Իսկ մեկ-երկու տարվա ընթացքում այդ թիվը հետզհետե ավելացել է ևս մի քանի հազարով, գործընթաց, որը հետագա բոլոր տասնամյակներին եղել է Երևանի ժողովրդագրական զարգացման բնորոշ ուղղությունը:

Այսպիսով՝ ամբողջապես պետք է վերանայել հիմնականում Ի. Շոպենի հաշվարկների վրա կառուցված, տիրապետող այն տեսակետը, թե ռուսների կողմից 1827 թ. հոկտեմբերին Երևանի գրավումից

առաջ քաղաքն ավելի քիչ բնակիչ է ունեցել մոտ 11463 մարդ, և աճել է միայն Արաքսի աջափնյակից, Պարսկահայքից, Արևմտյան Հայաստանից վերաբնակված 1763 հայերի հաշվին: Վերոհիշյալից կարելի է հանդել այն եզրակացությանը, որ XIX դարի առաջին քառորդին Երևանի բնակչության միջին թվաքանակը կազմել է 13–14 հազար մարդ, որից մոտ 10 հազարը հայ:

Երևանի պատմություն, Երևան, «Երևան բուք» ՍՊԸ, 2018, 342 էջ, էջ 131–149:

ՋԱՎԱԽՔԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

(1918 թ. մայիս – 1919 թ. հունվար)

Բանալի բառեր – Ջավախքի հիմնահարց, ազգագրական սկզբունք, թուրքեր, վրացական զորքեր, հայ-վրացական երկշաբաթյա կոնֆլիկտ, անգլիացիներ, ֆրանսիացիներ, Լոռի, Ախալքալաքի գավառ, Թիֆլիս, հայ-վրացական խորհրդաժողով:

1918 թ. մայիսին՝ Ախալքալաքի զանգվածային գաղթի օրերին, կյանքի կոչվեցին Այսրկովկասի երեք հանրապետությունները:

Հայոց ազգային խորհուրդը մայիսի 30-ի անկախության հռչակագրում իրեն հայտարարել էր հայկական գավառների գերագույն ու միակ իշխանություն: «Հայկական գավառներ» անորոշ բառակապակցության ընտրությունը լինքնանպատակ չէր: Նման ձևակերպումով Ազգային խորհուրդը մի կողմից խուսափում էր ռազմաքաղաքական բարդ իրավիճակում օսմանյան թուրքերի և հարևան նորաստեղծ պետությունների հետ տարածքային վեճերի մեջ հայտնվելու վտանգից, մյուս կողմից, թեկուզև անորոշ սահմաններով, իր իրավունքներն էր հայտնում հայկական տարածքների նկատմամբ: Տվյալ դեպքում վերջինիս տակ կարելի էր նկատի առնել և՛ Արևմտյան Հայաստանը, և՛ Ղարաբաղը, և՛ Ջավախքը, և՛ այլ վիճահարույց տարածքներ:

Վրաց մենշևիկները տարածաշրջանում Գերմանիայի ներկայացուցիչ գեներալ Ֆոն Լոսովի հետ նախապատրաստել էին ոչ միայն իրենց հանրապետության անկախության հռչակումը, այլև որոշակի հավաստիացումներ ստացել վիճելի նկատվող Ախալքալաքն ու Բորչալուն Վրաստանի մաս ճանաչելու խնդրում[1]: Ուստի պատահական չէ, որ նրանք 1918 թ. հունիսի սկզբին գերմանացիների հովանավորությամբ հսկողություն սահմանեցին Հյուսիսային Լոռու նկատմամբ (Հարավային Լոռին բռնազավթվեց թուրքերի կողմից), իսկ ամսի 4-ին, Բաթումում Օսմանյան կայսրության հետ կնքած հաշտության պայմանագրով, իրենց իրավունք վերապահեցին թուրքե-

[1] Տե՛ս **Ջամալեան Ա.**, Իմ պատասխանները «Պրոմեթե»-ի և «Անկախ Վրաստանի» հրատարակիրներին, «Յառաջ», Փարիզ, 1928, 19 հունիս, N 677, էջ 2:

րին «Հանձնել» գերազանցապես Հայերով բնակեցված Ախալցխայի և Ախալքալաքի գավառները: Դրանով նորահռչակ Վրաստանը տպավորություն էր ստեղծում, որ Հայաստանի նման լուրջ տարածքային զիջումներ է անում ռազմական հաղթանակներ գրանցած Թուրքիային և երկրորդ՝ իր կնքած առաջին միջազգային պայմանագրով, իբրև պայմանավորվող կողմ արձանագրում է իր իրավունքներն այդ գավառների բախտը տնօրինելու հարցում: Պատերազմում Թուրքիայի ռազմական անհաջողության դեպքում Վրաստանը կարող էր նորից վերականգնել իր «օրինական» իրավունքը Ախալցխայի և Ախալքալաքի նկատմամբ: Եվ վերջապես, որ ամենացավալին է, թուրքական բռնազավթումը կարող էր արմատապես փոխել Ջավախքի ժողովրդագրական պատկերը՝ այն է զրկել նրան իր հայկական էթնոնկարագրից: Հետագա դեպքերը բացահայտելու եկան վրաց քաղաքական շրջանակների այդ ծրագրերը:

Ախալցխայի, Ախալքալաքի և Բորչալուի բռնակցումով թուրքերն անմիջական կապ էին ստեղծում Ադրբեջանի հետ՝ միաժամանակ սեպ խրելով Հայաստանի ու Վրաստանի միջև: «Նրանց մի ցանկությունն էր,- Բաթումի բանակցություններում թուրքերի նպատակների մասին գրում էր հայկական պատվիրակության նախագահ Ալ. Խատիսյանը,- Բորչալուի միջոցով կապ պահպանել Ախալքալաքի և Ղարաքաղի միջև, մեզ կտրում էին Վրաստանից»[2]:

Բաթումի պայմանագրով Օսմանյան կայսրությանն անցան մեծ մասամբ հայկական և հայաբնակ գավառներ: Ստեղծված աշխարհաքաղաքական նոր իրավիճակը նպաստավոր էր վրացիների և կովկասյան թաթարների համար: Գործելով միասնաբար՝ մենշևիկներն ու մուսավաթականները փորձեցին օգտվել Հայաստանի ծանր վիճակից: Հայաստանի նկատմամբ Վրաստանի պահանջները, ներառյալ թուրքերի կողմից բռնագրավված Ախալքալաքի գավառը, կազմեցին 13 հազ. քառ. կմ 261 հազ. հայ և միայն 7 հազ. վրացի բնակչությամբ[3]:

Բարդ ռազմաքաղաքական իրադրության մեջ կարևորելով նորաստեղծ հանրապետությունների միջև սահմանների ճշգրտման հարցը, արդեն հունիսի սկզբից Վրաց և Հայոց ազգային խորհուրդ-

---

[2] «Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. (քաղաքական պատմություն). փաստաթղթերի ժողովածու, կազմողներ՝ Գ. Գալոյան, Վ. Ղազախեցյան...», Եր., 2000, էջ 43:

[3] Տե՛ս Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թ., Եր., 1997, էջ 255:

նները սկսեցին բանակցությունները: Վրաց ազգային խորհրդի նախագահ Ն. Ժորդանիան և վարչապետ Ն. Ռամիշվիլին Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդին՝ ի դեմս Ավ. Ահարոնյանի, Հովհ. Քաջազնունու և Ալ. Խատիսյանի, առաջարկեցին Բորչալուի գավառի հարցում առաջնորդվել ազգագրական սկզբունքով: Ախալքալաքի մասին խոսք չկար, քանզի այն գրավված էր Թուրքերի կողմից, թեև, ինչպես նշվեց, վրացիները ապագայում նրա հարցի լուծումը ևս տեսնում էին հօգուտ Վրաստանի: Սակայն չուտով սահմանազատման հարցով Հայոց ազգային խորհրդի նշանակած հատուկ հանձնախմբին (Խ. Կարճիկյան, Գ. Խատիսյան և Գ. Ղորղանյան) վրացական պատվիրակության նախագահ Ի. Ծերեթելին հայտարարեց, որ Վրաստանը ռազմավարա կան նկատառումներով չի կարող հրաժարվել Ախալքալաքից և Լոռուց, ինչպես և Ալեքսանդրապոլի գավառի Փամբակի շրջանից: Ընդ որում, վրաց գործիչը հավատացնում էր, որ դա բխում է նաև այդ տարածքների հայ բնակչության շահերից, քանի որ Գերմանիայի հովանավորությանն արժանացած Վրաստանում հայերի համար ևս կստեղծվի կյանքի ավելի ապահով վիճակ: Ազգագրական սկզբունքից հրաժարվելու վրացական կողմի այդ քայլի դեմ բողոքեց Խ. Կարճիկյանը՝ վրաց մենշևիկների նման մոտեցումը բնութագրելով Հայաստանը Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի միջև բաժանելու գործելակերպ[4]:

Իսկ Բակուրիանի անտառներում և Ծալկայի շրջանում հաստատված ախալքալաքցի գաղթականների վիճակը չարունակում էր վատթարանալ: Նրանք փաստորեն հայտնվել էին յուրահատուկ արգելափակոցում: Դեպի հյուսիս՝ Բակուրիան ու Բորժոմ ճանապարհը փակել էր վրացական զորքը, իսկ տունդարձի ուղին դեպի գավառ՝ Թուրքերը: 1918 թ. հուլիսի սկզբին վրաց կառավարությունը մերժեց Հայոց ազգային խորհրդի միջնորդությունները գաղթականներին Վրաստանի խորքերը տեղափոխելու, ինչպես և Բորչալուից հեռացած մահմեդականների բնակավայրերում տեղավորելու իրավունք արտոնելու մասին՝ իր այդ տմարդի քայլը «բացատրելով» համաճարակների տարածումը Վրաստանում կանխելու պատճառաբանությամբ[5]:

---

[4] Տե՛ս **Վրացեան Ս.**, Հայաստանի Հանրապետութիւն, Եր., 1997, էջ 214–215:

[5] Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 114, ց. 2, գ. 3, թ. 127–127ա և ՀՀ ԳԱԱ ՊԻԱ, Լեոյի անձն. ֆ. 1, ց. 1, գ. 264, թ. 1–2:

Կասկած չկա, որ այս ամենը հնարանք էր: Նախ՝ դեռ հունիս-հուլիս ամիսներին գաղթականների մեջ համաճարակային հիվանդություններ չկային: Դրանք հայտնվեցին ավելի ուշ՝ աշնանը: Եթե անդամ այդ պատճառաբանությունը հիմն ավորված լիներ, չէր կարող վրաց իշխանություններին ազատել ախալքալաքցի փախստականների՝ իրենց քաղաքացիների ճակատագրով մտահոգվելու պարտականությունից: Մինչդեռ, այդ «պարտականության» փոխարեն, գեներալ Արշևանիձեի վերջին չոկատները հեռացան Ախալքալաքի գավառի հյուսիսային սահմանագծից՝ թուրքական հրոսակներին ու տեղական ավազակախմբերին հնարավորություն ընձեռելով մշտական հարձակումներով նորանոր վնասներ հասցնելու գաղթականներին[6]: «Երբ թուրքն անսանձ ու տմարդի, ոտքի ու սրի տակ էր առել հայ ժողովուրդը,- այդ մասին գրում էր Ակսել Բակունցը,- Վրաստանը օգնե՞ցարդյոք: Անկարո՞ղէր, ո՞ւյժ չուներ... Իսկ երբ Ախալքալաքի հայությունը հազարներով կոտորվում էր ամիսների ընթացքում, էլի՞ անկարող էր գեթ մեղմացնել այդ թշվառների տանջանքների, զոհերի չափը»[7]: Թելավի, Սղնախի, Սուրամի և այլ շրջանների իշխանությունները դրդեցին անգամ տեղի վրաց բնակչությանը՝ հանդես գալ հայ գաղթականներին իրենց բնակավայրերից վտարելու պահանջով[8]:

Այսպիսով, և՛ վրաց կառավարության, և՛ թուրքական հրամանատարության կողմից որևէ ուղղությամբ տեղաշարժվելու իրավունքից զրկված ջավախքցի գաղթականները դատապարտվում էին բնաջնջման: Օգոստոս ամսին, երբ դեռ չէին սկսվել ցրտերը, արդեն գաղթականների շրջանում օրական մահանում էր մինչև 100 մարդ[9]: Խուսելով վրացական իշխանությունների նման անմարդկային վերա-

---

[6] Այդ հարձակումների ընթացքում թուրքերը Բակուրիանի գաղթականական ճամբարից առևանգեցին կամ սպանեցին մինչև 1500 մարդ. հափշտակեցին մեծ թվով անասուններ ու շարժական գույք («Հորիզոն», 1918. 27 հունիս. N 125): Ծալկայի հայկական գյուղերում իրենց հայրենակիցների տներում ապաստանած ախալքալաքցի գաղթականների վիճակը, անշուշտ, ավելի տանելի էր: Սակայն այստեղ ևս հնարավոր չեղավ խուսափել համաճարակներից: Եղան նաև զոհեր. թաղանի բազմաթիվ դեպքեր Ծալկայի մի քանի մահմեդական գյուղերի բնակիչների կատարած ավազակային հարձակումների պատճառով («Հայրենիք». 1928. սեպտեմբեր. էջ 122):

[7] **Ղազախեցյան Վ.**. Երես առածները. «Հայաստանի աշխատավոր». 1919. 24 հունիս. N 79:

[8] Տե՛ս «Հայրենիք», Բոստոն, 1928, սեպտեմբեր. էջ 123:

[9] Տե՛ս «Հորիզոն». Թիֆլիս. 1918. 30 օգոստոս:

բերմունքի մասին՝ Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Ա. Ջամալյանը ցավով նշում էր. «Այս տխուր վիճակը հիշատակում ենք ոչ թե մեր ահռելի կորուստների կսկիծը վերարծարծելու համար, այլ որպեսզի ցույց տանք, որ ժողովրդի և իր ընկերները.... Ախալքալաքի և Հայկական Բորչալուի հայ բնակիչներին հանրապետության քաղաքացի չէին նկատում, այլ անցանկալի եկվորներ, որոնց մասին հոգալը իրենց պարտականությունը չէին համարում»[10]:

Ի պատասխան սեպտեմբերին և հոկտեմբերի սկզբին Հայաստանի կառավարության, Ախալքալաքի Հայրենյաց վարչության (մխության) նորանոր բողոք-դիմումն երին՝ գաղթականներին կամ Վրաստան անցնելու, կամ Ախալքալաք վերադառնալու թույլտվության արտոնման մասին, հոկտեմբերի 4-ին վրացական կառավարության գրասենյակի պետ Կոժուխովը Հայոց գլխավոր գաղթականական խորհրդին պաշտոնական գրությամբ հայտնեց, որ քանզի Վրաստանում ստեղծվել է պարենային ճգնաժամ, իսկ թուրքական հրամանատարությունը հրաժարվում է թույլ տալ Ախալքալաքի հայությանը վերադառնալ հայրենիք, վրաց իշխանությունները առաջարկում են ամենակարճ ժամանակամիջոցում գաղթականությանը տեղափոխել Հյուսիսային Կովկաս կամ Հայաստանի Հանրապետություն: Արտաշես Աբեղյանը ճիշտ է նկատել, որ այդ ժամանակ «եթէ ո՛չ մարդասիրական տարրական գիտակցութիւնից, գէթ քաղաքական ողջմտութիւնից դրդուած՝ պէտք է, որ վրաց կառավարութիւնը ձեռք մեկնէր կոտորուող ախալքալաքցիներին, ցոյց տալով, որ նրանց հետ է դժբախտութեան օրերին, որպէսզի գէթ դրանով երեսատեղ ունենար՝ պատեհ առիթ «հիմն աւորելու» իր «վեհապետական իրաւունքը» Ախալքալաքի վրայ»[11]:

Գաղթականության հոգսերի ողջ ծանրությունը մնաց Հայոց դաղթականական խորհրդի, Ախալքալաքի Հայրենյաց վարչության, Կովկասի հայոց բարեգործական ընկերության, Վրաստանում Ամերիկյան առաքելության, մասամբ նաև Վիրահայոց Ազգային խորհրդի և Վրաստանում Հայաստանի ներկայացուցիչ Ա. Ջամալյանի ուսերի վրա: Մինչև 1918 թ. դեկտեմբերը բծավոր տիֆն ու խոլերան

---

[10] Ջամալեան Ա., նշվ. աշխ., «Հայրենիք», 1928, Բոստոն, ապրիլ, էջ 90:

[11] Աբեղեան Ա., Մենք եւ մեր հարեւանները. «Հայրենիք», Բոստոն, 1928, դեկտեմբեր, N 2:

սկսեցին հնձել գաղթականությանը: Այդ օրերին «Մշակում» տպագրված մի թղթակցությունում Ախալքալաքի հայրենյաց վարչության քարտուղար Պողոս Աբելյանը գրում էր. «Ախալքալաքցիների բնակչությունն այնքան աճող է դնում, որ եթե գաղթականներին վերկելու համար ձեռք չառնվեն ժամանակի պահանջած միջոցներ, ախալքալաքցիների այս սերունդը կլինի վերջինը երկրագնդի վրա»[12]: 1918 թ. հունիսից մինչև նոյեմբեր Բակուբրիանի անտառներում զոհվեց ավելի քան 18 հազ. մարդ: Գրեթե նույնքան զոհեր տվեցին Ծալկայի և Մանգլիսի չրջաններում ապաստանած հայ գաղթականները: Մինչև հաջորդ գարուն ախալքալաքցի գաղթականների կորուստները հասան 40 հազարի[13]:

1918 թ. հոկտեմբերի 30-ին Մուդրոսում Անտանտի երկրների հետ կնքված զինադադարի համաձայն՝ թուրքերն սկսեցին զորքերը հետ քաշել մինչև 1914 թ. սահմանը: Հետևաբար, դրվում էր նաև Ախալցխայի և Ախալքալաքի գավառներից զորքերի դուրսբերման հարցը: Ինքնաբերաբար մեջտեղ էին գալիս նաև այդ գավառների պատկանելության և գաղթականության վերադարձի խնդիրները:

1918 թ. նոյեմբերից հաղթահարելով վրաց ղինվորական իշխանությունների հարուցած զանազան արգելքները՝ հաճախ չրջանցիկ ճանապարհներով, Ախալքալաքի գաղթականության բեկորներն սկսեցին վերադառնալ իրենց ավերված ու թալանված բնակավայրերը: Բակուրիանից հայրենի գավառ անցնելու թույլտվության դիմաց վրաց ղինվորականները գաղթականներից պահանջում էին ստորագրություններ՝ վրացահպատակություն ընդունելու, գավառը Վրաստանի մաս ճանաչելու մասին[14]: Դեպքերի զարգացումն ակամայից տանում էր դեպի հայ-վրացական հարաբերությունների սրում:

Կանխազգալով Վրաստանի կողմից Ջավախքի նկատմամբ հավակնությունների քաղաքական հետևանքները՝ Հայաստանի կառավարությունը փորձեց դիվանագիտական եղանակով լուծել խնդիրը: Նոյեմբերի 12-ին Երևանում Վրաստանի ներկայացուցիչ Բ. Մդիվանու հետ հանդիպման ժամանակ Հայաստանի արտգործնախարար Ս. Տիգրանյանը և ճանաչված գործիչ Գ. Խատիսյանը հայտարարեցին,

---

[12] «Մշակ», Թիֆլիս, 1919, N 14:
[13] Տե՛ս ՀՀ ԳԱԱ ՊԻԱ, Լեոյի անձն. ֆ. 1, ց. 1, գ. 264, թ. 1–2:
[14] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 3, թ. 131ա:

որ ի կատարումն դեռ 1917 թ. հեղափոխությունների նախօրյակին և ընթացքում վրացական սոցիալ-դեմոկրատիայի ու ՀՅԴ-ի միջև ձեռք բերված համաձայնությունների՝ հայկական կառավարությունը դերազանցապես հայերով բնակեցված տարածքները՝ Ախալքալաքի գավառը, նրան հյուսիսից սահմանակից Գորիի գավառի հարավային հատվածը (Տաբածղուրի լճի շրջանի հայկական գյուղերը — Ա.Մ.) և Բորչալուն՝ մինչև խրամ գետը, մտնելու են Հայաստանի կազմի մեջ: Այդ գրույցի բովանդակությունը Մդիվանին հեռագրով հաղորդից Թիֆլիս[15]: Վրաստանի կառավարության պատասխանը եղավ ժխտական:

Շուտով հայ-վրացական հարաբերությունները ավելի սրվեցին թուրքերի յուրահատուկ «միջամտության» հետևանքով: Վիճելի համարվող տարածքներից հեռանալուց առաջ[16] թուրքական հրամանատարությունը նոյեմբերի 20-ից 25-ն ընկած ժամանակահատվածում, միաժամանակ, մի քանի գաղտնի և՛ Վրաստանի և՛ Հայաստանի կառավարություններին տեղեկացրեց դավառները նրանց հանձնելու մասին: Վրացական ղեկավարությունը չսպահպանեց «օգտվել» թուրքերի ընձեռած հնարավորությունից և անցավ ակտիվ գործողությունների[17]:

Թիֆլիսից նոյեմբերի 29-ին ստացվեց տարածքային հարցերի լուծման վերաբերյալ Վրաստանի կառավարության «նոր» տեսակետը: Վրացական կողմի կարծիքով՝ հայ-վրացական սահմանագիծը պետք է անցներ նախկին Թիֆլիսի նահանգի հարավային սահմանով, այսինքն՝ Լոռին և Ախալքալաքը մտնելու են Վրաստանի կազմի մեջ: Դրան հաջորդեցին ավելի գործնական քայլեր. կազմվեց Ախալքալաքի վրացական վարչություն, նշանակվեց նահանգապետ, զորքերը մարտական պատրաստության բերվեցին:

Ի պատասխան նման մոտեցման, որը հակասում էր խաղաղ միջոցներով և էթնիկ-ազգագրական սկզբունքի հիման վրա վիճելի հարցերը լուծելու վերաբերյալ նախկինում ձեռք բերված համաձայ-

---

[15] Տե՛ս *politika, Jurnali, Tbilisi, 1998, 4-6, gv.* 5:

[16] Թուրքական զորքերն Ախալցխայի և Ախալքալաքի գավառներից դուրս եկան նոյեմբերի 27–ին՝ իրենց հետ տանելով մեծ քանակությամբ թալանված գույք:

[17] Վրաց քաղաքագետներն ու պատմաբանները, որոշ չափով նաև հայ հեղինակները, նվազ չափով ուշադրություն դարձնելով հայ–վրացական ընդհարումը սանձազերծելու գործում թուրքերի ունեցած ամենամեծ դերին, ավելի կարևորել են միմյանց մեղադրանքներ ներկայացնելու հանգամանքը:

նուիրյուններին, դեկտեմբերի 2-ին Հայաստանի արտգործնախարարությունը բողոքի նոտա ներկայացրեց Վրաստանին: «Սահմանային գծի վերաբերյալ վրաց և հայ ներկայացուցիչների (ձեռք բերած – Ա.Մ.) համաձայնության որոշման հիմքում,- ասվում էր արտգործնախարար Ս. Տիգրանյանի ստորագրությամբ ներկայացված նոտայում,- ինչպես հայտնի է, ընկած էր ազգագրական սկզբունքը»: Այդ մոտեցումից վերապահումներ՝ հօգուտ Վրաստանի, նախատեսվում էր միայն տեղագրական (տոպոգրաֆիական) նկատառումներով: Այնպես որ հայկական կողմի պնդումները բխում էին փոխադարձ համաձայնություններից: Հետևաբար, «Ախալքալաքի գավառն ամբողջությամբ և Բորչալուի գավառի մեծ մասը՝ իրենց բացարձակ գերակշիռ հայ բնակչությամբ հանդիսանում են Հայաստանի անբաժան մասերը»[18]:

Դեկտեմբերի 1-ին Հայաստանի կառավարությունը քննարկեց Ախալքալաքի գավառ կանոնավոր զորքեր մտցնելու հարցը: Զինվորական նախարար Հովհ. Հախվերդյանը տեղեկացրեց, որ նախօրյակին բարձրաստիճան զինվորականներ Սիլիկյանի, Դրոյի, Դոլուխանյանի, Զինկևիչի մասնակցությամբ կայացած հատուկ խորհրդակցությունը Ջավախք զորք մտցնելու քայլից առժամանակ ձեռնպահ մնալու որոշում է կայացրել. «...նկատի առնելով սպասվելիք բարդություններները հարավային սահմանի վրա և մի քանի այլ հանգամանքներ...»: Կառավարությունը հիմնավոր գտավ զինվորական նախարարի սլատճառաբանությունները և վճռեց «...լիազորել նրան՝ չմտցնել ներկայումս Ախալքալաքի գավառը զորք և առայժմ բավականանալ նախապատրաստական գործողություններով»[19]:

Հայաստանի կառավարության դանդաղկոտ ու սպասողական գործելակերպի համար թերևս միակ, բայց ոչ ծանրակշիռ փաստարկ կարող էր լինել այն հանգամանքը, որ Ջավախքին հարևան Շիրակը, որտեղով անցնում էր երևանից Ախալքալաք տանող ճանապարհը, այդ օրերին դեռ չարունակում էր մնալ թուրքերի ձեռքում (թուրքերն Ալեքսանդրապոլի գավառից իրենց վերջին զինվորներին դուրս բերեցին դեկտեմբերի 6-ին):

---

[18] «Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. », էջ 74 և *politika, 1998, 4–6, gv.*, 6.

[19] ՀԱԱ, ֆ. 206, ց. 1, գ. 2, թ. 105, հմմտ.՝ «Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ.», էջ 73:

Հայկական զորքերի հրամանատարությունը մի քանի օր անց՝ հավանաբար դեկտեմբերի 6-ին, տեղեկացած չլինելով Ալեքսանդրապոլի պավառից թուրքերի դուրս գալու մասին՝ Ղարաքիլիսայից, Ծալկայի վրայով մի փոքրաթիվ հեծյալ ջոկատ է հասցրել Ախալքալաքի գավառ: Վերջինս կարողացել է մտնել գավառի հարավային մասը՝ Եֆրեմովկա–Տրոյիցկոյե գյուղերի շրջան: Այդ մասին վկայում է նաև Ջավախք շարժվող վրացական զորքերի հրամանատարության մի հաղորդագրությունը՝ ուղղված կառավարությանը, որում խնդրվում էր միջոցներ առաջարկել ստեղծված իրավիճակից դուրս գալու համար, քանզի սպասվում է անցանկալի միջադեպ, այն է՝ ռազմական բախում Բոգդանովկա մտած հայկական էսկադրոնի հետ[20]: Սակայն ինչպես կտեսնենք, հայկական կողմը հապաղեց, իսկ վրացիները գրավեցին գավառի հիմն ական՝ կենտրոնական և հյուսիսային մասը:

Դեկտեմբերի 5-ին Ս. Տիգրանյանն անհրաժեշտ համարեց հուշագիր ներկայացնել Մդիվանուն՝ առաջարկելով ձեռնպահ մնալ Ախալքալաքը գրավելու գործողություններից և սկսել բանակցություններ[21]: Այնինչ Հայաստանի ղեկավարությունն անտեղյակ էր, որ նույն օրը՝ դեկտեմբերի 5-ի առավոտյան, արդեն վրացական կառավարությունը, որ մինչև այդ բռնազավթել էր Լոռին[22], զորավար Մականևի (Մաղաշվիլի) գլխավորությամբ զորք էր մտցրել նաև Ջավախք և գրավել Նրա կենտրոն Ախալքալաքը:

Գևրակչիս վրացական ուժերի հետ չբախվելու նկատառումով, հայկական փոքրաթիվ ջոկատը ստիպված դուրս եկավ գավառից[23]: Առնվազն տարօրինակ է, որ Վրաստանի արտգործնախարար Ե. Գեգեչկորին դեկտեմբերի 7-ին հայկական կողմին ուղարկած իր պատասխան հեռագրում վրացական զորքերի մուտքը Ախալքալաք պատճառաբանում էր տեղական բնակչության չահերի պաշտպա-

---

[20] Տե՛ս *politika, 1998, 4-6, gv.*, 7.

[21] Տե՛ս **Ջամալեան Ա.**, նշվ. աշխ., «Հայրենիք», Բոստոն, 1928, ապրիլ, էջ 94 և «Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ.», էջ 75:

[22] 1918 թ. հոկտեմբերին թուրքական զորքերը դուրս եկան Լոռուց: Երբ հայկական զինված ուժերը փորձեցին մտնել գավառ, նրանց կանգնեցրին գերմանական պահակային ջոկատները: Ճոն Կրեսը Լոռու տարածաշրջան զորք մտցնելու դեպքում Հայաստանին նույնիսկ սպառնաց պատերազմով: Վրացական ուժերը, օգտվելով գերմանական աջակցությունից, ներխուժեցին Լոռի և հսկողություն սահմանեցին հայկական գյուղերի վրա («Յառաջ», Փարիզ, 1928, 19 հունիս, N 677, էջ 2):

[23] Տե՛ս **Վրացեան Ս.**, նշվ. աշխ., էջ 225–226:

նուիրյան անհրաժեշտությամբ և պատմական, քաղաքական ու բարոյական տեսանկյուններից այն Վրաստանին պատկանելու «իրողությամբ»: Ընդ որում, ոչինչ չէր ասվում էթնիկական սկզբունքի մասին: Զարմանալի է, որ այս գավառը ևս գրավելու և հայերին կատարված փաստի առաջ կանգնեցնելու անխոհեմ քայլից հետո էլ «...Վրաստանի կառավարությունը մնում էր լիովին համոզված, որ այդ հանգամանքը (Ախալքալաքի գրավումը – Ա.Մ.) ոչ մի կերպ չի կարող ազդել տարածքային սահմանազատման համար մեր բանակցությունների ընթացքի վրա...»[24]:

Վրացական զորքերը, Ախալքալաքում «կարգ ու կանոն հաստատելու նպատակով», զինաթափեցին տեղի ինքնապաշտպանական ուժերը, մինչև դեկտեմբերի 10-ը հսկողության տակ վերցրին ամբողջ գավառը, ստեղծեցին վրացական վարչություն, սկսեցին խոչընդոտել դեռ հայրենի օջախներ չվերադարձած գաղթականների մնացած մասի տունդարձը:

Դեկտեմբերի 16-ին Հայաստանի խորհուրդը (խորհրդարան) հավանություն տվեց Ախալքալաքի և Բորչալուի գավառների հայ բնակչության անվտանգության ապահովմանն ու այդ տարածքները վրացական զորքերից ազատագրելուն ուղղված Հայազնունու կառավարության ուշացած քայլերին և հատուկ որոշում ընդունեց գործադիր իշխանությանն ազատ գործելու իրավունք արտոնելով: Միևնույն ժամանակ խորհրդարանը համաձայնեց Այսրկովկասում անգլիական զինվորական հրամանատարության ներկայացուցիչ կապիտան Գրինի առաջարկությանը՝ ռազմական գործողություններից ձեռնպահ մնալու և բանակցություններ սկսելու մասին՝ պայմանով, որ հայկական ուժերը չեն հեռանալու վիճելի տարածքներից այնքան ժամանակ, քանի դեռ չի ապահովված տեղի հայ բնակչության անվտանգությունը վրացական զորքերից[25]: Հայաստանի կառավարությունը նորից բողոքեց Լոռու և Ախալքալաքի զավթման կապակցությամբ: Սակայն վրացիները մնացին անդրդվելի: Այսպես՝ դեկտեմբերի կեսերին ծագեց հայ-վրացական պատերազմը, որի սանձազերծման գործում, ինչպես նշվեց, իրենց ամենամեծ դերն ունեցան թուրքերը:

---

[24] «Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ.», էջ 77. Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917–1923 թթ., Եր., 1999, էջ 52–53:

[25] Տե՛ս «Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ.», էջ 79:

Հայ քաղաքական կուսակցությունները, հասարակական կազմակերպությունները, ժամանակի հայ մամուլը ցավով ընդունեցին եղբայրասպան պատերազմի լուրը: Սակայն միանգամայն արդարացի համարելով հայկական կողմի մոտեցումները հիմնականում հանդես եկան Հայաստանի կառավարության գործողությունների պաշտպանությամբ[26]:

Հայկական ուժերը Դրոյի գլխավորությամբ ազատագրեցին Լոռու մեծ մասը: Դեկտեմբերի 11–12-ին հայկական դիվիզիայի 4-րդ հետևակային գնդի մեկ գումարտակ Ալեքսանդրապոլից չարժվեց դեպի Ախալքալաք և այնտեղ մտած վրացական զորքերի հետ ընդհարումից հետո հսկողության տակ վերցրեց գավառի մեծ մասը: Վրացական ուժերը քաշվեցին Հյուսիս[27]: *Դեկտեմբերի 17-ին Վրաստանի խորհրդարանում ճառով հանդես եկավ կառավարության նախագահ Ն. Ժորդանիան, որն սկսված պատերազմի սանձազերծման ողջ մեղքը բարդեց Հայաստանի կառավարության վրա: Վրաստանում հայերի նկատմամբ իսկական մարդաորս սկսվեց: Հազարավոր հայեր հայտարարվեցին ռազմագերիներ և աքսորվեցին Քութայիս*[28]:

Դեկտեմբերի 19-ին Ս. Տիգրանյանը հատուկ ռադիոգրով Վրաստանի արտգործնախարարին տեղեկացրեց, որ հայկական կողմը դեռ հնարավոր է համարում ռազմական գործողությունների դադարեցումը և ուղարկում է հատուկ պատվիրակություն անգլիացի կապիտան Գրինի միջնորդությամբ բանակցություններ սկսելու համար: Միակ նախապայմանն այն է, որ ի կատարումն Հայաստանի խորհրդի որոշման պահանջվում էին երաշխիքներ Բորչալուի և Ախալքալաքի հայ բնակչության անվտանգության համար: Ռա դիտգրում նաև նշվում էր, որ մինչև դեկտեմբերի 13-ը հայկական ոչ մի զորա-

---

[26] Տե՛ս **Թադևոսյան Մ.**, Հայաստանի Հանրապետության քաղաքական կյանքը անդրկովկասյան և ախյուռքահայ մամուլի լուսաբանմամբ (1918 մայիս–1919 մայիս), թեկնածուական ատենախոսություն, ձեռագիր, Եր., 2001, էջ 84–99: Այսպես՝ Հայ ժողովրդական կուսակցության օրգան «Ժողովուրդը» (Երևան) միանգամայն արդարացի էր համարում Ախալքալաքի և Լոռու միացումը Հայաստանին («Ժողովուրդ», 1919, 9 փետրվար): ՀՅ Դաշնակցությունը միանշանակ նույն կարծիքին էր: Մամուլի այլ օրգաններ խնդիրը նույնացնում էին ֆրանս-գերմանական վիճելի Էլզաս–Լոթարինգիայի հետ (**Թադևոսյան Մ.**, նշվ. աշխ., էջ 95):

[27] Տե՛ս **Հարությունյան Կ. Ա.**, Հայկական ազգային զորամիավորումները 1918–1945 թվականներին, Եր., 2002, էջ 58:

[28] Տե՛ս **Վրացյան Ս.**, նշվ. աշխ.. էջ 242–248:

մաս վրացական ուժերի նկատմամբ որևէ ագրեսիվ գործողություն չի կատարել, այն դեպքում, երբ վերջիններս հայ բնակչության նկատմամբ իրենց բռնություններով հարկադրել են Հայաստանին հանդես գալ հայության շահերի պաշտպանությամբ: «Վերջին ամիսներին,- ասվում էր փաստաթղթում,- Հայաստանի կառավարությունը հանդես է բերել ծայրահեղ խաղաղասիրություն: Մինչդեռ Վրաստանի կառավարությունը Լոռու նկատմամբ ոտնձգությամբ, Ախալքալաքի բռնազավթումով, Բորչալուի (բնակչության նկատմամբ) ռազմական բռնություններով հանդես է եկել իբրև ագրեսիվ, պավթողական քաղաքականության կրող՝ Հայաստանի կառավարության բազմաթիվ դիվանագիտական բողոքներին և խաղաղասիրական առաջարկություններին վերաբերվելով լիակատար քամահրանքով»[29]:

Միջնորդի դեր ստանձնած անգլիացիներին չհաջողվեց կանխել ռազմական բախումը: Պատերազմը շարունակվեց: Հատկապես Լոռիում հայկական զորքերն ունեցան լուրջ հաջողություններ, իսկ ռազմաճակատի ձախ թևում հասան մինչև Բելի կլյուչ (այժմ՝ Թեթրիծղարո):

Անտանտի ներկայացուցիչները չարունակեցին փորձերը՝ հաշտության եզրեր գտնելու հարցում: Բայց այս անգամ արդեն անգլիացիներն իրենց միջնորդական գործունեության մեջ չառաջնորդվեցին արդարության սկզբունքով: Դեկտեմբերի 25-ին անգլիացի գեներալ Ռայկրոֆտը (նաև՝ Ռեյկրոֆտ, Ռիկրոֆտ) և ֆրանսիացի գնդապետ Շարդինյին, առանց Հայաստանի ներկայացուցիչների հետ խորհրդակցելու, Վրաստանի վարչապետ Ն. Ժորդանիայի հետ ստորագրեցին զինադադարի մի համաձայնագիր հիմնահարցի լուծման ուղիների մասին: Այն նախատեսում էր ռազմական գործողությունների դադարեցում, Ջալալօղլի—Դսեղ կորագծից հյուսիս ընկած տարածքում վրացական, իսկ դրանից հարավ մնացող չրջանում՝ հայկական զորքերի տեղակայում: Ախալքալաքում հաստատվելու էր վրացական վարչակազմ՝ դաշնակից երկրների հսկողությամբ: Վարչակազմի մեջ ընդգրկվելու էին տեղի հայ և մահմեդական ներկայացուցիչներ[30]: Վրացական զորքերի թիվը գավառում պետք է լիներ խիստ սահմանափակ:

---

[29] «Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ.», էջ 80–81:
[30] Տե՛ս **Վրացեան Ս.**, նշվ. աշխ., էջ 234–235:

Այս համաձայնության տակ Հայաստանի կողմից անաջարկվեց ստորագրել Արշակ Ջամալյանին: Վերջինս կտրականապես հրաժարվեց՝ առարկելով Ախալքալաքին վերաբերող ձևակերպմանը: Անգլիացիները համաձայնագրի տակ ավելացրին հետևյալ նախադասությունը. «Պ. Ջամալյանը համաձայն չէ Ախալքալաքի գավառը Վրաստանի կողմից դրավելու կետին»: Փաստորեն դաշնակիցները, հաշվի չնստելով հայկական կողմի կարծիքի հետ, միակողմանի համաձայնագիրը փորձեցին դնել գործողության մեջ: Նման պայմաններում Հայաստանին մնաց հաշտվել ստեղծված իրավիճակի հետ: Դեկտեմբերի 29-ին Մեծ Ղարաքիլիսայում Հայաստանի ներկայացուցիչ Մ. Հարությունյանը անգլիացիների հորդորների ներքո և մի նախապայմանով, որ զինադադարով նախատեսվող պայմանները ժամանակավոր են և դեռ ենթակա են վերանայման, ստորագրեց վերոհիշյալ համաձայնագիրը: Այն բացահայտորեն միակողմանի էր և բխում էր միայն վրացիների շահերից: Այդ մասին է վկայում նաև Ղարաքիլիսայում դաշնակից տերությունների հանձնաժողովի նախագահ Դուգլաս Վիճերսը: Նրա կարծիքով կնքված համաձայնագրից հայկական կողմի դժգոհությունը միանգամայն արդարացի էր: Բայց նույնիսկ այդ պարագայում, ստորագրելով զինադադարի փաստաթղթի տակ, «Հայաստանի կառավարությունը հանդես բերեց լայն մեծահոգություն և խաղաղության անկեղծ ցանկություն»[31]:

Մի քանի օր անց՝ դեկտեմբերի 31-ին, հայ-վրացական ընդհարումը դադարեցվեց: 1919 թ. հունվարի 9–17-ը Թիֆլիսում կայացավ հաշտության կոնֆերանս: Այն, որ կոնֆերանսի անցկացման վայր էր ընտրված ոչ թե չեզոք վայր, այլ Վրաստանի մայրաքաղաքը, ենթադրում էր վրացական պատվիրակության համար գերակա դիրք: Հավանաբար անգլիական պատվիրակությունը, որը գլխավորում էր խորհրդաժողովը, ինչպես դեկտեմբերի վերջին, այնպես էլ այժմ, տրամադրված լինելով պաշտպանելու Վրաստանի շահերը, նույնպես պնդեց կոնֆերանսը Թիֆլիսում անցկացնելու վրացական կողմի առաջարկության օգտին: Հայաստանի կառավարությունը, հաշվի առնելով, որ Թիֆլիսում գործող Հայոց ազգային խորհրդի ներկայացուցիչները կարող են ներկայացնել իր շահերը, չառարկեց կոնֆերանսի անցկացման վայրի վերաբերյալ վրաց-անգլիական առաջարկությանը: Ինչպես ցույց տվեցին դեպքերը, այդ հանգամանքը

[31] «Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ.», էջ 81:

կարևոր դեր կատարեց կոնֆերանսում ոչ հայանպաստ որոշումն ընդունելու հարցում:

Կոնֆերանսը նախագահում էր անգլիական բանակի գնդապետ Սոյուարտը: Ֆրանսիական հրամանատարությանը ներկայացնում էր կապիտան Հասսելը: Հայկական պատվիրակության մեջ ընդգրկված էին Մ. Հարությունյանը (նախագահ), Ստ. Մամիկոնյանը և ուրիշներ, իսկ ռազմական խորհրդականն էր գեներալ Գ. Կորգանովը (Ղորղանյան), քարտուղարը՝ Ա. Ա. Ահարոնյանը: Վրաստանի պատվիրակությունն ավելի ներկայացուցչական էր: Այն ղեկավարում էր արտգործնախարար Ե. Գեգեչկորին: Անդամն էրն էին Սաբախտարյաշվիլին, գեներալ Գեդևանովը և ուրիշներ:

Ախալքալաքի հարցը, որ կոնֆերանսի ամենասուր խնդիրներից էր, քննարկվեց հունվարի 13-ի նիստում[32]: Գնդապետ Սոյուարտն ի սկզբանե դրսևորեց կողմն ակալ պահվածք և ամբողջ նիստի ընթացքում, գործեց վրացիների հետ փոխհամաձայնեցված սցենարով: Նախ՝ նա առաջարկեց, որ հիմն ահարցի կարգավորման վերաբերյալ քննարկման դրվի վրացական պատվիրակության առաջարկը, որը մինչ այդ՝ հայ-վրացական պատվիրակությունների հանդիպման ժամանակ, արդեն մերժվել էր հայերի կողմից: Խնդիրը վերաբերում էր Ախալքալաքում զորքեր տեղակայելուն: Վրացիներն առաջարկում էին Ջավախքում պահել միայն վրացական զորքեր. 200 հոգանոց մի զորաջոկատ պետք է կանգներ գավառի սահմանի երկայնքով, իսկ 360 հոգանոց մեկ գումարտակ՝ չորսական հրանոթներով ու գնդացիրներով, տեղակայվեր Ախալքալաք քաղաքում: Ջավեչտական է, որ գավառում վրացական զորքերի ներկայությունը գեներալ Գեդևանովը «հիմնավորում «էր հայ բնակչության չահերի պաշտպանության «մտահոգությամբ». վրացական զորքը պետք է կանխեր արյունահեղությունը գավառ վերադարձող հայ գաղթականության և նրանց բնակավայրերում հաստատված մահմեդականների միջև: Ինչ վերաբերում է հայ բնակչության անվտանգությանը, ըստ վրաց գեներալի՝ անհանգստանալու հարկ չկար, քանի որ «ճմռանը, ձյան առկայությունն Ախալքալաքի գավառում անհնարին է դարձնում

[32] Ասիմանային վիճելի հարցերի քննարկման մասին տե՛ս նաև **Խառատյան Վ.** Լոռու և Ախալքալաքի հարցը 1919 թ. հայ-վրացական խորհրդաժողովում. «Հայոց պատմության հարցեր», Գիտական հոդվածների ժողովածու. N 2. էջ 98–103:

այդ շրջանում ռազմական գործողությունները, և ուստի, այդ զորքերը չեն կարող օգտագործվել Հայաստանի դեմ»[33]:

Հայկական կողմի առարկությունները չեն ընդունվում անգլիացիների կողմից: Ստյուարտն առաջարկում է որպես երաշխիք դավառ մտցնել դաշնակիցների մեկ վաշտ: Բայց չուտով պարզվում է, որ հայերի համար քիչ թե շատ ընդունելի այդ տարբերակը հնարավոր չէ իրագործել, քանի որ դաշնակից զորքերն անմիջապես չեն կարող ժամանել տարածաշրջան: Այդ ժամանակ Ստյուարտն ընդունում է վրացական կողմի առաջարկը՝ մինչև դաշնակիցների ժամանումը Ախալքալաքում տեղակայել վրացական 800 հոգանոց մի զորախումբ: Կորզանովն առաջարկում է ի հակակշիռ վրացական զորքերի այդ քանակությանն, հայերին թույլատրել իրենց ռազմական ուժերն Հարավային Բորչալուում հասցնել 600 զինվորի: Բայց ապարդյուն: Հասկանալի է, որ այս ամենը նախապես մշակված վրաց-անգլիական դիվանագիտական հնարք էր:

Ստյուարտի ճնշման տակ հայկական պատվիրակությունը համաձայնվում է վրացական նախագծի հետ, որը ոչ միայն արտոնում էր Վրաստանին զգալի քանակությամբ զորքեր պահելու Ջավախքում, այլև առանց դաշնակիցների ներկայության և հսկողության, բացառել Հայաստանի որևէ մասնակցություն Ախալքալաքի գավառի գործերին: Ավելին, Գեդևանովի պահանջով արձանագրության մեջ մտցվում է հատուկ կետ, ըստ որի՝ Վրաստանի նկատմամբ հայաստանի որևէ ագրեսիվ գործողություն գնահատվելու էր իբրև թշնամական քայլ դաշնակիցների հանդեպ[34]:

Կոնֆերանսում դաշնակիցների ջանքերով ի վնաս հայերի որոշում է կայացվում նաև Ախալքալաքի վարչակարգի ձևավորման սկզբունքների վերաբերյալ: Չի ընդունվում տեղական մարմիններն ընտրովի դարձնելու մասին հայերի առաջարկը: Ստյուարտը, խու-

---

[33] ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 104, թ. 77: Գեներալ Կորզանովը, ի պատասխան Գեդևանովի արտահայտած վերջին մտքի, հիշեցրեց, որ Առաջին աշխարհամարտի կարևորագույն գործողություններից երկուսը՝ գերմանական Հինդենբուրգի պաշտպանական գծի ճեղքումը և Էլզրումի գրավումը, տեղի են ունեցել ձմռանը: Բացի այդ, Ախալքալաքում զգալի թվով վրացական ուժերի առկայությունը վտանգում է նաև հայկական գորքերի դիրքերը Բորչալուի գավառի հարավում:

[34] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 104, թ. 78–79: Վրացական պատվիրակության վստահությունը Ստյուարտի նկատմամբ այնքան մեծ էր, որ Գեդևանովը պահանջեց, որ Հայաստանին արգելվի Ախալքալաքի գավառի սահմանագլխին պահելու անգամ մեկ զինվոր:

սափելով իրեն ուղղված հայկական կողմի արդարացի հարցադրումներից, առաջնորդվում էր այն «սկզբունքով», որ այդ խնդիրը դուրս է կոնֆերանսի իրավասությունից և արդեն լուծված է դեկտեմբերի վերջին դեներալ Ռայկրոֆտի նախագծով կնքված զինադադարի համաձայնագրով: Հայկական պատվիրակությանը չի հաջողվում հասնել դոնե այնպիսի որոշման, որ վրացական վարչակարգի գործունեությունը հսկելու համար նախատեսվող հանձնաժողովում հայ անդամների թեկնածությունն առաջադրվի Հայաստանի և հատատվի դաշնակիցների կողմից: Այդ հարցը ևս փաստորեն մնում է միայն Վրաստանի իրավասությանը, որը պետք է տեղի հայերից և մահմեդականներից ընտրված ներկայացուցիչներին, դաշնակից երկրների դիտորդների ներկայությամբ, վստահեր իր գործունեության «հսկողությունը»: Բայց քանի որ ո՛չ դաշնակից զորքեր ժամանեցին Ջավախք, ո՛չ էլ նրանց դիտորդները, վրացական կառավարությունը գավառում հաստատեց իր լիակատար իշխանությունը, իսկ Վերահսկիչ հանձնաժողովում ընդգրկվելու համար տեղի հայ ու մահմեդական ներկայացուցիչներին ընտրելու գործը դարձավ ձևական և նույնպես հայտնվեց վրացական իշխանությունների ձեռքում:

Այսպիսով, բրիտանական պատվիրակությունը Ախալքալաքի հիմն ահարցի քննարկումը տարավ այնպիսի ուղիով, որ արդյունքում ընդունվի միայն վրացիների համար ընդունելի որոշում: Հայկական կողմի բոլոր արդարացի առարկություններին, հատկապես այն հարցում, որ անհասկանալի է, թե ինչպես կարելի է Հայաստանին զրկել գերազանցապես հայերով բնակեցված այդ գավառի վարչաքաղաքական կյանքին մասնակցելու իրավունքից, գնդապետ Ստյուարտը դեմագոգիկ ձևով պատասխանեց, որ այդ գործառույթը կկատարեն դաշնակիցների զորքերն ու նրանց դիտորդները:

Անգլիացիների կողմն ակալ կեցվածքն այնքան ոգևորեց վրացական պատվիրակությանը, որ արտգործնախարար Ե. Գեգեչկորին վստահորեն հայտարարեց, որ «այդ (Ախալքալաքի – Ա.Մ.) վարչակարգի հանդեպ Հայաստանը ոչ մի գործ չպետք է ունենա» նույնիսկ չհամաձայնելով Վերահսկիչ հանձնաժողովի ընտրությունների մասին Հայաստանի կառավարությանը տեղյակ պահելու վերաբերյալ Ստյուարտի առաջարկության հետ: Հատկանշական է, որ վրացական պատվիրակության նախագահի այդ կարծր, հայերի ու դաշնակիցների համար նաև վիրավորական կեցվածքը, անգլիացի գնդա-

պետը բավարար համարեց և, առանց հայկական կողմի բողոքները հաշվի առնելու, հայտարարեց հարցը վերջնականապես լուծված[35]:

Խաղաղության խորհրդաժողովն ավարտվեց հունվարի 17-ին: Կնքված հաշտությունը խիստ ձեռնտու էր վրացական կողմին: Հայկական զորքերի ռազմական հաջողություններն ի չիք էին դառնում: Լոռու աղատագրված ավելի քան 40 գյուղեր մեծ մասամբ հայաբնակ, մտնում էին Ջեղոք գոտու մեջ, իսկ Ջավախքը, թեև դիտվում էր վիճելի տարածք, մնում էր վրացիների հսկողության ներքո[36]: *Այնտեղ վրացական կառավարությանը թույլատրվում էր պահել ոչ ավել, քան 225 հետևակային (2 վաշտ 2 գնդացիրով): Տեղի վրացական վարչության գործունեության հսկողությունը, ինչպես նշվեց, ձևականորեն դրվելու էր Անտանտի երկրների ներկայացուցիչների վրա, որոնք այն իրականացնելու էին գավառի հայ և մահմեդական բնակչության օժանդակությամբ*[37]:

Ջբավարարվելով այսքանով հետագա ամիսներին ևս անգլիական զորահրամանատարությունը հանդես եկավ վրացանպաստ նոր «առաջարկություններով» և երկու հարևան ժողովուրդների միջև ավանդական բարիդրացիական հարաբերությունները վերականգնելու փոխարեն, իրականում լուրջ դեր կատարեց նրանց միջև սառնությունը պահպանելու գործում:

Ինչևէ, հայ–վրացական եղբայրասպան պատերազմն ավարտվեց, ազգամիջյան լարվածությունը հետզհետե տեղի տվեց, և երկու երկրների միջև չուտով հաստատվեցին ընդունելի միջպետական հարաբերություններ: Մարտին երկու հանրապետությունները ճանաչեցին միմյանց անկախությունը, վերականգնվեց երկաթուղային երթևեկությունը, աշխուժացան տնտեսական կապերը: Սակայն Վրաստանի կառավարությունը, օգտագործելով իր աշխարհագրական դիրքը, չմոռացավ ժամանակ առ ժամանակ հակահայ քայլեր կատարել ընդհուպ մինչև տնտեսական շրջափակումն ու արտասահմանից հայ սովյալների համար նախատեսված սննդամթերքի թալանը[38]:

Բարեբախտաբար, այդ ռազմական կոնֆլիկտից հետո հայկական և վրացական քաղաքական շրջանակներում երկուստեք գե-

---

[35] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 104, թ. 80–82:
[36] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 75, թ. 3ա, 5ա:
[37] Տե՛ս «Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ.», էջ 82–83:
[38] Տե՛ս Գալոյան Գ., նշվ. աշխ., էջ 99–100:

բակշռից հարցերը քաղաքական ճանապարհով լուծելու մոտեցումը, որին կողմերը հետագայում հարազատ մնացին անգամ ամենաբարդ իրավիճակներում: Ուշագրավ է, որ թեև վիճելի խնդիրներից չատերին այդպես էլ լուծումներ չգտնվեցին, սակայն բարեկամական հարաբերությունները պահպանվեցին: 1919–1920 թթ. ընթացքում հայ-վրացական վիճելի խնդիրների թվում չարունակվեցին բանակցությունները ինչպես Ջավախքի, այնպես էլ այլ հարցերի շուրջ[39]: Հայաստանի ու Վրաստանի խորհրդայնացումից հետո Ախալքալաքի պատկանելության հարցը փոխանցվեց խորհրդային իշխանությանը:

Աշոտ Ա. Մելքոնյան *– գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է Արևմտյան Հայաստանի պատմական ժողովրդագրության, Ջավախքի 19–20-րդ դարերի պատմության հիմնահարցերը: Ունի բազմաթիվ մենագրություններ և հոդվածներ հայոց նոր պատմության առանցքային հիմնահարցերի վերաբերյալ:*

Summary

THE ISUUE OF JAVAKHK IN THE CONTEXT OF ARMENIAN-GEORGIAN RELATIONSHIP

(May, 1918 – January, 1919)

Key words – the issue of Javakhk, ethnographic principal, the Turks, Georgian troops, Armenian-Georgian two weeks' conflict, the English, the French, Lori, the province of Akhalkalak, Tiflis, Armenian-Georgian conference.

In late May, 1918 after the proclamation of Republics of Armenia and Georgia the disputable territorial issues included the question of the identification of the province of Akhalkalak. The approach of the Armenian side based on the national principal of delimitation was

[39] 1919–1921 թթ. Ջավախքի շուրջ հայ-վրացական առնչությունների մասին մանրամասն տե՛ս **Մելքոնյան Աշոտ**, Ջավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին, Եր., 2003, էջ 314–349:

rejected by the Georgian government. When the Turks left Javakhk,on December 5 the Georgian troops entered Akhalkalak. The official protests of Armenia had no effects.In mid-December the two weeks' Armenian-Georgian conflict was unleashed in the provinces of Lori and Akhalkalak due to instructions given by the Ottoman Turks. On December 31 a ceasefire agreement was struck due to the mediation of the English and French intermediaries, and on January 9–17, 1919 the Armenian-Georgian conference was held. Especially due to the pressure implemented by the English officer Stuart the province of Akhalkalak appeared under Georgia's control. In 1919–1920 the Armenian government tried for several times to solve this issue at different international instances. After the Sovietization of the region the issue of Javakhk was transmitted to the Soviet Republics of Georgia and Armenia.

Резюме

ДЖАВАХКСКАЯ ПРОБЛЕМА В КОНТЕКСТЕ АРМЯНО-ГРУЗИНСКИХ ОТНОШЕНИЙ

(май 1918 г. – январь 1919 г.)

Ключевые слова – Джавахкская проблема, этнический принцип, турки, грузинские войска, армяно-грузинский двухнедельный конфликт, англичане, французы, Лори, Ахалкалакский уезд, Тифлис, армяно-грузинская конференция.

В конце мая 1918 г., после провозглашения Республики Армения и Республики Грузия, в числе спорных территориальных вопросов, возникших между сторонами, был вопрос о принадлежности Ахалкалакского уезда. Предложение армянской стороны о разграничении по этническому принципу было отвергнуто грузинским правительством. После выхода из Джавахка турок, 5-го декабря, грузинские войска вошли в Ахалкалак. Официальные протесты Арме-

ний были безрезультатны. По наводке османских турок в середине декабря был развязан двухнедельный армяно-грузинский военный конфликт за Лорийский и Ахалкалакский уезды. 31-го декабря при посредничестве англичан и французов было заключено перемирие, а 9–17-го января 1919 г. была созвана армяно-грузинская конференция. Ахалкалакский уезд, особенно под давлением английского офицера Стюарта, был взят под контроль Грузии. В 1919–1920 гг. правительство Армении сделало множество попыток решить проблему в разных международных инстанциях. После советизации региона джавахкская проблема перешла к Грузинской и Армянской советским республикам.

REFERENCES

1. **Jamalean A.**, Im pataskhannerə «Promete»-i yev «Ankakh Vrastani» hraparakagirnerin, «Yaraj», Pariz, 1928, 19 hunis, N 677. (In Armenian)

2. «Hayastani Hanrapetujunə 1918–1920 tt. (qaghaqakan patmutyun), pastatghteri zhoghovatsu, kazmoghner G. Galoyan, V. Ghazakhecyan... », Yer., 2000. (In Armenian)

3. **Avetisyan H.**, Haykakan harcə 1918 t., Yer., 1997. (In Armenian)

4. **Vracean S.**, Hayastani Hanrapetutiun, Yer., 1997. (In Armenian)

5. **Ghazakhecyan V.**, Yeres aratsnerə, «Hayastani ashkhatavor», 1919, 24 hunis, N 79. (In Armenian)

6. «Hayreniq», 1928, september. (In Armenian)

7. «Horizon», 1918, 30 ogostos. (In Armenian)

8. **Abeghyan A.**, Menq yev mer harevannerə, «Hayreniq», 1928, april. (In Armenian)

9. **Tadevosyan M.**, Hayastani Hanrapetutyan qaghaqakan kyanqə andrkovkasyan yev spyurqahay mamuli lusabanmamb (1918 mayis – 1919 mayis), teknatsuakan atenakhosutyun, dzeragir, Yer., 2001. (In Armenian)

10. **Harutyunyan K. A.**, Haykakan azgayin zoramiavorumnerə 1918–1945 tvakannerin, Yer., 2002. (In Armenian)

11. **Kharatyan V.**, Loru yev Akhalqalaqi harcə 1919 hay-vracakan khorhrdazhoghovum, Hayoc patmutyan harcer, Gitakan hodvatsneri zhoghovatsu, N 2. (In Armenian)

12. **Melqonyan Ashot**, Javakhqə XIX darum yev XX dari arajin qarordin, Yer., 2003. (In Armenian)

Հայաստանի Հանրապետության պատմության դասերը 1918–1920 թթ., թեմատիկ համար, Երևան, «Վէմ» համահայկական հանդես, թիվ 4 (64), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2018, էջ 133–147:

SYTUACJA DEMOGRAFICZNA W EREWANIU W PIERWSZEJ ĆWIERCI XIX w.

W PIERWSZEJ ĆWIERCI XIX w., ZE WZGLĘDU NA WIELE WOJEN, A ZWŁASZCZA ROSYJSKO-PERSKĄ (1804–1813), ROSYJSKO-TURECKĄ (1806–1812) ORAZ TURECKO-PERSKĄ (1821–1823), TOCZONYCH NA ZAKAUKAZIU I WE WSCHODNIEJ ARMENII, W EREWANIU ZACHODZIŁY ISTOTNE ZMIANY DEMOGRAFICZNE

W XVIII stuleciuznaczna liczba Ormian była przesiedlana z Chanatu Erewań na inne tereny. Na przykład król Kartlii Herakliusz II ściągnął do Gruzji wielu ormiańskich rzemieślników z Erewania i Doliny Araratu. Jednocześnie plemiona pochodzenia tureckiego i kurdyjskiego przeniknęły zarówno do Chanatu Erewańskiego, jak i do innych regionów Wschodniej Armenii. Nadal jednak to Ormianie stanowili tam przytłaczającą większość ludności.

Tymczasem władze perskie, uznając Chanat Erewański za obszar strategiczny, podejmowały kroki, aby na tereny opuszczone i niezamieszkane przesiedlić ludność z innych miejsc, przede wszystkim pracowitych Ormian. Szach perski, podejmując apele ormiańskich katolikosów, jeszcze w roku 1748 zabronił prześladowania religijnego Ormian, a chrześcijanie, którzy nawrócili się na islam, mieli być pozbawieni praw dziedziczenia. Badania wskazują, że to rozwiązanie prawne znacznie wstrzymało wymuszony proces islamizacji i pobudziło ruch osiedleńczy nowych grup Ormian w Erewaniu i okolicach.

Inny powód przyrostu liczby Ormian na tych terenach to obserwacja, że podczas niszczycielskich kampanii Aga Mammad Chana w Karabachu pod koniec XVIII w. ufortyfikowane miasto Erewań, będące stosunkowo bezpiecznym obszarem, dawało schronienie wielu ormiańskim uchodźcom, dlatego liczba Ormian tam rosła. W rezultacie w Erewaniu liczbę ludności szacowano na ok. 12 tys. osób.

Perskie przesiedlenia

Ale ten wzrostowy trend nie trwał długo i wkrótce wystąpiło zjawisko przeciwne. Rozpoczęta wojna rosyjsko-perska w 1804 r. doprowadziła do radykalnych zmian w strukturze społeczeństwa. Liczba Ormian w Erewaniu i jego prowincji znacznie spadła. Każda z wojujących stron próbowała bowiem z terytoriów zajętych przez wroga przenieść ludność ormiańską na obszary kontrolowane przez siebie. Co do zasady Persowie podejmowali kroki w celu deportacji Ormian z chanatu w Erewaniu w głąb Persji, a Rosjanie – do Gruzji. Z obu stron zaczęły się prawdziwe polowania na Ormian.

Władze perskie przygotowywały się do przesiedlania Ormian do Persji już w 1803 r., jeszcze przed rozpoczęciem działań wojennych, chcąc pozbawić Rosjan ich ewentualnego poparcia podczas zbliżającej się wojny. Wraz z nadejściem pierwszych wiadomości o ruchu wojsk rosyjskich Persowie przystąpili do działania, zmuszając prawie wszystkich mieszkańców Erewania do emigracji. Niemniej

– jak wynika z analizy dostępnych źródeł

– większość wysiedlonych (ok. 2 tys. rodzin) podporządkowała się poleceniom i nie migrowała w głąb Persji. Uciekła, niekiedy nawet przekraczając granicę turecko-perską, znajdując schronienie na terytorium prowincji Kars. Można przypuszczać, że władze tureckie nie tylko nie powstrzymywały uchodźców, lecz im pomagały, chętnie widząc u siebie tę pracowitą ludność.

Polityka Rosjan

Rosyjskie władze wojskowe z kolei korzystały z okazji, by tych uciekinierów z Erewania próbować przenieść na prawie wyludnione terytoria Lori i Pambaku, nad którymi Rosja panowała od 1801 r., lub do Gruzji. Z polecenia rosyjskiego generała P. Cycjanowa ormiański biskup Hovhannes, który przybył do uchodźców z Tbilisi na początku czerwca w 1804 r., próbował przekonać ich do przeniesienia się na terytoria rosyjskie, zapewniając, że władze rosyjskie gwarantują im powrót do

Erewania po zdobyciu miasta. Dzięki tym obietnicom udało się przekonać większość z ok. 2 tys. uchodźców do przeniesienia do Lori i Gruzji. Przy okazji część z nich wraz z rosyjskim wsparciem przeszła do Tyflisu (Tbilisi) i powiększyła populaqę ormiańskiej dzielnicy Havlabar na lewym brzegu rzeki Kura. W 1805 r. gen. Nieswietajew kontynuował tę samą politykę.

Jesienią 1804 r. w liście do Cycjanowa mieszkaniec Erewania melik* Abraham i setnik Gabriel poprosili Rosję o pomoc, informując, że oni przeszli pod rosyjskie rządy, ale „ponad 500 rodzin żyjących w okolicach twierdzy Erewań są tam nadal, a ponieważ wszędzie zostali postawieni strażnicy, nie mogli uciekać i nadal pozostają w rękach niewiernych Persów".

Na początku lipca 1805 r. rosyjskie władze wojskowe podjęły nową próbę przejęcia pozostałych ormiańskich rodzin z Erewania. W liście napisanym do ministra spraw zagranicznych Rosji A. Czartoryskiego, P. Cycjanow informował, że „Persowie chcą przesiedlić Ormian mieszkańców Erewania na drugi brzeg rzeki Araks. Jeśli okoliczności obecnej wojny nie przeszkodzą... wtedy będę próbował przesiedlić ich do Gruzji, czego oni [Ormianie - A.M.] chcą". Jednak ten rosyjski projekt nie mógł zostać zrealizowany. Erewań nadal był w rękach Persów, a kontrola nad Ormianami stała się szczelniejsza.

Powroty do domu

Walter Diloyan oszacował, że w 1804 r. Persowie doprowadzili do przesiedlenia łącznie 4 tys. rodzin ormiańskich z Erewania i sąsiednich prowincji, a podczas całej pierwszej wojny rosyjsko-perskiej liczba Ormian migrujących w regionach Gruzji i Północnej Armenii przekroczyła 10 tys.

Tak więc szczególnie lata 1804–1808 były okresem katastrofalnych zmian demograficznych zarówno dla Wschodniej Armenii, jak i

* melik – ormiański odpowiednik barona, ale jednocześnie dowódca wojskowy na danym terenie.

Erewania. Liczne osady z Chanatu Erewańskiego straciły, tysiące pracowitych mieszkańców i można je uznać za tereny na wpół wyludnione.

W drugiej fazie wojny władze perskie szybko rozpoczęły odbudowę terenów opuszczonych przez wojska rosyjskie. Abbas Mirza i Hussein Kuli Chan dołożyli wszelkich starań, aby mieszkańcy Erewania powrócili do swoich domów, a dodatkowo sprowadzali ludzi z innych rejonów. Jest rzeczą ciekawą, że w warunkach toczącej się wojny rosyjsko-perskiej strony podejmowały kroki w celu przywrócenia handlu między oboma krajami i zapewnienia bezpieczeństwa na drogach. Okoliczność ta w znacznym stopniu przyczyniła się do rozszerzenia stosunków handlowych i gospodarczych między Persją a Rosją przez Erewań i powrotu ludności z emigracji.

Już w 1812 r. dyplomata M. Frejgan, który odwiedził Armenię, określał Erewań jako wielkie miasto. Podobnie w tymże 1812 r. brytyjski dyplomata William Ausley pisał: „W tym samym czasie dowiedziałem się, że dzięki ochronie i przywilejom rządów tego generała (czyli Sardar Hussein Guli Khana) Erewań podniósł się z czterech tysięcy do trzynastu lub czternastu tysięcy w ciągu kilku lat. Jednak połowa ulic jest pełna zrujnowanych domów, ale cytadela jest w bardzo dobrym stanie...".

Z tego raportu można wnioskować, że władze perskie dały w mieście schronienie imigrantom z różnych regionów Armenii, w wyniku czego populacja znacznie wzrosła. Niemniej jednak szach nie żałował środków, by naprawić zrujnowane mury fortecy, odbudować tam domy, gdy zaniedbane dzielnice zamieszkane przez Ormian pozostawały w znacznie gorszym stanie.

12 października 1813 r., po wymuszonym podpisaniu układu pokojowego z Rosją w wiosce Gulistan w Artsakhu, Pers Fath Ali Chan i jego syn Abbas Mirza próbowali wygrać na czasie i przygotować się do najazdu we Wschodnim Zakaukaziu, w Karabachu, Zangezurze i Shiraku. Dlatego nadal wzmacniali fortecę w Erewaniu i w celu przyspieszenia prac budowlanych podjęli nowe kroki, aby pobudzić napływ pracowitych

mieszkańców Ormian do miasta. W dość krótkim czasie polityka ta dała owoce. Już od połowy 1810 r. przywrócono stosunkowo intensywne życie w Erewaniu i następował stały wzrost liczby mieszkańców. Udział Ormian w populacji miasta wzrósł gwałtownie. Te pozytywne zmiany zostały zauważone przez europejskich podróżnych. Oficer brytyjskiej armii w Indiach John Johnson w 1817 r. odwiedził Erewań, o którym napisał: „Miasto ma wiele pięknych ogrodów i domów oraz wielu mieszkańców. Ormianie są stosunkowo liczniejsi niż muzułmanie". Robert Ker Porter, który przybył do Erewania w tym samym 1817 r., potwierdza tę opinię, precyzując: „Powiedziano mi, że obecna populacja miasta to nie więcej niż 15 000 osób". Ten proces wzrostu trwał do roku 1826 – wybuchu kolejnej wojny rosyjsko-perskiej.

Rosnące miasto

W 1820 r. rozpoczęła się wojna między Persją a Imperium Osmańskim. Działania militarne były korzystne dla Persów. Udało im się zdobyć Bayazet, Alashkert i kilka miejscowości w prowincji Van. Wkrótce Fath Ali Szach, naśladując swego poprzednika Szacha Abbasa z jego okrutną praktyką w 1604 r., rozpoczął masowe przesiedlenia Ormian w granice Imperium Perskiego, zwłaszcza do Wschodniej Armenii, na tereny zrujnowane podczas wojny rosyjsko-perskiej. Hasan Chan, komendant z Erewania, wiosną 1821 r. przesiedlił tysiące Ormian z prowincji Górnego Basenu, Khnusa, Bayazeta i Alashkerta do Erewania i okolic. Podobnie działał i w kolejnym roku.

Tak więc dzięki względnie pokojowym i sprzyjającym warunkom stworzonym od końca 1813 do 1822 r. trwał wzrost populacji Erewania w wyniku przesiedlenia zachodnich Ormian. Na początku lat 20. XIX w. Erewań liczył nie mniej niż 17–18 tys. mieszkańców.

Następnie, w wyniku działań wojennych w latach 1826–1827, nastąpiły nowe przesiedlenia ludności. Pod koniec września 1827 r., kiedy Rosjanie zajęli miasto, pozostało tam tylko ok. 10 tys. Ormian, w tym zarówno miejscowych, jak i uchodźców z innych miejsc.

W dniu zdobycia miasta, 1 października 1827 r., gen. Paskiewicz wysłał list do Paszy Bayazeta, domagając się natychmiastowego uwolnienia mieszkańców Erewania, którzy znaleźli schronienie na jego terytorium jeszcze wiosną. W odpowiedzi na list Pasza obiecuje, że „wszystkie rodziny będą zwolnione, jak tylko on otrzyma odpowiednie zezwolenie". I rzeczywiście, począwszy od października mieszkańcy Erewania, znajdujący się w Bayazecie, we Wschodniej Armenii i w Gruzji, wrócili do swojego ojczystego miasta. To oznacza, że w październiku i listopadzie 1827 r., kiedy znaczna część mieszkańców Erewania już powróciła, w mieście było co najmniej 12–13 tys. ludzi, wśród których muzułmanów nie mogło być więcej niż 1–2 tys.

Podsumowując powyższe, dochodzimy do wniosku, że na początku wieku miasto liczyło co najmniej 12 tys. mieszkańców, do czasu pierwszej ofensywy armii rosyjskiej. Następnie, w latach 1804–1808, w związku z emigracją, deportacją i śmiercią, liczba ta gwałtownie spadła do 4–5 tys., może mniej. Natomiast z powodu polityki prowadzonej przez władze perskie w następnych latach ponownie osiąga przedwojenną liczbę ok. 12 tys. W połowie trzeciej dekady tego stulecia liczba ta wynosiła 17–18 tys. We wrześniu 1827 r. populacja miasta nie przekraczała 12–13 tys. osób, z czego 10 tys. było Ormianami.

Po roku-dwóch latach liczba ta wzrosła o kilka tysięcy, co stało się cechą charakterystyczną rozwoju demograficznego Erewania przez następne dziesięciolecia.

w Sieci Historii – miesięcznik zwycięskiej historii Polski, Warszawa, N 9, 2018, s. 64–66.

ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՐԴԻՆ

Պայմանավորված տարածաշրջանում ռազմաքաղաքական իրավիճակի հարատև փոփոխություններով (մասնավորապես՝ 1804–1813 թթ. ռուս-պարսկական, 1806–1812 թթ. ռուս-թուրքական և 1821–1823 թթ. թուրք-պարսկական պատերազմներ), Արևելյան Հայաստանում և նրա կենտրոն Երևանում տեղի ունեցան ժողովրդագրական որոշակի տեղաշարժեր: Ելնելով այդ հանգամանքից՝ բնակչության թվաքանակի, ազգային կազմի հիմնահարցն անհրաժեշտ է քննարկել՝ նկատի առնելով վերոհիշյալ իրադարձությունների յուրաքանչյուրի ընթացքում և պատճառով տվյալ ժամանակի մեջ տեղի ունեցած էթնիկ տեղաշարժերը: Օրինակ՝ ժողովրդագրական մի իրավիճակ էր XVIII դարի վերջին և XIX դարի սկզբին և միանդամայն այլ վիճակ ստեղծվեց սկսված պատերազմների պատճառով: Նոր իրավիճակներ առաջացան ինչպես 1813 թ. ռուս-պարսկական հաշտության կնքումից հետո, այնպես էլ 1820-ական թվականներին, երբ Արևմտյան Հայաստան ներխուժած պարսկական զորքերը սահմանամերձ գավառների հայ բնակիչներից չատերին բռնագաղթեցրին Երևանի խանության տարածք:

Նախորդ դարերում խանության տարածքից զգալի թվով հայերի բռնագաղթեցրել էին զանազան երկրներ ու գավառներ: Հայտնի է, որ Քարթլիի թագավոր Հերակլ II-ը Երևանից ու Արարատյան դաշտից զգալի թվով հայ արհեստավորների ու գյուղացիների էր գաղթեցրել Վրաստան: Զուգահեռաբար թյուրքական ու քրդական ծագում ունեցող ցեղեր էին ներթափանցել ինչպես Երևանի խանության, այնպես էլ Արևելյան Հայաստանի այլ տարածքներ, այդուհանդերձ, հայությունը շարունակում էր մնալ բնակչության ճնշող մեծամասնությունը:

Բանն այն է, որ պարսկական իշխանությունները, խիստ կարևորելով Երևանի խանության ռազմավարական նշանակությունը, անմիջապես լուրջ քայլեր էին ձեռնարկում անմարդաբնակ դարձած վայրերը այլ տեղերից բերված բնակչությամբ, առաջին հերթին՝ աշխատասեր հայերով վերաբնակեցնելու համար: Հատկանշական է, որ այդ նպատակով պարսից շահը նույնիսկ ընդառաջ էր գնացել հայոց կաթողիկոսների հորդորներին և դեռ 1748 թ. հա-

ուժի օրենք ընդունել, որով պաշտոնյաներին արգելվում էր կրոնական հալածանքների ենթարկել հայերին, իսկ իսլամ ընդունած քրիստոնյաները զրկվելու էին իրենց ժառանգական իրավունքներից: Դիտարկումները ցույց են տալիս, որ այս օրենքը զգալիորեն կասեցրել է բռնի մահմեդականացման գործընթացը և խթանել հայության նորանոր խմբերի չարժը դեպի Երևան ու նրա շրջակայք[1]:

Երևանի հայության թվաքանակի աճի մյուս պատճառը նույնպես քաղաքական էր: XVIII դ. վերջին դեպի Ղարաբաղ Աղա Մամադ խանի կատարած ավերիչ արշավանքների ժամանակ Երևան բերդաքաղաքը, համեմատաբար ավելի ապահով տարածք լինելով, ապաստան էր տվել բազմաթիվ հայ գաղթականների, և դրանով իսկ հայերի թիվն այնտեղ կրկին աճել էր: Դրանց մեջ զգալի էին հատկապես Արցախից Երևան հանգրվանածները: «Մեք ի ստորև Դարաբաղուև Խամսայու հայքս,- Քարթլիի Գեորգի XII թագավորին հայտնում էին Արցախի մելիքներն ու տանուտերները,- պատճառէ դալստեան աղա մահմատ խանին, տարամերժեալ ի հայրենեաց մերոց եկաք ի յԵրևան»[2]:

Արդեն 1800 թ. սեպտեմբերին Արցախի մելիքներից Ջիմշիդ Շահնազարյանցը խնդրում էր Վրաստանում տեղակայված ռուսական ռազմական իշխանություններին Երևանում ապաստանած իր հպատակներին վերադարձնել իրենց նախկին տերերին: «...յԵրևան եղեալ մեր Ղարաբաղու ռայաթ,- կարդում ենք Թիֆլիսում նստող ռուս պաշտոնյա Պյոտր Կովալենսկուն մելիք Ջիմշիդի հասցեագրած մի գրության մեջ,- մինչ գդճ (300–400 – Ա.Մ.) տուն փախուստ առեալ ի պարսից...: Որոյ յաղագաւ խնդրեմք հրամայես ամէն մելիք իւրեան ռայաթին և երկրացւոյն տիրեսցէ...»[3]: Բայց քանի որ Ռուսական կայսրությունը նպատակ էր դրել առաջիկայում գրավել ինչպես Ղարաբաղի, այնպես էլ Երևանի խանության տարածքները, անհրաժեշտ չանքեր չգործադրեց հայ գաղթականներին իրենց նախկին տերերին վերադարձնելու ուղղությամբ:

---

[1] Տե՛ս Երևան 2, գիտական հոդվածների ժողովածու, եր., 2009, էջ 6:

[2] Վրաստանի Հանրապետության Կենտրոնական պետական պատմական արխիվ (այսուհետև՝ ՎՀ ԿՊՊԱ), ֆ. 2, ց. 2, գ. 12, թ. 161:

[3] Նույն տեղում, թ. 163:

Հետևապես նրանց զգալի մասը մնաց բնակության նոր վայրերում, այդ թվում՝ Երևանում և Փամբակում[4]:

Դարասկզբին Երևանում հայ բնակչության թվաքանակի աճի վկայությունն է Վենետիկի Մխիթարյան միաբանության հայրերից Ղուկաս Ինճիճյանի մի հաղորդումը, որի համաձայն այդ ժամանակ քաղաքն ուներ 2000 տուն բնակիչ[5]: Քանի որ տվյալ ժամանակաշրջանում Հայաստանի քաղաքներում ապրող ընտանիքների անդամների միջին թվաքանակը կազմում էր 6 մարդ[6], նշանակում է Երևանում հաշվվում էր շուրջ 12 հազար մարդ:

Բայց այդ դրական գործընթացը երկար չտևեց, և շուտով սկսվեց հակառակ երևույթը: 1804 թ. սկսված ռուս-պարսկական պատերազմը պատճառ դարձավ բնակչության արմատական տեղաշարժերի համար. Երևանում և նրա նահանգում հայության թիվը շեշտակի նվազեց: Պատերազմող կողմերից յուրաքանչյուրը փորձում էր հակառակորդի կողմից զբաղեցրած տարածքներից իր հսկողության տակ գտնվող շրջաններ բնակեցնել տեղի հայությանը: Որպես կանոն, պարսիկները քայլեր կատարեցին Երևանի խանության հայերին Պարսկաստանի խորքերը, իսկ ռուսները՝ Վրաստան բռնագաղթեցնելու համար: Երկուստեք սկսեցին իրականացնել հայերի իսկական որս: Այդ ամենի հետևանքով հայ բնակչությունը հայտնվեց մշտական տեղաշարժերի մեջ, ունեցավ մարդկային կորուստներ կամ հայտնվեց բնակության միանգամային նոր վայրերում:

1803 թ.՝ դեռ ռազմական գործողությունների սկսվելուց առաջ, պարսկական իշխանությունները, վերահաս պատերազմի ժամանակ ռուսներին հայերի հնարավոր աջակցությունից զրկելու նպատակով, նախապատրաստական քայլեր կատարեցին դեպի Պարսկաստան բռնագաղթ կատարելու ուղղությամբ: Դրանք այնքան ակնհայտ էին, որ տեղի հայերի անունից ապրիլի 12-ին Երևանի մելիք

---

[4] Տե՛ս նույն տեղում, թ. 157, հմմտ.՝ Присоединение Восточной Армении к России, сб. док. (այսուհետև՝ Присоединение...), ред. Ц.П. Агаян. Ер., 1972, т. 1, сс. 43–44.

[5] Տե՛ս **Ինճիճեան Ղ.**, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի. հ. Ա. Վենետիկ, 1806, էջ 253:

[6] Տե՛ս **Մելքոնյան Ա.**, Էրզրում. Էրզրումի հայ ազգաբնակչությունը 19-րդ դ. առաջին կեսին. Եր., 1994, էջ 36–37:

Աբրահամն ու հարյուրապետ Գաբրիել Գեղամյանը Թիֆլիսում գտնվող և ռուսական ռազմական իշխանությունների չըջանում որոշակի կշիռ ունեցող մելիք Ջումշուդին խնդրում էին հաշտեցնել ռուսներին և պարսիկներին դրանով իսկ իրենց բռնագաղթը Պարսկաստան կանխելու համար: «Ապա թէ ոյչ,- գրում էին նրանք,- պարսից զօրքն աստէ ժողուելոյց և քըրիստօնէից ազգն բոյլոյրն փըչանալոյց է ոյրըն գերի է անվանելոյց և ոյրն պարսիկս են քչելոյց...»[7]:

Ստանալով դեպի Երևան ռուսական զորքերի չարժվելու լուրը մայիսի վերջին պարսկական իշխանություններն անցնում են գործնական քայլերի ստիպելով քաղաքի գրեթե ողջ բնակչությանն արտագաղթելու: Սակայն, ինչպես պարզվում է աղբյուրների վերլուծությունից, օգտվելով առիթից, որ ռուսական հարձակման պատճառով Մամադ խանի զորքերը հսկողությունից դուրս են թողել խանության գրեթե ողջ տարածքը և գերազանցապես զբաղված են Երևանի բերդը պաշտպանելու խեգրով, տարհանված երևանցիների մեծ մասը շուրջ երկու հազար ընտանիք, չենթարկվելով դեպի Պարսկաստան գաղթելու պարսիկների հրահանգներին, կարողանում է փախուստի դիմել: Նրանց մի մասն անդամ անցնում է թուրք-պարսկական սահմանը, ապաստան գտնում Կարսի նահանգի տարածքում[8]: Կարելի է ենթադրել, որ թուրքական իշխանությունները ոչ միայն չեն խոչընդոտել վերջիններիս գործողություններին, այլև նպաստել են նրանց փախուստին նպատակ ունենալով չեզոքացնել իրենց տարածքներն աշխատասեր բնակչությամբ:

Ռուսական ռազմական իշխանությունները չեն հապաղում առիթն օգտագործելու և վախստական երևանցիներին 1801 թ. Ռուսաստանին անցած տարածքներ կիսաամայի դարձած թե՛ Լոռի ու Փամբակ, թե՛ Վրաստան վերաբնակեցնելու համար: Պ. Ցիցիանովի հանձնարարությամբ 1804 թ. հունիսի սկզբին Թիֆլիսից փախստականների մոտ ժամանած Հովհաննես եպիսկոպոսը փոր-

---

[7] ՎՀ ԿՊՊԱ, ֆ. 2, ց. 1, գ. 110, թ. 319:

[8] Տե՛ս նույն տեղում, գ. 79, թ. 227: Զավեն Գրիգորյանը, առանց սկզբնաղբյուրը նշելու, գրում է, որ սարդարի հալածանքների հետևանքով Կարսի փաշայության տարածքում հայտնված երևանցի հայ տարագիրների թիվը կազմել է 7000 ընտանիք (տե՛ս **Գրիգորյան Զ.Տ.**, Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին և նրա պատմական նշանակությունը, Եր., 1978, էջ 170), որն անշուշտ, չափազանցություն է:

ձում է համոզել նրանց տեղափոխվելու ռուսաստատական տարածքներ՝ հավաստիացնելով, որ Երևանի գրավումից հետո ռուսական իշխանությունները երաշխավորել են նրանց վերադարձն իրենց քաղաք[9]:

Մեծ խոստումների չնորհիվ ռուսներին հաջողվում է համոզել շուրջ երկու հազար երևանցի փախստականների մեծ մասին՝ փոխադրվելու Լոռի ու Վրաստան[10]: Նրանց թվում էին նաև Երևանի հայ համայնքի ղեկավար մելիք Աղամալյանների և կըրխբուլաղ մահալի կառավարիչ Գեղամյանների տոհմերի ներկայացուցիչներ, որոնք Վրաստանում ստացան ռուսական ազնվականական տիտղոսներ:

1804 թ. դեկտեմբերին Պ. Ցիցիանովի գրած մի զեկուցագրից երևում է, որ «Երևանի խանը հովանավորում է (հայ – Ա.Մ.) փախստականներին, քանի որ մենք (ռուսները) բռնագրավել ենք նրա 900 ընտանիքներին»[11]: Նշանակում է երկու հազարից դեպի ռուսահպատակ տարածքներ անցածների թիվս այդ օրերին 900 ընտանիք էր, իսկ մնացածները կամ չարուրնակել էին մնալ Կարսի նահանգում, կամ հանգրվանել էին այլ տարածքներում: Ի դեպ, վերջիններիս մի մասը ռուսական աջակցությամբ ավելի ուշ նույնպես անցավ Վրաստան, այդ թվում՝ Թիֆլիս, և Կուր գետի ձախափնյակում համալրեց հայկական Հավլաբար թաղամասի բնակչության չարքերը: 84 ընտանիք էլ հաստատվեց Գանձակում և հարակից չրջակայքում՝ զբաղեցնելով Պարսկաստան գաղթած թաթարների տեղերը[12]: Այսպիսով, 1804 թ. մայիս-հունիսին Երևանը լքած հայ, մասամբ նաև՝ մահմեդական բնակիչների զգալի մասն այդպես էլ չկարողացավ բռնել տունդարձի ճամփան և հաստատվեց տարբեր վայրերում հայտնվելով անօգնական ու թշվառ վիճակում: 1805 թ. փետրվարին երևանցիների մի մասը Ցիցիանովի ցուցումով տեղակայվեց Մինծղարո ամայի բնակավայրում, մելիք Սահակ Աղամալյանի և Հովհաննես Հարյուրապետի ենթակայության[13]: 1805 թ. գեներալ Նեսվետաևը շարունակեց հայ բնակչության Ռուսաստանին անցած չրջաններ բռնագաղթեցնելու ռուսա-

[9] Տե՛ս ՎՀ ԿՊՊԱ, ֆ. 2, ց. 1, գ. 79, թ. 227:
[10] Տե՛ս նույն տեղում, գ. 49, թ. 36:
[11] Նույն տեղում, գ. 79, թ. 322:
[12] Տե՛ս Присоединение...., т. I, էջ 338, 396.
[13] Տե՛ս նույն տեղում, էջ 288, 329:

կան քաղաքականությունը: Նա մայիսին Երևանի խանության բազմաթիվ հայկական բնակավայրերի այլ բնակիչների ևս վերաբնակեցրեց Լոռի-Փամբակում[14]:

Ռուսների կողմից երևանաբնակ հայերի հարկադիր մեծ արտագաղթից հետո տեղում մնացած հայության վիճակն ավելի ծանրացավ: 1804 թ. աշնանը Ցիցիանովին գրած նամակում երևանցի մելիք Աբրահամն ու հարյուրապետ Գաբրիելը օգնություն էին խնդրում ռուսներից՝ հայտնելով, որ իրենք անցել են ռուսական տիրապետության տակ, բայց «Երևանի բերդի մոտ ապրող ավելի քան 500 ընտանիքներ դեռ մնացել են այնտեղ, և քանի որ ամենուր նշանակվել են ժամապահներ, նրանք չեն կարող վախուստի դիմել և շարունակում են մնալ անհավատ պարսիկների ձեռքում»[15]:

1805 թ. հուլիսի սկզբին ռուսական ռազմական իշխանությունները նոր փորձ կատարեցին Երևանում մնացած վերոհիշյալ հայ ընտանիքներին ևս բռնագաղթեցնելու ուղղությամբ: Ռուսաստանի արտգործնախարար Ա. Զարտորիյսկուն գրած նամակում Պ. Ցիցիանովը հայտնում էր, որ պարսիկներն ուզում են Երևանի «հայերին փոխադրել Արաքսի մյուս ափը: Եթե այժմյան պարտերազմի հանգամանքները չխանգարեն..., ապա ինքը կձգտի նրանց վերաբնակեցնել Վրաստանում, ինչը որ իրենք (հայերը – Ա.Մ.) ուզում են»[16]:

Օգոստոսի 21-ին չուրջ հազար ընտանիքի անունից մելիք Աբրահամին և հարյուրապետ Գաբրիելին գրած գաղտի նամակում երևանցիները կրկին ռուսներից աջակցություն էին խնդրում. «Մենք անհապաղ օգնություն ենք սպասում,- գրում էին նրանք,- եթե հապաղենք, ապա մեզ կգաղթեցնեն և կսնանկացնեն...: Եթե մեր կրած տառապանքների մասին գրենք, ապա ոչ թուղթ կբավականացնի, ոչ էլ թանաք»[17]: Քաղաքաբնակ հայերին գաղթեցնելու ռուսական այդ ծրագիրն այս անգամ չիրականացավ և չէր էլ կարող իրակա-

---

[14] Տե՛ս Հայոց պատմություն, ՀՀ ԳԱԱ հրատ., հ. 3, գիրք 1, Եր., 2010, էջ 192:

[15] Акты, собранные Кавказской археографической комиссией (այսուհետև՝ АКАК, т. 2 Тифлис, 1868, док. 1205, էջ 604:

[16] Присоединение...., т. 1, էջ 316:

[17] АКАК, т. 2, док. 1258, էջ 627: Հմմտ.՝ Присоединение..., т. 1, էջ

նանալ. Երևանը չարունակում էր մնալ պարսիկների ձեռքում, իսկ հայերի նկատմամբ հսկողությունն ուժեղանում էր:

Բայց ուշագրավ է, որ այդ օրերին Երևանից բնակչության վիախուստ, այնուամենայնիվ, եղել է: Փաստորեն հսկողությունից դուրս մնացած թաթարներից մինչև 400 ընտանիք իրենց առաջնորդների հետ կարողացել են լքել քաղաքը և անցնել ռուսների մոտ՝ Փամբակ ու Շիրակ[18]:

Ինչպես նշվեց, ռուսական իշխանությունները խոստացել էին Վրաստան գաղթեցված երևանցի հայերին ռուսների կողմից իրենց քաղաքի գրավումից հետո հնարավորության տալ վերադառնալու հայրենի օջախներ: Բայց քանի որ Երևանը մնաց անառիկ, հազարավոր երևանցիներ այդպես էլ չկարողացան վերադառնալ տուն: Մնալով փաստորեն անօգնական վիճակում՝ նրանք ստիպված եղան տեղից տեղ անցնելու, օգնության խնդրանքով դիմելու իշխանություններին կամ զանազան մարդկանց[19]: Իրենց արտագաղթից ավելի քանի երկու տարի անց Վրաստանում, Գանձակում, Ղազախում և այլուր չուրջ երկու հազար երևանցի ընտանիքներ մնում էին անօգնական վիճակում, պետական աջակցությունից դուրկ: «Թողլօվ զամենայն չահաւէտութիւն բարեկարգութեան տեառն,- դժգոհում էին նրանք գեներալ Ի. Գուդովիչին,- թէթեւապէս ց2000 տուն եկաք ի Վրացտուն և գոլով օտարք եկաւորք ահա, երկու ամ է ինչ մեծահոգիութեամբ ընբերեցաք զանբաւականութիւն օտարականութեան յուսօվն, թէ զայս ամէն վարձատրելոց է բարեկարգ հոգացողութեամբն ..., մեք ահայ համարելոյ եմք զմեզ յայնցանէ զրկեցեալ հեռանալով ի հայրենեացն..., խնդրեմք ձերդ պայծառափայլութեան հայրական հոգսունակութիւն...»[20]:

Մի փաստաթղթի համաձայն՝ գաղթականների վիճակն անփոփոխ էր նաև հաջորդ տարում, անգամ անհամեմատ բարվոք վիճակում գտնվող Թիֆլիսում ապրողները 1807 թ. հոկտեմբերի 18-ին ռուսական իշխանություններին գրած խնդրագրում նորից հիշեցնում էին, որ տարիներ առաջ, Երևանում թողնելով իրենց տները, այգիները, առևտրական կրպակները, ինչպես և այլ ունեցվածք,

---

[18] Տե՛ս Центральный государственный военно-исторический архив Российской Федерации (այսուհետև՝ ЦГВИА РФ). ф. Военно-ученый архив. (ВУА). д. 4253, ч. 2. л. 149.

[19] Տե՛ս ՎՀ ԿՊՊՄ, ֆ. 2, ց. 1, գ. 141, թ. 172:

[20] Նույն տեղում, գ. 110, թ. 320–321:

իրենք հավատացել են՝ չուտով Երևանն ազատագրելու և կրկին իրենց տները վերադարձնելու Ցիցիանովի խոստումներին, բայց առ այսօր մնում են անօթևան: Դրա համար խնդրում են գոնե հիմա իրենց տրամադրել տներ ու այգիներ՝ մինչև իրապես Երևանի գրավումը[21]:

Ռազմաքաղաքական իրավիճակը Երևանի շուրջ կրկին սրվեց 1808 թ. աշնանը՝ ռուսական զորքերի երևանյան երկրորդ արշավանքի ժամանակ: Մի վավերագրից պարզ է դառնում, որ բերդի երկրորդ պաշարումից առաջ այնտեղ 2 հազարանոց պարսկական կայազորից բացի կային շուրջ 700 հայ և թաթար ընտանիքներ[22]: Այս անգամ էլ շատ խաղաղ բնակիչներ ստիպված եղան փախուստի դիմելու և ապաստանելու զանազան շրջաններում: Մարդկային զոհեր եղան սկսված համաճարակի պատճառով:

Հենվելով արխիվային փաստաթղթերի տեղեկությունների վրա պրոֆ. Վալտեր Դիլոյանը գտնում էր, որ 1804 թ. ռուսական արշավանքի նախօրյակին Երևանի և Հարևան Կըրխբուլաղի ու էջմիածնի գավառներից պարսիկները բռնագաղթ են պարտադրել 4 հազար հայ ընտանիքների, իսկ ամբողջ առաջին ռուս-պարսկական պատերազմի տարիներին Վրաստան և Հյուսիսային Հայաստանի շրջաններ վերաբնակված հայերի թիվը գերազանցել է 10 հազար մարդը[23]:

Այսպիսով՝ հատկապես 1804–1808 թվականները ինչպես ամբողջ Արևելյան Հայաստանի, այնպես էլ Երևան քաղաքի հայության համար աղետալի ժողովրդագրական փոփոխությունների տարիներ էին: Այդ ընթացքում Երևանի խանության բազմաթիվ բնակավայրեր կորցրեցին իրենց հազարավոր աշխատասեր բնակիչներին և վերածվեցին կիսաամայի վայրերի: Ցավալի է, որ ռուսական իշխանությունների հորդորներով ու ապահով կյանքի խոստումներով Լոռի, Փամբակ, Գանձակ, Թիֆլիս և այլուր հաստատված հայ փախստականները, տարիներ շարունակ չստանալով պետական աջակցություն, կրեցին անասելի տառապանքներ, ունեցան մարդկային մեծ կորուստներ: Հետևապես, ինչպես Երևանի, այնպես էլ ամբողջ Հայաստանի էթնոժողովրդագրական նկարագիրը ճշդրիտ

---

[21] Տե՛ս Присоединение..., т. I, էջ 422–423. 1811 թ. տվյալներով Թիֆլիսում ապրող երևանցիների թիվը կազմում էր 1000 շունչ (տե՛ս նույն տեղում, էջ 560):

[22] Տե՛ս ЦГВИА РФ, ф. ВУА, д. 4259, ч. 5, л. 17–18.

[23] Տե՛ս **Դիլոյան Վ.Ա.**, Արևելյան Հայաստանը 19-րդ դարի առաջին երեսնամյակին և ռուսական հարաբերությունները. Եր., 1989, էջ 12:

ներկայացնելու համար անհրաժեշտ է խորությամբ վերլուծել տարածաշրջանում դերիշխանության համար պայքարող տերությունների ժողովրդագրական քաղաքականությունը, որը, որպես կանոն, ծառայել է իրենց երկրների շահերին:

Երևանյան երկրորդ արշավանքից հետո պարսկական իշխանությունները հապշտապ ձեռնամուխ եղան ռուսական զորքերի լքած տարածքները վերաշինելու և վերաբնակեցնելու գործին: Աբբաս Միրզան և Հուսեյն Կուլի խանը հսկայական ջանքեր գործադրեցին հատկապես Երևանի բնակիչներին իրենց տները վերադարձնելու և այլ բնակավայրերից մարդկանց այստեղ բերելու ուղղությամբ: Ուշագրավ է, որ ընթացող ռուս-պարսկական պատերազմի պայմաններում կողմերը 1811 թ. քայլեր կատարեցին երկու երկրների միջև առևտուրը վերականգնելու, ճանապարհների անվտանգությունն ապահովելու ուղղությամբ[24]: Այդ հանգամանքը զգալիորեն նպաստեց Երևանով Պարսկաստանի ու Ռուսաստանի միջև առևտրատնտեսական հարաբերությունների աշխուժացմանը, արտագաղթած բնակչության վերադարձին:

Պատահական չէ, որ արդեն 1812 թ. Հայաստան այցելած դիվանագետ Մ. Ֆրեյգանին Արևելյան Հայաստանի վարչաքաղաքական կենտրոնը ներկայացավ որպես «մեծ քաղաք»: «Երևանը,- գրում է նա,- Թավրիզից երեք հարյուր վերստ հեռու մի մեծ քաղաք է, որի գլխավոր տարածությունը գրավում են պարտեզները[25]»:

Երևանի՝ մեծ քաղաք լինելու Մ. Ֆրեյգանի վերոհիշյալ վկայությունը հաստատում է նույն՝ 1812 թ. այնտեղ եղած անգլիացի դիվանագետ Ուիլյամ Աուզլեյը. «Միաժամանակ տեղեկացա, որ այս գեներալի (նկատի ունի սարդուսր Հուսեյն Կուլի խանին – Ա.Մ.) կառավարության ընծայած պաշտպանության ու առավելությունների չնորհիվ Երևանը մի քանի տարվան ընթացքում չորս հազար բնակչությունից բարձրացած է տասներեք կամ տասնչորս

---

[24] Տե՛ս АКАК, т. 4, Тифлис. 1870, док. 718, 719, էջ 498–499:

[25] Letters from the Caucasus and Georgia: To which are Added, the Account of a Journey Into Persia in 1812, and an Abridged History of Persia Since the Time of Nadir Shah. Front Cover. Frederika von Freygang, Wilhelm von Freygang, London, J. Murray, 1823, էջ 287 (հմմտ.՝ Հակոբյան Հովհ., Ուղեգրություններ, հ. Չ, Եր., 1934, էջ 409):

հազարի: Այսու հանդերձ փողոցների կեսը լի են ավերակ տներով, բայց միջնաբերդը ամենակատարյալ վիճակումն է...»[26]:

Այս հաղորդումից կարելի է եզրակացնել, որ Հուսեյն Կուլի խանը ռուս-պարսկական ռազմական գործողությունների պատճառով ինչպես Արևելյան Հայաստանի, այնպես էլ այլ երկրների տարբեր շրջաններից ինչպես փախուստի դիմած բնակիչների մի ստվար զանգվածի, այնպես էլ այլ տեղերից բերված բնակիչների ապաստան էր տվել Երևանում, որի պատճառով բնակչության թվաքանակը զգալիորեն աճել էր:

Այդուհանդերձ, դեռ Երևանի զգալի մասը չարունակում էր մնալ անմարդաբնակ: Թերևս միայն սարդարի նստավայր բերդն էր, որի բարվոք լինելու մասին Աուզլեյի հաղորդումից հետևում է, որ Պարսկաստանը միջոցներ չէր խնայել քանդված բերդի պարիսպները նորոգելու, այնտեղի տները վերակառուցելու ու բնակեցնելու համար, իսկ անպարիսպ հայկական թաղամասերը թեև բնակեցվել էին, բայց դարձյալ չարունակում էին մնալ անհամեմատ ավելի անբարեկարգ վիճակում:

1813 թ. հոկտեմբերի 12-ին Արցախի Գյուլիստան գյուղում Ռուսաստանի հետ հարկադրաբար կնքած հաշտության պայմանագրից հետո Պարսից Ֆաթհ Ալի շահն ու նրա որդին՝ գահաժառանգ Աբբաս Միրզան փորձեցին ժամանակ շահել և նախապատրաստվել Արևելյան Անդրկովկասում, Ղարաբաղում, Զանգեզուրում, Շիրակում կորցրած տարածքները վերադարձնելու արշավանքին: Ուստի շարունակեցին ամրացնել Երևանի բերդը և շինարարական աշխատանքներն արագացնելու, նպատակով նոր քայլեր կատարեցին աշխատասեր հայ բնակչության հոսքը քաղաք խթանելու, ամայացած թաղերն ու տները վերաշինելու համար: Բավական կարճ ժամանակում այդ քաղաքականությունը տվեց իր պտուղները: 1810-ական թվականների կեսերից Երևանի համեմատաբար աշխույժ կյանքը վերականգնվեց, բնակիչների թվաքանա-

[26] Travels in Various Countries of the East, More Particularly Persia: A Work Wherein the Author Has Described, as Far as His Own Observations Extended, the State of Those Countries in 1810, 1811, and 1812: and Has Endeavoured to Illustrate Many Subjects of Antiquarian Research, History, Geography, Philology and Miscellaneous Literature, with Extracts from Rare and Valuable Oriental Manuscripts, by Sir William Ouseley Knight, Volume 3, London, 1823, էջ 440 (հմմտ.՝ **Հակոբյան Հովհ.**, նշվ. աշխ., էջ 453):

կի անչեզ աճը չարունակվեց[27]: Ակնհայտորեն քաղաքի ընդհանուր բնակչության մեջ հայերի տեսակարար կշիռն ավելի բարձրացավ:

Այդ դրական տեղաշարժերն աննկատ չէին մնում եվրոպացի ուղեգիրների կողմից: Հնդկաստանում բրիտանական բանակի սպա Ջոն Ջոնսոնը, որ 1817 թ. այցելել էր Երևան, այդ կապակցությամբ գրում էր. «Քաղաքն ունի բազմաթիվ գեղեցիկ պարտեզներ ու տներ և շատ բնակիչ, հայերը համեմատաբար ավելի շատ են, քան մահմեդականները (ընդգծումը իմն է – Ա.Մ.»[28]: Ինչպես Ջ. Ջոնսոնի, այնպես էլ այլ հեղինակների նմանօրինակ վկայությունները պալիս են հաստատելու այն ճշմարտությունը, որ միանգամայն սին են ժամանակակից ադրբեջանցի «գիտնականների» պնդումները, թե մինչև 1828–1829 թթ.՝ Պարսկահայքից հայերի վերաբնակեցումը, Երևանում «ադրբեջանական», այն է՝ թաթարական բնակչությունը կազմել է մեծամասնություն: Իրականությունն այն է, որ հայերի թիվը գերազանցել է ինչպես առանձին թաթարներին, այնպես էլ նաև քրդերից ու պարսիկներից բաղկացած ամբողջ մահմեդական բնակչությանը, որի մեծ մասը բերդի տարածքում բնակվող և պանազան ծառայություններ մատուցող պաշտոնյաներ ու զինվորականներ էին[29]: Իսլամական բնակչության մնացած սահմանափակ թվաքանակը բաժին էր ընկնում գերազանցապես Քարհանք թաղամասին[30]: Մինչդեռ հայությունը տեղաբաշխված էր գրեթե բոլոր թաղամասերում: Առավել հայաշատ էին Կոնդը, Շահարը, Նորքը և այլն:

---

[27] Ջ. Մորիերը 1814 թ. Հայաստան կատարած հերթական այցելության ժամանակ Երևանի սարդարի ենթակայության տակ գտնվող իսանության բնակչության թվաքանակը հաշվում է 100 հազ. մարդ (տե՛ս A Second Journey Through Persia. Armenia, and Asia Minor, to Constantinople, between the Years 1810 and 1816. by James Morier, էջ 320–321):

[28] A Journey from India to England, Through Persia, Georgia, Russia, Poland, and Prussia, in the Year 1817 by Col. John Johnson, C. B., London, Longman, Hurst, Rees, Orme, and Brown, 1818, էջ 230 (հմմտ.՝ **Հակոբյան Հովհ.**, նշվ. աշխ., էջ 640):

[29] Ցավոք, այս հանգամանքը չեն նկատել նաև որոշ հայ հետազոտողներ, անգամ Երևանը պատմության քաջատեղյակ հեղինակ Թ. Հակոբյանը (տե՛ս **Հակոբյան Թ.**, Երևանի պատմություն (1801–1879 թթ.), Եր., 1959, էջ 187), ուստի հանգել են սխալ եզրակացությունների: Այլազգիները Երևանում հայտնվել էին նախորդ դարերում ոչ հայանպաստ էթնոժողովրդագրական գործընթացների պատճառով և այդ ժամանակ էլ շարունակում էին կրկին մնալ որպես փոքրամասնություն:

[30] Տե՛ս **Շահազիզ Երվանդ**, Հին Երևանը, Եր., 2003, էջ 179:

Նկատենք, որ վերոհիշյալ հեղինակի կողմից Երևանի՝ «չատ բնակիչ» ունենալու մասին եղակի հաղորդումը տվյալ ժամանակաշրջանի համար պատահական չէր և մի անգամ ևս վկայում էր վերոհիշյալ դործընթացի մասին, որը շարունակվել է մինչև 1826 թ.՝ ռուս-պարսկական երկրորդ պատերազմի սկիզբը[31]: Եվ իսկապես, զարմանալի զուգադիպությամբ նորից 1817 թ. Երևան ժամանած Ռոբերտ Քեր Փորթերը իր մի վկայությամբ հաստատում է իր հայրենակից Ջոն Ջոնսոնի պնդումը՝ գրելով. «Ինձ ասացին, թե քաղաքի ներկա բնակչության թիվը 15.000 անձից ավել չէ»[32]: Բայց այս հեղինակը միաժամանակ համոզված է, որ ներկա վիճակը համեմատելի չէ քաղաքի երբեմնի փառավոր անցյալի հետ, երբ շատ ավելի բազմամարդ ու հարուստ է եղել: Այդ ամենի պատճառը նա իրավամբ համարում է օտարների ավերիչ ասպատակություններն ու դժնդակ տիրապետությունը[33]:

1820 թ. վերջին Պարսկաստանի ու Օսմանյան կայսրության միջև սկսվեց պատերազմ: Ռազմական գործողությունները նպաստավոր ընթացք ունեցան պարսիկների համար, նրանց հաջողվեց ներխուժել հակառակորդի տարածք, գրավել Բայազետը, Ալաշկերտը, Վանի նահանգի մի շարք բնակավայրեր՝ մարդկային ու նյութական մեծ վնասներ պատճառելով հայ բնակչությանը: Շուտով Ֆաթհ Ալի շահը, ընդօրինակելով իր նախորդներից Շահ Աբբասի՝ 1604 թ. դաժան գործելակերպը, սկսեց իրականացնել հայերի զանգվածային բռնագաղթ դեպի պարսկական տերության սահմաններ, հատկապես Արևելյան Հայաստան՝ նման ճանապարհով ռուս-պարսկական պատերազմի ընթացքում մեծապես տուժած տարածքները վերականգնելու նպատակով: Պատահական չէ, որ Արևմտյան Հայաստան ներթափանցած զորագնդերից մեկը գլխավորում էր Երևանի պարետ Հասան խանը, որն էլ 1821 թ. գարնանը Վերին Բասենի, Խնուսի, Բայազետ ու Ալաշկերտի գավառներից տեղահանած հազարավոր հայերի բռնագաղթեցրեց Երևան ու խանության

---

[31] Բնակչության աճը խթանելու իշխանությունների քաղաքականության շրջագծում կարելի է դիտարկել 1822 թ. Հուսեյն խանի կողմից Դալմայի այգիների և համանուն ենթաթաղի կառուցումը (տե՛ս Շահազիզ Երվանդ, նշվ. աշխ., էջ 165):

[32] Travels in Georgia, Persia, Armenia, Ancient Babylonia, &c. &c During the Years 1817,1818,1819, and 1820, Volume 1, by Sir Robert Ker Porter, էջ 197–198 (հմմտ.՝ Հակոբյան Հովհ., նշվ. աշխ. էջ 764):

[33] Տե՛ս նույն տեղում:

այլ բնակավայրեր[34]: Դեպի Արևելյան Հայաստան էրզրումցի, կարսեցի, վանեցի հայերի մի բռնագաղթ էլ Հասան խանը կազմակերպեց 1822 թ.[35]:

Այսպիսով՝ 1813 թվականի վերջերից ստեղծված համեմատաբար խաղաղ ու նպաստավոր պայմանների շնորհիվ և 1821–1822 թթ. արևմտահայերի բռնի վերաբնակեցման հետևանքով Երևանի բնակչության աճը չարունակվեց: Կարելի է պնդել, որ մինչև 19-րդ դարի 20-ական թթ. կեսերը Երևանում արդեն բնակվում էր ոչ պակաս, քան 17–18 հազար մարդ:

Այդուհետ թելադրված 1826–1827 թթ. նոր պատերազմական գործողություններով, տեղի ունեցան բնակչության նոր տեղաշարժեր: Հատկապես 1827 թ. մարտից, պայմանավորված ռուսական զորքերի առաջխաղացմամբ, պարսկական իշխանությունները Երևանի ու խանության բնակավայրերի մեծ մասի բնակիչներին բռնագաղթեցրին դեպի Արաքսի ալ ափը, օսմանցիների համաձայնությամբ նաև Բայազետի փաշայության տարածք, իսկ մնացածներին ստիպեցին անասելի ծանր պայմաններում մի կերպ տեղակայվել բերդի պարիսպներից ներս, հիմնականում՝ բաց երկնքի տակ: «Շատ բնակիչներ չունեն կացարաններ,- կարդում ենք սեպտեմբերի սկզբներին Երևանից ռուսների մոտ փախած հայերի վկայություններում,- և մեծամասամբ տեղավորված են բաց տեղերում»[36]: 1827 թ. սեպտեմբերի վերջին՝ ռուսների կողմից քաղաքի գրավման նախօրյակին, այնտեղ հաշվվում էին միայն 10 հազար հայ, որոնց թվում ինչպես տեղաբնակ երևանցիներ, այնպես էլ տարբեր տեղերից բռնությամբ բերված փախստական հայեր:

Ի դեպ, 1827 թ. հոկտեմբերի 1-ին՝ քաղաքին տիրելու օրը, Պասկևիչը նամակ է ուղարկել Բայազետի փաշային՝ պահանջելով անհապաղ ազատ արձակել դեռ գարնանը իր փաշայության տարածքում ապաստան գտած երևանցիներին: Պատասխան նամակում փաշան խոստանում է, որ «մինչև վերջին ընտանիքը ազատ կարձվի, քանի որ շուտով կստացվի Արզրումի սերասկյարի (Համապա-

---

[34] Տե՛ս **Մուրատյանց Պ.Յ.**, Նկարագիր Ս. Յովհաննա վանաց եւ վիճակին նորին Բագրեւանդայ. Արարատ, 31 յունվարի 1889, էջ 41:

[35] Տե՛ս **Հայկունի Ս.**, Բագրեւանդ ջրաբաշխ գաւառ, Վաղարշապատ, 1894, էջ 214: Վերոհիշյալ բռնագաղթերի մասին տե՛ս նաև Հայոց պատմություն, հ. 3, գիրք 1, էջ 242–244:

[36] ՎՀ ԿՊՊԱ, ֆ. 548, ց. 3, գ. 10, թ. 127:

տասխան – Ա.Մ.) թուլլտվությունը...»[37]*: Եվ իսկապես, հոկտեմբեր ամսից սկսած ինչպես Բայազետի, այնպես էլ Արևելյան Հայաստանի ու Վրաստանի տարածքում հաստատված երևանցիների մի մասը վերադառնում է հայրենի քաղաք և զբաղեցնում կամ իրենց նախկին տները, կամ Պարսկաստան հեռացած մահմեդականների տները: Նշանակում է 1827 թ. հոկտեմբեր-նոյեմբերին, երբ զգալի թվով երևանցիներ արդեն վերադարձել էին, քաղաքում արդեն առնվազն 12–13 հազար մարդ կլիներ, որոնց մեջ մահմեդականները, իրենց հավատակիցների փախուստից հետո, չէին կարող գերազանցել մեկ-երկու հազարը:*

Ամփոփելով վերոնշյալը՝ գալիս ենք այն համոզման, որ Երևանի բնակչության թվաքանակի հաշվարկն անել ամբողջ 19-րդ դ. առաջին քառորդի կտրվածքով, սխալ է: Համեմատաբար այդ կարճ ժամանակահատվածում, ինչպես տեսանք, քաղաքական գործոնների ազդեցությամբ տեղի են ունեցել ժողովրդագրական լուրջ դոր-ծընթացներ, որոնք յուրաքանչյուր տասնամյակի կամ ավելի կարճ ժամանակի ընթացքում բերել են արմատական փոփոխությունների, բնակչության չեշտակի նվազման կամ աճի: Այդ հանգամանքը վրիպել է հետագայի շատ ուսումնասիրողների ուշադրությունից և նրանց բերել սխալ հետևությունների:

Իրական պատկերը հետևյալն էր. դարասկզբին՝ մինչև ռուսական զորքերի երևանյան առաջին արշավանքը, քաղաքն ուներ առնվազն 12 հազար բնակիչ: Ապա՝ 1804–1808 թթ. արտագաղթի, բռնագաղթի ու մահացության պատճառով այդ թիվը կտրուկ նվազել է՝ մինչև 4–5 հազար, գուցեև ավելի պակաս, իսկ պարսկական իշխանությունների վարած քաղաքականության հետևանքով հետագա տարիներին չեշտակի աճել և 1812–1813 թթ. կրկին հասել նախապատերազմյան թվաքանակին՝ մոտ 12 հազարի: Արդեն դարի երրորդ տասնամյակի կեսերին այդ թիվը շուրջ 17–18 հազար էր, իսկ 1827 թ. սեպտեմբերի դրությամբ այն կազմել է ոչ ավել, քան 12–13 հազար անձը, որից 10 հազարը՝ հայեր: Իսկ մեկ-երկու տարվա ընթացքում այդ թիվը հետզհետե ավելացել է ևս մի քանի հազարով, գործընթաց, որը հետագա բոլոր տասնամյակներին եղել է Երևանի ժողովրդագրական զարգացման բնորոշ ուղղությունը:

---

[37] ЦГВИА РФ, ф. ВУА, д. 4312, л. 200.

Այսպիսով, ամբողջապես պետք է վերանայել հիմնականում Ի. Շոպենի հաշվարկների վրա կառուցված այն տիրապետող տեսակետը, թե ռուսների կողմից 1827 թ. հոկտեմբերին Երևանի գրավումից առաջ քաղաքն ավելի քիչ բնակիչ ունեցել՝ մոտ 11463 մարդ, և աճել է միայն Արաքսի աջափնյակից, Պարսկահայքից, Արևմտյան Հայաստանից վերաբնակված 1763 հայերի հաշվին[38]: Վերոհիշյալից կարելի է հանգել այն եզրակացության, որ XIX դարի առաջին քառորդին Երևանի բնակչության միջին թվաքանակը կազմել է 13–14 հազար մարդ, որից մոտ 10 հազարը՝ հայ:

THE DEMOGRAPHIC SITUATION IN YEREVAN IN THE FIRST QUARTER OF THE XIX CENTURY

In recent decades, among the numerous distortions found in the Turkish-Azerbaijanian historiography concerning many key problems of the history of Armenia, a significant place is occupied by the issues of the history of Yerevan, the capital of Armenia, in particular, the problems of demography.

Meanwhile, new investigations confirm once again that the real demographic picture was as follows: at the beginning of the century, before the first Yerevan campaign of Russian troops, the city had at least 12 thousand inhabitants.

Further, in 1804–1808, as a result of emigration, deportation and death, the number fell sharply to 4–5 thousand people, possibly less. However, in subsequent years, as a result of the policy pursued by the Persian authorities, the number of the population increased sharply and in 1812–1813 again reached the pre-war number – about 12 thousand.

In the middle of the third decade of the century this number reached about 17–18 thousand, and as of September 1827 it was no more than 12–13 thousand, of which 10 thousand were Armenians. A couple of years later this number gradually increased by several thousand. The tendency of the constant growth of the number of Armenians of Yerevan over the next

---

[38] Տե՛ս **Шопенъ И.**, Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи, СПб., 1852, էջ 543–546 (հմմտ. նաև՝ **Կորկոտյան Զ.**, Երևան քաղաքի ժողովրդագրությունը, Եր., 1931, էջ 14):

decades has become a characteristic direction of the demographic development of the city.

Both foreign and Armenian sources testify that the assertions of modern Azerbaijanian "scientists" are completely groundless that until 1828-1829 - the resettlement of Armenians from Parskahaik, the Azerbaijanian, that is, the Tatar population, was the majority in Yerevan.

The reality is that the number of Armenians exceeded both the Tatars separately and the entire Muslim population as a whole, including Kurds and Persians.

Երևան 5: Գիտական հոդվածների ժողովածու, Երևան, Երևան քաղաքի պատմության թանգարան, 2018, 382 էջ, էջ 89–101:

ՀԱՅԿԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ՁԵՒԱՒՈՐՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄԱՓՈՒԼԵՐԸ

Մարդկային հասարակութեան պատմութիւնը ձեւաւորուում է ընկերային (սոցիալական), ցեղային-ռասայական եւ անհատական դրուագների ու անցքերի ամբողջութիւնից: Անհատի, տոհմի, ցեղի, ժողովրդի եւ ազգի առաջացումը ենթադրում է այդ կարգավիճակին բնորոշ բազմաթիւ յատկանիշների միաժամանակեայ կամ մասնակի առկայութիւն: Դրանց մէջ կարեւորուում է ինքնութեան ընկալման յատկանիշը, որը ձեւաւորուելով մարդ-անհատի մակարդակով, ապա զարգացում է ապրում ընկերային ու ցեղային աւելի բարձր մակարդակներում եւ իր բարձրակէտին հասնում ազգի երեւան գալու ժամանակ: Հետեւապէս, իւրաքանչիւր ազգ իր անցած պատմական ուղուն զուգընթաց, ինքնութեան մէջ ունենում է յարատեւ փոփոխութիւններ, որոնք ըստ այդմ էլ կարելի է բաժանել պատմափուլերի:

*Հայոց ինքնութեան զարգացման ընթացքը պայմանականօրէն կարելի է բաժանել հետեւեալ փուլերի՝ **վաղագոյն կամ ինքնութեան ձեւաւորման շրջան, պետական մտածողութեան ինքնութեան շրջան, քրիստոնէական ինքնութեան ձեւաւորման շրջան, ինքնութեան ձեւախեղման շրջան եւ վերջապէս՝ ինքնութեան վերակերտման ու զարթօնքի շրջան:***

*ա) **Ինքնութեան ձեւաւորման շրջափուլ:** Հայ ժողովուրդը, լինելով աշխարհի հնագոյն ու քաղաքակիրթ ազգերից մէկը, վաղագոյն ժամանակներում գոնէ Ք.Ա. 7-րդ 5-րդ հազարամեակներում արիական-հնդեւրոպական մայր ժողովրդից անջատուելուց եւ ինքնուրոյն ցեղ ձեւաւորուելուց յետոյ, տրամաբանօրէն արդէն պէտք է ունենար սեփական ինքնութեան ուրուագիծը, քանի որ նրա մօտ առկայ էին առանձին ազգին յատուկ բազմաթիւ յատկանիշներ՝ ինքնուրոյն լեզու, հետեւապէս՝ լեզուամտածողութիւն, տարածք, մշակութային ինքնատիպ նկարագիր եւ իրեն այլ ազգերից զանազանելու, անգամ նրանց հակադրուելու, իր եսը (ի հարկէ՝ դրական իմաստով) գիտակցելու ունակութիւն: Այդուհանդերձ, կարծում ենք, որ տուեալ ժամանակաշրջանում ինքնութեան շատ որակներ հանդէս էին գալիս խիստ մշուշապատ եւ դրանք շատ յաճախ նոյնանուն էին հնդեւրոպական ազգակից այլ ժողովուրդների, մասնաւորապէս՝ հին պար-*

սիկների, հնդիկների, յոյների եւ այլոց էթնո-մշակութային յատկանիշների հետ:

բ) Պետական մտածողութեան ինքնուրոյնութեան շրջափուլ: Հին ժամանակներում հայկական ինքնուրոյնութեան զարգացմանը մեծապէս նպաստում է Հայկական լեռնաշխարհում Ք.Ա. առնուազն 3-րդ հազարամեակի սկզբներին հանդէս եկած առաջին պետական կազմաւորումը՝ Արատտան, Աստուածաշնչում յիշատակուող Արարատի (Արարատայ, Արարադի) երկիրը[1]: Յատկանշական է, որ հայ նշանաւոր պատմաբաններից առաջինը Մխիթարէ Զամչեանի՝ Վանայ լճին ափին Հայկ Նահապետի եւ Բէլի միջեւ տեղի ունեցած ճակատամարտի ու Հայոց երկրում պետականութեան հիմնադրման ժամանակի վերաբերեալ (Ք.Ա. 2492 թ.) եւ հայ ներկայիս պատմաբանների, մասնաւորապէս Արտակ Մովսիսեանի յայտնած տեսակէտները, համընկնում են[2]: Ուստի, այդ ժամանակաշրջանը՝ Ք.Ա. 3-րդ հազարամեակը կարելի է համարել հայ ինքնուրոյնութեան ձեւաւորման առաջին փուլի աւարտը եւ պետական մտածողութեան ձեւաւորման սկիզբը: Այդուհետ ցեղային ինքնուրոյնութեան ձեւաւորման դործում պետականութեան գոյութիւնը դառնում է կարեւորագոյն բաղադրամաս:

Հին Հայաստանի բնակչութեան ցեղային ինքնուրոյնութեան աւելի վառ դրսեւորումները վերաբերում են լեռնաշխարհում Ք.Ա. 9-րդ դարի կէսերին ասպարէզ իջած առաջին համահայկական պետութեան՝ Վանի (Բիայնիլի, Արարատի, Ուրարտու) թագաւորութեան ժամանակներին: Այդ ինքնուրոյնութեան բարձր մակարդակը պահպանւում է մինչեւ հին շրջանի աւարտը Ք.Յ. 4-րդ դարը: Հին Հայաստանում ցեղային ինքնուրոյնութեան հզօր ազդակներ են դառնում մայրենիի տարածումը, Հայկական պետութեան աննախադէպ հզօրացումը Արարատեան թագաւորութեան, Երուանդունիների, Արտաշէսեաններին, յատկապէս՝ Տիգրան Մեծի օրօք (Ք.Ա. 95–55 թթ.) եւ հին հայկական ու հելլենիստական մշակոյթի զարգացումը: Արտաշէսեան արքաներից չատերը սկսում են կրել «արքայից արքայ» պատուատիտղոսը, որը նրանց գերակայ դիրք էր տալիս ամբողջ տարածաշրջանի պետութիւնների մէջ: Ուստի կարելի է ասել, որ այդ շրջափուլում ժամանակ առ ժամանակ հայութեան մէջ նկատւում են նաեւ կայսե-

---

[1] Տե՛ս աստուածաշունչ, Ծննդոց 7, 8, էջ 11:

[2] Տե՛ս **Մովսիսեան Արտակ**, Դանիէլեան Երանուհի, *Հայկական լեռնաշխարհում պետականութեան սկզբնաւորման խնդրի շուրջ*, Բանբեր Երեւանի համալսարանի, 2010, թիւ 130.1, էջ 21–28:

բական պետութեան քաղաքացուն բնորոշ մտածողութեան ու ինքնութեան բազմաթիւ տարրեր:

Պատմահայր Մովսէս Խորենացին այդ ժամանակաշրջանի մասին խօսելիս Հայոց թագաւորութեան ու նրա տիրակալների հասցէին գործածում է «հուժկու», «անուանի», «յաղթող», «աշխարհակալ» եւ այլ եզրոյթներ, խնդութիւն ապրում հզօր թագաւորութեան համար՝ ընդգծելով, որ ուրախ կը լինէր, եթէ այդ ժամանակ աշխարհ եկած լինէր: «Եւ այժմ ահա զուարճացոյց,- գրում է նա,- ոչ փոքր ինչ կրելով խնդութիւն, հասանելով ի տեղիս, յորում մերոյ իսկ բնիկ նախնւոյն սերունդք ի թագաւորութեան հասանեն յաստիճան»[3]: Քիչ անց պատմահայրն աւելացնում է. «Եւ սիրելի էր ինձ՝ յայնժամ գալ Փրկչին եւ զիս գնել, եւ առ նոքաւք յաշխարհ զմուտն իմ վինել, եւ նոցա տէրութեամբն խրախճանալ, եւ յարդեացս ապրել վտանգից»[4]:

գ) Քրիստոնէական ինքնութեան ձեւաւորման շրջան: 301 թ. աշխարհում առաջինը քրիստոնէութիւնը որպէս պետական կրօն ընդունելուց յետոյ հայ իրականութեան մէջ սկսւում է նոր՝ քրիստոնէական ինքնութեան փուլը: Նոր կրօնը դառնում է հայ ժողովրդի ինքնութեան գլխաւոր ցուցիչներից մէկը: Նրան հակադրում է զրադաշտականութիւն դաւանող հարեւան պարսիկներին: Ոչ քրիստոնէական կրօնները Հայ եկեղեցու կողմից դիտւում են որպէս աղանդներ: Դրա կրօնափիլիսոփայական ձեւակերպումը փայլուն ձեւով ներկայացնում է 5–6-րդ դարերի նշանաւոր փիլիսոփայ Եզնիկ Կողբացին «Եղծ Աղանդոց» աշխատութիւնում:

4-րդ դարի վերջերին (387 թ.) առաջին անգամ Մեծ Հայքի թագաւորութիւնը տրոհւում է երկու մասի. Արեւելեան Հայաստանն ընկնում է Սասանեան Պարսկաստանի, իսկ Արեւմտեան Հայաստանը՝ Հռոմի (391 թւականից՝ Բիւզանդիա) տիրապետութեան տակ: Տւեալ ժամանակաշրջանում հայկական երբեմնի հզօր պետութիւնը թուլանում է ու բաժանւում, իսկ 428 թ. Արշակունեաց հարստութիւնն անկում է ապրում: Հին Հայաստանի պատմութեամբ հպարտացող Խորենացին արդէն աւելի համեստ գնահատական է տալիս վաղ միջնադարեան Հայաստանի պատմութեանը, բայց չի մոռանում

---

[3] **Մովսէս Խորենացի.** Պատմութիւն Հայոց, գիրք առաջին, Մատենագիրք Հայոց, Բ. հատոր, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 1809:

[4] Նոյն տեղում, էջ 1811:

ընդգծել, որ լինելով փոքր ազգ, իրենք աշխարհում կատարել են շատ արժէքաւոր գործեր. «Զի թէպէտ եւ եմք ածու փոքր, եւ թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ, եւ զաւրութեամբ տկար, եւ ընդ այլով յոլով անգամ նուաճեալ թագաւորութեամբ՝ սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ եւ ի մերում աշխարհիս, եւ արժանի գրոյ յիշատակի, զոր եւ ոչ մի ոք ի նոցանէ պէտ յանձին կալաւ մատենագրել»[5]: Նման տկարացման պատճառը որոշ ուսումնասիրողներ համարում են քրիստոնէական արժէքների ընդունումը: Մասնաւորապէս մատնանշւում է այն հանգամանքը, որ ազգային դաղափարախօսութեանը փոխարինած համամարդկային-քրիստոնէական դաղափարները Հայոց երկրի թուլացման պատճառ են դարձել:

Իրականութիւնն այն է, որ ընդունելով քրիստոնէական արժէհամակարգը, հայ ժողովուրդը, յատկապէս Հայոց պետութիւնը միաժամանակ չանքեր գործադրեցին Հայոց եկեղեցին ազգային դարձնելու համար: Այդ ուղղութեամբ առաջին վճռական քայլը կատարեց Պապ Արշակունի թագաւորը (370–374 թթ.), երբ խախտելով դոյութիւն ունեցող կարգը, արգիլեց Հայոց կաթողիկոսների օծումը Կեսարիայում եւ պահանջեց այդ արարողակարգն այդուհետ իրականացնել Հայաստանում[6]*:*

Շուտով՝ Հայ եկեղեցու ինքնուրոյն կարգավիճակի ամրապնդմանը դուգընթաց, որի գագաթնակէտը դարձաւ 451 թ. Քաղկեդոնի ժողովին մասնակցելուց հրաժարուելն ու միաբնակութիւն ընդունելը, քրիստոնէական ինքնութիւնը Հայութեան չրջանում վերածուեց ազգային ինքնութեան: Աւելին՝ 450–451, 481–484 եւ 571–572 թթ. Հայ ժողովուրդը կենաց ու մահու կռուի դուրս եկաւ Պարսկաստանի պարտադրած հաւատափոխութեան քաղաքականութեան դէմ: Պատահական չէ, որ Հայ մատենագիրների եւ հետագայ ուսումնասիրողների զգալի մասը վերոյիշեալ հակապարսկական

---

[5] Նոյն տեղում, էջ 1752:

[6] Տե՛ս Փաւստոս Բիւզանդ, Պատմութիւն Հայոց, թարգմանութիւնը, ներածութիւնը եւ ծանօթագրութիւններն ակադեմիկոս Ստ. Մալխասեանցի, Եր., 1968, էջ 265–266:

ապստամբութիւնները գնահատեց որպէս կրօնական չարժմունք (պատերազմներ)[7]:

Քրիստոնէական ինքնութիւնը, արդէն խարսխուած իր ազգային՝ Հայ Առաքելական Եկեղեցու կառոյցի վրայ, հայութեան համար 6–7-րդ դդ. ինքնապահպանութեան հզօր միջոց մնաց Բիւզանդական կայսրութեան պաշտօնական դաւանանքի՝ քաղկեդոնականութեան (ուղղափառութեան), իսկ արաբական տիրապետութեան շրջանում (8-րդ դար եւ 9-րդ դարի առաջին կէս)՝ իսլամի դէմ: Ուստի ինչպէս պարսիկներն Արեւելեան Հայաստանում (Մարզպանական Հայաստան), բիւզանդացիները Արեւմտեան Հայաստանում (Սատրապական Հայաստան), իսկ արաբները՝ իրենց ստեղծած «Արմինիա» վարչամիաւորում ի վերջոյ ստիպուած էին ձեռնպահ մնալ իրենց ազգակիցներով երկիրը բնակեցնելու եւ կրօնադաւանական ճնշումների քաղաքականութիւնից ու պահպանել Հայոց երկրի ներքին ինքնուրոյնութիւնը[8]:

Հայ քրիստոնէական ինքնութիւնն իր դրսեւորումներն ունեցաւ նաեւ հետագայում: Իններորդ դարի երկրորդ կէսին Հայ Առաքելական եկեղեցու ամենագործուն աջակցութեանը բագրատունիները վերականգնեցին հայկական պետականութիւնը: Ճիշդ է՝ այդ պետութիւնը երկար չկարողացաւ պահպանել իր միասնականութիւնը եւ տրոհուեց: Սակայն դա գերազանցապէս պայմանաւորուած էր զարգացած աւատա- տիրական յարաբերութիւններով, որի ընթացքում, որպէս կանոն, սկիզբ է առնում քաղաքական մասնատուածութիւնը: Աւելին՝ չուտով հայերը 11-րդ դարի վերջին Կիլիկիայում ստեղծեցին իրենց նոր պետականութիւնը, որը 12-րդ դ. վերջին վերածուեց թագաւորութեան եւ գոյութիւն ունեցաւ մինչեւ 1375 թ.: Ուստի եւ, բոլոր այն պնդումները, թէ քրիստոնէութեան ընդունումով միջնադարում հայկական պետականութիւնը, իբրեւ եւ հայ ինքնութեան կարողականութիւնը տկարացան, գիտութեան հետ որեւէ կապ չունեն:

---

[7] Տե՛ս **Եղիշէ**, Վարդանի եւ Հայոց պատերազմի մասին, թարգմանութիւնը եւ ծանօթագրութիւնները Ե. Տեր-Մինասեանի, 1971, **Գարագաշեան Ա.Մ.**, Քննական Պատմութիւն Հայոց, մասն Դ., Թիֆլիս, 1895 եւայլն:

[8] Մանրամասն տե՛ս **Ադոնց Նիկողայոս**, Հայաստանը Յուստինիանոսի դարաշրջանում, Եր., 1987, էջ 241, **Տէր Դեւոնդեան Արամ**, Յօդուած ների ժողովածու, Եր., 2003, էջ 133, 299:

դ) Ինքնուրճեան ձեւախեղման շրջափուլ: 11-րդ դարի առաջին կէսին՝ պայմանաւորուած Հայաստանի համար ստեղծուած աշխարհաքաղաքական բարդ իրավիճակով (արեւելքից սելճուք-թուրքերի արշաւանքներ, հայկական հողերի նկատմամբ Բիւզանդական կայսրութեան ոտնձգութիւններ) հայ իրականութեան մէջ ծնունդ առաւ մի վտանգաւոր մտայնութիւն, թէ ստեղծուած իրադրութեան մէջ ամենանախընտրելի լուծումը հայկական գաւառները քրիստոնեայ Բիւզանդիային զիջելն է եւ հայրենի եզերքներից արտագաղթը: 1021 թուականին Վասպուրականի վերջին թագաւոր Սենեքերիմ Արծրունին իր թագաւորութիւնը կտակեց Բիւզանդիային եւ տասնեակ հազարաւոր իր համաերկրացիներով հեռացաւ Փոքր Հայք, չատերը հաստատուեցին նաեւ Կիլիկիայում: Գանձակից արտագաղթից Օշին իշխանը, Վանի շրջակայքից՝ Աբլղարիբ Արծրունին: Հայրենի հողում մնալու, պայքարելու աւանդական գործելակերպին փոխարինելու եկաւ նոր՝ արտագաղթելու ադէտաբեր սովորոյթը: Այդ մտայնութիւնը՝ յատկապէս դերիչխող դարձաւ Անիի Բագրատունեաց թագաւորութեան անկումից (1045) յետոյ:

Անկախ հայկական թագաւորութիւնների կործանմանն ու արտագաղթի սաստկացմանը զուգընթաց Կենտրոնական եւ Արեւելեան Եւրոպայում (Հունգարիա, Լեհաստան, Պալքաններ, Միջերկրական շրջաններ եւ այլուր) արագօրէն ստուարացան հայկական գաղթավայրերը: Թէպէտ դրանցից մի քանիսը, յատկապէս լեհահայ, հունգարահայ եւ աստրախանահայ համայնքները ժամանակի ընթացքում մեծ վերելք ապրեցին եւ ձեռք բերեցին անգամ իրաւական կարգավիճակ սակայն չուտով բոլոր նրանք, ովքեր ընդունեցին կաթոլիկական դաւանանքը (լեհահայեր եւ հունգարահայեր) տասնամեակներ անց կորցրեցին իրենց ազգային ինքնութիւնը եւ ձուլուեցին տեղի ժողովուրդների մէջ:

Վերոյիշեալ շրջափուլում ազգային ինքնութեան կորուստ տեղի ունեցաւ նաեւ Հիւսիսային Հայաստանում (Տայք, Ախալցխա, Ջաւախք, Լոռի), որտեղ հայութեան մի մասը վրաց եկեղեցու ճնշումների ներքոյ ընդունեց ուղղափառութիւն: Էթնոդաւանական ձեւախեղման ենթարկուած այդ հայութեանը հայ հեղինակներն անուանում էին «ազգաւ հայ, կրօնաւ վրացի»:

Ազգային ինքնութեան կորուստը մեծ ծաւալներ ընդունեց 16–18-րդ դարերի ընթացքում, երբ սկսուած թուրք-պարսկական երկարատեւ ու արիւնալի պատերազմների թատերաբեմ դարձաւ Հայաս-

տանը, սուլթանական կառավարութեան վարած ժողովրդագրական քաղաքականութեան հետեւանքով բազմահազար քոչուոր քրտական ցեղերը ներթափանցեցին Հայկական լեռնաշխարհ: Այդուհետ ծայր առաւ հայութեան որո- շակի զանգուածների թուրքացման ու քրտացման գործընթացը[9]: Իրականում հայ ինքնութեան առաջին զանգուածային այս վերակերպումները դիմախեղեցին Հայաստանի ժողովրդագրական պատկերը եւ հետագայում աւելի խոցելի դարձրեցին հայ հասարակութիւնը Հայոց ցեղասպանութեան երիտթուրքական քաղաքականութեան իրականացման ճանապարհին:

Որքան էլ 11-րդ դարի կէսերից մինչեւ 20-րդ դարի սկիզբն ընկած ժամանակաշրջանը ազգային ինքնութեան ձեւախեղման ու նահանջի շրջափուլ էր, այնուամենայնիւ այդ ընթացքում ժամանակ առ ժամանակ տեղի էին ունենում ազգային զարթօնքի բազմաթիւ առկայծումներ: Պատահական չէ, որ այդ շրջափուլին, բնորոշ է ազատագրական շարժումների վերելքը (17–18-րդ դարերում դրանք նշանաւորեցին Հայոց պատմութեան նոր ժամանակաշրջանի սկիզբը), ազգային կուսակցութիւնների ստեղծումն ու գործունեութեան աշխուժացումը եւ այլն: Ինչեւէ, այս ամէնով հանդերձ սոյն շրջափուլը միանշանակօրէն ամենաբարդն ու կորստաբերն էր, քանի որ դրա վերջնափուլն Առաջին աշխարհամարտի շրջանն էր, որի ընթացքում օսմանեան իշխանութիւնների կողմից իրականացուեց Հայ ժողովրդի ցեղասպանութիւնն ու Հայրենազրկումը:

ե) Ինքնութեան վերածննդի շրջափուլ: *Հայոց մեծ եղեռնից ընդամէնը երեք տարի անց՝ 1918 թ., մայիսին, շնորհիւ Սարդարապատում, Բաշ Ապարանում, Ղարաքիլիսայում, Ջաւախքում, Շիրակում եւ այլուր թուրքերի դէմ մղուած հերոսամարտերի ժամանակ Հայ ժողովրդի դրսեւորած միասնականութեան, ազգային ինքնութեան աննախադէպ պոռթկման հնարաւոր եղաւ Արեւելեան Հայաստանի մի հատուածի վրայ Մայիսի 28-ին վերականգնել Հայոց անկախ պետականութիւնը: Այդ պատմական իրադարձութեամբ սկսուեց Հայոց նորագոյն պատմութեան ժամանակաշրջանը:*

Պետականութեան զգացողութիւնը, պետական մտածողութիւնը, որ հին եւ միջին դարերում կազմում էին Հայ մարդու աշխարհա-

[9] Հայ բնակչութեան էթնոկրօնական ու էթնոդաւանական վերակերպումների մասին մանրամասն տե՛ս **Մելքոնեան Ա.**, Հայաստանի պատմութեան եւ ժողովրդագրութեան հիմնահարցեր, Եր., 2011, էջ 289–303:

յետգքի անքակտելի մասը՝ կրկին համակեցին համայն հայութեանը: 1919 թ. Մայիսի 28-ին անկախութեան հռչակման տարեդարձի օրը՝ ի կատարումն նաեւ արեւմտահայութեան պատմական իղձերի[10], Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը երկիրը հռչակեց անկախ եւ միացեալ հանրապետութիւն[11]: Դրանով ՀՀ-ն յայտարարում էր նաեւ բռնազաւթուած Արեւմտեան Հայաստանի վրայ իր իշխանութեան տարածման մասին: Հայութեան այս դարաւոր երազանքն իր իրաւական ձեւակերպումը ստացաւ 1920 թ. Օգոստոսի 10-ին Սեւրում Անտանտի երկրների ու Օսմանեան կայսրութեան միջեւ կնքուած պայմանագրի 88–93-րդ յօդուածներով, որոնց համաձայն Միացեալ Հայաստանին էր միացուելու արեւմտահայ 4 նահանգների (Վան, Պիթլիս, Էրզրում եւ Տրապիզոն) մեծ մասը: 1920 թ. Նոյեմբերի 22-ին Միացեալ Նահանգների նախագահ Վուտրօ Ուիլսընի կազմած իրաւարար վճռի համաձայն ՀՀ տարածքը կազմելու էր չուրջ 160 հագ. քառ. քմ.՝ դէպի Սեւ ծով նաւահանգստային ելքով:

Ճիշդ է՝ քեմալապոլշեւիկեան դործակցութեան հետեւանքով Սեւրի դաշնագիրը կեանքի չկոչուեց, իսկ Հայաստանի Հանրապետութիւնը 1920 թ. Դեկտեմբերի սկզբին կործանուեց: Սակայն պետականութեան գաղափարն ու պետականամէտ մտածողութիւնն այնքան զօրաւոր էին, որ ընդամէնը երկուս ու կէս ամիս անց հայ ժողովուրդը չհանդուրժեց համայնավարների բռնութիւնները եւ 1921 թ. Փետրուարի կէսերին վերականգնեց անկախ հանրապետութիւնը: Հայոց անկախ պետականութիւնն Այսրկովկասի տարածաշրջանում ամենաերկարը պահպանուեց Հայաստանի մի մասում Սիւնիքում (Լեռնահայաստան)՝ մինչեւ Յուլիսի կէսերը:

Յատկանշական է, որ Առաջին Հանրապետութեան կարճատեւ գոյութեան ընթացքում պետականամէտ ինքնութիւնն այնքան հզօրացաւ, որ անգամ համակեց հայ համայնավարներին: Պատահական չէ, որ հայ պոլշեւիկների՝ Հայաստանի խորհրդայնացման մասին

---

[10] 1919 թ. Փետրուարին Արեւմտահայերի երկրորդ համագումարը հանդէս էր եկել Միացեալ Հայաստանի հռչակման պահանջով:

[11] Միացեալ Հայաստանի հռչակման պատմական նշանակութեան մասին տե՛ս **Մելքոնյան Ա.**, Միացեալ Հայաստանի հռչակագրի պատմական խորհուրդը, Հանրապետական գիտաժողովի նիւթեր, նուիրուած միացեալ եւ անկախ Հայաստանի անկախութեան մասին հռչակագրի 90 եւ Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի հիմնադրման 40-ամեակներին, Վանաձոր, 2009 էջ 4–8:

1920 թ. Դեկտեմբերի 2-ին Երեւանում Խորհրդային, Ռուսաստանի եւ Հայաստանի Հանրապետութեան միջեւ կնքուած համաձայնագրի առաջին կէտով «Հայաստանը յայտարարւում էր անկախ (ընդգծումն իմն է Ա.Մ.) Սոցիալիստական Հանրապետութիւն»[12]: Իրօք, Խորհրդային Հայաստանի գոյութեան առաջին տարիներին այդ յարաբերական անկախութիւնը պահպանուեց մինչեւ 1922 թ. Մարտի 12-ը, երբ Հայաստանը մտցուեց Անդրկովկասեան դաշնային Հանրապետութեան կազմի մէջ եւ ինքնուրոյն միութենական Հանրապետութեան վերածուեց միայն 1936 թ.:

Իրական անկախութիւնից զուրկ, բայց պետականութեան բազմաթիւ դրսեւորումներ ունեցող Խորհրդային Հայաստանում անգամ ստալինեան բռնաճնշումների պայմաններում հայ ազգային ինքնութեան մակարդակը չարունակեց մնալ բաւական բարձր, ասպարէզ իջան պետական մտածողութեան բազմաթիւ գործիչներ (Ալեքսանդր Միասնիկեան, Ալեքսանդր Բեկզադեան, Աղասի Խանջեան, Գրիգոր Յակոբիւնեան, Եակով Զարոբեան եւ այլք), գիտութեան, մշակոյթի ու լրակաութեան ականաւոր դէմքեր:

Նորագոյն ժամանակներում հայ ինքնութեան զարթօնքն իր աննախադէպ բարձրութեանը հասաւ 1965 թ., երբ սփիւռքում եւ հայրենիքում նշուեց Հայոց ցեղասպանութեան 50-րդ տարելիցը: Հայ դատի համար պայքարը հայկական համայնքներից հետզհետէ տեղափոխուեց նաեւ Հայաստան: Այն դարձաւ հայ ինքնութեան պահպանման ու զարգացման գլխաւոր ազդակներից մէկը:

1988 թ. Սպիտակի աղէտալի երկրաշարժը ոտքի հանեց համայն Հայութեանը: Արցախեան շարժման ու պատերազմի տարիներին էլ աւելի ամրապնդուեց հայ ժողովրդի միասնականութեան գաղափարը: Հայ ազգային ինքնութեան նոր պոռթկման ալիքը 1991 թ. սեպտեմբերին կեանքի կոչեց Հայոց անկախ պետականութիւնը՝ Հայաստանի Հանրապետութեան եւ Լեռնային Ղարաբաղի (այժմ՝ Արցախի) Հանրապետութեան տեսքով: Հայաստան-սփիւռք գործակցութեան համար բացուեցին նոր հեռանկարներ:

Հայաստանի անկախացումով իրականութիւն դարձաւ հայ ժողովրդի երազանքը: Սակայն յետանկախական տարիներին, երբ թւում էր, թէ հայ ինքնութեան զարթօնքը ժամանակի ընթացքում

---

[12] Հայաստանի Հանրապետութիւնը 1918–1920 թթ. (քաղաքական պատմութիւն), փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածու. Եր., 2000, էջ 383:

նոր բարձունքների պէտք է հասնի, յանգեցնի նորանկախ Հայաստանի աննախադէպ վերելքին, զարմանալիօրէն ծայր առան գործընթացները (հայրենիքից օրէցօր ահագնացող արտագաղթ, Հայաստանի իշխանութիւնների հանդէպ սփիւռքահայութեան անվստահութեան խորացում, արտերկրում ուծացման գործընթացների արագացում, հայ հասարակութեան բարոյահոգեբանական վիճակի վատթարացում եւ այլն), որոնք հետզհետէ վերածուեցին ազգային անվտանգութեանն ու ինքնութեանը սպառնացող լրջագոյն վտանգների:

Ներկայումս օրախնդիր է դարձել ազգային պետութեան շուրջ համայն հայութեան միաւորման հրամայականը: Անհրաժեշտ է առաջ քաշել այնպիսի գաղափարներ, որոնք ընդունելի կը լինեն հայ ժողովրդի բոլոր հատուածների համար թէ՛ հայրենիքում եւ թէ՛ սփիւռքում: Կարծում ենք, որ նման գաղափարների մէջ առաջնայինը պետք է լինի Հայոց ցեղասպանութեան հետեւանքների վերացման, այն է՝ հոգային ու նիւթական հատուցման հասնելու պայքարը: Առանց հատուցման խնդիրը լուծելու, այսինքն՝ Միացեալ Հայաստանի ստեղծման, հնարաւոր չէ թշնամական շրջափակ վիճակից հանել հայկական երկու պետութիւնները, ազատել հայ մարդուն ցեղասպանուածի արդէն մէկդարեայ բարդոյթից եւ հասնել ազգային քնած ինքնութեան լիակատար արթնացմանն ու զարգացմանը:

Պատմական բարդ ու մղձաւանջային իրավիճակներից ելք գտնելու հայ ժողովրդի բազմադարեայ փորձը յուշում է, որ այդ խնդիրը միանգամայն լուծելի է, քանի որ ի տարբերութիւն այլ իրավիճակների, ներկայումս հայ ժողովուրդն ունի իր պետականութիւնը, յաղթանակած բանակը, ազգային եկեղեցին, սփիւռքեան կառոյցների վիթխարի կարողականութիւնը, բնազաւթուած Արեւմտեան Հայաստանում ծալտեալ հայութեան արթնացող ինքնութիւնը եւ պահանջատիրութեան խնդիրն առաջ տանելու համազգային կոտրում կամքը:

ՓՐՈՖ. ԴՈԿՏ. ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆԵԱՆ

Սփիւռք եւ ինքնութիւն, Անթիլիաս, 2018, էջ 49–62:

ԱՐՑԱԽԸ ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀՈԼՈՎՈՒՅԹՈՒՄ

Պատմաբանների, քաղաքագետների, իրավաբանների և այլ մասնագետների կողմից Հայոց պատմության մի շարք հանգուցային հարցերի վերաբերյալ առ այսօր կան թյուր ըմբռնումներ: Դրանց թվում կարելի է առանձնացնել՝ հայկական պետականության սկզբնավորման ու գոյության ժամանակների մասին պնդումները, որոնք այսօր թե՛ գիտական և թե՛ քաղաքական առումով այլևս քննության չեն բռնում:

Դեռ շարունակում է գերակշռել այն սխալ կարծիքը, որ հայ ժողովուրդը դարեր շարունակ, ինչպես վաղ և ուշ միջնադարում, այնպես էլ նոր ժամանակներում, բնավ չի ունեցել պետականություն ու ավելի շատ գտնվել է զանազան տերությունների տիրապետության տակ: Նման մոտեցման համար հիմք են ծառայել պետության ու պետականության վերաբերյալ թյուր ըմբռնումները. խնդրով զբաղվող հեղինակների զգալի մասը կարծում է, որ պետականության առկայության մասին կարելի է խոսել միայն այն դեպքում, երբ տվյալ կազմավորումն օժտված է լինում պետականությանը բնորոշ բոլոր հատկանիշներով (ատրիբուտներ)՝ տարածք, բնակչություն, կառավարման համակարգ, զինական ուժեր, միջազգային ճանաչում և այլն: Սակայն իրականում վերոհիշյալ հատկանիշների մի մասի գոյությունն իսկ բավարար է այն պետական կազմավորում նկատելու համար: Պարտադիր չէ պետությունն ընդգրկի տվյալ էթնոսի ամբողջ պատմական արեալը, բացարձակ իմաստով անկախ լինի, ունենա համընդհանուր միջազգային ճանաչում, կառավարման միապետական կամ հանրապետական կարգավիճակ և այլն:

Շատ կարևոր է հասկանալ, որ Հայկական լեռնաշխարհում համահայկական պետականության բացակայությունը դեռ չի նշանակել առհասարակ պետականության բացակայություն: Այն գոյություն ունենալով պատմական Հայաստանի մի հատվածում, որպես կանոն՝ պատմաաշխարհագրական նպաստավոր պայմաններ ունեցող տարածաշրջաններում ունեցել է պետականության տարբեր դրսևորումներ (իշխանապետություն, կիսանկախ համայնք և այլն) և ժամանակի ընթացքում վերածվել է համահայկական պետության, որն էլ ուսումնասիրողներին հիմք է տվել այդուհետ այն համարել այն լիարժեք պետականություն: Հատկանշական է, որ տեղայնական

նշանակության շատ պետական կազմավորումներ հաճախ, հիմք են հանդիսացել համահայկական պետականությունների ձևավորման համար: Համանման օրինակ է Ք.ա. 9-րդ դարում հայկական լեռնաշխարհում հանդես եկած Վանի (Բիայնիլի, Ուրարտու, Արարատի) թագավորությունը: Նույնիսկ մեկ միասնական՝ կենտրոնակեցված պետության, ինչպես Վանի, այնպես էլ հետագայի Երվանդական, Արտաշեսյան ու Արշակունյաց թագավորությունների կազմում առանձին նահանգներ չարունակել են պահպանել ինքնիշխան կարգավիճակ կամ իրենց ունեցած ազդեցիկ դիրքի պատճառով ավելի կարևոր դեր են խաղացել ամբողջ երկրի կյանքում: Որպես կանոն, դրանք եղել են սահմանակալ խոշոր իշխանություններ՝ բդեշխություններ (Սյունիք, Գուգարք, Աղձնիք և այլն) կամ աշխարհագրական նպաստավոր պայմաններ ունեցող տարածաշրջաններ (Տավուշ, Արցախ, Տայք, Մոկս և այլն):

Հայոց հին պետականության դարաշրջանն ընդգրկում է վաղնջական ժամանակներից մինչև IV դարի վերջն ընկած հատվածը, որն իր հերթին կարելի է տրոհել հետևյալ փուլերի. ա)վաղագույն պետականություններ՝ Ք.ա. III հազարամյակից մինչև Ք.ա. IX դ. (Արատտա, Արմանում, Արմե-Շուբրիա, Թոգարմա, Հայասա, Նաիրի, Դայա, Էթիունի և այլն), բ)միասնական պետականություններ՝ Ք.ա. IX դարից մինչև Ք.հ. IV դ. վերջ (Վանի կամ Արարատյան (Բիայնիլի, Ուրարտու) թագավորություն, Երվանդյաններ, Արտաշեսյաններ և Արշակունիների գահակալություն՝ մինչև Հայաստանի 387 թ. բաժանում:

Միջնադարյան պետականության շրջանը ներառում է IV դարի վերջից մինչև XVII դարի կեսերը: Առաջին փուլը (վաղմիջնադարյան պետականություն) սկսվում է Հայաստանի առաջին բաժանումով և ավարտվում IX դ. երկրորդ կեսին՝ Բագրատունիների թագավորության ստեղծումով: 387 թ. Արևելյան Հայաստանը հայտնվում է պարսկական, իսկ Արևմտյան Հայաստանը՝ Հռոմեական կայսրության (395 թվականից՝ Բյուզանդիա) ազդեցության ոլորտում: Հայկական պետականությունը բռնում է թուլացման ուղի: Բայց հայոց Արշակունյաց արքայատոհմի ներկայացուցիչները Հայաստանի երկու հատվածներում դեռ որոշ ժամանակ շարունակում են գահակալել: 391 թ. Արևմտյան Հայաստանում Արշակ IIIի մահվանից, իսկ 428 թ. Արտաշես III (Արտաշիր) արքային գահընկեց անելուց հետո Արշակունյաց հարստությունն անկում է ապրում:

Բայց Արշակունիների անկումով միայն վերանում է թագավորությունը, իսկ պետականությունը ձեռք է բերում նոր դրսևորումներ՝ Արևելյան Հայաստանում՝ մարզպանական, իսկ Արևմտյան Հայաստանում՝ սատրապական համակարգերով, որոնց հիմքում ընկած էր նախարարական համակարգը: Այդ խնդրի խորագիտակ Նիկողայոս Ադոնցն ընդգծում էր, որ «Նախարարական վարչակարգը իր կայունությամբ այնպիսի տիպական ու ուշագրավ երևույթ է, որ առանց դրա անհնարին է հայոց հին կյանքի և պատմության գիտական ընբռնումն ու ճիշտ լուսաբանումը: ...Այդ երկարատև ժամանակաշրջանում նախարարությունը հանդիսացավ քաղաքական կարևոր գործոն և, կարելի է ասել, հայոց պատմության լծակը. նախարարությունները ամբողջ երկրով ցրված քաղաքական ազատության օջախներ էին..., նրա ժամանակ երկրի արտաքին կախվածությունը համատեղված էր ներքին ինքնուրույնության հետ, և այդ ճանապարհով ապահովվում էր երկրի ինքնատիպությունը»[1]:

Արևելյան Հայաստանում 428 թ. հետո իշխանությունը թագավորից անցնում է նախարարական դասին. երկիրը դառնում է հարկատու Սասանյաններին, սակայն զինական ուժը մնում է նախարարների իրավասության ներքո: Այդ մասին պատմիչ Եղիշեն գրում է, որ երբ պարսից արքունիքը «...իբրև զնա (Արտաշես արքային – Ա.Մ.) ևս մերժեաց ի թագաւորութենէն, ի նախարարսն Հայոց անկանէր թագաւորութիւնն. զի թէպէտ և գանձն յարքունիս Պարսկաց երթայր, սակայն այրուձին Հայոց բովանդակ ի ձեռն նախարարացն առաջնորդէր ի պատերազմի»[2]:

Այսպես՝ թագավորին փոխարինած մարզպանը ստանձնում է նրա մի շարք գործառույթներ, պահպանվում են Արշակունիների օրոք առկա գրեթե բոլոր գործակալությունները՝ հազարապետությունը, սպարապետությունը, մեծ դաստավարությունը և այլն: Հատկապես ուշագրավ է մաղխազության գործակալության, այն է՝ թագավորի թիկնազորի պետի պաշտոնի պահպանումը, այն դեպքում, երբ թագավոր այլևս չկար: Ի դեպ, ոչ միայն պաշտոններն էին պահպանվել, այլ շատ դեպքերում՝ նաև դրանք իրենց նախկին տերերին՝

---

[1] **Ադոնց Նիկողայոս**, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Ե., 1987, էջ 241:

[2] Եղիշէի վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին, ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց աշխատութեամբ Ե. Տէր-Մինասեան, Ե., 1957, էջ 6:

նախարարական հայտնի տներին՝ Մամիկոնյաններին, Ամատունիներին, Խորխոռունիներին հանձնելու ավանդույթը:

Դժվար չէ կռահել, որ վերոհիշյալ նախարարներն այդուհետ պարտավոր էին ծառայություններ մատուցել թագավորին փոխարինած մարզպարին, որն այժմ Արևելյան Հայաստանի կառավարիչն էր և պարսից արքունիքի առջև ներկայացնելու էր նաև հայ նախարարներին ու երկրի հետ կապված գործերը: Պատահական չէ, որ մարզպանը հայտնի էր նաև որպես Հայոց տանուտեր: Վահանանց պատերազմից հետո, երբ Արևելյան Հայաստանում Պարսկաստանը ճանաչեց հայերի ինքնավար ապրելու իրավունքը և առժամանակ դադարեցրեց կրոնական հալածանքները: Վարդանանց ու Վահանանց պատերազմների ընթացքում հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարի շնորհիվ, Նվարսակի հաշտության կնքումով 480-ական թվականների կեսերից Հայոց պետականությունն ինքնավար տարբերակով վերականգնվեց ինչպես Արևելյան Հայաստանի կենտրոնական հատվածում՝ Արարատյան երկրում, այնպես էլ Հայոց Արևելից կողմերում՝ Արցախում Վաչագան Բարեպաշտի գլխավորությամբ[3]*:*

Հետագա դարերում Արցախում Առանշահիկները չարունակեցին պետականության պահպանման ավանդույթները Հասան-Ջալալյանների և տոհմիկ ազնվականական այլ տների կողմից: Այսպիսով, V դարի վերջից Արցախը դարձավ տեղայնական մակարդակով Հայոց պետականության պահպանման կենտրոններից մեկը: Լեռներով մյուս նահանգներից կտրվածությունը հնարավորություն տվեց Արցախին դարեր շարունակ մնալ Հայոց պետականության կրող մեկը:

Հայոց վաղմիջնադարյան պետականության ինքնատիպ դրսևորում հանդիսացող սատրապական համակարգն էլ բավական ժամանակ՝ մինչև Հուստինիանոս I (527–565) կայսեր բարեփոխումները, պահպանվեց Արևմտյան Հայաստանում, որտեղ կային հինգ սատրապություններ: Դրանց կառավարիչ սատրապներն օգտվում էին ներքին ինքնավարությունից[4]*:*

---

[3] Հայոց պետականության պատմության մեջ Արցախի ունեցած դերակատարության մասին մանրամասն տե՛ս **Ուլուբաբյան Բ.**, Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության, V–VI դդ., Ե., 1981, **նույնի՝** Արցախի պատմություն. սկզբից մինչև մեր օրերը, Ե., 1994:

[4] Արևմտյան Հայաստանի ինքնավար իշխանությունների մասին տե՛ս **Ադոնց Նիկողայոս**, նշվ. աշխ., էջ 39–146:

Անշուշտ, ինչպես պարսից, այնպես էլ բյուզանդական արքունիքները, ժամանակի ընթացքում տարբեր քայլերով՝ հատկապես նախարարական կալվածքները բաժան-բաժան անելու միջոցով, հետզհետե թուլացրին հայոց ինքնավարությունները, բայց մինչև արաբական արշավանքները, այդպես էլ չկարողացան իսպառ վերացնել դրանք: Ավելին՝ անգամ արաբական արշավանքներից հետո, օգտվելով արաբաբյուզանդական հակամարտության սրումից, հայկական նախարարական դասի մի շարք նշանավոր դեմքերի (Թեոդորոս Ռշտունի, Վարազտիրոց Բագրատունի և այլք) կազմակերպած պայքարը, հաջողվեց VII դարի երկրորդ կեսին, մի միասնական ու ուշագրավ իշխանապետություն ստեղծել, իսկ VIII դ. Արմինիա վարչական միավորումում պահպանել ներքին ինքնավարության տարրեր:

«Հայաստանը արաբական շրջանում,- գրում է արաբագետ Արամ Տեր-Ղևոնդյանը,- երբեք չկորցրեց իր ներքին ինքնավարությունը և վարչական տեսակետից երբեք չկազմալուծվեց, այլ լինելով խալիֆայության «Արմինիա» նահանգի մի մասը, պահպանեց իր ուրույն վարչական ու քաղաքական դեմքը: Հայաստանն այս շրջանում կառավարում էր Հայոց իշխանը, որը թեև ենթակա էր Արմինիայի ոստիկանին, սակայն երկրի գործերի իրական տնօրինողն էր»[5]: Նույն դիտանկանի համոզմամբ՝ Հայաստանի և Հարևան Վիրքի ներքին ինքնավարությունը, ի տարբերություն խալիֆայությանը ենթակա այլ երկրների, պայմանավորված էր այնտեղ ժառանգական հողատիրության պահպանմամբ, որի շնորհիվ էլ հայերն ու վրացիները «պահպանեցին իրենց լեզուն ու մշակույթը և IX դարում ինքնուրույն պետականություն ստեղծեցին»[6]:

Միջնադարում՝ զարգացած ավատատիրական պետականության փուլը, վերաբերում է Բագրատունիների վերելքին և հայկական նոր պետությունների (Վասպուրականի, Վանանդի, Տաշիր-Զորագետի, Սյունիքի թագավորություններ, Տարոնի, Տայքի, Համշենի, Սամցխե-Սաաթաբագոյի իշխանություններ, Զաքարյանների, Վահրամյաննե-

---

[5] **Տեր-Ղևոնդյան Արամ,** Հայոց իշխանը արաբական տիրապետության շրջանում, Հոդվածների ժողովածու, Ե., 2003, էջ 133:

[6] **Նույնի,** Հայ նախարարների հողատիրական իրավունքները, Հոդվածների ժողովածու, էջ 299:

րի իշխանապետությունները, Կիլիկիայի հայկական պետությունն և այլն) ժամանակներին՝ IX դ. կեսերից մինչև XIV դարի վերջը[7]:

Ինչպես աշխարհի շատ երկրներում, այնպես էլ Հայաստանում, պայմանավորված ավատատիրական հարաբերությունների զարգացման նոր մակարդակով, հայկական կենտրոնական պետության հաբևանությամբ երևան են գալիս մի շարք մանր ու միջին պետական կազմավորումներ. սկսվում է ֆեոդալական մասնատվածությունը: Բայց եթե որոշ ժամանակ անց՝ եվրոպական երկրների մեծ մասում այդ մասնատվածությունը հաղթահարվում է և շուտով ձևավորվում են կենտրոնացված միապետություններ (ինքնակալություններ), ապա Հայաստանում՝ մոնղոլական ու թուրքմենական ցեղերի, Լենկ Թեմուրի արշավանքների, պարսկա-թուրքական երկարատև ու արյունալի պատերազմների հետևանքով, պետականության դրսևորումներն ավելի են թուլանում և, բացառությամբ լեռնային մի շարք շրջանների, երկրի մեծ մասում վերանում են: Հայրենիքից դուրս՝ Միջերկրական ծովի հյուսիսարևելյան առափնյա շրջաններում, որտեղ Հայաստանից հայերի զանգվածային արտագաղթի պատճառով հոծ հայություն էր կուտակվել, XI դ. վերջին ստեղծվում են հայկական մի քանի կազմավորումներ, որոնցից ամենակենսունակը լինում է Ռուբինյան իշխանությունը, որը 1198 թ. Լևոն Մեծագործի կողմից վերածվում է թագավորության և դառնում տարածաշրջանի ուժեղագույն երկրներից մեկը:

> *«Ուշ-միջնադարյան Հայաստանում,- գրում է Բ. Ուլուբաբյանը,- թաթար-մոնղոլական զավթիչների, ապա նրանց հետքերով եկած ակկոյունլու և կարա-կոյունլու թուրքերի կործանարար հարվածների տակ, ոչնչացել էին հայկական իշխանությունները, և Խաչենը համարյա միակ վայրն էր, ուր պահպանվում էին հայ պետականության բեկորները, և ուր դեռևս բորբոք էին մնում հայոց քաղաքական ազատության կայծերը...»[8]: Արցախում, հարակից գավառներում և Հյուսիսարևելյան Հայաստանի այլ շրջաններում պահպանված իշխանական տների (Հասան-Ջալալյաններ, Դոփյաններ, Օրբելյաններ, Մելիք-Շահ-*

---

[7] Տե՛ս **Վարդանյան Վ.**, Վասպուրականի թագավորության պատմությունը, Ե., 1969, **Մարգարյան Հայրապետ**, Հյուսիսային Հայաստանի և Վրաստանի ԺԲ դարի պատմության մի քանի հարցեր, Ե., 1980, Գրիգորյան Գրիգոր, Սյունիքը Օրբելյանների օրոք, Ե., 1981, **Գրիգորյան Գնել**, Տարոնի ֆեոդալական իշխանությունը 9–10-րդ, Ե., 1983, **Շահնազարյան Ա.**, Վահրամյանների իշխանությունը, Ե., 1990, **Միքայելյան Գ.**, Կիլիկիայի հայկական պետության պատմություն, Ե., 2007, **Սահակյան Լուսինե**, Համշենը հայկական ձեռագրերում, Ե., 2019 և այլն:

[8] **Ուլուբաբյան Բ.Ա.**, Խաչենի իշխանությունը X–XVI դարերում, Ե., 1975, էջ 6:

նաղարյաններ և այլք) չառավիղները, ըստ մեծանուն վիպասան Րաֆֆու երբեք չկորցրեցին «իրենց ինքնավարության իրավունքները» և ձևավորեցին հայ մելիքական դասը[9]:

Օգտվելով վրաց թագավորների և մոնղոլների հակամարտությունից՝ Սարգիս Ջաղեցին կարողանում է ստեղծել մի ընդարձակ իշխանություն, որը չուտով իր մեջ ընդգրկում է Տաշիրից մինչև էրզրում ընկած տարածքը: Այստեղի իշխանը կրում էր աթաբեկի տիտղոս, որի համար իշխանությունը հայտնի էր նաև Սաաթաբադո (այսինքն՝ աթաբեկին ննթակա) անունով: Հայկական աղբյուրներում այն հիշատակվում է «Իշխանաց երկիր» ձևով[10]: Ինչպես Բագրատունիների, Զաքարյանների, այնպես էլ վերջիններիս հաջորդներ Ջաղեցիների օրոք տնտեսական ու մշակութային կյանքը Ջավախքում և աթաբեկության այլ շրջաններում զգալի վերելք է ապրում: Այս իշխանապետությունը պահպանվեց մինչև XVI դ. վերջը, երբ գրավվեց օսմանյան թուրքերի կողմից[11]:

Այդ ժամանակներում կրկին կարևոր դերակատարություն է ստանձնում հայ եկեղեցին, որն իր վրա է վերցնում հայոց պետության որոշակի գործառույթներ: Պատահական չէ, որ 1441 թ. տեղի է ունենում արդեն պետականությունից զրկված Կիլիկիայից կաթողիկոսական աթոռի վերադարձը Հայրենիք՝ Ս. Էջմիածին: Այդուհետ հայոց կաթողիկոսները ղեկավարում են ազատագրական պայքարը. 1547 թ. Էջմիածնում՝ Ստեփանոս Սալմաստեցի, իսկ 1562 թ. Սեբաստիայում՝ Միքայել Սեբաստացի կաթողիկոսների հրավիրած գաղտնի ժողովների կազմած պատվիրակությունները մեկնում են Եվրոպա՝ Հռոմի պապից և եվրոպական տիրակալներից Հայաստանի ազատագրության համար աջակցություն ստանալու առաքելությամբ: Հայ աշխարհիկ հողատերերի դասի ներկայացուցիչները, փորձում են ելք գտնել ստեղծված անելանելի իրավիճակում. նրանցից չատերն իրենց հողերը փոխանցում են հայ հասարակական ու տնտեսական կյանքը

---

[9] Հայ մելիքների ինքնավար կարգավիճակի, զինուժի, դատական իշխանության և այլ գործառույթների և առհասարակ՝ նրանց ստեղծած պետականության դրսևորում հանդիսացող մելիքությունների մասին մանրամասն տե՛ս **Րաֆֆի,** Խամսայի մելիքությունները, Երկերի ժողովածու, հ. 10, Ե., 1959, էջ 396–510, **Ուլուբաբյան,** նշվ. աշխ., **Մաղալյան Արտակ,** Արցախի մելիքությունները և մելիքական տները XVII–XIX դդ., Ե., 2007 և այլն:

[10] Բազմավեպ, Վենետիկ, 1887, էջ 138 և **Լէօ,** Սահմանավեճեր, էջ 105: Հակոբոս Տաշյանի համոզմամբ այս իշխանության մեջ ընդգրկվել են նաև Կիսկիմն ու Թորթումը (**Տաշեան Հ.Յ.,** Տայք, դրացիք եւ հոտորջուր, Վիեննա, 1973, էջ 61):

[11] **Այս իշխանապետության մասին տե՛ս Մելքոնյան Աշոտ, Ջավախքը XIX դարում և XX դարի** առաջին քառորդին, Ե., 2003, էջ 56–63:

տնօրինող հայ եկեղեցուն և իրենք էլ անցնում ծառայության արդեն եկեղեցապատկան կալվածքներում: Այդօրինակ հողատերերը հայտնի են դառնում պարոնտեր անունով: Թուրք-պարսկական տիրապետության պայմաններում նման եղանակով հնարավոր է լինում որոշ չափով պաշպանել հայ հողատերերի գույքային իրավունքը:

Նոր ժամանակներում (XVII դարի կես – 1918 թ.) հայոց պետականության պատմությունն ունի իր առանձնահատկությունները: Առաջին շրջափուլում (XVII դարի կես XVIII դարի սկիզբ), որը կարելի է անվանել պետականության տեղական (տեղայնական) շառավիղների ժամանակաշրջան, բացակայում է համահայկական պետականությունը, բայց այն առկայծումներով ու զանազան դրսևորումներով՝ ինքնիշխան կազմավորումների (սղնախներ՝ պաշտպանական ամրոցներ, մելիքություններ, իշխանապետություններ, ինքնավար համայնքներ) տեսքով երևան է գալիս Հայաստանի առանձին շրջաններում՝ Արցախում, Սյունիքում, Գեղարքունիքում, Մոկսում, Շատախում, Սասունում[12], Կիլիկիայի լեռնային հատվածներում:

Այդ շրջափուլի սկիզբն ազդարարում է 1677 թ. Էջմիածնում Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի հրավիրած ազատագրական գաղտնի ժողովը: Հայոց հայրապետի գլխավորած պատվիրակությունը ժամանում է Կ.Պոլիս, Հայաստանի ազատագրության ծրագրերով դիմում է Ռեչ-Պոսպոլիտայի թագավոր Յան Սոբեսկուն: Հակոբ Ջուղայեցու մահվանից հետո Եվրոպա է անցնում պատվիրակության երիտասարդ անդամ Իսրայել Օրին, որը Հայաստանի ազատագրության և պետականության վերականգնման հետաքրքրական ծրագրերով նախ դիմում է Գերմանիայի Պֆալց երկրամասի կուրֆյուրստ (մեծ իշխան) Հովհաննես Վիլհելմին, իսկ 1701 թ.՝ Ռուսական կայսր Պետրոս I-ին: Հատկանշական է, որ իր ծրագրերի (Պֆալցյան և Մոսկովյան) նկատմամբ վերոհիշյալ տիրակալների հետաքրքրությունը շարժելու համար Օրին նրանց դիվանագիտորեն հասկացնում է, որ Հայաստանն ազատագրելուց հետո իրենք կարող են դառնալ հայոց թագավոր: Սակայն իրականում, ինչպես ճիշտ նկատել է ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը, Սյունիքի մելիքներից Ռուսաց ցարին հասցեագրված նամակի հայերեն տարբերակը մշակելիս, Պռոշյան

[12] Արևմտյան Հայաստանում ձևավորված հայկական կիսանկախ իշխանությունների մասին տե՛ս **Բայալյան Գ.**, Հայկական կիսանկախ իշխանություններն ու մելիքություններն Արևմտյան Հայաստանում և Լեռնային Կիլիկիայում, Վէմ. Ե., 2011. թիվ 137–155:

իշխանական տնից սերող «Օրին մի պահ հենց իրեն էր պատկերացնում Ռուսաստանի ձեռքով ազատված և ցարի կողմից հովանավորված ապագա Հայաստանը գլխավորողի դերում»[13]:

Այդուհետ չարունակվում են ազգային-ազատագրական պայքարի ընդհանուր շղթայում պետականության վերականգնման համար գործնական քայլերը Սյունիքում և Արցախում: Դրանով սկսվում է ***պետականության վերականգնման գործնական քայլերի փուլը*** *(1722–1747 թթ.): Սյունիքում Դավիթ բեկի գլխավորած ազատագրական պայքարը պսակվում է հաջողությամբ. 1724 թ. Իրանի Թահմասպ II շահը ճանաչում է Սյունիքի հայկական իշխանությունը՝ հաշվի նստելով հայերի ազատագրական ճգտումների հետ և նպատակ ունենալով Դավիթ բեկի իշխանապետությունը օգտագործել ընդհանուր թշնամու՝ Օսմանյան կայսրության դեմ:*

Հայ-իրանական համագործակցության արդյունքում 1730-ական թվականներին Նադիր խանի (շահ) ջանքերով ամրապնդվում են հայկական մելիքությունները ոչ միայն Արևելյան Հայաստանի լեռնային շրջաններում (Սյունիք, Արցախ, Գեղարքունիք), այլ նաև հարթավայրերում: Արդեն նրա 1734 թ. հրովարտակով Արցախի Դովշանլու գյուղի ավագերեց Դավիթը հաստատվում է ինչպես այդ, այնպես էլ Խաչենի մի քանի այլ գյուղերի ավագի ու մելիքի պաշտոնում: «Կարգադրությանը չպետք է հակառակվեն,- հրահանգվում էր փաստաթղթում,- և այն ընդունելով որպես խիստ կարգադրություն՝ ջանք չխնայեն նրա կատարման հարցում: Թող այն իրենց պարտականությունը համարեն»[14]:

Մեկ այլ հրովարտակով Նադիրը Գեղարքունիքի մելիք Մելիքջան Մելիք-Շահնազարյանի որդուն՝ Մանուչարին «ետ նմա իշխանութիւն, ունել ընդ ինքեան զգահլիճ..., և անուանեաց զնա մերիմերան կամ պէյլէրպէյի ի վերայ Արարատեան երկրի և մասին ինչ Սիւնեաց»[15]: *1738 թ. չահական հատուկ հրամանագրով մուսաֆության իրավունքներ չնորհվեցին Երևանի մելիքներ Հակոբջանին ու*

---

[13] **Հովհաննիսյան Աշոտ,** Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք երկրորդ, Ե., 1959, էջ 498:

[14] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 2 բ, վավերագիր 182, բնագիր և Ք. Կոստիկյան, Մատենադարանի պարսկերեն հրովարտակներ, պրակ IV, Ե., 2005, վավ. 2:

[15] **Մելիք-Սիլիմեանց Հ. Ջմիւռնիացի,** Համառոտութիւն պատմութեան Հայկազեանց, Մատենադարան, ձեռագիր 2888, էջ 341աւ, հմմտ.՝ Հայոց պատմություն, հ. 3, գիրք առաջին, Ե., 2010, էջ 55:

Մկրտումին՝ «Նմանների մեջ լավագույն խնդրարկուների բարի ծառայության համար այնպես, ինչպես նախկինում արքայական հրամանագրով հաստատվել էր նրանց մելիքության մուտքությունն ու մյուս [իրավունքները], ըստ կարգի...»[16]:

Բազմաթիվ հայ մելիքներ պարսիկների հետ դաշնակցած պայքարում են ընդհանուր թշնամու՝ օսմանցիների դեմ: Այդ պայքարում փաստական ինքնավարություն են ձեռք բերում հատկապես Արցախի մելիքները, Դիզակի մելիք Եգանի գլխավորությամբ, որոնց զինական ուժերի հետ Նադիրի գործակցությունը բարձրանում է նոր աստիճանի: Արցախում՝ Գանձակի նախկին բեկլարբեկությանը են-թակա Վարանդայի, Դիզակի, Ջրաբերդի, Խաչենի և Գյուլիստանի դավառներում 1736 թ. ծնունդ է առնում հայկական նոր ինքնավարություն՝ Խամսայի (արաբերեն խամսա՝ հինգ) մելիքությունները: Նադիրը, խիստ կարևորելով հայության դերը հակաթուրքական պայքարում, չի հապաղում ճանաչել Արցախյան այս յուրահատուկ պետականությունը: Նա փաստորեն վավերացնում է հայերի չուրջ 15-ամյա հերոսական պայքարի արդյունքում ստեղծված իրողությունը[17]:

Այսպիսով, Արցախում պետականության յուրօրինակ դրսևորումներ եղան հայկական սղնախներն ու մելիքությունները: Պատահական չէ, որ Արցախի դերը խիստ կարևորվեց XVIII դ. երկրորդ կեսին առաջ քաշված ազատագրական ծրագրերում:

XVIII դ. երկրորդ կեսը և XIX դ. առաջին կեսը Հայաստանի ազատագրության նոր ծրագրերի մշակման և մասնակի գործադրման փուլն է: Այն սկսվում է հնդկահայ նշանավոր գործիչ Հովսեփ Էմինի բուռն գործունեությամբ[18] *1768–1774 թթ. ռուս-թուրքական պատերազմը և 1783 թ. ռուս-վրացական Գեորգևսկի դաշնագրով Վրաստանի ռուսական հովանավորության ընդունումը նոր խթան հանդիսացան ավելի բովանդակալից ազատագրական ծրագրերի մշակման համար: 1769 թ. աստրախանաբնակ հայ գործիչ Մովսես Սարաֆյանի կազմված ծրագրերում նախատեսվում էր հայոց թագավորության վերականգնում Ռուսաստանի օժանդակությամբ: Պետականության վերակերտման գործում կարևորություն էր տրվում*

---

[16] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1գ, վավ., 1032:

[17] Տե՛ս Հայոց պատմություն, հ. 3, գիրք առաջին, էջ 64–65:

[18] Հովսեփ Էմինի ազատագրական գործունեության և ծրագրերի մասին մանրամասն տե՛ս **Иоаннисян А.Р.**, Иосиф Эмин. Е., 1945.

Հայաստանի այն չրջանների փորձին, որոնք ժամանակ առ ժամանակ եղել էին ինքնավար կազմավորումներ և հայ ժողովրդի կողմից ընկալվել են որպես ընդօրինակուԹյան արժանի և ԹագավորուԹյան վերականգնման առավել հնարավոր տարածաշրջաններ: Մասնավորապես, մատնանչվում էին Արցախն ու Սյունիքը: Պատահական չէ, որ ապագա Հայոց Թագավորների Թեկնածուների չարքում Մ. Սարաֆյանը տեսնում էր Արցախի մելիքներից մեկին: Ակնհայտ է, որ 1722–1747 ԹԹ. Արցախում պետականուԹյան վերականգնման իրողուԹյունը և մելիքուԹյունների չաւավիղները հստակ կնիք էին դրել ազատագրական պայքարի ղեկավարների մնանատիպ մտածողուԹյան վրա:

Ուշագրավ է, որ այդ ժամանակ մելիքները ևս գիտակցում էին ԹագավորուԹյան վերականգնման գործում իրենց առաքելուԹյունը, չէին մոռանում իրենց հայոց արքայական ծագումն ու առիԹ առ առիԹ այդ մասին հիչատակում էին պաչտոնական գրագրուԹյուններում: Այսպես. 1781 Թ. սեպտեմբերի 2-ին ռուս մեծ զորավար Ալեքսանդր Սուվորովին և Եկատերինա II կայսրուհուն հասցեագրած հերԹական նամակներում, որտեղ խնդրում էին զինական օգնուԹյուն մահմեդականների դեմ անհավասար պայքարում, Արցախի մելիքները (Ադամ, Բեգլար, Իսրայել) իրենց մասին գրում էին. «Մեք ներքոյ անվանեալքս Ղարաբաղու հայոց Թագաւորաց ազնիւ զինվորած(ց) մնացեալ ժառանգք մելիքներըս», «մեք ի ազգաց հայոց ի տանիցն Արչակունեաց և Աւղանից ի արքունական գահոյից, մնացեալ ազնիւ զինաւորացչն ժառանգ մելիքներս և մեր բոլոր երկիրս իչխանօվք հանդերձ...»[19]*:*

Այդ ժամանակաշրջանում առանձնակի կարևորվում էր նաև հայերի ու վրացիների հակապարսկական ու հակաԹուրքական համատեղ պայքարը և արդյունքում Ռուսաստանի հովանու ներքո հայ-վրացական քրիստոնեական պետուԹյուն ստեղծելու գաղափա-

---

[19] Армяно-русские отношения в XVIII веке (1760–1800 гг.), сборник документов, т. IV, Е., 1990, с. 179, 181. Ի դեպ, այդ Ժամակների ռուսերեն թարգմանություններում մելիքների հայոց արքաներից սերված լինելու մասին հատվածը հանված է, իսկ «թագավոր», բառը՝ փոխարինված «начальник» բառով (նույն տեղում, էջ 180, 183–184): Արցախում ազգային ազատագրության և պետականության համար պայքարի մասին տե՛ս նաև՝ **Բալայան Վ.**, Արցախահայ ազատագրական պայքարի բովանդակությունը 17-րդ դ. երկրորդ կեսից մինչև 1813 թ., Ստեփանակերտ, 2013 և **նույնի՝** Դրվագներ արցախահայության ազատագրական պայքարի և պետականակերտման պատմության, (1813–2007 թթ.), Ստեփանակերտ, 2012:

րը: Օրինակ՝ դեռ 1750–1760-ական թթ. Հովսեփ Էմինը, լավ իմանալով, որ վրաց Բագրատունիները սերում են Հայ Բագրատունիներից, Հայ-վրացական պետություն ստեղծելու խնդիրը կապում էր Վրաց արքա Հերակլ II-ի անվան հետ[20]:

1783 թ. Հովսեփ Արղությանի ու Հովհաննես Լազարևի 18 կետից բաղկացած նախագիծը չատ ավելի հստակ էր նախանշում Հայոց թագավորության վերականգնման ուղին. հինավուրց Անին կամ Վաղարշապատը պետք է դառնար ազատագրված Հայաստանի մայրաքաղաքը: Ծրագիրը, որ կրում էր «Կերպ դաշնադրութեան ի մէջ երկուց ազգաց՝ Ռուսաց և Հայոց» անվանումը, ենթադրում էր ազատագրված Հայաստանի և դաշնակից Ռուսաստանի միջև հորիզոնական հարաբերություններ. կնքվելու էր Հայ-ռուսական ռազմական դաշինք, Հայաստանում տեղակայված ռուսական զորքերը պետք է պաշտպաններին երկիրը Օսմանյան կայսրության և Պարսկաստանի ոտնձգություններից: Հայաստանը դառնալու էր Ռուսաստանին հարկատու, անհրաժեշտության դեպքում իր հերթին պարտավոր էր զինական ուժեր տրամադրել կայսրությանը: Ռուսաց կայսրուհի Եկատերինա II-ին էր վերապահվում Հայերից կամ իր մերձավորներից մեկին Հայոց թագավոր ընտրելու իրավունքը[21]:

Հայոց պետականաշինության դաղափարական տեսլականը նոր բարձրության են հասցնում հնդկահայ նշանավոր գործիչներ Շահամիր Շահամիրյանը և Մովսես Բաղրամյանը: Մադրասում 1771 թ. նրանց հիմնադրած տպարանում չուտով լույս են տեսնում Մ. Բաղրամյանի «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ» և Շ. Շահամիրյանի «Որոգայթ փառաց» աշխատությունները, որոնցում անդրադարձ էր կատարվում Հայ ժողովրդի ծանր վիճակին և միապետության փոխարեն, առաջարկվում էր ստեղծել ժողովրդավար պետություն, որն ըստ հեղինակների՝ Հայոց պետականության կործանման գլխավոր պատճառներից է եղել : Ի տարբերություն նախորդ բոլոր ծրագրերի Շահամիրյանի նախագիծը, որը Հայտնի է «Հարավային ծրագիր» անունով, առաջ էր քաշում տվյալ ժամանակաշրջանի համար արտառոց՝ ընդհանուր ընտրական իրավունքի հիման վրա ձևավորված հանրապետական Հայաստան ստեղծելու գաղափարը: Ապագա Հայաստանում ամեն՝ ինչից վեր լինելու էր ոչ թե միապետի կամքը, այլ օրենքը: Ըստ «Որոգայթ փառացի», անհրաժեշտ է «կալ և մնալ ձեզ

[20] Տե՛ս Иоаннисан А.Р., նշվ. աշխ., էջ 48–49:

[21] Տե՛ս Հայոց պատմություն, հ. III, գիրք առաջին, էջ 168–169:

կախեալ ըստ օրինաց ձերոց զի ո՛չ ոք իցէ՛ որ իշխեսցէ ի վերայ ձեր բայց օրէնս ձեր»[22]:

Ակադեմիկոս Վ. Բարխուդարյանը, անդրադառնալով XVIII դարի երկրորդ կեսի ազատագրական ծրագրերին, ընդգծում է, որ «Առավել էականն ու հատկանշականն այն է, որ ինչպես Հայաստանում, այնպես էլ Ռուսաստանի և Հնդկաստանի գաղութներում երկիրն ազատագրելու հետ մեկտեղ միահամուռ ու աներեր խնդիր էր դրվում վերականգնելու հայկական անկախ պետականությունը»[23]:

XIX դ. առաջին երեսնամյակին գրավելով Արևելյան Հայաստանը՝ ռուսական արքունիքը դեռ որոշ ժամանակ չէր կամենում, կամ ավելի ճիշտ՝ չէր կարողանում Անդրկովկասում մոցնել կայսերական վարչակարգեր: Ուստիև առժամանակ տեղական ինքնակառավարման առանձին տարրեր, որոնք կային պարսկական ազդեցության շրջանում, պահպանվեցին: Ավելին՝ հայ հասարակական շրջանակների, մասնավորապես 1827 թ. վերջին Խ. Լազարյանի, Կ. Արղությանի և Ա. Խուդաբաշյանի կազմած ազատագրական ծրագրերին[24] *ընդառաջ գնալու պատրանք ստեղծելու նպատակով, 1828 թ. մարտի 21-ի հրամանագրով նախկին Երևանի ու Նախիջևանի խանությունների տարածքում Նիկոլայ I-ի հրամանագրով ստեղծվեց վարչատարածքային մի միավոր՝ «Հայկական մարզ» անունով*[25]: *Ցարական հրամանագրով հայերին արված «պետականության չնորհը» մատնանշելու նպատակով՝ ընդգծվում էր, որ նորաստեղծ մարզի կառավարումը դրվում է իր՝ կայսեր տիտղոսավոր իշխանության ներքո*[26]:

---

[22] Գիրք անուանեալ Որոգայթ փառաց, Մադրաս, 1773, էջ 15–16:

[23] Հայոց պատմություն, հ. III, գիրք առաջին, էջ 178:

[24] Խաչատուր Լազարևի ներկայացրած ծրագրի համաձայն հայկական թագավորությունը պետք է ընդգրկեր Ռուսական կայսրության իշխանության ներքո գտնվող Արևելյան Հայաստանի բոլոր տարածքները՝ Երևանի, Նախիջևանի, Ղարաբաղի, Շաքիի, Շամխորի շրջանները: Հայաստանը պետք է ունենար սեփական զինված ուժեր, երկրում պետք է գործեին հայկական օրենքները և այլն (տե՛ս Հայոց պատմություն, նույն տեղում, էջ 262):

[25] Տե՛ս Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа, ч. I, М., 1833, էջ 278–279: Սույն հրամանագրի հայերեն տարբերակում հայ գործիչները «Հայկական մարզ» բառերի փոխարեն գործածել են «գաւառ Հայկազանց» ձևը՝ ամենայն հավանականությամբ տվյալ վարչամիավորն ընկալելով որպես Մեծ Հայքի Հայկազունիների պետության վերականգնման իրողություն (տե՛ս նույն տեղում, էջ 278):

[26] Այդ մասին տե՛ս փաստաթղթում. «Повелеваем во всех делах именовать отныне Областию Армянскою и включить оную в титул Наше» (նույն տեղում, էջ 278):

Անշուշտ, այս վարչամիավորն իր կառավարման համակարգով քիչ էր տարբերվում Ռուսական կայսրության այլ վարչական միավորներից, սակայն նրան բնորոշ որոշ հատկանիշներ, հատկապես Հայաստանի շրջանում, ստեղծում էին հայոց պետականության նրևութական պատկեր: Այսպես՝ Հայաստանի որոշ շրջանակների համար ոգևորության աղբյուր էր միավորի «Հայկական» անունը, այն դեպքում, երբ կայսրության այլ վարչամիավորներ ազգային անվանումներով չէին առանձնանում: Մարզն ուներ սեփական դրոշ, զինանշան և այլն: Ռուսաստանի սենատի 1833 թ. մարտի 25-ի որոշման համաձայն Հայկական մարզի զինանշանի կենտրոնում պետք է պատկերված լիներ սպիտակափառ Արարատը՝ Նոյյան ոսկեգույն տապանը գագաթին, ներքևի աջ անկյունում՝ հայոց արքաների թագը, ձախում՝ Ս Էջմիածինը: Զինանշանի վրա լինելու էին ռուսական կայսերական խորհրդանիշները՝ արծիվը և ինքնակալի թագը[27]:

XIX դ. երկրորդ կեսից սկսվում է մի ժամանակաշրջան, երբ Արևելյան Հայաստանում՝ ռուսական վարչակարգեր հաստատելուց հետո, ինքնիշխանության գրեթե բոլոր սաղմերը վերանում են, իսկ Արևմտյան Հայաստանում, բացառությամբ Սասունի, Կիլիկիայում՝ Զեյթունի[28], պայմանավորված հայ ժողովրդի համար ստեղծված քաղաքական ծանրագույն պայմաններով, պետականության վերականգնման համար պայքարը փոխարինվում է Օսմանյան կայսրության կազմում ընդամենը հայկական ինքնավարության հասնելու տեսլականով:

Այդ ժամանակաշրջանում էլ միջազգային դիվանագիտության ասպարեզ է իջնում Հայկական հարցը՝ Արևմտյան Հայաստանում եվրոպական տերությունների հսկողությամբ բարեփոխումներ կա-

---

[27] Տե՛ս Собрание актов..., ч. II, М., 1838, էջ 280:

[28] Լեռնային այս երկու համայնքները գարմանալի հաստատակամությամբ չընկրկեցին օսմանյան իշխանությունների ոտնձգությունների առջև: Զեյթունը 1862 թ. և 1895–1896 թթ., իսկ Սասունը՝ 1894 թ. ու 1904 թթ. ինքնապաշտպանական կռիվների շնորհիվ փաստորեն պահպանեցին իրենց ինքնավարությունը՝ չատ տարրեր՝ մնալով հայոց նոր ժամանակների ազատատենչության վերջին կղզյակները: Ավելին՝ ամեն մի հնարավորության դեպքում քաջարի լեռնեցիները պահը բաց չէին թողնում ինքնավար կարգավիճակն անկախ դարձնելու համար: Օրինակ՝ 1895 թ ապստամբության ժամանակ գավառակից թուրքերին դուրս մղելուց հետո նրանք բարձրացրին դրոշ «Զեյթունի անկախ իշխանութիւն» վերտառությամբ և փաստորեն երեք ամիս անկախ կարգավիճակում էին (տե՛ս **Մկրտչյան Լ.**, Զեյթունի ապստամբությունը (1895–1896 թթ.), Ե., 1995: Զեյթունի կիսանկախ վիճակի մասին տե՛ս նաև **Պողոսյան Հ.**, Զեյթունի պատմությունը (1409–1921), Ե., 1969:

*տարելու ծրագիրը, որը հայության մի զգալի մասի կողմից ընկալվում է որպես ազատագրության հարց: Հատկանշական է, որ Բեռլինի 61-րդ հոդվածի համաձայն՝ բարեփոխումների ճանապարհով ինքնավարության հասնելու համեստ մտայնությունն այնքան գրավիչ է դառնում, որ 1885–1890 թթ. ընթացքում ստեղծված հայ ազգային կուսակցությունների՝ արմենականների, հնչակյանների ու դաշնակցության ծրագրային փաստաթղթերում անկախության գաղափարը փաստորեն տեղ չի գտնում[29], և պետականության վեհ իդեալը փոխարինվում է ինքնավարության վերաբերյալ սին պատկերացումներով: Նոր ժամանակների այդ փուլը, որ տևում է մինչև 1918 թ. մայիսի վերջը, պայմանականորեն կարելի է անվանել **պետականության վերջին չառավիղների մարման և միաժամանակ՝ պետականության վերականգնման նախադրյալների ստեղծման փուլ:***

XX դարի սկզբին օսմանյան և ռուսական տիրապետությունների դեմ հայության ազատագրական շարժման վերելքը (հայդուկային շարժման նոր դրսևորումներ, հայ եկեղեցու գույքի բռնագրավման մասին ցարական օրենքի դեմ ելույթներ, հայ-թաթարական բախումների օրերին ինքնապաշտպանական ջոկատների ստեղծում և այլն) հայ հասարակական-քաղաքական շրջանակներում հանգեցրեց ինչպես ժողովրդի երկու հատվածների միասնական պայքարին, այնպես էլ Այսրկովկասի հայաշատ գավառների միավորումով հայկական ինքնավարություն ստեղծելու անհրաժեշտության գաղափարներին: Այդ մտայնությունը հատկապես նկատվեց 1906 թ օգոստոսի 17-ին Էջմիածնում հրավիրված Ռուսաստանի հայության պատգամավորական կենտրոնական ժողովում[30]: Պատահական չէ, որ իշխանություններն այդ ժողովը գնահատեցին որպես հայկական պետականության վերականգնմանը միտված գործողություն և չուտով այն փակեցին:

---

[29] Այդ իմաստով թերևս կարելի է առանձնացնել Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցության ծրագիրը, ըստ որի՝ արևմտահայությանն ազատագրելուն պիտի հաջորդեր ռուսահպատակ ու պարսկահպատակ հայերի ազատագրումը: Հայության այդ երեք հատվածների միավորումից հետո հեռավոր ապագայում նախատեսվում էր ստեղծել սոցիալիստական պետություն՝ դեմոկրատական հանրապետություն (տե՛ս «Հնչակ», 1888, թիվ 10, հմմտ.՝ **Հովհաննիսյան Գեղամ,** Հնչակյան կուսակցության պատմություն (1887–1915 թթ.), Ե., 2012, էջ 23):

[30] Տե՛ս Հայոց պատմություն, հ. III, գիրք երկրորդ, Ե., 2015, էջ 22, հմմտ.՝ **Սիմոնյան Հրաչիկ,** Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք I, Ե., 2003, էջ 767–786:

Դարասկզբին ցարիզմի գաղութային քաղաքականության սաստկացումը և հայության երկու հատվածների ազատագրական ընդհանուր պայքարի վերելքը մի շարք կարևոր հարցերում հայ քաղաքական կուսակցությունների մոտեցումների վերանայման անհրաժեշտություն առաջացրին: 1907 թ. Ժնևում հրավիրված ՀՅԴ IV ընդհանուր ժողովը որոշակի փոփոխություններ մտցրեց կուսակցության ծրագրում: Եթե 1892 թ. ծրագրում նախատեսվում էր Օսմանյան կայսրության կազմում ինքնավար կարգավիճակ միայն Արևմտյան Հայաստանի համար, ապա այստեղ ավելանում էր նաև Ռուսական կայսրության կազմում Արևելյան Հայաստանի և ամբողջ Անդրկովկասի հայության ինքնավարության հարցը. «Անդրկովկասյան ռամկավար ֆեդերատիվ հանրապետությունը պիտի կազմի Ռուսաստանի դաշնակցական (պիտի հասկանալ՝ դաշնային – Ա.Մ.) հանրապետության անբաժան մասը, կապված նրա հետ պետական ինքնավարության, դրամական սիստեմի, մաքսի և արտաքին քաղաքականության խնդիրներով»[31]:

Արևմտահայության շրջանում ինքնավարության համար չարժումը նոր թափ ստացավ Առաջին աշխարհամարտի նախօրյակին: Հայության որոշ շրջանակներում որոշակի ոգևորություն առաջացրեց հայկական բարեփոխումների ռուսական՝ Ա. Մանդելշտամի ծրագիրը (1913), որը նախատեսելով արևմտահայկական վեց նահանգներից մեկ նահանգի ստեղծում, միասնական Հայաստանի պատրանք ստեղծեց: Դրանով էլ պետք է բացատրել այդ նախագծի հանդեպ Օսմանյան կայսրության դաշնակից Գերմանիայի մերժողական վերաբերմունքը, որն էլ հանգեցրեց նրա մերժմանն ու դրա փոխարեն հայկական ինքնավարության որևէ նշույլ չպարունակող 1914 հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագրի կնքմանը:

1914 թ. ամռանը և սեպտեմբերին՝ դեռ մինչև ռուս-թուրքական կովկասյան ճակատի բացումը, կարևորելով պատերազմում հայութ-

---

[31] Հայ յեղափոխական դաշնակցութեան ծրագիրը, Կ. Պոլիս, 1908, էջ 26, հմմտ.՝ **Համբարյան Ազատ,** Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում, Ե., 1999, էջ 165: Գ. Խուդինյանի հումոզմամբ՝ «Դրանով իսկ, քաղաքական գետնի վրա առաջին անգամ հենց Հ.Յ. Դաշնակցության ծրագիրն էր նախանշում Անդրկովկասում առանձին հայկական տարածքի և դրա հիման վրա՝ հետագայում նաև պետականության ձևավորման խնդիրը»: (Խուդինյան Գևորգ, Հայ Յեղափոխական Դաշնակցություն, Հայ ազգային և Հայաստանի ու Անդրկովկասի սոցիալիստական կուսակցությունների պատմության ակնարկներ (1885–1914 թթ.), Ե., 2003, էջ 108):

յան դիրքորոշումը, ինչպես երիտթուրքերը, այնպես էլ ռուսական արքունիքը չհապաղեցին հայերին շռայլ խոստումներ տալ: Զավեշտալի է, որ թուրքերը խոստանում էին հայերի աջակցությամբ Արևելյան Հայաստանը գրավելու դեպքում թույլատրել այնտեղ կազմավորելու «հայկական ինքնավարություն», իսկ ռուսները՝ Արևմտյան Հայաստանին տիրելուց հետո վարձահատույց լինել Ռուսաստանի հովանու ներքո ինքնավար Հայաստանի ստեղծումով: Ժամանակը ցույց տվեց, որ երկուստեք այդ խոստումները միայն նպատակ էին հետապնդում օգտագործել հայերին իրենց քաղաքական ծրագրերի իրականացման համար:

Պատերազմում ռուսական զորքերի հաղթանակները, որոնցում իրենց ծանրակշիռ ավանդն ունեցան նաև հայկական կամավորական ջոկատները, օսմանյան տիրապետությունից ազատագրվելու և Արևմտյան Հայաստանում հայկական ինքնավարություն ստեղծելու հույսեր արթնացրին, ուստիև հայ հասարակական-քաղաքական ուժերի մեծ մասը հնարավոր միջոցներով աջակցեց ռուսական իշխանություններին[32]: Իսկ 1915 թ. մայիսի սկզբին երբ մոտ մեկամսյա հերոսական ինքնապաշտպանությունն ավարտվեց Վանի ազատագրումով, բազմահազար հայերի իրատեսական թվաց հնամենի թագավորությունը վերականգնելու երազանքը:

Հայության այդ միամիտ ծրագրերի մասին ռուսական բանակի սպա, կազակ Ֆ. Ելիսեևը, ով քաջատեղյակ էր Արևմտյան Հայաստանում «Եփրատյան կազակություն» ստեղծելու ցարական ծրագրին, իր հուշերում գրում էր. «Դժբախտներ..., նրանք անշուշտ համոզված էին, որ գոնե հիմա, ռուսական հաղթական զորքերի օգնությամբ կազատագրվի և կկառուցվի իրենց Մեծ Հայաստանը»[33]:

Հայ գործիչներից հատկապես Արամ Մանուկյանը, լինելով Վանի ինքնապաշտպանության փաստական ղեկավարը, գործնական քայլեր կատարեց հայկական ինքնավարության հասնելու համար, որի սաղմերը նա դրել էր ապրիլյան կռիվների օրերին: Գեներալ Ա. Նիկոլաևի կողմից նշանակվելով Վանի նահանգի կառավարիչ (նա-

---

[32] **Կիրակոսյան Ջ.**, Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Ե., 1965, էջ 174–190: 1914 թ. նոյեմբերին Նիկոլայ II-ը Թիֆլիսում հայ գործիչներին «խոստացել էր», որ «հայկական հարցը կլուծվի հայերի սպասումների համաձայն», միայն թե նրանք ազատագրվելուց հետո բուլղարների մնան Ռուսաստանի հանդեպ ապերախտ չգտնվեն (տե՛ս նույն տեղում, էջ 190):

[33] **Елисеев Ф.И.**, Казаки на Кавказском фронте 1914–1917, М., 2001, էջ 102:

հանգամանքի)՝ նա կարճ ժամանակում ստեղծեց տեղական ինքնավարության մարմիններ[34]:

Հայկական պետականության սաղմավորման գործընթացն օրեցօր սկսեց վերածվել իրողության, ուստիև չէր կարող աննկատ մնալ ոչ միայն ցարական իշխանությունների տեսադաշտից, այլ նաև մարտերին ականատես պատանի վանեցիների ուշադրությունից: Վանի թեմական դպրոցի 11-ամյա Գրիգոր Գրիգորյանը Վ. Տերյանի խնդրանքով 1916 թ. սկզբին երևանյան որբանոցում գրած իր հուշերում նշում էր. «Վանի փառաւոր կռիւէն հետո Վան ամբողջապէս թոյրքերէն մաքրուած և զուտ հայկական կառաւարութեան ներքև, երջանիկ կերպով կապրէինք: ...Կապրէինք ապագայի յոյսերով: ...Բայց հանկարծ դժբախտութիւն պատահեցաւ. ռուս զինուորներ նահանջեցին և մենք ստիպվեցանք դէպի Ռուսաստան գաղթել»[35]:

Մեծ եղեռնը, Վանի 1915 թ. հուլիսյան աղետալի նահանջը միայն առժամանակ կասեցրին հայության անկախական ձգտումը: 1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո՝ ժամանակավոր կառավարության անհամեմատ բարյացակամ վերաբերմունքը հայկական հարցի նկատմամբ, մասնավորապես ապրիլի 26-ի հրամանագրով թուրքերից գրավված արևմտահայ գավառներում գեներալ-կոմիսարության ստեղծումը, կրկին օրակարգ բերեցին Արևմտյան Հայաստանում ինքնավար պետություն ստեղծելու խնդիրը: Գեներալ-կոմիսարի տեղակալ Հակոբ Ջավրիյանի, տեղերում տարբեր պաշտոնների նշանակված հայազգի այլ գործիչների (Սեբաստացի Ս՝ուրադ, Սեպուհ, Կ. Համբարձումյան, Համազասպ և այլք) ու Այսրկովկասում գործող հայկական զանազան կազմակերպությունների, մասնավորապես ազգային խորհուրդների[36] ջանքերով բազմաթիվ արևմտահայ գաղթականներ վերադարձան հայրենի եզերքներ և լծ-

---

[34] Տե՛ս **Սահակյան Ռուբեն,** Արևմտյան Հայաստանի ռազմաքաղաքական և վարչատնտեսական իրավիճակը 1914 թ. հուլիս – 1917 թ. փետրվար, Ե., 2015, էջ 178–215:

[35] **Էմին-Տերյան Գևորգ,** Վահան Տերյանի անհայտ նախաձեռնությունը. հայ որբերի հուշերը, Ե., 2016, էջ 30:

[36] 1917 թ. ընթացքում Անդրկովկասի զանազան շրջաններում ստեղծված ազգային խորհուրդները դարձան հայ քաղաքական կյանքի կազմակերպման կենտրոններ: Դրանց մեջ առանձնանում էր Թիֆլիսում գործող Արևելահայ ազգային խորհուրդը, որը պատմական դեպքերի բերումով կարևոր դերակատարություն ունեցավ Հայոց պետականության նախապատրաստման ու վերականգնման գործում (**Պետրոսյան Գ.,** Հայոց ազգայի ժողովի և Հայոց ազգային խորհրդի ստեղծման պատմությունից, Հայագիտության հարցեր, Ե., 2016, թիվ **2, էջ 51–57):**

վեցին հայրենիքի վերաշինման գործին: Տիրող ոգևորության մասին Ս. Վրացյանը գրում էր. «Մի տեսակ արտահողային պետություն էր ստեղծվում՝ կենտրոնական և տեղական իշխանություններով: Ապագայում, երբ Թուրքահայաստանը դառնար ազատ, կառավարական մեքենան արդեն պատրաստ էր»[37]:

1917 թ. բոլշևիկյան հեղաշրջումից հետո էլ, երբ Ռուսաստանի նոր իշխանություններն աչքի չընկան իրենց «հայասիրությամբ» և վարած քաղաքականությամբ հանդեցրին կովկասյան բանակի ու ճակատի կազմալուծմանը, հայ քաղաքական շրջանակները չարունակեցին Արևմտյան Հայաստանում ինքնավար պետություն ստեղծելու ջանքերը: Դրա վառ արտահայտություններից էր տարբեր քաղաքական կուսակցություններ ներկայացնող ու հայացքներ ունեցող գործիչների մասնակցությամբ ստեղծված և բոլշևիկյան Ռուսաստանի կառավարության (ժողկոմխորհ) կողմից 1917 թ. դեկտեմբերի 29-ին ընդունված «Թուրքահայաստանի մասին դեկրետը», որն անվանապես ճանաչում էր Արևմտյան Հայաստանում հայ ժողովրդի ինքնորոշման իրավունքը:

Նմանատիպ մեկ այլ դրսևորում տեղի ունեցավ վերոհիշյալ հրովարտակի ընդունումից մեկ ամիս անց՝ 1918 թ. հունվարի 30-ին, երբ հայ գործիչներից գնդապետ Թորգոմը (Արշակ Երվանդյան) հատուկ հուշագրով ազդարարեց հայկական պետականության վերականգնումը՝ Էրզրումում մայրաքաղաքով: Ռուսական ռազմական իշխանությունները թշնամաբար ընդունեցին այդ քայլը և ձերբակալելով Թորգոմին, դատական գործ հարուցեցին նրա դեմ[38]:

1918 թ. հունվարին Թիֆլիսում քննարկումներ սկսվեցին դաշնակցականների (Ռ. Տեր-Մինասյան, Հ. Զավրիյան և ուրիշներ) և հայ բոլշևիկների (Ս. Շահումյան, Դ. Շահվերդյան, Ս. Կասյան և այլք) միջև Հայաստանի երկու հատվածների ապագայի վերաբերյալ մոտեցումները հստակեցնելու նպատակով: Կողմերը եկան այն եզրահանգման, որ պետք է պայքարել Արևմտյան Հայաստանում անկախ պետություն, իսկ Արևելյան Հայաստանում՝ ռուսական հովանավորությամբ ինքնավարություն՝ հայկական կանտոն ստեղծելու հա-

---

[37] **Վրացյան Սիմոն,** Հայաստանի Հանրապետություն, Ե., 1993, էջ 33:

[38] Տե՛ս **Մելքոնյան Ա.,** Էրզրում, Հայկական հարց հանրագիտարան, Ե., 1996, էջ 136:

մար:[39] Ցավոք, այս ծրագիրը քաղաքական զանազան պատճառներով, չիրագործվեց:

Պայմանավորված դեսլքերի սրընթաց զարգացումներով (Ռուսական կայսրության քայքայման գործընթացի խորացում, կովկասյան ճակատի վերացում և այլն)՝ հայ ազգային գործիչներին ստիպեցին ակամայից Ռուսաստանից անջատվելու քայլեր կատարել՝ մաս կազմել 1917 թ. նոյեմբերի 15-ին ստեղված Անդրկովկասի կոմիսարիատին, որոշ ժամանակ անց՝ նաև Անդրկովկասյան սեյմին:

Գիտակցելով ստեղծված ռազմաքաղաքական իրավիճակի ողջ բարդությունը՝ 1917 թ. դեկտեմբերին Արևելահայ ազգային խորհուրդը Երևան գործուղեց 1915 թ. Վանում պետականաշինության գործի փորձ կուտակած Արամ Մանուկյանին: Ստանձնելով Երևանի ազգային խորհրդի նախագահի և դիկտատորի պարտականություններ Արամն ահռելի աշխատանք տարավ Արևելյան Հայաստանում, մասնավորապես Երևանի նահանգում կարգուկանոն հաստատելու, պաշտպանության գործը կազմակերպելու՝ դրանով իսկ պետականության վերականգնման նախադրյալներ ստեղծելու ուղղությամբ: Պատահական չէ, որ 1918 թ. մայիսի վերջին՝ Սարդարապատի, Բաշ Ապարանի, Ղարաքիլիսայի հերոսամարտերի օրերին, երբ փլուզվեց Անդրկովկասի Դաշնային Դեմոկրատական Հանրապետության իշխանության մարմին սեյմը, մի քանի օր անց Հայոց ազգային խորհուրդը Հայաստանը հռչակեց անկախ հանրապետություն: Դրանով սկսվեց հայոց պետականության նորագույն դարաշրջանը:

Պետականությունը նորագույն ժամանակներում ներկայանում է երեք հանրապետությունների պատմափուլերով՝ 1918–1920, 1921–1991 և 1991–2017 թթ.: Թեպետ իրենց քաղաքական համակարգերով այդ հանրապետություններն արմատապես տարբերվում են միմյանցից, սակայն նորագույն ժամանակներում դրանք կազմում են պետականության մեկ ընդհանուր շղթայի օղակները:

1918 թ. մայիսի 28-ով սկսվող **Հայաստանի Հանրապետության (1918–1920) պատմության փուլը** նշանավորվում է ոչ միայն անկախության վերականգնումով, այլ նաև իր վարչական կառուցվածքով ժողովրդավարական՝ խորհրդարանական հանրապետության ստեղ-

[39] Տե՛ս **Մելիքյան Վահան**, Իշխանության հիմնահարցը Անդրկովկասում, Ե., 2010, էջ 242:

ծումով[40]: Ընդամենը երկուսուկես տարիների ընթացքում Առաջին Հանրապետությունը ձեռք է բերում անկախ պետականության բնորոշ գրեթե բոլոր հատկանիշները՝ տարածք, իշխանության մարմիններ, բանակ, միջազգային ճանաչում և այլն:

Հանրապետությունը ձևավորվում է շատ ծանր աշխարհաքաղաքական իրադրության պայմաններում՝ սահմանափակ տարածքի վրա, սակայն 1919 թ. ընթացքում ընդարձակվելով, իր մեջ ներառում է Կարսի մարզը, Նախիջևանը, 1920 թ.՝ Արցախը՝ շուրջ 60–70 հազ. կմ տարածքով: Սևրի դաշնագրի (1920 թ. օգոստոսի 10) համաձայն Հայաստանի Հանրապետությունն իր մեջ ընդգրկելու էր նաև Արևմտյան Հայաստանի Վանի, Բիթլիսի, Էրզրումի և Տրապիզոնի նահանգների մեծ մասը: Միացյալ Հայաստանի տարածքը կազմելու էր շուրջ 160 հազ. քառ. կմ: Դրանով իսկ իրականություն պիտի դառնար հայկական միասնական պետականության ստեղծումը:

Նորագույն ժամանակաշրջանում Արցախը և ապա նաև Սյունիքը, արտաքին գործոնների պատճառով հնարավորություն չունենալով միանալ Հայաստանի Հանրապետությանը, ստեղծեցին սեփական պետական կազմավորումները և պայքար ծավալեցին Մայր Հայրենիքին միանալու համար: 1918 թ. հուլիսի 22-ին Շուշիում հրավիրվում է Արցախահայության առաջին համագումարը, որը կազմում է Ղարաբաղի ժողովրդական կառավարություն և երկրամասը հռչակում անկախ վարչատարածքային միավոր: Հետագա համագումարներում Արցախի հայությունը իր որոշումներով կրկնում է Հայաստանի Հանրապետությանը միանալու իր վճռականությունը: Ադրբեջանի ոտնձգությունների դեմ մղած համառ ու արյունալի պայքարից հետո Արցախահայության 9-րդ համագումարը 1920 թ. ապրիլի 25-ին երկրամասը հռչակում է ՀՀ մաս: Այդ երկու տարիների ընթացքում Արցախը դառնում է հայոց նորագույն պետականության կերտման գլխավոր կենտրոններից մեկը[41]:

Քեմալաբոլշևիկյան գործակցության արդյունքում 1920 թ. դեկտեմբերի 2-ին Հայաստանի Հանրապետության անկումից հետո անկախության դրոշը շարունակեց ծածանել նույն ամսի 25-ին Գա-

---

[40] Տե՛ս **Richard G. Hovannisian,** The Republic of Armenia, vol. I–IV, Berkeley, Los Angeles, London, 1971–1996, **Հակոբյան Արարատ,** Հայաստանի խորհրդապանը և քաղաքական կուսակցությունները (1918–1920 թթ.), Ե., 2005:

[41] Մանրամասն տե՛ս **Հարությունյան Հ.,** Լեռնային Ղարաբաղը 1918–1921 թթ., Ե., 1996, **Աբրահամյան Հ.,** Մարտնչող Արցախը 1917–2000, գիրք I, 1917–1923, Ե., 2003, և այլն:

բեգին Նժդեհի ղեկավարությամբ Տաթևի համալսանգնեղության առաջին համագումարում հռչակված Ինքնավար Սյունիքը, որը 1921 թ. ապրիլի 27-ին վերանվանվեց Լեռնահայաստանի, իսկ հունիսի 1-ին՝ Հայաստանի Հանրապետության: Սյունիքը դարձավ ամբողջ անդրկովկասյան տարածաշրջանում վերջին անկախ պետական կազմավորումը[42]:

Խորհրդային Հայաստանը (մինչև 1936 թ. Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն՝ ՀՍԽՀ) քանի որ ուներ պետությանը բնորոշ հատկանիշների մեծ մասը, անշուշտ նույնպես պետականություն էր, առավել ևս, որ իր գոյության առաջին տարիներին ուներ հարաբերական անկախ կարգավիճակ: Այսպես՝ Խորհրդային Ռուսաստանի և Հայաստանի Հանրապետության միջև 1920 թ. դեկտեմբերի 2-ին Երևանում կնքված Համաձայնագրի առաջին կետով «Հայաստանը հայտարարվում էր անկախ (ընդգծումն իմն է — Ա.Մ.) Սոցիալիստական Հանրապետություն»[43]: *Եվ իսկապես, առաջին տարիներին այդ հարաբերական անկախությունը պահպանվեց մինչև 1922 թ.: Միջազգային իրավունքի մասնագետ Ա. Եսայանը գրում էր, որ այդ մի քանի տարիների ընթացքում Խորհրդային Հայաստանն ուներ անկախության այնպիսի մի հատկանիշ, որպիսին արտաքին քաղաքականություն վարելու իրավունքն էր. «Սովետական անկախ հանրապետությունների առաջացումից մինչև... մեկ միութենական պետության մեջ նրանց միավորվելն ընկած ժամանակաշրջանում յուրաքանչյուր սովետական անկախ հանրապետություն միջազգային ասպարեզում հանդես էր գալիս ինքնուրույնաբար, որպես միջազգային իրավունքի ինքնուրույն սուբյեկտ...»*[44]: *ՀՍԽՀ-ն Առաջին Հանրապետության նման մի շարք երկրներում ուներ դիվանագիտական ներկայացուցիչներ: Այն միջազգայնորեն ճանաչվեց անգամ եվրոպական մի քանի երկրների կողմից»:*[45] *Այդ ամենին գումարվում էին զինական ուժեր, իշխանության օրենսդիր, գործադիր ու դատական մարմիններ, սահմանադրություն (1922 թ.), պետական խորհրդանիշներ և այլ ատրի-*

---

[42] Տե՛ս **Սիմոնյան Արամ**, Զանգեզուրի գոյապայքարը 1917–1920 թթ., Ե., 2017:

[43] Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. (քաղաքական պատմություն). փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Ե., 2000, էջ 383:

[44] **Եսայան Ա.**, Հայաստանի միջազգային իրավական դրությունը 1920–1922 թթ., Ե., 1967, էջ 3:

[45] Տե՛ս նույն տեղում, էջ 242–258:

բուտներ ունենալու իրողություններ[46]*: Ուստի Խորհրդային Հայաստանի պատմության 1920–1922 թթ. պայմանականորեն կարելի է համարել խորհրդային պետականության առաջին՝ անկախության ենթափուլը:*

Միաժամանակ չի կարելի մոռանալ, որ նույն՝ հարաբարական անկախության ենթափուլում, օգտվելով Հայաստանի համար ստեղծված արտաքին ու ներքին անբարենպաստ պայմաններից, հայկական մի շարք տարածքներ (Նախիջևան, Լեռնային Ղարաբաղ, Ուտիք, Ջավախք, Կարսի մարզ, Սուրմալուի գավառ և այլն) դուրս մնացին ՀՍԽՀ սահմաններից: Դրանցից գոնե Լեռնային Ղարաբաղին Ադրբեջանի կազմում տրվեց ինքնավար մարզային կարգավիճակ 1923 թ. հուլիսի 7-ին, երբ կազմավորվեց Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը (ԼՂԻՄ): Վերջինս թեև զրկված էր ինքնավարության շատ տարրերից, այնուամենայնիվ իր սահմանափակ ինքնավարության չնորհիվ կարողացավ պայքարել Ադրբեջանի ազգայնամոլ քաղաքականության դեմ և մինչև 1988 թ. Արցախյան շարժումը պահպանել երկրամասի ընդհանուր հայկական դիմագիծը:

Հանիրավի Ադրբեջանի կազմում հայտնված մյուս հայկական երկրամասը՝ Նախիջևանը 1924 թ. փետրվարի 9-ին վերակազմվեց Նախիջևանի Ինքնավար Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության (ՆԻԽՍՀ): Այդ վարչատարածքային միավորի ստեղծման դրդապատճառները փաստորեն չպարզաբանվեցին: Նախ՝ երկրամասը հինավուրց հայկական տարածք էր և սահմանակից լիելով ՀՍԽՀ-ին, Թուրքիայի ճնշման և Խորհրդային Ռուսաստանի համաձայնությամբ միացվել էր ընդհանուր սահման չունեցող Ադրբեջանին: Անհասկանալի էր, թե ո՞ւմ համար էր Ղարաբաղից ավելի բարձր, ինքնավար՝ հանրապետական կարգավիճակը, երբ հայերն այնտեղ 1905-1906, 1918 և 1920 թվականների կոտորածներից հետո դարձել էին փոքրամասնություն: Ստացվում էր, որ Ադրբեջանի կազմում կովկասյան թաթարները (ներկայիս ադրբեջանցիները) ստանում էին ինքնավարություն «իրենց» իսկ հանրապետության մեջ: Այդուհանդերձ, այդ հերթական ճչացող անարդարությունը «մեղմելու» համար խորհրդային իշխանություններն առերես ձևացնում էին, թե այդ «ինքնավարությունը» ստեղծված է նաև հայերի շահերի պաշտպանության համար: Օրինակ՝ կարող է տարօրինակ թվալ, բայց

[46] Տե՛ս Հարությունյան Կ., Հայկական առաջին զորամիավորումները 1918–1945 թթ., Ե., 2002, Ղազախեցյան Վ., Հայաստանը 1920–1940 թթ., Ե., 2006:

Ամփոփելով մեր խոսքը՝ կարող ենք հաստատապես պնդել, որ Սեպա Գասպարյանը ստեղծել է Հայոց ցեղասպանության վերաբերյալ լեզվաճանաչողական-քննական չահեկան մի աշխատություն, որը նոր լույս է սփռում խնդրի մի ողջ ոլորտի վրա: Համոզված ենք, որ գիրքը մեծ հետաքրքրություն կառաջացնի ինչպես մասնագետների, այնպես էլ ցեղասպանության հարցերով հետաքրքրվող անձանց շրջանում:

Preface

It is neither surprising, nor a mere chance that an immeasurably vast scope of work has been done both in the study of the issue of the Armenian Genocide and the study of genocide in general. Genocide, a monstrous crime scheined by government and aimed at total or partial annihilation of a nation, a religious community, is in fact a crime against humanity at large. This accounts for the fact that the recognition and condemnation of perpetrated genocides, and the problem of their prevention, has been under the constant scrutiny of scholars and the focal attention of the international community.

Given the considerable scholarly achievements in the study of genocide, at first glance it may seem that nothing more can ever be accomplished. However, the phenomenon of genocide, acknowledged by the United Nations on December 9, 1948, and defined by the term genocide, has had large-scale consequences and a devastating impact on all spheres of life, psychology, linguistic thinking, national identity and other areas. The question has been demcnstrated copiously, both in very similar and unique aspects, so that the need for a comprehensive research in this field is beyond any doubt.

The point is that in various areas of research – history, literature, philosophy, law, political science, psychology, arts and other fields of study – the topic of massacres has been mainly carried out disjointedly, often neglecting the approach of comprehensive analysis of the problem. This gap is clearly visible in the study of the Armenian Genocide issue. One may be

convinced in this when a reference is made to the recent works by Prof. Seda Gasparyan, Doctor of Philology, where the examination of the problem of the Armenian Genocide from the position of cognitive linguistics is in fact unique. S. Gasparyan reveals serious difficulties and unforgivable errors in the wording pertaining to the problem of the Armenian Genocide, in the usage of the vocabulary, its English equivalents and their proper translation, all of which, as a rule, imply some political subtext.

Hence, based upon the imperative to fill in the mentioned gap in Armenology, S. Gasparyan in recent years has undertaken the study of this crucially important field. The results thus obtained, namely numerous works, published and unpublished, including the present monograph in English, she has presented them to the Armenian and, more importantly, to the vast English-speaking audience.

It should be mentioned first of all that whoever reads the materials for this work (particularly a professional historian) testifies to the author's expertise in the topical historical literature. Prof. Gasparyan frequently cites studies by a number of scholars and discusses conceptual approaches put forth from a lingusitic perspective. Parallels are drawn between terms in various languages, namely English terms describing the issue of genocide. The author reveals their deliberate use for political reasons in particular. The following is an attempt to address some of the most notable points.

The expert knowledge of English allowed S. Gasparyan to carry out an in-depth study of English publications by both impartial historians and biased falsifiers. To some of them she refers in her highly remarkable articles published in the Bulletin of Yerevan University. Thus one of these publications addresses an "opus" by Guenter Lewy – an "expert in genocide studies", where the mentioned author disputes the expediency of the usage of the word genocide in terms of the Armenian massacre from a supposedly "neutral position." Prof. Gasparyan undermines this "expert's" arguments by claims found in his own text. Noting Armenians in the Ottoman Empire as "gavurs" (infidels), Guenter Lewy unwittingly confesses that they were deprived of their basic human rights. Thus, it is quite sensible for the author of the present book to conclude that they had good reason to fight for their rights

and dignity, though this was not a justification for mass killings. She neither can consider acceptable Lewy's inability to see common grounds between the pre-planned destruction of Armenians in the Ottoman Empire and the Jewish Holocaust, nor his qualification of "genocide" as an exclusively Jewish phenomenon. She is quite justified to wonder if it is the similarities or differences that matter, for she is sure that any genocide committed against humanity should be condemned.

In the denial of the Armenian Genocide through deliberate mishandling of language vocabulary and wording, certain Armenian authors, as we may see in one of the chapters of the present book, maintain the official Turkish stance; Ronald Suny, just to mention one of them, is notoriously known for his biased approach. This famous ersatz-historian in fact blames Armenians for the tragedy they incurred during World War I by handling them as the instigators of mass killings and shifts the charge for the crime solely onto Kurdish shoulders. Obviously, such claims are aimed at freeing the Ottoman authorities from the guilt of perpetration of the Great Armenian massacre. As truly observed by S. Gasparyan, Suny, a habitual player-on-words, does not challenge the use of the term "genocide" at first glance, whereas in reality he does stand for a radical revisionist position.

The author of the monograph has also referred to "A Shameful Act ..." by Taner Akçam, a Turkish researcher and sociologist, publicly known for his righteous position. As in other cases, here too the very title of the work lays sufficient grounds to reveal the author's real objectives and the impartiality of his attitudes. The Turkish intellectual calls on the Turkish authorities to condemn their own shameful act, admit the fact of the Armenian Genocide and clear off the shame from themselves. Truly, we also share S. Gasparyan's opinion that not all views of Akçam are valid and acceptable to us, but his conviction to treat the century old events as "genocide" deserves all respect and appreciation.

Especially praiseworthy is the present research in exposing the English equivalents of the term "yeghern". Obviously enough, this word has been translated and used in English publications quite variously but these translations failed to express the real meaning of the word as it is perceived

today. Thus, it has been interpreted as disaster, a vicious course of action, rascality,offence, slaughter, carnage, massacre, etc. However, today, with the resolution on the definition of the term "genocide" developed by Raphael Lemkin and adopted by the UN, the proper use of the term gains special importance from the perspective of our tactics and strategies on the issue of the Armenian Genocide. The researcher comes to the conclusion that the existing Armenian word "yeghern" has exactly the same meaning in the Armenian language as the word "genocide"; they are indeed synonyms. Nevertheless, for some political considerations, the President of the United States prefers the Armenian word "yeghern" and avoids using the internationally accepted term "genocide" in his annual April 24 address. The intention is clear: to please the Armenians, on the one hand, and not to offend Turkey – a strategic ally – on the other.

S. Gasparyan does not avoid the discussion of the "Israel and the Armenian Genocide" problem – another complex issue. Here too she is well aware of both the Israeli statesmen's elusive, also anti-Armenian, stance and the honest Jewish scholars' (Israel Charny, Yair Auron and others) unbiased approaches to the massacre of Armenians. The author is absolutely right when she argues that despite Israeli officials' refusal to recognize the Armenian Genocide, as early as the first decades of the 20th century ethnic Jewish intellectuals like Henry Morgenthau, Franz Werfel and others condemned the perpetrators of the Armenian tragedy and used phrases like "horrendous calamity" and "the greatest crime" in the very sense that the term "genocide" is used nowadays and meant the same phenomenon thereby.

To summarize, we can definitely say that Prof. Seda Gasparyan has carried out a highly beneficial linguocognitive study on the Armenian Genocide which sheds light on a completely new aspect of the problem. We are convinced that the book will attract the attention of experts and every individual who takes an interest in the problem of the Armenian Genocide.

Gasparyan Seda, The Armenian Genocide. A Linguocognitive Perspective, YSU. Yerevan, YSU Press, 2014, 208 p., pp. 21–32.
http://publishing.ysu.am/files/The_Armenian_Genocide.pdf

Ս. ՏԱՃԱՀՈԳ ԼՐԱԳՐՈՂԻ ՈՒՇԱԳՐԱՎ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

Ընթերցողի սեղանին է ճանաչված լրագրող, վերլուծաբան, հրապարակախոս Հասմիկ Գուլակյանի հերթական ուշագրավ «Ջյուրացված դասեր» ժողովածուն: Հայ հասարակության մեջ ազգային խնդիրներով մտահոգ հանրությունը քաջատեղյակ է Գուլակյանի բազմաթիվ գրքերին, հոդվածներին ու ռադիոհաղորդումներին: Որպես կանոն՝ դրանք հիմնականում արձարծում են մեր ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող խնդիրներ:

Տարիների ընթացքում վորձառու լրագրողն իր չուրջը համախմբել է ազգային հոգսերով ապրող հայ մտավորականների մի ուրուրն չրջանակ, որը մշտապես արձագանքել է մեր երկրի առջև ծառացած ամենատարբեր խնդիրներին՝ ընդվզել է անարդարությունների, ապազգային կեցվածք դրսևորած պաշտոնյաների ու «մտավորականների» դեմ, պայքարել ընդդեմ հոռի բարքերի, դործադրած ջանքերի չնորհիվ ճանապարհ հարթել այն ամենի համար, ինչն ազգային է, հայեցի ու, միաժամանակ, համամարդկային:

Պատահական չէ, որ Հ. Գուլակյանի առաջադրած հիմնահարցերի մի զգալի մասն ընդգրկում է պատմագիտության ոլորտը, որի գիտաքաղաքական նշանակությունը կասկած չի հարուցում: Նրա հետաքրքրությունների կիզակետում են հայոց պատմության խեղաթյուրման, թուրք-ադրբեջանական կեղծարարության դեմ անհաչտ պայքարի անհրաժեշտության, հայագիտության կենսական հիմնախնդիրների՝ հայերի ծագումնաբանության, բնիկության, Արարատյան թագավորության էթնիկ բնույթի, հայ-թուրքական հարաբերությունների, պետական լեզվի՝ մայրենիի անաղարտության և հրատապ այլ հարցերի քննությունը:

Սույն հրատարակությունը նախորդներից տարբերվում է իր թեմատիկայով: Այն առավելապես չի շոշափում է Հայոց ցեղասպանության առնչվող խնդիրներ և նվիրված է Մեծ եղեռնի 100-րդ տարելիցին: Ժողովածուում հիմնականում ընդգրկված են «Վէմ» ռադիոկայանից սփռված Հ. Գուլակյանի հաղորդումներից, տպագրած հարցազրույցներ ու հոդվածներ՝ Հայոց ցեղասպանության պատճառների բացահայտման, կոտորածների ընթացքի, պահանջատիրության, այն է՝ Մեծ եղեռնի հետևանքների վերացման ուղիների մատնանշման, պետական մակարդակով այդ խնդրում հայեցակարգ

ստեղծելու անհրաժեշտության, հայ և օտար պատմաբանների մոտեցումների և բազմաթիվ այլ հարցերի մասին:

Հատկանշական է, որ յուրաքանչյուր հարցազրույցում հստակ դրսևորվում է քննարկվող նյութի վերաբերյալ Հ. Գուլակյանի խոր իմացությունը: Զրուցակցին հասցեագրած հարցի մասին նա գրեթե միշտ ունի իր կարծիքը և, բնականաբար, ակնկալում է անաչառ պատասխան, որքան էլ այն լինի դժվար ու բարդ, ունենա նաև քաղաքական ենթատեքստ:

Հ. Գուլակյանին քաջածանոթ մարդիկ լավ գիտեն, որ սկզբունքային հարցերում նա անզիջում է, անխոնա և պատրաստ սուր քննադատության ենթարկելու հատկապես իր տեսակին մոտ մարդկանց, այդ թվում՝ բարեկամներին՝ համոզված, որ դրանով ինքը միայն օգնած է լինելու նրանց, նպաստելու է համազգային գործերի շուրջ նվիրյալների համախմբանքը: Ուստի պատահական չէ, որ նրա մտերիմները ոչ միայն նման քննադատություններից չեն սրտնեղում, այլև ավելի ու ավելի շատ են լսվում հարգանքով դեպի իսկական քաղաքացի, փորձառու լրագրող Հ. Գուլակյանը:

Տեղին ենք համարում նշելու, որ «Ջյուրացված դասեր»-ում էլ կան նմանօրինակ սուր հարցադրումներ ու քննադատություններ հանրապետությունում ճանաչված մասնագետների հասցեին: Լրագրողի գերնպատակը մեր հասարակությանը՝ առողջ, երկիրը հզոր տեսնելն է, տվյալ դեպքում՝ մեր ազգային ողբերգության՝ Հայոց մեծ եղեռնի հարցում արժանապատիվ ու պահանջատեր կեցվածք դրսևորելը:

Գուլակյան Հ., Ջյուրացված դասեր (հրապարակախոսություն), Երևան, Պատմ. ինստ., 2015, 384 էջ, էջ 5–6:
http://academhistory.am/images/HRAPARAKUMNER/03.pdf

ՈՐՊԷՍ ՆԱԽԱԲԱՆ

Մեծ Եղեռնի նահատակ հայ քաղաքական գործիչների շարքում անծանօթ անուն չէ Մեծն Մուրատի (Համբարձում Պոյաճեան) անունը: Մի հերոսական կերպար՝ որ իր գիտակցական ամբողջ կեանքը անց է կացրել համիտեան բռնակարգին ղէմ հայ ժողովուրդի մղած ազգային ազատագրական պայքարներուում, թրքական բանտերում ու աքսորում եւ. իթթիհատական վարչակարգի ժամանակաշրջանում ազգային-քաղաքական կեանքի եռուն կիզակէտում: Սակայն պէտք է ընդունել, որ Համբարձում Պոյաճեանի կեանքն ու գործունէութիւնը, ինչպես դեռ շատ ուրիշներինը, իր բոլոր ծալքերով ու մանրամասնութիւններով ծանօթ չի եղել ոչ միայն ընթերցասէր հասարակութեանը, այլեւ նոյնիսկ հայ նորագոյն պատմութեան հարցերով զբաղուող մասնագէտներին, պարզ այն պատճառով, որ ցարդ չի եղել Մուրատի կեանքին ու գործունէութեանը նուիրուած, ժամանակակից գիտական պահանջքներին համապատասխանող ամբողջական մի մենագրութիւն: Մուրատի մասին իր օրին եղել են լրատուական բնոյթի հաղորդումներ եւ ապա յուշագրութիւններ, որոնք ցրուած են մնացել մամուլի ամենատարբեր օրկանների էջերում:

Սփիւռքի եւ Հայաստանի պատմագրական շրջանակներին եւ պատմասէր հասարակութեանը արդէն ծանօթ անուն է եղիկ Ճէրէճեանը: Նա բարի աւանդոյթ է դարձրել պարբերաբար մենագրութիւնների, ուսումնասիրութիւնների թէ յօդուածների միջոցով հրապարակ գալ, ու համապարփակ ներկայացնել հայ ազգային ազատագրական պայքարի այն գործիչներին, որոնք դժբախտաբար իրանց կատարած գործին համարժէք ուշադրութեան չեն արժանացել: Այս անգամ հերթը Մեծն Մուրատինն էր:

Կարող ենք անվարան ասել, որ Ե. Ճէրէճեանը իր առջեւ դրուած խնդրի լուծման հարցում յաջողել է: Նա կարողացել է ընթերցողի սեղանին դնել նորութիւններով հարուստ, ամբողջական մի «Մեծն Մուրատ»: Իր նպատակին հասնելու համար, Ե. Ճէրէճեանը կարողացել է յայտնաբերել եւ առաջին անգամ գիտական շրջանառութեան մէջ դնել Հայաստանի (ՀԱԱ, ԳԱԹ) եւ Սփիւռքի (ՍԴՀԿ, ՀՅԴ) արխիւադարաններում գտնուող Մուրատի կեանքին առնչակից խիստ կարեւոր փաստաթղթեր: Ապա նա տքնաջան աշխատանքով կարողացել է ի մի բերել Մուրատին ժամանակակից հայ մամուլի (շուրջ

30 անուն) էջևրում ցրուած եւ նրա գործունէութեանն անդրադարձող պրուիհնները: Ե. Ճէրէճեանն օգտուել է նաեւ հայ ազգային-հասարակական կեանքում ծանրակշիռ դեր ունեցած մտաւորականների եւ գործիչների Մուրատի մասին յայտնած վկայութիւններից եւ յուշերից:

Այս աշխատանքների շնորհիւ Ե. Ճէրէճեանը ոչ միայն կարողացել է վերաշարադրել Մեծն Մուրատի գործունէութիւնը՝ մոռացութեան փոշուց փրկուած իր մի շարք էական կողմերով եւ մանրամասնութիւններով, այլեւ պատասխանել է Մուրատի կեանքում «մութ» մնացած պատմական այնպիսի հարցերի, ինչպիսիք են Սասունի ապստամբութեան նախապատրաստութեան համար նրա Անդրկովկաս կատարած այցելութեան արդիւնքը, ափրիկեան Թրիփոլիի աքսորից նրա փախուստի պարագաները, յետահմանադրական Օսմանեան Կայսրութեան երկրորդ երեսփոխանական ընտրութեան նրա երեսփոխան չընտրուելու հարցը, եւայլն: Այստեղ կարելի է առանձին ուշադրութեամբ նշել, թէ գրքում առաջին անգամ լայն տեղ է յատկացուել Մուրատի երեսփոխանական գործունէութեանը (1909–1912): Պէտք է ասել, որ ցարդ օսմանեան երեսփոխանական ժողովներում 1909–1914 թթ. գործած հայ երեսփոխանների գործունէութիւնն արժանի լուսաբանութեան չի արժանացել. մինչդեռ այն ներկայացնում է պատմական որոշակի հետաքրքրութիւն եւ կարեւորութիւն:

«Մեծն Մուրատ» գրքով Եղիկ Ճէրէճեանը չնորհակալ գործ է կատարել՝ ընթերցողին ներկայացնելով Մեծն Մուրատ յեղափոխականին, ազգային-քաղաքական գործիչին, նուիրեալ հայրենասէրին, ամրողջական եւ վաւերական Մուրատին:

Երեւան 24.09.2015

Եղիկ Ճէրէճեան, Մեծն Մուրատ (Համրարձում Պոյաճեան), Եր., 2016, 248 էջ, էջ 9–11: http://www.academhistory.am/images/HRAPARAKUMNER/EGHIK.pdf

THE TRUTH EVENTUALLY PAVES ITS WAY
(Bakour Karapetian, on the English edition of the Diary of the Massacre of Sumgait, 1988)

The 1988–1994 history of the Artsakh freedom movement and war, as well as the genocidal action against the local Armenians in Azerbaijan's city of Sumgait perpetrated at the end of February 1988 have been described in multiple publications by Armenian, as well as foreign authors – Azerbaijani and others. But the approaches of the sides to the problem have diametrically differed since the very beginning. The Armenian journalists and investigators revealed in their publications the awful details on the massacres organized by the Azerbaijani authorities with the connivance of the USSR central power. Contrary to the truth, the Azerbaijanis spared no effort to conceal real causes, course and consequences of that crime. Moreover, by falsifying facts they invented a senseless version that massacres against Armenians were orchestrated by the Armenians themselves in order to compromise Azerbaijan and its people in the eyes of the international community.

About 3 decades following the bloody events of Sumgait, 1988, we can confirm that among the multiple works, written about the mass of the terrible episodes of that horrible crime reminiscent of the 1915 Armenian Genocide, a special place belongs to the publications by Bakur Karapetyan – a prominent journalist, public figure, active participant of the Artsakh movement and a true chronicle writer. Of a particular value is the book "Sumgait Diary", which is completely original in its source-related aspect. The matter is that the professional journalist, having received the grievous news of the Sumgait massacre, was convinced that the Azerbaijani authorities would do everything to conceal the truth, thus, only one month after the villainy, in March 1988, he personally arrived in Sumgait and conducted his own investigation, producing a concise but most valuable report to be delivered to the judgement of his readers.

In order to get unbiased information the author did not retreat in the face of difficulties. It is unbelievable that endangering his own life he even held meetings with the Azerbaijani state and party officials who had organized

those massacres, spoke to the numerous eyewitnesses of the tragic events, returned back to Yerevan after a ten-day quest (March 27 – April 5, 1988) reminding of a real detective story and presented his unique video shootings and notes to the public as irrefutable evidence on the new carnage perpetrated against the Armenians.

By presenting this diary in English to the wide range of readers we hope that it will serve to reveal the real history of the 1988 Sumgait massacre and bring the truth all around the world despite the Azerbaijani fakers.

3.02.2016

Bakour Karapetian, *Sumgait Diary (March 27 – April 5), 1988, Yerevan, 2016, pp. 3–5. http://academhistory.am/images/HRAPARAKUMNER/Bakur.pdf*

ABOUT THIS PUBLICATION

For the longest time, Armenian scholarly and political communities have consistently struggled against Turkish denialists of the Armenian Genocide. The unwavering position of the Armenians is based upon the efforts to reveal Turkish falsifications and present the truth to the international community. However, in the long and difficult struggle, various Armenian entities unintentionally overlooked the elimination of consequences of the Genocide – that being the essential issue of restitution – and have taken the path of pursuing the recognition of the Genocide. The most important element in that effort is the adoption of resolutions by parliaments of various countries proving the factuality of the Genocide and condemning its perpetration.

In reality, as early as the WWI period, the genocidal policy of the Young Turks implemented against Armenians caused no doubt within the contemporaneous international community. That is the reason for considering the joint declaration by the Triple Entente as the emergence of the process of official recognition of the Armenian Genocide. On May 24, 1915, the alliance of Britain, France, and Russia issued a resolution, in which the Ottoman rulers were incriminated for perpetrating mass exterminations of Armenians. That atrocity was defined as a crime against humanity.

Immediately after the defeat of the Ottoman Empire in WWI, different strata of the Turkish population also engaged in recrimination of the Young Turks. In 1919–1921 and 1926, Turkish courts-martial processed trials of the Ittihatist Party elite. Among other accusations, including drawing the country into the war, the court inculpated the defendants for organization of mass massacres of Armenians and other minorities.

Not surprisingly, many Armenian researchers, understanding the scholarly and informative significance of processes by the abovementioned Ottoman courts, as well as final rulings and sentences thereof, often elucidated these subjects, correctly considering these events as factual recognition of the Genocide of the Armenians by Turkish official circles.

Meline Anumyan, a young Turkologist and adept historian, certainly has her solid place among such scholars.

The praiseworthy decision to publish the English translation of this work, based upon the scholarly and political merits of its content for readers in the English language, was made by the Board of *Khatchig Babikian Publication Fund* of the Armenian Catholicosate of Cilicia.

On the occasion of the publication of the English translation of this work we would like to express our gratitude to a distinguished public and political figure, Dr. Ara Caprielian, who was meticulous in his approach to all aspects in the process of translating this book. Destiny prevented Ara Caprielian from seeing the publication of his translation. However, his widow, a veritable intellectual Arevik Caprielian, completed her husband's work.

We are certain that the publication of this work in the English language will result in vast recognition in the effort of bringing the issue of the Genocide of Armenians to the international community and in demonstrating the bankruptcy of Turkish denialist policies.

Meline Anumyan, "Acknowledgment and Condemnation: the Trials of Young Turks in 1919–1921 and 1926", Antelias, Printing House of the Armenian Catholicosate of Cilicia, 2017, 240 p., pp. 7–9.

ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի վերանկախացումից հետո հայագիտական հետազոտությունների ճանաչողական արժեքն էլ ավելի աճեց: Պատմագիտության, բանասիրության, քաղաքագիտության, արվեստաբանության և այլ ոլորտներում իրականացված բազմաթիվ ուսումնասիրություններ ձեռք բերեցին կիրառական նշանակություն: Հայագիտությունն իրավամբ վերածվեց ազգային անվտանգության խնդիրներ լուծող, սերունդներին հայրենասիրական ոգով դաստիարակող բնագավառի:

Անկախ Հայաստանի կայացման ու զարգացման գործում հույժ կարևոր էր երկրի դիվանագիտական ծառայությունների ստեղծման խնդիրը: Հասկանալի է, որ համապատասխան դպրոցի բացակայության պայմաններում կադրերի հարցում ընտրությունն ակամայից առավելապես կանգ էր առնելու պատմաբանների, արևելագետների, թարգմանիչ-բանասերների վրա, խնդիր, որը տարիների ընթացքում հիմնականում լուծվեց: Բայց խնդիրը վերաբերում էր ոչ միայն կադրեր պատրաստելուն, այլ նաև միջազգային հարաբերությունների, դիվանագիտության պատմության հիմնահարցերի գիտական հետազոտությանը: Այս ոլորտում ևս զգալի աշխատանք կատարվեց: Մասնավորապես ուսումնասիրվեց 1918–1920 թթ. Հայաստանի Հանրապետության փորձը:

Այդուհանդերձ, արդի փուլում տարածաշրջանային բարդ ու հակասական գործընթացների հոլովույթում Հայաստանի առջև կանգնած ինչպես մարտավարական, այնպես էլ ռազմավարական խնդիրների վերլուծության ոլորտում ծանրակշիռ աշխատանքներ դրեթե չստեղծվեցին: Հատկապես անուշադրության մատնվեց այնպիսի մի կարևոր ոլորտ, ինչպիսին մեր տարածաշրջանում գոյություն ունեցող ստատուս-քվոյի փոփոխությունն էր՝ պայմանավորված Արցախի ազատագրման ու հայկական երկրորդ պետության ստեղծման հետ, և արդի փուլում՝ սիրիական ճգնաժամով թելադրված ռուս-թուրքական հարաբերությունների ծայրահեղ սրումը, Թուրքիայի հանրապետության փլուզման հավանականության կտրուկ աճը, քրդական հարցի օրեցօր միջազգայնացումն ու Հայկա-

կան հարցի՝ Արևմտյան Հայաստանի խնդրի լուծման նոր հեռանկարի բացումը:

Վերոհիշյալ խնդիրների մեջ հայ պատմագիտության ու դիվանագիտության խնդիրների շարքում դրեթե անտեսվեց նաև Առաջին աշխարհամարտից հետո նորանկախ Հայաստանի առաջին հանրապետության համար կենսական նշանակություն ունեցող ծովային ելքի հարցը: Հենց այդ բացը լրացնելու մղումով պատմաբան-մի-ջազգայնագետ Շիրակ Թորոսյանը ձեռնամուխ եղավ «Ծովային ելքի հիմնահարցը Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունում 1919–1920 թթ.» հույժ կարևոր թեմայի ուսումնասիրությանը:

Պատերազմում հաղթանակած Անտանտի երկրների ղեկավարները, ճիշտ գնահատելով իրենց դաշնակից Հայաստանի անկլավային՝ ներփակ վիճակի պատճառով ստեղծված անհեռանկարային վիճակը, ի վերջո համաձայնեցին Սևրի դաշնագրի մեջ ներառել Տրապիզոնի նահանգը հայկական կողմին հանձնելու մասին հոդվածը: Բայց այդ խնդիրը գոնե փաստաթղթի մակարդակով ճևակերպում ստացավ դիվանագիտական լուրջ ու դժվարին աշխատանքի շնորհիվ:

Սույն գրքի հեղինակ Շ. Թորոսյանը հարուստ փաստական նյութի վերլուծության հիման վրա քննության է ենթարկել 1918–1920 թթ. ընթացքում տարբեր միջազգային խորհրդաժողովներում, Վրաստանի Դեմոկրատական Հանրապետության, Հունաստանի, մեծ տերությունների հետ ծանր բանակցությունների արդյունքում, Հայաստանին դեպի Սև ծով ելք տրամադրելու դիվանագիտական ալայքարը:

Աշխատության առաջին մասում, որը կրում է «Դեպի ծով ելքի հարցը և Լազիստանի խնդիրը հայ-վրացական հարաբերություններում» խորագիրը, ծովային ելքի հարցը դիտարկվում է որպես Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության վերխնդիրներից մեկը, այն ներկայացվում հայ-վրացական հարաբերությունների, երկկողմ տարածքային վիճակի ու այդ հարցում մեծ տերությունների դիրքորոշման համատեքստում: Անդրադարձ է կատարվում նաև Կիլիկիայով դեպի Միջերկրական ծով դուրս գալու խնդրին, պարզաբանվում են դրա ձախողման արտաքին պատճառները:

Հեղինակը հատուկ քննության նյութ է դարձնում Բաթումի մարզի, համանուն նավահանգստի, Արդահանի գավառի պատկանե-

լիության չուրջ ընթացող հայ-վրացական պայքարը: Նա իրավացիորեն նշում է, որ այդ հարցերում հայկական դիվանագիտության անհաջողությունների պատճառները պետք է փնտրել ինչպես «դաշնակից» տերությունների Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի վարած երկդիմի քաղաքականության, Հայաստանի նկատմամբ Վրաստանի, Ադրբեջանի և Թուրքիայի կոշտ ու թշնամական, Խորհրդային Ռուսաստանի անբարյացակամ վերաբերմունքի, այնպես էլ ՀՀ իշխանությունների ոչ իրատեսական քաղաքականության մեջ:

Շիրակ Արտեմի Թորոսյանի «Ծովային ելքի հիմնահարցը Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունում 1919–1920 թթ.» արժեքավոր աշխատությունը ծանրակշիռ խոսք է հայ դիվանագիտության պատմության ուսումնասիրության բնագավառում: Այն նոր լույս է սփռում հայ-վրացական, հայ-հունական ու հայ-թուրքական հարաբերությունների հիմնահարցի բազմաթիվ կողմերի վրա: Սույն մենագրությունը, որ արդի փուլում ունի գիտաճանաչողական ու քաղաքական մեծ կարևորություն, ժամանակակից հայ դիվանագետների ու քաղաքագետների համար հրաշալի ուղեցույց է ներկայիս Հայաստանի Հանրապետության առջև ծառացած խնդիրների, մասնավորապես ծովային ելքի կենսական հարցը լուծելու ճանապարհին:

Պատմական զարգացումների ու օրինաչափությունների վերաբերյալ պատմաբաններիս իմացությունը հուշում է, որ Միացյալ Հայաստանի, նրա կենսագործության ողնաշարի կարևոր բաղադրամաս կազմող ծովային դարպասի հեռանկարը տարերքի հետևում չէ: Կայսրություններն ի վերջո դատապարտված են, իսկ պատմական ճշմարտության հաղթանակն անբեկանելի է: Ընթերցողը դրանում կհամոզվի՝ նաև սույն աշխատության հետ ծանոթանալով, և համոզված ենք՝ այդուհետ կլծվի համազգային այդ գաղափարի կենսագործմանը:

Շիրակ Թորոսյան, Ծովային ելքի հիմնահարցը Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունում 1919–1920 թթ., Երևան, ԵՊՀ հրատ., 2017, 234 էջ, էջ 5–7:
http://publishing.ysu.am/files/Shirak_Torosyan.pdf

ԺԱՄԱՆԱԿԻ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ

Արդի փուլում հայ պատմաբանների առջև դրված կարևորագույն խնդիրներից է հայոց պատմության կեղծարարների դեմ պայքարը: Հատկանշական է, որ այդ կեղծարարությունն ընդգրկում է Հայաստանի պատմության գրեթե բոլոր այն ոլորտները, որոնք ունեն գիտաքաղաքական կարևորություն: Անշուշտ, այդ հիմնահարցերի մեջ առանձնահատուկ տեղ ունի թուրքական պատմագրության կողմից մասնավորապես Հայոց ցեղասպանության պատմության խեղաթյուրումը: Սակայն տարիներ չարունակ կեղծարարության նյութ են եղել նաև Հայաստանի հին ու միջնադարյան պատմության բազմաթիվ հարցեր:

Մինչև 19-րդ դարի կեսերը թեև եվրոպական պատմագրության մեջ Հայաստանի պատմության հիմնահարցերին անդրադարձ համեմատաբար քիչ էր լինում, սակայն եվրոպացի հեղինակների մեծ մասի աշխատություններում հայոց պատմության հանգուցային հարցերն առավելապես անաչառ լուսաբանություն էին գտնում: Սակայն չուտով հայագիտության հանդեպ Եվրոպայում հետաքրքրության աճին զուգընթաց, նկատվեց պատմությունը խեղաթյուրելու ընդհանուր միտում: Հայոց պատմության խորհենացիական հայեցակարգի կողքին հայտնվեցին տեսակետներ հայերի եկվորության, Ուրարտու պետության ոչ հայկական օտար բնույթի, Պատմահոր ապրած ժամանակի, հաղորդած տեղեկությունների հավաստիությունը կասկածի տակ առնելու և այլնի վերաբերյալ: Ցավոք, այդ տեսակետների մի մասին տուրք տվեցին նաև որոշ հայ հետազոտողներ: Ստեղծվեց մի տպավորություն, թե իբր այդուհետ եվրոպական պատմագրությունն ամբողջապես կանգնեց Հայոց պատմության կեղծարարության դիրքերում:

Իրականությունն այն է, որ եվրոպացի հետազոտողների մեջ եղան նաև բազմաթիվ ազնիվ գիտնականներ, որոնք չարունակեցին Հայաստանի պատմության անաչառ ուսումնասիրությունը և իրենց ծանրակշիռ աշխատություններով հարստացրին հայագիտությունը, այդ թվում պատմագիտությունը: Ավելին նրանց մի մասը դեռ 19-րդ դարի երկրորդ կեսին անդրիջում պայքար սկսեց այդօրինակ կեղծարարների դեմ: Վերոհիշյալ գործընթացներին ուշի-ուշով հետևող, հայրենի պատմաբան, մեր գործընկեր Էդուարդ Դանիելյանը

տարիներ չարունակ տպագրում էր հոդվածներ, որոնցում ցույց էր տալիս, որ օտար հեղինակների մեջ քիչ չեն այն ուսումնասիրողները, որոնք մշտապես եղել ու մնացել են հայոց պատմության իսկական պաշտպանները: Էդ. Դանիելյանը ոչ միայն գնահատում էր այդպիսի հեղինակների հայանպաստ գործունեությունը, այլև հորդորում մեր պատմաբաններին նույնպես անդրադառնալ նրանց աշխատություններին: Այդ պայքարում նրա կողքին էին մեր ժամանակի հայագետների ավագ սերնդի մի շարք ներկայացուցիչներ: Ժամանակի ընթացքում Դանիելյանը պատրաստեց նաև աշակերտների յուրօրինակ դպրոց, որը չարունակում է իր ուսուցչի գործը: Նման հետազոտողների թիվն աճեց, ուստի և հնարավոր եղավ հրավիրել հատուկ միջազգային գիտաժողով նվիրված օտար հեղինակների աշխատություններում հայոց պատմության հանգուցային հարցերի լուսաբանումներին:

Սույն ժողովածուն 2016 թ. հոկտեմբերի 27-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում կայացած «Եվրոպացի հայագետների ավանդը Հայաստանի հին և միջնադարյան պատմության ուսումնասիրության բնագավառում» միջազգային գիտաժողովի նյութերն են, որոնց հեղինակներն անդրադարձել են հայագիտության բնագավառում եվրոպացի մի շարք հետազոտողների (Հ. Աբեղյան, Կ.Ց. Լեման-Հաուպտ, Ա. Յակոբսոն, Կ. Էքհարդ, Դ. Լանգ և ուրիշներ) կարևոր ձեռքբերումներին: Ցավոք, ժողովածուն լույս է տեսնում Էդ. Դանիելյանի վաղաժամ մահվանից հետո: Բայց այն դառնում է իր գործընկերների կողմից նրա հիշատակի հանդեպ յուրօրինակ գնահատական նրա կատարած ահռելի ազգանպաստ գործունեության համար:

· Օտարազգի հայագետների ավանդը Հայաստանի հին և միջնադարյան պատմության ուսումնասիրության բնագավառում (միջազգային գիտաժողովի նյութեր), Երևան, Պատմ. ինստ., 2017, 215 էջ, էջ 5–7:

ИСТОРИКО-ПОЛИТИЧЕСКОЕ ЗНАЧЕНИЕ МОНОГРАФИИ АКАДЕМИКА СЕРГЕЯ АМБАРЦУМЯНА В СВЕТЕ 30-ЛЕТИЯ АРЦАХСКОГО ДВИЖЕНИЯ

В жизни каждого народа бывают события, имеющие эпохальное значение, создающие благоприятные условия для осуществления национальных чаяний, за короткий промежуток времени трансформирующие общественное сознание и претворяющие в жизнь то, что казалось невозможным, а именно, самое заветное – идею независимости.

Таким событием в жизни армянского народа стало Арцахское движение, развернувшееся 30 лет назад в феврале 1988 г. События 1988 года глубоко способствовали росту национального самосознания и сплочению нации вокруг единой идеи.

Формируясь как национально-освободительное движение, Арцахская борьба, по понятным причинам, переросла в борьбу за независимость. Во время Арцахского движения начался процесс восстановления Армянской государственности: Театральная площадь превратилась в Площадь свободы, трехцветный флаг в символ Армянской государственности. Начавшееся в феврале 1988 года движение логически привело к провозглашению в сентябре 1991 г. двух республик – РА и НКР. За счет огромных усилий армянского народа, ценою крови 6500 жертв, в начале 1990-ых гг. стало возможным высвободить из когтей азербайджанских деспотов часть нашей родины, фактически заставив их признать право арцахских армян на свободу.

Прошедшие 30 лет стали периодом великих жертв. Свои вклад в общенациональную борьбу внесли представители всех слоев нашего народа, в том числе интеллигенция. С первых же дней борьбы многие деятели науки и культуры воодушевляли народ

своим весомым словом, возглавили общенародное движение. В числе этих деятелей своими яркими личностными качествами отличился ректор Ереванского государственного университета, известный ученый, государственный и общественный деятель, академик Сергей Александрович Амбарцумян. Его давно знают как в Армении, так и за ее пределами как гражданина, имеющего государственное мышление и национальную ментальность, как истинного, принципиального интеллигента – борца за правду и интересы своего народа. Представители старшего поколения помнят, какой общественный резонанс имели смелые публикации С. Амбарцумяна в центральной союзной прессе, посвященные вопросу Геноцида армян. Фактически, эти публикации были первыми для столь широкой читательской аудитории. Благодаря выступлениям С. Амбарцумяна в прессе миллионы советских граждан узнали о трагедии, постигшей армянский народ в годы Первой мировой войны. В то же время эти публикации вызывали огромное недовольство в руководящих кругах Турецкой республики, нередко дело доходило до того, что в адрес Министерства иностранных дел СССР поступали ноты протеста турецкой стороны.

Посему для армянского общества вовсе не удивительным было то, что академик С. Амбарцумян стал одним из первых борцов Арцахского движения, который неоднократно с самых высоких трибун озвучивал справедливые требования армянского народа и не побоялся в Москве, в присутствии руководителя советской страны М. Горбачева, на заседании Верховного Совета СССР 18-го июля 1988 г. разоблачить субъективную политику центральных властей, пытавшихся скрыть от общественности реальную картину сумгаитской трагедии, осудить их за неспособность с уважением отнестись к законным правам арцахских армян, борющихся за самоопределение.

Спустя 30 лет после февральских событий 1988 г. вновь предоставляя вниманию читателей монографию академика Сергея Амбарцумяна – активного участника и очевидца Арцахского движения, хотим выразить уверенность в том, что она и сегодня откроет новую страницу в летописи свободного Арцаха, способствуя логическому и победному завершению справедливой борьбы армянского народа.

С.А. Амбарцумян, Три года на пределе любви и смерти. Четвертое издание, Ереван, Институт истории, 2018, 213 с., с. 3–5.

ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ

Վերջին տասնամյակներին հայ պատմագիտությունը լուրջ հաջողություններ է արձանագրել Հայաստանի պատմական ժողովրդագրության խնդիրների ուսումնասիրության բնագավառում: Լույս են տեսել բազմաթիվ աշխատություններ, որոնք լույս են սփռում ինչպես Արևմտյան Հայաստանի, այնպես էլ Արևելյան Հայաստանի տարբեր նահանգների ու գավառների պատմաժողովրդագրական պատկերի վրա և ունեն ոչ միայն գիտական, այլ նաև ճանաչողական ու քաղաքական մեծ նշանակություն: Այդ հետազոտությունները կարևոր են հատկապես թուրք-ադրբեջանական կեղծարարության դեմ պայքարի տեսանկյունից:

Այդ իմաստով հույժ արդիական է պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր Համլետ Մալխասի Հարությունյանի սույն աշխատությունը՝ նվիրված Երևանի նահանգի պատմաժողովրդագրական հիմնահարցերին: Գաղտնիք չէ, որ այսօր Ադրբեջանի իշխող վարչակարգը, գործի դնելով ահռելի ֆինանսական միջոցներ, պետական մակարդակով կեղծում է ոչ միայն Արցախի, այլ նաև Հայաստանի Հանրապետության տարբեր տարածաշրջանների՝ Սյունիքի, Վայքի, Տավուշի, ինչպես և Այրարատ աշխարհի պատմությունը: Ադրբեջանական կեղծարարությունը հասել է այնտեղ, որ անգամ մայրաքաղաք Երևանը ներկայացվում է որպես ադրբեջանական քաղաք, իսկ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը՝ աղվանական-ադրբեջանական հոգևոր-եկեղեցական կենտրոն:

Արցախի 1918–1921 թթ. պատմության վերաբերյալ հայերեն և անգլերեն լեզուներով ծանրակշիռ աշխատությունների հրատարակումից հետո ներկա հետազոտությամբ Համլետ Հարությունյանը շարունակեց ադրբեջանական կեղծարարության բացահայտումները:

Մենագրության մեջ հեղինակը հանգամանորեն անդրադառնում է 1828 թ. Երևանի և Նախիջևանի խանությունները Ռուսաստանին միացնելուց հետո ռուսական իշխանությունների վարած վարչատարածքային վերափոխումների քաղաքականությանը, 1849–1850 թթ. Երևանի նահանգի ձևավորման գործընթացին:

Գիտաքաղաքական նշանակությամբ առանձնանում է աշխատության երկրորդ գլուխը, որն ամբողջապես նվիրված է նահանգի ժողովրդագրական պատկերի վերլուծությանը: Հարությունյանը հա-

բուստ աղբյուրագիտական նյութի քննությամբ ներկայացնում է ուսումնասիրվող նահանգի բնակչության տեղաբաշխումը, տեղաշարժերը, դրանց սոցիալ-քաղաքական դրդապատճառները, ազգային, տնտեսաբիքային կազմը XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին: Հատուկ ուշադրություն է հատկացվում Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ իրականացվող ցեղասպան քաղաքականության հետևանքով դեպի Երևանի նահանգ արևմտահայ զանգվածների տեղաշարժի հարցերին:

Աշխատության երրորդ գլուխը ներկայացնում է նահանգի տնտեսական կյանքը՝ արհեստները, առևտուրը, արդյունագործությունը, Արևելյան Հայաստանում ազատ շուկայական հարաբերությունների ձևավորման գործընթացը և այլն:

Ավաղ, փորձառու պատմաբանին, մեր երկրի իսկական հայրենասեր քաղաքացուն և թանկագին գործընկերոջը բախտ չվիճակվեց տեսնել սույն աշխատության հրատարակությունը: Դաժան մահը կտրեց նրա կյանքի թելը՝ անավարտ թողնելով համլետ հարությունյանի հեղինակությամբ լույսընծայվելիք նորանոր աշխատությունները: Տպագրության հանձնելով սույն մենագրությունը՝ ինստիտուտի պիտական անձնակազմն իր համեստ ներդրումն է ունենում գիտնական-գործընկերոջ մտքի արդասիք՝ Երևանի նահանգի պատմաժողովրդագրական խնդիրների ուսումնասիրությունը հետազոտողների ու ընթերցող լայն հանրության սեփականությունը դարձնելու և հեղինակի պայծառ հիշատակը վառ պահելու գործում:

Հայությունյան Հ., Երևանի նահանգի վարչաժողովրդագրական պատկերը, արհեստներն ու առևտուրը, Եր., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2020, 241 էջ, էջ 3–5:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հեղինակի կողմից 3
Հայ պատմագիտության հրատապ խնդիրները Հայկական լեռնաշխարհի պատմամշակութային ժառանգության ուսումնասիրության բնագավառում 5
Արևմտյան Հայաստանը արևելք-արևմուտք առևտրական հարաբերությունների ոլորտում 8
Հայաստանի ժողովրդագրության հիմնահարցերը հայագետ Հակոբոս Տաշյանի աշխատություններում 21
500-ամյա հայկական տպագրության քառուղիներում (պատմական ակնարկ) 35
Հայ պատմագիտության խնդիրները արդի ժամանակաշրջանում 43
The Armenian Genocide: From International Recognition and Condemnation to Reparations and Restitution 49
At the Summit of Mount Ararat-Masis 56
Армянский народ в Великой Отечественной войне (1941–1945 гг.) 66
Հայության խնդիրները Մեծ եղեռնի 100-րդ տարելիցի նախաշեմին 73
1918 թ. գարնանը Անդրանիկ Օզանյանի Ջավախք մեկնելու հանգամանքների շուրջ 83
Catastrophic Consequences of Demographic Policy of Ottoman Authorities in Western Armenia (the 16th century-beginning of the 20th century) 102
The Demographic Movements Observed in Akhalkalak District in the Last Decades of the 19th Century and in the Early 20th Century .. 113
Հայ ազգային-ազատագրական պայքարի քառուղիներում 119

Западная Армения в сфере экономических отношений Восток-Запад 124
Նախիջևան հավերժական հայրենիք և կենսատարածք 136
Հայոց պետականության պատմափուլերը 140
Հայոց պատմության նոր պարբերացման խնդիրները 173
The Armenian Genocide: The Historical Background and Current Process of International Recognition and Condemnation 178
Հայոց ցեղասպանության խնդրի արծարծումները պղսահայության շրջանում մինչև Հրանտ Դինքը և նրանից հետո 186
Ղուկաս Ինճիճյանի ավանդը Հայաստանի պատմական աշխարհագրության և ժողովրդագրության ուսումնասիրության բնագավառում 191
1918–1920 թթ. Հայաստանի Հանրապետության հռչակման և կայացման պատմական նշանակությունը (պատմություն և արդիական խնդիրներ) 201
The International Recognition Process of the Armenian Genocide in the Context of the Problem of Reparation Issue 221
Melkonyan A., Karapetyan A., The Selective Works by the Scholar Who Used to Go Deep in History 228
The Historical Significance of the Proclamation and Formation of the Republic of Armenia 1918–1920 232
1919 մայիսի 28-ի միացեալ Հայաստանի հռչակագիրի դերը հայութեան հատուածական մտածողութեան յաղթահարման գործում 244
Արքայական Ազնուականական Տոհմերի Դերը Հայոց Պատմութեան Մէջ 254
Արևելյան Հայաստանի վարչաքաղաքական կենտրոն Երևանը XIX դարի առաջին քառորդին 262
Զավախքի հիմնահարցը հայ-վրացական հարաբերությունների համատեքստում (1918 թ. մայիս – 1919 թ. հունվար) 284
Sytuacja demograficzna w Erewaniu w pierwszej ćwierci XIX w. 305

Ժողովրդագրական իրավիճակը Երևանում XIX դարի առաջին քառորդին 311
Հայկական ինքնութեան ձեւաւորման ու զարգացման պատմափուլերը 327
Արցախը հայոց պետականության պատմության հոլովույթում 337
Армения в контексте международных отношений в период окончания Первой мировой войны и в послевоенные годы 363
Armenische Prediger und Missionare in Europa (4–11 Jahrhundert) 372
Приветственное слово директора Института истории Национальной академии наук Республики Армения, профессора, доктора исторических наук, академика Национальной Академии наук Республики Армения 379
Приветственное слово участникам международной научно-практической конференции «Евразийское историческое наследие: грани истории – от истоков до современности» 382
Армянские источники о народах Центральной Азии и Золотой Орде (XIII–XV вв.) 383
Общие тенденции развития армяно-российских отношений в XVIII–XX вв. 393
Վրաստանի և Հայաստանի անկախության վերականգնման 100-ամյա ուղին (պատմական զուգահեռներ) 405
Участие сыновей армянского народа в антифашистском движении сопротивления во Франции в годы Второй мировой войны (1939–1945 гг.) 420
Участие сыновей армянского народа в боевых действиях первого периода Второй мировой войны (1 сентября 1939 г. – 21 июня 1941 г.) 429
Թումանյանը և հայոց պատմությունը (համառոտ ակնարկ) 436
Les activités des délégations arméniennes à l'assemblée de Paris 444
La situation extérieure de la République D'Arménie (1918–1920) .. 448

ԱՌԱՋԱԲԱՆՆԵՐ

Առաջաբան/ Preface 459
Մտահոգ լրագրողի ուշագրավ ժողովածուն 467
Որպէս նախաբան 469
The Truth Eventually Paves its Way 471
About this Publication 473
Կիրառական նշանակություն ունեցող գիտական հետազոտություն 475
Ժամանակի հրամայականը 478
Историко-политическое значение монографии академика Сергея Амбарцумяна в свете 30-летия Арцахского движения 480
Խմբագրի կողմից 483

ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱՔՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համակարգչային ձևավորումը՝ Ն. Ադամյանի
Տպագրիչ՝ Լ. Մուրադյան

Տպաքանակը՝ 150 օրինակ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ИСТОРИИ НАН РА
INSTITUTE OF HISTORY OF NAS RA

ՀՀ, 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4
РА, 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4
24/4, Marshal Baghramyan Ave., 0019, Yerevan
http://www.academhistory.am

[5000դր.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0645692

II
A 107289

ISBN 978-9939-892-01-6

